ՀԱՅԱՍՏԱՆԸ

Բոլշեւիկեան մուրճի եւ Թրքական սալի միջեւ

Ս. ՎՐԱՑԵԱՆ

(Երկրորդ Տպագրութիւն)
Պէյրութ
1953

ՀՅԴ Հանրային Կապերու Գրասենեակ
2021

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՄՈՒՐՃԻ
ԵՒ
ԹՐՔԱԿԱՆ ՍԱԼԻ ՄԻՋԵՒ

(Երկրորդ տպագրութիւն)

ՏՊԱՐԱՆ
«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՊԷՅՐՈՒԹ
1953

— Printed in Lebanon —

ՀՅԴ Հանրային Կապերու Գրասենեակ
2021

Համաշխարհային յեղափոխութիւնը զոհեր է պահանջում: Ցաւում եմ, երբ մէկ միլիոն հայեր էլ զոհուեն:

ԼԵՆԻՆ

Թող իմանան ամէնքը՝ ովքեր պարտաւոր են գիտենալ, որ այսպէս կոչուած հայկական «խնդիրը», որի վրայ իզուր գլուխ են կոտրել իմպերիալիստական դիւանագիտութեան հին գայլերը, ի վիճակի եղաւ լուծելու միայն խորհրդային իշխանութիւնը:

ՍՏԱԼԻՆ

Մենք մեր համակրանքի, մեր սիրոյ տուրքն ենք տալիս այն հերոսական պայքարին, որ վարում է քեմալական Թուրքիան, մենք հիանում ենք նրա յաղթանակով:

ՕՐՋՈՆԻԿԻՁԷ

Խորհրդային Ռուսաստանը սաւառնում էր Լօզանի խորհրդաժողովի կանաչ սեղանի վրայ եւ հէնց նա էր որ խանգարում էր մեծ պետութիւններին յարձակուելու ու ճզմելու փոքրիկ Թուրքիան:

ՉԻՉԵՐԻՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս գիրքը առաջին անգամ, յօդուածաշարքի ձեւով, հրատարակուեց «Հայրենիք» ամսագրում — 1940 դեկտեմբեր, 1941 թ. յունուար-փետրուար: Ապա, 1941ին, լոյս տեսաւ առանձին տպագրութեամբ եւ շուտով սպառուեց Ամերիկայում: Պատերազմի պատճառով ճանապարհները կտրուած էին, եւ Ամերիկայից դուրս սակաւաթիւ օրինակներ միայն տարածուեցին, որով ընթերցողների լայն հասարակութեան համար մնաց գրեթէ անծանօթ:

Մեզ թւում է, որ այս գրքի բովանդակութիւնը այժմէական է եւ այսօր, երբ, Խորհրդային իշխանութեան վարած քաղաքականութեան հետեւանքով, աշխարհ բաժանուած է երկու հակամարտ բանակների, որից ծանրօրէն տուժում են Հայաստանն ու հայ ժողովուրդը եւ որի պատճառով Հայկական Հարցը մատնուել է անելի:

Ներկայ՝ երկրորդ տպագրութեան մէջ կատարուած են մի շարք խմբագրական սրբագրութիւններ, աւելացուած են որոշ նոր հատուածներ, փաստեր ու վաւերագրեր: Ի նկատի առնուած են նոյնպէս 1941ից ասդին տեղի ունեցած դէպքերը:

Թուրք-բոլշեւիկեան յարաբերութիւնը անհունօրէն ցաւոտ հարց է՝ ճակատագրական եւ աղէտալի մեր հայրենիքի եւ հայ ժողովրդի համար: Այսօր այլեւս գաղտնիք չէ, որ բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, ճզմուեց ու խորտակուեց Հայաստանը՝ անմեղ զոհը աշխարհակալ յեղափոխութեան:

Այս գրքի նպատակն է, որքան հնար է լրիւ եւ առարկայական կերպով ներկայացնել բոլշեւիկների եւ քուրքերի յարաբերութեանց պատմութիւնը Հայաստանին վերաբերող խնդիրներում եւ դրանից բխած հետեւանքները: Զուգընթացաբար ցոյց տալ նաեւ հայ բոլշեւիկների խաղացած դերը: Թուրք-բոլշեւիկեան յարաբերութիւնը սոսկ անցեալի պատմութիւն չէ, այլեւ այսօրուայ ու վաղուայ հրատապ հարց: Հայ ժողովրդի ու Հայաստանի ճակատագրով հետաքրքրուող ամէն անհատ պէտք է գիտենայ այդ պատմութիւնը՝ հասկանալու համար այն ամէնը, որ եկաւ Հայաստանի եւ հայ ժողովրդի գլխին: Պէտք է գիտենայ՝ խուսափելու համար անճիշդ դատողութիւններից, անհիմն պատրանքներից եւ սըխալ քայլերից ապագայում:

Գրքի նիւթը ամբողջապէս հիմնուած է անհերքելի իրողութիւնների, պատմական փաստերի եւ վաւերագրերի վրայ: Որպէսզի կասկածի որեւէ առիթ չմնայ, առաջ բերուած բոլոր դէպքերն ու հանգամանքները հաստատուած են առաւելապէս բոլշեւիկեան եւ թրքական վաւերագրերով ու վկայութիւններով: Ժամանակագրութեան նախանձախնդիր ընթերցողը հնարաւորութիւն ունի ստուգելու եւ աննախապաշար կարծիք կազմելու առաջ բերուած փաստերի եւ եզրակացութիւնների մասին:

Դիւրութեան համար դնում ենք այստեղ այդ աղբիւրներից մի քանիսը.—

1) Ն. Լենին 1917 եւ 1918 թ. արտասանած ճառերը եւ գրած յօդուածները «Լենինի Երկեր» հատորների մէջ:

2) Աշ. Յովհաննիսեան՝ «Հայաստանի Յեղափոխութեան Յուլիսն ու Հոկտեմբերը», Երեւան, 1925:

3) Շ. Ամիրխանեան՝ «Մայիսեան Ապստամբութիւնը Հայաստանում», Մոսկուա, 1926:

4) «Առաջին Մասսայական-Յեղափոխական Շարժումները Հայաստանում», Երեւան, 1932 թ. (վաւերագրերի մեծ հատոր)·

5) Բ. Բորեան՝ «Հայաստան, Միջազգային Դիւանագիտութիւն եւ Խորհրդ. Սոց. Հանր. Միութիւն». Մոսկուա, 1927: Ռուսերէն երկու ստուար հատորներ:

6) «Նոր Աշխարհ» ամսագիր. Թիֆլիս, 1922 թ., թիւ 2:

7) «Խորհրդ. Հայաստան» օրաթերթ, 1925 մայիս 1, 1927 թ. մայիս 14:

8) Մուսթաֆա Քեմալի պատմական ծանօթ ճառը Ազգ. Մեծ. Ժողովի մէջ:

9) Էնկիւրիի 1926 թ. դատավարութեան արձանագրութիւնները Պոլսի ժամանակակից մամուլից:

1953. մայիս
Բէյրութ.

Ս. Վր.

I

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՒ ԲՐԵՍՏ-ԼԻՏՈՎՍԿ

1918 թ. մայիսին, քաղաքական դէպքերի բերումով և հայ ժողովրդի առնական բազուկով ստեղծուեց Հայաստանի Հանրապետութիւնը։

Երկու և կէս տարուայ ընթացքին, անձեւ քաոսի և աւերածութեան միջից ծնուած մանուկ պետութիւնը, հաստատ նստեց, կազմակերպուեց, ամրացաւ, քաղաքական կերպարանք ստացաւ, ճանաչուեց արտաքին ուժերի կողմից, ուրիշ մեծ ու փոքր պետութիւնների հետ միասին ստորագրելով Սեւրի դաշնագիրը՝ հասաւ Հայկական Հարցի տրամաբանական լուծման և հաւասարէ հաւասար մըտաւ ազգերի միջազգային համակեցութեան մէջ։

1920 թ. դեկտեմբերին, սակայն, Հայաստանը ստիպուած եղաւ ընդունելու խորհրդային վարչաձեւը, ապա՝ հրաժարուելու անկախութիւնից։ Ինչո՞ւ։ Արդեօք հայ ժողովուրդը արժանի չէ՞ր անկախութեան։ Արդեօք Հայաստանը անընդունա՞կ էր ինքնուրոյն պետական կեանքով ապրելու։

Առարկայական փաստերի անաչառ ուսումնասիրութիւնը իրաւունք է տալիս մեզ պնդելու, որ Հայաստանի անկախութեան անկման պատճառները ներքին չէին, այլ գերազանցապէս արտաքին։ Հայաստանի Հանրապետութիւնը ընկաւ Թուրքերի և բոլշեւիկների միացեալ հարուածների տակ։ Եւ առաջին հերթին բոլշեւիկների, որովհետեւ եթէ Խորհրդային Ռուսաստանը չքաջալերէր ու չօգնէր, քեմալական Թուրքիան, այն ժամանակուայ պայմաններում, համարձակութիւն չէր ունենայ յարձակուելու Հայաստանի վրայ։

Բոլշևիկները իրենց վերաբերումի մէջ հէնց սկզբից, անկեղծ չէին դէպի Հայկական Հարցը։ Այս տեսակէտից ո՛չ մի տարբերութիւն չկայ խորհրդային և դրամատիրական պետութիւնների քաղաքականութեանց միջև։ Երկուսն էլ Հայաստանն ու Հայկական Հարցը նկատում էին և շարունակում են նկատել ոչ թէ նպատակ, այլ միայն միջոց իրենց աշխարհակալական ծրագիրների յաջողութեան համար։

Ըստ էութեան, Խորհրդ. Ռուսաստանը Թրքահայաստանի հետ աւելի վատ վարուեց, քան նոյնիսկ ցարական Ռուսաստանը։ Սազոնովը Թրքահայերին դէթ «եկեղեցական ինքնավարութիւն» էր շնորհում, Լենինն ու Ստալինը այդ էլ զլացան։ Միլիւկովը գոնէ խոստանում էր գրաւել Թրքահայ նահանգները և Ռուսաստանի հովանաւորութեան տակ ինքնավարութիւն տալ հայերին, Լենինը ո՛չ միայն ամբողջ Թրքահայաստանից ձեռք քաշեց, այլ Ռուսահայաստանի մի մասն էլ զիջեց Թուրքերին՝ այն արդարացումով, թէ մեծ նպատակները մեծ զոհեր են պահանջում։

Լենինի համար Հայկական Հարցը միայն մէկ արժէք ունէր — պայքարի զէնք՝ հակառակորդների դէմ։ Եւ նա մէկից աւելի անգամներ, իր ճառերում ու յօդուածների մէջ, օգտագործեց այդ զէնքը։

1917 և 1918 թուականներին Հայկական Հարցը Եւրոպայի ուշադրութիւնը գրաւող խնդիրներից մէկն էր։ Դիւանագիտական շրջանակները, ընկերվարական համագումարները, պետական մարդիկ, յաճախ, զբաղւում էին հայերի ճակատագրով։ Մանաւանդ ազատամիտ և արմատական շրջանակները ջերմ համակրանք էին արտայայտում դէպի հայերն ու հայկական բաղձանքները։ Եւ բնական է, որ ցարական իշխանութեան տապալումից յետոյ, Ռուսաստանի ժամանակաւոր կառավարութիւնը անմիջապէս աշխատէր դարմանել հին կառավարութեան գործած անարդարութիւնները հայերի վերաբերմամբ։

Այս մտայնութեան արդիւնքն էր ժամանակաւոր կառավարութեան 1917 թ. ապրիլ 26-ի կարգադրութիւնը Թրքահայաստանի մասին։

Այդ կարգադրութեամբ, «մինչև խաղաղութեան դաշնագրով Թրքահայաստանի վիճակի վերջնական որոշումը» Թուրքերից նուաճուած վայրերի համար սահմանւում էր առանձին վարչութիւն, որ պիտի լինէր անկախ կովկասեան իշխանութիւնից ու ենթակայ ուղղակի Պետրոգրադի կենտրոնական կառավարութեան։

Այս կարգադրութիւնը, բնականաբար, ընդհանուր ուրախութիւն պիտի պատճառէր հայերին։ Թրքահայկական նահանգները իրապէս վերածուեցին ինքնավար շրջանի՝ ժամ. կառավարութեան նշանակած կոմիսարի ղեկավարութեան տակ։ Կոմիսարի օգնականը հայ էր՝ բժ. Յ. Զաւրեան։ Գաւառապետներից շատերը և տեղական պաշտօնէութեան մեծ մասը նոյնպէս հայեր էին։ Շուտով գաղթականութիւնը վերադարձաւ իր տեղերը, և 1917 թ. ամառը, Վասպուրականից սկսած մինչև Երզնկա, ամբողջ տարածութիւնը բնակեցուած էր գրեթէ բացառապէս հայերով։ Մօտ 150,000 հայութիւն կար այդ օրերին ռուս բանակի գրաւած շրջաններում, որ մեծ աշխուժութեամբ ձեռնարկեց աւերուած բնակավայրերի վերաշինութեան և տնտեսութեան վերականգնման։

Ժամ. կառավարութեան այս կարգադրութիւնը բուռն քննադատութեան ենթարկուեց բոլշևիկների, մանաւանդ Լենինի կողմից։ Մեկնելով իրենց հիմնական սկզբունքից՝ «հաշտութիւն առանց հողերի գրաւման և ռազմատուգանքի»՝ բոլշևիկները մեղադրում էին, թէ ժամ. կառավարութիւնը ռուս բանակը պահելով Թրքահայաստանում՝ նուաճողական նպատակներ է հետապնդում։ Հեռացրէ՛ք ռուս բանակը Հայաստանից, պահանջում էին բոլշևիկները ժամ. կառավարութիւնից, այլապէս ձեր և ցարական կառավարութեան միջև ո՛չ մի տարբերութիւն չի լինի։

«Մենք, գրում էր Լենինը, պարտաւոր ենք անմիջապէս գոհացնել ուկրայնացիներին ու ֆիններին, ապահովել նրանց և Ռուսաստանի բոլոր օտար ցեղերին կատարեալ ազատութիւն, մինչեւ անջատուելու իրաւունք. նոյնը պէտք է գործադրենք ամբողջ Հայաստանի վերաբերմամբ, պարտաւոր ենք զօրքերը հեռացնել Հայաստանից եւ մեր կողմից գրաւուած թրքական հողերից» (*): (Ընդգծումը մերն է. Ս. Վ.)։

Քիչ վերջը՝ նա գրում էր. «Եթէ վաղը խորհուրդները ձեռք առնեն իշխանութիւնը.. մենք կ'ասենք. դո՛ւրս հանեցէք զօրքերը Հայաստանից, այլապէս կը լինի խաբէութիւն»։

Զուր էր հակաճառում Կերենսկին, թէ ռուս բանակի հեռացումը Հայաստանից կը լինի ոչ թէ հայերի ինքնորոշում, այլ անխնայ ջարդ, թէ ռուս զօրքերը չեն հեռացւում ո՛չ թէ Հայաստանը գրաւելու դիտաւորութեամբ, այլ հայ խաղաղ բնակչութիւնը, մինչեւ հաշտութեան կնքումը, պաշտպանելու նպատակով։ Լենինին՝ այդ բացատրութիւնները չէին գոհացնում։ Նա ճառերով ու յօդուածներով շարունակում էր յամառ կերպով պահանջել ռուս բանակը անյապաղ հեռացնել հայկական նահանգներից։

Նոյն պահանջը Լենինը դրեց և խորհուրդների առաջին համագումարում 1917 թ. մայիսին։ Ցոյց տալու համար համաշխարհային բանուորութեան և ճնշուած ժողովուրդներին, որ յեղափոխական Ռուսաստանը նուաճողական նպատակներ չի սնուցանում, նա պահանջում էր, որ ռուս բանակը անմիջապէս հեռացուի Հայաստանից։ «Եթէ այդ բանակը, ասում էր նա, որ այժմ պահւում է Հայաստանում և բռնագրաւում է կատարում, որ դուք հանդուրժում էք, եթէ այդ բանակը Հայաստանը դարձնէր անկախ Հայաստանի Հանրապետութիւն և այն

(*) Լենինի Երկերը, ռուսերէն, հատոր 14րդ, մաս Բ., էջ 128:

դրամները, որ մեզանից առնում են Անգլիայի և Ֆրանսայի դրամատէրները, տրուէին նրան, աւելի լաւ կը լինէր»։

Յ. Թւլահաս ամէն մարդու համար հասկանալի էր, որ, ա՛յն ժամանակուայ պայմաններում, «անկախ Հայաստանի Հանրապետութիւն» կարելի չէր ստեղծել։ Պարզ էր նոյնպէս, որ ռուսական բանակը Հայաստանից դուրս բերելը հաւասար կը լինէր հայերի բնաջնջման։ Եթէ Լենինը իրօք յարգում էր հայերի ինքնորոշման իրաւունքը, հէնց այդ իրաւունքով հայերը խնդրում ու պահանջում էին, որ ռուս զօրքը ո՛չ միայն չհեռացուի Հայաստանից, այլ աւելի եւս զօրացուի։ Բայց, ինչպէս ճիշդ ասում է բոլշեւիկ պատմաբան Բ. Բորեանը, Լենինի համար կարեւորը Հայաստանն ու հայերը չէին, այլ բոլշեւիզմի յեղափոխական նպատակները։ Լենինի համար «Հայկական Հարցը միջոց էր և ոչ թէ նպատակ (*)։ «Հայաստանը Լենինի համար զէնք էր լուծելու համար դիւանագիտական կնճիռներն ու խաղերը» (**)։

Բորեանը արդարացնում է իր ուսուցչի ճիզուիտական այս քաղաքականութիւնը նրանով, որ համաշխարհային յեղափոխութեան շահերը ա՛յդ էին պահանջում և որ մեծ նպատակների համար փոքր նպատակները պէտք է զոհուին. բայց դրանից ոչ հայ ժողովրդի կրած տառապանքները կը մեղմանան, ոչ էլ Լենինի բարոյականութիւնը որեւէ արդարացում կը գտնէ։

Նոյն Լենինի պնդումով խորհուրդների երրորդ համագումարի հրատարակած «Աշխատաւոր և շահագործուող ժողովրդի իրաւունքների յայտարարութեան» մէջ, գրուեց հետեւեալ կէտը. «Խորհուրդների երրորդ համագումարը ողջունում է ժողովրդական կոմիսարների խորհրդի քա-

(*) «Հայաստան, Միջազգային Դիւանագիտութիւնը եւ Խ. Ս. Հանր. Միութիւնը». Բ. հատոր, էջ 362:
(**) Նոյն տեղ, էջ 377:

ղաքականութիւնը, որ յայտարարել է Ֆինլանդիայի կատարեալ անկախութիւնը, սկսել է դուրս բերել զօրքերը Պարսկաստանից, յայտարարել է Հայաստանի ինքնավարութեան ազատութիւնը»։

Այս կէտը հետագային, 1918 թ. յուլիս 10 ին, Խորհուրդների 5-րդ համագումարի կողմից մտցուեց Խորհրդային պետութեան հիմնական օրէնքների մէջ և կազմեց Խորհրդ. Ռուսաստանի Սահմանադրութեան առաջին մասի երրորդ գլխի 6-րդ յօդուածը։

Միեւնոյն ոգով է կազմուած և Ժողովրդ. Կոմիսարների Խորհրդի 1917 թ. դեկտ. 31-ի ծանօթ դեկրետը Թրքահայաստանի ինքնորոշման մասին՝ ստորագրուած Լենինի և Ստալինի կողմից։ Այդ դեկրետը բառացի կերպով ասում է հետեւեալը —

«Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը յայտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի Գիւղացիական և Բանուորական կառավարութիւնը կը պաշտպանէ Ռուսաստանի գրաւած Թրքահայաստանի հայերի իրաւունքը ազատ ինքնորոշուելու մինչեւ կատարեալ անկախութիւն։ Ժողովրդ. Կոմիս. Խորհուրդը կարծում է, որ այդ իրաւունքի իրագործումը հնարաւոր է միայն մի շարք նախնական երաշխիքների պայմանով, որոնք բացարձակապէս անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ հանրաքուէի համար։ Այդպիսի երաշխիքներ Ժող. Կոմ. Խորհուրդը համարում է։

1) «Զօրքերի հեռացումը Թրքահայաստանի սահմաններից և անմիջապէս հայկական միլիցիայի կազմակերպումը Թրքահայաստանի բնակիչների անձի և գոյքի ապահովութիւնը երաշխաւորելու համար։

2) «Հայ գաղթականների, այլ և զանազան երկիրներում ցրուած հայ տարագիրների անյապաղ վերադարձը Թրքահայաստանի սահմանները։

3) «Պատերազմի ժամանակ Թրքական իշխանութիւնների կողմից բռնի կերպով դէպի Թուրքիայի խորքերը

տեղահանուած հայերի վերադարձը Թրքահայաստանի սահմանները, որի վրայ Ժող. Կոմ. Խորհուրդը պիտի պնդէ հաշտութեան բանակցութիւնների ժամանակ Թուրք իշխանութիւնների հետ։

4) «Ժամանակաւոր ժողովրդական կառավարութեան կազմակերպումը Թրքահայաստանում Պատգամաւորների Խորհրդի և Հայկական Կոմիտէի ձեւով՝ ընտրուած ռամկավարական սկզբունքներով։

«Կովկասեան գործերի արտակարգ ժամանակաւոր կոմիսար Ստեփան Շահումեանին յանձնարարւում է՝ ցոյց տալ Թրքահայաստանի բնակչութեան ամէն տեսակ աջակցութիւն երկրորդ և երրորդ կէտերի իրականացման գործում, այլ և ձեռնարկել տեղական յանձնախումբի կազմութեան՝ զօրքերը Թրքահայաստանի սահմաններից դուրս բերելու եղանակը մշակելու համար։

«Ծանօթութիւն.— Թրքահայաստանի աշխարհագրական սահմանները կ'որոշուին հայ ժողովրդի ռամկավարական ձեւով ընտրուած ներկայացուցիչների միջոցով՝ համախորհուրդ սահմանակից և վիճելի (մահմետական և այլ) շրջանների ռամկավարական ձեւով ընտրուած ներկայացուցիչների հետ Կովկասեան գործերի արտակարգ ժամանակաւոր կոմիսարի հետ միասին»։

Հետաքրքրական է, որ յայտնի բոլշեւիկ Պօղ. Մակինցեանը (այժմ գնդակահարուած) յայտնում է, որ այս դեկրետի նախապատրաստութեան մէջ գործօն մասնակցութիւն են ունեցել բանաստեղծ Վ. Տէրեանը և Ս. Սրապիոնեանը (Լուկաշին)։ Իսկ Բ. Բօրեանը պնդում է, թէ «այս հարցում հանգուցեալ Շահումեանը վճռական դեր է խաղացել»։

Բօրեանի ասելով՝ հայերի առաջարկած նախագծում եղել է հետեւեալ կէտը. «Պահանջուած քանակով ռուս զօրքեր կը պահուին Հայաստանի սահմաններում (նախկին Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայէթներում), մինչեւ այն ժամանակ, երբ գերիշխան հայ ժողովուրդը փի-

զինական հնարաւորութիւն տանայ ազատ համաժողովրդական քուէարկութեամբ որոշելու անկախ Հայաստանի ներքին կազմակերպութեան հարցը և մինչեւ որ կազմուի հայ ժողովրդական միլիցիան՝ երաշխաւորելու համար ներքին կարգը և երկրի արտաքին ապահովութիւնը (*):

Վ. Տէրեան և Ս. Շահումեան շատ լաւ ծանօթ էին Թրքահայաստանի վիճակին և բնական է, որ նման պահանջ դնէին դեկրետի մէջ, առանց որի ամէն խօսուած կը լինէր պարապ խօսք: Հայաստանի ապահովութեան և ինքնորոշման հնարաւորութեան միակ պայմանը այն օրերին ռուսական բանակի ներկայութիւնն էր, մինչեւ որ պատերազմը վերջանար և ստեղծուէր բնականոն վիճակ: Ճիշդ է ասում Բորեանը. «Հայերը գերադասում էին «բռնադրաւուած» լինել Խորհրդային կառավարական զօրքերից, քան թէ ունենալ թրքահայերի «ինքնորոշումը» թղթի վրայ և մնալ ռուսահայերի ֆիզիքական բնաջնջման սպառնալիքի տակ թուրքերի կողմից»: Բայց ժող. կոմ. Խորհրդին հետաքրքրողը Հայաստանն ու հայերը չէին, այլ միջազգային յեղափոխութիւնը և արեւելեան-իսլամ ազգերին սիրաշահելու հաշիւը: Պահել ռուսական բանակը Թրքահայաստանում՝ պիտի նշանակէր անհաճոյ գործ կատարել Թուրքերի համար, մինչդեռ, ինչպէս կը տեսնենք հետագային, Թուրքիան և իսլամ աշխարհը բոլշեւիկների աչքին մեծ կարեւորութիւն ունէին, և բոլշեւիկները արդէն բանակցութեան մէջ էին Թուրքերի հետ: Բոլշեւիկների համար, ասում է Բորեանը, «ամբողջի շահերը աւելի բարձր են, քան մասի շահերը»: Հայերը «մաս» էին և պէտք է զոհուէին «ամբողջ»ի սեղանի վրայ: Եւ հայ բոլշեւիկների առաջարկած կէտը չմտաւ դեկրետի մէջ:

(*) Բորեան, Բ. հատոր, էջ 261. «Նորք», 1925, թիւ 5-6, էջ 414-415:

Այս այն դեկրետն է, որի առթիւ Ստալինը յայտնում էր, թէ Հայկական Հարցը լուծուեց միայն խորհրդային իշխանութեան ջանքերով: Հետագային, Ալ. Մեասնիկեանն էլ հաստատեց, թէ՝ Հայկական Հարցը լուծուած վերջացած է խորհրդային քաղաքականութեան շնորհիւ:

Դեկրետի բնական հետեւանքները տեսնելու համար շատ սպասելու պէտք չեղաւ: Խօսքին անմիջապէս յաջորդեց գործը: Խորհրդային իշխանութեան հրամանով ռուսական զօրքերը ձգեցին Թրքահայաստանը և հեռացան Ռուսաստան: Հայոց Ձորից սկսած մինչեւ Երզնկա, այդ լայնատարած ռազմաճակատի պաշտպանութիւնը մնաց հայկական նորակազմ զօրամասերի և կամաւորական խմբերի վրայ, որոնց առջեւ կանգնած էր թարմ ուժերով զօրացած թրքական բանակը: Բնական էր, որ հայերը մինակ պիտի չկարողանային պաշտպանել այդ ընդարձակ տարածութիւնը: Եւ հետեւանքը եղաւ այն, որ Վեհիբ փաշայի զօրամասերը, իրենց շուրջը սփռելով աւեր ու կոտորած, առաջ շարժուեցան, և մի քանի ամսում ամբողջ Թրքահայաստանը անցաւ թուրքերի ձեռքը: Բոլշեւիկների ձեռքով «ինքնորոշուած» թրքահայութիւնը՝ բնաւեր ու խուճապահար՝ նորից բռնեց գաղթի և թշուառութեան ճանապարհը:

Բոլշեւիկեան քաղաքականութիւնը նոյն հետեւանքներն ունեցաւ և ամբողջ Ռուսաստանի վերաբերմամբ — ներքին քաոս և ճակատների փլուզում: Անզօր շարունակելու պատերազմը՝ խորհրդային իշխանութիւնը խընդրեց հաշտութիւն: Յաղթական Գերմանիան դրեց տաժանելի պայմաններ: Լենինի կառավարութիւնը ուրիշ ելք չունէր, բայց եթէ ընդունել թշնամու պահանջը: Եւ 1918 թ. մարտին ստորագրուեց Բրեստ-Լիտովսկի «խայտառակ խաղաղութեան» դաշնագիրը:

Այդ դաշնագրի 4-րդ կէտը անմիջապէս վերաբերում է հայերին: Այնտեղ ասուած է. «Ռուսաստանը պէտք է կատարէ իրենից կախուած ամէն բան, որպէսզի ապահո-

վէ Արեւելեան Անատոլուի նահանգների շուտափոյթ պարպումը եւ նրանց օրինաւոր վերադարձը Թուրքիային։ Արդահանի, Կարսի եւ Բաթումի շրջանները պէտք է նոյնպէս անմիջապէս պարպուին ռուս զօրքերից։ Ռուսաստանը չպէտք է խառնուի այդ շրջանների պետական, միջազգային - իրաւական յարաբերութիւնների մէջ, այլ պէտք է թոյլ տայ, որ այդ շրջանների բնակչութիւնը ինքը սահմանէ նոր կարգ՝ համախորհուրդ հարեւան պետութիւնների, ի մասնաւորի, Թուրքիայի հետ»։

Ուրիշ խօսքով՝ բոլշեւիկները ոչ միայն ամբողջ Թրքահայաստանը յանձնում էին Թուրքերին, այլ՝ վերադարձնում նաեւ Ռուսահայաստանի երեք կարեւոր շրջանները։

Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը աւելի եւս արձակեց Թուրքերի ձեռքերը։ Նրանք չմնացին ռուս-թրքական սահմանագծի վրայ եւ շարժուեցին դէպի Կովկասի ներսերը՝ իրենց հետ բերելով աւեր ու կոտորած։

Այս առթիւ Անդրկովկասի կոմիսարիատը ստացաւ Չիչերինի եւ Կարախանի հետեւեալ հեռագիրը.—

«Թրքական բանակը շարժւում է դէպի Բաթում, Կարս եւ Արդահան՝ աւերելով երկիրը եւ բնաջնջելով գիւղացի բնակչութիւնը։ Հայերի հետագայ ճակատագրի պատասխանատուութիւնը ընկնում է Գերմանիայի վրայ, որովհետեւ նրա պահանջով էր, որ ռուս զօրքերը դուրս հանուեցին հայկական շրջաններից, եւ այժմ նրանից է կախուած թրքական զօրքերի զսպումը սովորական բռնութիւններից»։

Ուրեմն, իրենց ամբողջ քարոզչութեամբ ու գործերով, Լենինի ճառերով, յօդուածներով ու դեկրետներով բոլշեւիկները չէին ուզում զօրքերը հեռացնել Թրքահայաստանից եւ միայն Գերմանիայի պահանջո՞վ հեռացրին։ Մաքիավէլլութիւնը ամէն փիւանագիտութեան յատուկ է, բայց սորն ու կեղծիքին էլ սահման կայ։ Դեռ Բրեստ-Լիտովսկից շա՜տ առաջ ռուս զօրքերը հեռացուած էին Հայաստանից։ Բրեստ-Լիտովսկի օրերին միայն հայկական զօրամասեր կային Հայաստանի ճակատում։

Չիչերին-Կարախանի հեռագիրը յանցաւոր խղճի ինքնարդարացման անյաջող ճիգ էր սոսկ՝ իրենց իսկ ձեռքով կործանման դատապարտուած մի ժողովրդի գերեզմանի առջեւ...

Անշուշտ, Լենինը աւելի անկեղծ էր, երբ հետագային, հայ ժողովրդի ամենաողբերգական վայրկեանին, իր մտերիմ զինակից Արշաւիր Մելիքեանի գլխաւորութեամբ իրեն ներկայացող հայ բոլշեւիկներին պատասխանեց. «Սիրելի ընկերներ, ցաւում եմ հայ ժողովրդի ճակատագրի համար, բայց մենք 15 միլիոն ռուսներ զոհեցինք համաշխարհային յեղափոխութեան համար եւ եթէ պէտք լինի, եւս 15 միլիոն կը զոհենք։ Համաշխարհային յեղափոխութիւնը զոհեր է պահանջում։ Ցաւում եմ, եթէ մէկ միլիոն հայեր էլ զոհուին...»։

Արշաւիր Մելիքեանը, որ Լենինի հաւատարիմ զինակիցն էր եղել տարագրութեան օրերին, այնուհետեւ խորտակուեց հոգեպէս ու կորաւ անյայտութեան մէջ ուրիշ գաղափարական բոլշեւիկների նման։

II

ԹՈՒՐՔ-ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ

Բոլշեւիկները և, յատկապէս Լենինը, մեծ նշանակութիւն էին տալիս արեւելեան ժողովուրդների մասնակցութեան համաշխարհային յեղափոխութեան պայքարին. Արեւելեան ժողովուրդները, Լենինի կարծիքով, վճռական դեր պիտի կատարէին յեղափոխութեան մէջ։

Հոկտեմբերեան յեղաշրջումից անմիջապէս յետոյ, Խորհրդային իշխանութիւնը առանձին յայտարարութեամբ մարտակոչ ուղղեց արեւելեան ժողովուրդներին։ Իսկ Լենինը մէկից աւելի անգամներ գրել ու խօսել է այդ հարցի մասին։ Այսպէս, Համայնավար կուսակցութեան երրորդ համագումարում, խօսքը ուղղելով արեւելեան ժողովուրդներին, նա ասում էր. «Արեւելքի ժողովուրդների զարթօնքի շրջանից յետոյ, ժամանակակից յեղափոխութեան մէջ սկսւում է Արեւելեան ժողովուրդների անմիջական մասնակցութիւնը ամբողջ աշխարհի ճակատագրի որոշման։ Արեւելքի ժողովուրդները արթնանում են, որպէսզի եռանդով գործեն և որպէսզի ամէն ժողովուրդ լուծէ բովանդակ մարդկութեան ճակատագրի հարցը։

«Ահա թէ ինչու ես կարծում եմ, որ համաշխարհային յեղափոխութեան մէջ, որ սկզբից դատելով, պիտի շարունակուի երկար տարիներ և պիտի արժէ շատ աշխատանք, ձեզ վիճակուած է մեծ դեր, և դուք ձե՛ր պայքարով պէտք է միանաք մեր պայքարին համաշխարհային աշխարհակալութեան դէմ... Այժմ մեր Խորհրդային

Հանրապետութիւնը պէտք է իր շուրջը համախմբէ Արեւելքի բոլոր արթնացող ժողովուրդներին, որպէսզի նրանց հետ միասին պայքար մղենք միջազգային աշխարհակալութեան դէմ»։

Եւ Լենինը հրաւիրում է Արեւելեան ժողովուրդներին կազմել տեղական յեղափոխական բջիջներ, կապուել Երրորդ Միջազգայինի հետ, ձեռք մեկնել առաջաւոր բանուորութեան և միահամուռ ուժերով պայքարել ընդհանուր թշնամու դէմ։

Այնուհետեւ Լենինի արծարծած այս սկզբունքները հիմք դարձան բոլշեւիկների արեւելեան քաղաքականութեան։ Երրորդ Միջազգայինը և Խորհրդային իշխանութիւնը մասնաւոր ուշադրութիւն դարձրին իսլամ ժողովուրդների վրայ և շատ ջանք թափեցին նրանց համակրանքը շահելու համար, առանց միջոցների մէջ խտրութիւն դնելու, գրգռելով և օգտագործելով նոյնիսկ կրօնական մոլեռանդութիւնը։ Շատ տեղեր իսլամ մոլլաներն ու սօֆտաները դարձան բոլշեւիկների գործակիցներ։ Այդ տեսակէտից, իբրեւ բնորոշ օրինակ, առաջ բերենք մի հատուած Դաղստանի մահմետական հոգեւորականների համագումարի ընդունած բանաձեւից։

«Համագումարը, ասում են բոլշեւիկացած մոլլաները, հրաւիրում է բոլոր մահմետականներին, ամէն տեղ, ուր կը լսուի մեր կոչը, ի բոլոր սրտէ և անկեղծութեամբ ենթարկուել գոյութիւն ունեցող Խորհրդ. իշխանութեան և նրա հետ ձեռք ձեռքի կռուել Խորհրդային ազատ հանրապետութիւնների և բովանդակ իսլամ աշխարհի ընդհանուր թշնամիների դէմ։ Որովհետեւ նա որ ուզում է Խորհրդային իշխանութեան կործանումը՝ ուզում է նաեւ իսլամ աշխարհի ստրկացումը։ Յիշեցէ՛ք, որ Ղուրանը ասում է, թէ տիրող իշխանութեան հպատակուելը մեր պարտականութիւնն է, մանաւանդ որ Խորհրդային իշխանութիւնը իսլամներին ազատում է ստրկութիւնից։ Մա՛հ Խորհրդային իշխանութեան և բոլոր մահմետական-

ների թշնամիներին։ Սրբազան պատերա՛զմ մեր ամէնքի ընդհանուր թշնամիների դէմ (*)։

Եւ միայն Դաղստանում չէր։ Արեւելքի մահմեդական հոգեւորականների մեծ մասը համակրանքով էր նայում բոլշեւիկներին, մանաւանդ, առաջին շրջանում, որովհետեւ չօշափելի փաստերով տեսնում էր խորհրդային իշխանութեան հովանաւորութիւնը իսլամ աշխարհին։

Եւ, յիրաւի, բոլշեւիկները ոչ մի ջանք չէին խնայում տարածելու համար իրենց ազդեցութիւնը մահմեդական երկիրներում՝ գրգռելով վերջիններիս թշնամանքը եւրոպական աշխարհակալների դէմ, յաճախ, զոհաբերելով քրիստոնեայ ժողովուրդներին իրենց քաղաքական նպատակների համար։

Այս տեսակէտից, բոլշեւիկների համար առանձին գրաւչութիւն և արժէք էին ներկայացնում Թուրքերը և Թուրքիան, որ խալիֆայութեան կենտրոնն էր և մեծ հմայք ունէր իսլամ ժողովուրդների աչքին։ Գրաւել Թուրքերի համակրանքը և աջակցութիւնը՝ պիտի նշանակէր ամբողջ իսլամ աշխարհի համակրանքն ու աջակցութիւնը շահել։ Յատկապէս Անգլիայի դէմ մղուող պայքարում իսլամութիւնը — Վոսփորի ափերից սկսած մինչեւ Ալթայ ու Հնդկաստան, Ասիա ու Աֆրիկէ — հսկայական ոյժ էր։ Համաշխարհային յեղափոխութեան ձըգտող Լենինի և իր ընկերների համար քաղաքական պարզ շահի խնդիր էր Թուրքերի բարեկամութիւնը վաստակելը։

Ուստի և բնաւ զարմանալի չէ, որ Թուրքիայի պարտութեան գրեթէ յաջորդ օրն իսկ սերտ բարեկամութիւն հաստատուեց բոլշեւիկների և Պոլսից փախած Թուրք Իթթիհատական պարագլուխների միջեւ։

Մուդրոսի զինադադարի նախօրեակին, 1918 թ. հոկտեմբերի վերջերը, Թալէաթ փաշայի կառավարութիւնը

(*) Ն. Սամուրսկի (Էֆենդիեւ), «Դաղստան» (ռուսերէն), Մոսկուա, 1925. էջ 135-36:

տեսնելով, որ պարտութիւնը անխուսափելի է, հաշտութիւն խնդրեց անգլիացիներից և միեւնոյն ժամանակ հրաժարուեց իշխանութիւնից՝ իր տեղը տալով Դաշնակիցների համար ընդունելի կառավարութեան։

Միեւնոյն ժամանակ, Իթթիհատի համագումար հրաւիրուեց հապճեպով, ուր որոշուեց Իթթիհատը յայտարարել լուծուած և փոխարէնը ստեղծել մի նոր կազմակերպութիւն Թէճէտտիւտ անունով, որին փոխանցուեցին Իթթիհատի բոլոր գործերը, գոյքերն ու դրամները և որ նոր անունով պիտի շարունակէր Իթթիհատի գործը։ Որոշուեց նաև, որ Իթթիհատական պատասխանատու վարիչները անմիջապէս հեռանան երկրից։

Իթթիհատական պետերը Պոլսից փախան Մուդրոսի զինադադարի ստորագրութեան օրը։ Իթթիհատի կենտրոնի ազդեցիկ անդամ Դոկտ. Նազըմ այսպէս է բացատրում փախուստի պատճառները։ «Փախչելու ծրագիրը ընդհանուր կենտրոնից ծնունդ առաւ։ Խորհուեցաւ, թէ Թալէաթ, Էնվեր փաշաները, Նազըմ և Բէհաէդդին Շաքիր պէտք է հեռանան։ Քրիստոնեաները՝ յոյները և հայերը սրանց հանդէպ թշնամութիւն ունէին և նրանց պատրուակ բռնելով՝ կարող էին խռովութիւններ յարուցանել երկրում»։

Ուրեմն, փախուստի բուն պատճառը վախն էր քրիստոնեաներից և առաջին հերթին, ի հարկէ, հայերից։

Հայերի վախը հետագային, Բերլինում էլ, հանգիստ չի թողնում ջարդարարներին։ «Լսած լինելով, որ Բերլինի հայերը ցոյց պիտի կատարէին մեր դէմ, մենք մի սանատորիում մտանք և այնտեղ մնացինք։ Այնտեղ Իսլամ Յեղափոխականների Ընկերութեան սկզբունքները ճշդեցինք», վկայում է Դոկտ. Նազըմը։

Պոլսից փախչողների մէջ էին Էնվեր, Թալէաթ և Ճէմալ փաշաները, Դոկտ. Նազըմ, Բէհաէդդին Շաքիր, Պետրի բէյ, Դոկտ. Ռուսուխի, Ճէմալ Ազմի, Դոկտ. Ֆուատ եւ այլն — բոլորն էլ ականաւոր և արիւնարբու Իթ-

թիհատականներ։ Հետագային, նրանց միանում են և ուրիշներ, ինչպես Բիւչուք Թալէաթ, Խալիլ փաշա, Ճավիտ բէյ և այլն։

Փախստականները, գերմանական Թորփիլանավով, ուղղւում են դէպի Ղրիմ և Սեւաստոպոլի վրայով անցնում Բերլին։ Էնվերը ճանապարհին զատւում է Կովկաս անցնելու համար, բայց վերջը դարձեալ միանում է Բերլինի խմբին։

Իթթիհատական ջարդարարները Բերլին են հասնում Գերմանիայի պարտութեան և յեղափոխութեան օրերին։ Վախենալով հայերի վրէժխնդրութիւնից՝ մի առժամանակ պահւում են մի բուժարանում, որտեղից և սկսւում է նրանց գործունէութիւնը։ Այստեղից նրանք կապ են հաստատում, պատերազմի օրերին Գերմանիա հաւաքւած հակաանգլիական և հակառուս մահմեդական՝ հնդիկ, թաթար, աֆրիկեցի, արաբ, Թուրքստանցի և այլ գործիչների հետ և որոշում են հիմնել համիսլամական յեղափոխական մի կազմակերպութիւն, որի նպատակը պիտի լինէր պայքարել իսլամ ցեղերի թշնամիների դէմ և պաշտպանել Թուրքիայի շահերը։ Այս կազմակերպութիւնը կոչւում է «Իսլամ Յեղափոխականների Ընկերութիւն», որի կենտրոնական վարչութիւնը բաղկացած էր Էնվէր, Թալէաթ և Ճէմալ փաշաներից, Դոկտ. Նազըմից, Բէհաէդդին Շաքիրից, Դոկտ. Ռուսուխիից, Շէքիբ Արսլանից, Ճէմալ Ազմիից և Դոկտ. Ֆուատից։ Նախագահն էր Էնվէր փաշան, բայց կազմակերպութեան ոգին և իրական վարիչը Թալէաթ փաշան էր, որ յաճախակի ճամբորդութիւններ էր կատարում, կապեր էր հաստատում, տեսակցութիւններ էր ունենում և ուղղութիւն տալիս կազմակերպութեան գործունէութեան։ Ի միջի այլոց, նա ներկայ գտնուեց Ամստերդամի Ընկերվարական համագումարին, ուր պաշտպանեց Թուրքիայի իրաւունքները։ Հռոմ գնաց և տեսնուեցաւ կոմս Սֆորցայի հետ՝ ապահովելով Իտալիայի բարեացակամութիւնը և կոմս Սֆորցայի անձնական աջակցութիւնը թրքական դատին։

Այդ օրերին, Բերլինում, սկսուեց նաև Թուրք-բոլշեւիկեան բարեկամութիւնը, որ շուտով վերածուեցաւ սերտ գործակցութեան։

Թուրքերի հետ առաջին կապ հաստատողը եղաւ յայտնի բոլշեւիկ Կարլ Ռադէկը (այժմ չնորհազուրկ), որ Բերլինում էր գտնւում Խորհրդային իշխանութեան յատուկ յանձնարարութեամբ։ Նա տեսակցութիւններ ունեցաւ Թալէաթի, Էնվէրի, Ճեմալի և սրանց ընկերների հետ, և արդիւնքը եղաւ այն, որ Թուրքերը որոշեցին «Իսլամ Յեղափոխականների Ընկերութեան» գործունէութիւնը փոխադրել Ռուսաստան։ Թուրքերը յանձն առին Ռուսաստանի մահմեդական ժողովուրդների մէջ Խորհրդային իշխանութեան հակառակ աշխատանք չկատարել և իրենց ամբողջ ոյժը ուղղել Անգլիայի դէմ, իսկ բոլշեւիկները խոստացան նիւթական և բարոյական լայն աջակցութիւն ցոյց տալ նրանց։

Այս բանակցութիւնները տեղի ունեցան 1918 թ. վերջերը, և յաջորդ տարուայ սկիզբները Թուրք-բոլշեւիկեան գործակցութիւնը արդէն փաստ էր։ Հետզհետէ իթթիհատական պարագլուխները, զանազան ճանապարհներով, տեղափոխուեցան Ռուսաստան և Մոսկուայում ձեռնարկեցին գործնական աշխատանքների։ Մոսկուա գնացին և Կովկաս ապաստանած Իթթիհատական պարագլուխները։ Այսպիսով, Խորհրդ. Ռուսաստանի մայրաքաղաքը դարձաւ Թուրք ջարդարարների կենտրոնավայր։ Այստեղից էր, որ Էնվէր, Ճեմալ և Խալիլ փաշաները, հայկական կոտորածները կազմակերպող Բէհաէդդին Շաքիր, Դոկտ. Նազըմ, Բիւչիւք Թալէաթ և ուրիշներ տարածեցին իրենց համիսլամական քարոզներն ու դաւադրութիւնները։ Մասնաւորապէս, նրանք բուռն գործունէութիւն էին ցոյց տալիս Անդրկասպեան երկիրներում, Աֆղանիստանում և Կովկասում։

Պէտք չէ մոռանալ, որ Կովկաս արդէն Բրեստ-Լիտովսկի դաշնագրից յետոյ, դարձած էր Թուրքերի գոր-

ծունէութեան վայր։ Այնտեղ էր Նուրի փաշայի «իսլամ բանակը», որ մասնակցեց Բագուի գրաւման և կոտորածին, 1918 թ. սեպտեմբերին։ Այնտեղ յաճախ երեւում էր Խալիլ փաշան։ Բագու և Գանձակ հաւաքուած էին բազմաթիւ Թուրք զինուորականներ ու մտաւորականներ, որոնք պաշտօններ էին ստացել Ազրբէջանի բանակի, կառավարական հաստատութիւնների և դպրոցների մէջ։ Թուրքերի ազդեցութիւնը Ազրբէջանում շատ զօրաւոր էր։

Երբ Բերլինի Թուրքերը երեւացին Մոսկուայում, անմիջապէս կապ ստեղծուեց սրանց և Կովկաս գտնուողների միջեւ։ Բագուն դարձաւ մի տեսակ կամուրջ էնկիւրիի կառավարութեան և Ռուսաստանում գործող Թուրքերի միջեւ, որով հաստատուեցաւ ընդհանուր ճակատ Մուսթաֆա Քեմալի և երկրից փախած Իթթիհատականների միջեւ։

Ինչի՞ էին ձգտում Թուրքերը։ — Պահպանել Թուրքիայի ամբողջութիւնն ու անձեռնմխելիութիւնը, միացընել իսլամ ժողովուրդներին Թուրքիայի ղեկավարութեան ներքեւ, առնել Ազրբէջանը Թուրքիայի հովանաւորութեան տակ, թոյլ չտալ, որ Թրքահայաստանից հող տրուի հայերին և, առհասարակ, խորտակել Հայաստանի Հանրապետութիւնը և ոչնչացնել հայերի ոյժը նաև Կովկասում։

Բոլշեւիկները այս բոլորը գիտէին, բայց նրանք ո՛չ միայն արգելք չէին լինում Թուրքերի գործունէութեան, այլ և կատարելապէս համաձայն էին նրանց հետ։ Էնվէր, Խալիլ, Ճէմալ, Նուրի փաշաները և միւս Իթթիհատական պարագլուխները ազատ-համարձակ շրջագայում էին Ռուսաստանում ու Խորհրդային իշխանութեան դրամով և օժանդակութեամբ քարոզչութիւն էին անում և կազմակերպութիւններ առաջ բերում Թուրքեստանում, Աֆղանիստանում, Ազրբէջանում, կովկասեան լեռնականների և Վոլգայի ու Խրիմի Թաթարների մէջ։ Եւ որպէսզի կարողանան բոլշեւիկների վստահութիւնը շահել, Մոսկուայում որոշ փոփոխութիւններ մտցրին «Իսլամ Յեղափոխականների Ընկերութեան» ծրագրի մէջ՝ յարմարուելով բոլշեւիկեան գաղափարներին և ոճին։ Իրենց քարոզչութեան ու հրատարակութիւնների մէջ էլ գործ էին ածում բոլշեւիկեան լեզու։

Յայտնի կոմունիստ Սուլթան Գալիեւը, 1920 թ. մայիսին, Մոսկուայի «Իզվեստիա»յում հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւններն է տալիս Թուրքերի Ռուսաստանում կատարած աշխատանքների մասին։ «Միլլի (*) կազմակերպութիւնը, գրում է նա, Դենիկինի Մոսկուայի վրայ գործած յարձակման ժամանակ, նրա թիկունքում ապստամբութիւն առաջ բերեց և ստիպեց կռուի վճռական րոպէներին իր բանակից մի քանի զօրամասեր ուղղել դէպի յետ՝ ճնշելու համար ապստամբութիւնը։ Այդ ձեւով է աշխատել Միլլի կազմակերպութիւնը և Բաթումի, Կարսի Արդահանի շրջաններում։ Ազրբէջանի բանակում գործող Թրքական սպաները գաղտնի քարոզչութիւն էին անում ի նպաստ միութեան Խորհրդ. Ռուսաստանի հետ։

«Քաղաքական այդ գիծը Միլլի կազմակերպութիւնը աւելի պարզօրէն ցուցահանեց Դաշնակիցների Պոլիսը գրաւելուց և Թրքական Ազգային Երեսփոխանական Ժողովի ցրումից յետոյ։ Բագուի յեղաշրջումից ամիս ու կէս առաջ Բագու հասաւ Մուսթաֆա Քեմալի կողմից յատուկ մի պատուիրակութիւն յայտնելու համար, որ Անատոլուի ապստամբները ցանկանում են յարաբերութեան մէջ մտնել Խորհրդ. Ռուսաստանի հետ և առաջարկում են կամ պատուիրակներ ուղարկել Անատոլու, կամ ընդունել իրենց առաքելութիւնը»։

Եւ բանակցութիւնները Մոսկուայի և էնկիւրիի միջեւ տեղի ունեցան և հաստատուեց աւելի սերտ համաձայնութիւն ու գործակցութիւն։ Այդ համաձայնութեան

(*) Մուսթաֆա Քեմալի կազմակերպութիւնը։

հետեւանքներից մէկն էլ եղաւ «Իսլամական Ջոկատի» կազմակերպութիւնը Բաքւում, Խալիլ փաշայի ձեռքով։

Յուլիս 20-ին Մոսկուայից Բաքու վերադարձաւ Խալիլ փաշան, հանդիսաւոր ընդունելութեան արժանացաւ խորհրդային իշխանութեան կողմից և անմիջապէս ձեռնարկեց «Իսլամական Ջոկատի» կազմութեան։ Խորհրդային իշխանութիւնը հոգաց նրա ամբողջ ծախսը, զէնքն ու ռազմամթերքը, հագուստն ու պարէնը։ Ռուսաստանի զանազան կողմերից՝ Ղրիմից, Կազանից, Ուֆայից, Թուրքեստանից հաւաքուեցին իսլամ կամաւորներ ու Թուրք գերիներ, որոնք մարզուեցին ու կազմակերպուեցին, և այդպիսով ստեղծուեց յատուկ մի զօրամաս, որ հետագային, Խալիլ փաշայի հրամանատարութեան տակ, Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջեւանի վրայով, անցաւ Թուրքիա։

Թուրք-բոլշեւիկեան այս և հետագայ շրջանի գործակցութեան մասին շատ նիւթեր կան այժմ հրատարակուած՝ թէ՛ բոլշեւիկների, թէ՛ Թուրքերի և թէ՛ չէզոք մարդկանց կողմից, բայց ամենէն հետաքրքրականը Իթթիհատական գործիչների իրենց խոստովանութիւններն են, մանաւանդ, այն տեղեկութիւնները, որոնք երեւան եկան Էնկիւրիի նշանաւոր դատավարութեան ընթացքին, 1926 թ ամառը, Անկախութեան Դատարանի առջեւ։

Բերենք այստեղ մի քանի քաղուածքներ այդ դատավարութիւնից՝ աւելի ցայտուն կերպով ներկայացնելու համար Թուրք-բոլշեւիկեան բարեկամութեան և գործակցութեան պատկերը։

III

ՄԵՐԿԱՑՈՒՄՆԵՐ ԷՆԿԻՒՐԻԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Ինչպէս տեսինք, հէնց սկզբից բարեկամութիւն և գործակցութիւն հաստատուեց Թուրքիայից փախած Իթթիհատականների և քեմալականների միջեւ՝ փոխադարձ հասկացողութեամբ և աշխատանքի բաժանման սկզբունքով։ Քեմալականները պիտի գործէին ներսը, իսկ Իթթիհատականները դրսից քաղաքական և նիւթական օգնութիւն պիտի հասցրնէին։

Այս գործակցութիւնը, սակայն, հարթ չէր անցնում։ Իթթիհատականների մէջ կային մարդիկ, ինչպէս Էնվէր փաշան, որոնք հաշտ աչքով չէին դիտում Մուսթաֆա Քեմալի յաջողութիւնը։ Այս վերջինս էլ մեծ հաւատ չունէր Իթթիհատական պետերի անկեղծութեան վրայ։ Բայց երկու կողմի շահն էլ հարկադրում էր գործել համերաշխ։ Մանաւանդ քեմալականների համար, մեծ արժէք էր ներկայացնում բոլշեւիկների աջակցութիւնը, իսկ Իթթիհատականները ուժեղ կապեր ունէին բոլշեւիկների շրջանում։

Իթթիհատական-քեմալական փոխ-յարաբերութիւնների մէջ կարեւոր դեր ունէին և բոլշեւիկները, որ Էնվէրի պէս արկածախնդիր մարդկանց միջոցով ձգտում էին խորհրդայնացնել և իրենց ազդեցութեան տակ առնել Թուրքիան։ Բոլշեւիկներին որոշ յոյս էին ներշնչում և քեմալական զինուորականներից ոմանց «համայնավարական» տրամադրութիւնները։ Քեազիմ Կարաբէքիր փաշան, օրինակ, մի պահ իր զօրամասը վերածել էր «կարմիր բանակ»ի և մէջը մտցրել բոլշեւիկեան կարգեր։

Քեմալականները, սակայն, շատ շուտով խելքի եկան և վերջ տուին նրանց բոլշևիկութեան։ Նրանք նոյնիսկ ծովը թափեցին Ռուսաստանից Տրապիզոն եկած թուրք համայնավարների պատուիրակութեան անդամներին՝ Մուսթաֆա Սուբհիի գլխաւորութեամբ, և այդ վայրագութիւնը ոչնչով չանդրադարձաւ Էնկիւրիի և Մոսկուայի բարեկամական յարաբերութիւնների վրայ։

Էնվէրը չէր կարողանում մարսել Մուսթաֆա Քեմալի յաջողութիւնները և չէր ուզում հաշտուել այն մտքի հետ, որ Թուրքիայի ազատարարը պէտք է լինի իր հակառակորդը և ոչ թէ ինքը։ Որոշ տեղ էր գրաւում և այն հաշիւը, որ քեմալականների պարտութեան դէպքում՝ Թուրքիան կարող էր ազատուել ընդունելով խորհրդային կարգեր և միանալով Խորհրդ. Ռուսաստանի հետ։

Այսպէս թէ այնպէս, Էնվէր և մի քանի իթթիհատական պարագլուխներ, բոլշևիկների դրամով և օժանդակութեամբ, Մոսկուայում հիմք դրին «Ժողովրդական Խորհուրդների Կուսակցութեան» և կենտրոնացան Բաթումի շրջանում՝ յարմար վայրկեանին Թուրքիա ներխուժելու մտադրութեամբ։

Սաքարիայի յաղթանակով այս ծրագիրը ջուրն ընկաւ։ Բոլշևիկներն էլ հիասթափուած՝ կամաց-կամաց սկսան ձեռք քաշել իթթիհատականներից, մանաւանդ երբ համոզուեցին, որ Էնվէր փաշան և իր ընկերները այնքան էլ անկեղծ չէին Խորհրդային իշխանութեան հանդէպ։ Իթթիհատականների մէջ էլ պառակտում ընկաւ և ականաւոր առաջնորդների մի մասը՝ Թալէաթ փաշա, Ճեմալ փաշա, Բէհաէդդին Շաքիր և ուրիշներ կոտորուեցին հայ յեղափոխականների ձեռքով, իսկ Էնվէր փաշայի արկածալից կեանքը վերջ գտաւ Թուրքեստանի տափաստաններում։

Յուսահատուած արտաքին աշխարհից՝ իթթիհատականները զանազան ճանապարհներով վերադարձան Թուրքիա և աշխատեցին ներսից պայթեցնել Մուսթաֆա Քեմա-

լի իշխանութիւնը և նորից իրենց ձեռքը առնել Թուրքիայի կառավարութեան ղեկը։

Ահա այս հանգամանքներում ծագեց իթթիհատական պետերի Էնկիւրիի մեծ դատավարութիւնը, 1926 թ. օգոստոս ամսին։ Այդ դատավարութեան մէջ մեզ համար կարևոր են այն մերկացումները, որ ամբաստանեալները արին թուրք բոլշևիկեան գործակցութեան հետ կապուած դէպքերի մասին։ Ահա՛ այդ մերկացումներից մի քանիսը՝ քաղուած Պոլսի մամուլի մէջ հրատարակուած պաշտօնական արձանագրութիւններից։ Պէտք է աւելացնել նաև, որ այդ մերկացումների մեծ մասը հաստատւում է և պատմական ուրիշ անհերքելի փաստերով ու վաւերագրերով։

Դատավարութեան առաջին և գլխաւոր ամբաստանեալներից մէկը՝ Քիւչիւկ Թալէաթ պատմում է, որ ինքը Թալէաթի խմբի հետ չփախաւ Պոլսից, այլ քիչ վերջը հեռացաւ Խալիլ փաշայի հետ։ Խօսքը տանք իրեն։

«Խալիլ փաշայի հետ փախանք Թավշանճիլար։ Դուրս վազեց մեզի ըսաւ, թէ Ազրպէճանի մէջ պիտի աշխատինք։ Էնկիւրիի ճամբով Սվազ գացինք։ Կազի փաշան կարգադրեց, և Կովկաս անցանք։

«Էրզրումի բանտակալէի մէջ քանի մը օր մնացինք, յետոյ Նախիջևան և անկէ ալ Ազրպէճան անցանք։ Մեր պարտականութիւնն էր դրամ հաւաքել, մինչդեռ Մուսաւաթական կառավարութեան պետը՝ Իւսուֆ պէյ(*), արժէք չէր տար Անատոլուի պայքարին։ Կուսակցութիւնները պայքարի մէջ էին իրարու հետ. աշխատեցանք զանոնք հաշտեցնել։

«Նուրի փաշա մեզմէ առաջ եկած էր և Տաղստանի մէջ կը կռուէր Տէնիքինի բանակին դէմ։ Կանչեցի Նուրի և Խալիլ փաշաները և կացութիւնը բացատրեցի անոնց։

(*) Ուսուպբէգով, յայտնի մուսաւաթական. որ անհետացաւ Ազրբէջանի խորհրդայնացումից յետոյ, փախուստի ճանապարհին:

Անատոլու մեզմէ օգնութիւն կը սպասէր, մինչդեռ Մուսաւաթական կառավարութիւնը անհաշտ դիրք մը բռնած էր։ Կուսակցականները կանչելով՝ բացատրեցի անոնց Անատոլուի կացութիւնը և ըսի, թէ Անգլիա կ'ուզէ թումբ մը հաստատել Պարսկաստանի և Թուրքիոյ միջև»։

Քիւչիւկ Թալէաթի ճիգերը անցնում են ապարդիւն։ Այնուհետև նա յանձնարարում է Քեազիմ Կարաբէքիր փաշային, որ բոլշևիկների հետ շփման մէջ մտնէ։ Այդպէս էլ լինում է, և բոլշևիկները խոստանում են օգնել Անատոլուին։ Այս ձևով, ըստ Քիւչիւկ Թալէաթի, բարեկամութիւն է հաստատւում բոլշևիկների և Թուրքերի միջև:

«Շփում կատարեցինք բոլշևիկ կուսակցութեան հետ, շարունակում է Քիւչիւկ Թալէաթ, յետոյ Խալիլ փաշայի հետ Ղարաբաղ գացինք. ան Մոսկուա մեկնեցաւ, իսկ ես Բագու։ Խալիլ փաշա Մոսկուայի մէջ յաջողեցաւ կարգ մը շահեր ապահովել. քիչ մը ոսկի առաւ։ Բոլշևիկները ամբողջովին տէրն էին կացութեան. Թուրքեստանի մէջ կարգ մը Թուրքեր և Թաթարներ բոլշևիկ կուսակցութիւն մը կազմեցին և կ'ուզէին Թուրքիա գալ։ Մուսթաֆա Սուպհի անոնց մէջն էր։

«Ինչպէս ըսի, Էրզրումի մէջ միջոց մը Կարաբէքիր փաշայի բանակատեղին մնացինք, յետոյ Կովկաս անցանք։ Պիտի աշխատէինք տնտեսական օգնութիւն ապահովել Ազրպէճանէն։ Սակայն, այդ շրջանին մուսաւաթականները իշխանութեան գլուխ կը գտնուէին և ոեւէ կարեւորութիւն չէին տար Անատոլուի շարժումին և զայն արկածախնդրութիւն կը նկատէին։ Ամենէն զարմանալին այն էր, որ Ազրպէճանի երիտասարդութիւնն իսկ վստահ չէր, թէ Անատոլուի շարժումը դրական արդիւնքի մը պիտի յանգի։

«Կացութիւնը այսպէս բացատրեցինք։ Ազրպէճանի Էնկիւրիի դեսպան Իպրահիմ Ապիլոֆ ըսաւ. «Յեղափոխութիւն կը հանենք, կառավարութիւնը կը տապալենք

և Անատոլուի կ'օգնենք»։ Այն ատեն հետեւեալ տեսակէտը պարզեցի. բոլոր կուսակցութիւններուն հետ միանալով կառավարութիւնը պիտի տապալենք. ասոր համար անհրաժեշտ էր Համայնավարներու գործակցութիւնը ապահովել։

«Այդ շրջանին բոլշևիկները մինչև Տաղստան եկած էին։ Ազրպէճան պատրաստութիւն չունէր։ Իսկոյն շփման մէջ մտանք Ազրպէճանի բոլշևիկ կուսակցութեան հետ, որու ղեկավար Միրզա Տաւուտի (*) վարչապետութիւն խոստացանք։ Այսպէսով բարեկամական յարաբերութիւններ հաստատեցինք։

«Այդ միջոցին հայ հրոսակներու և ազրպէճանցիներու միջև բուռն կռիւներ կը մղուէին (**)։ Ես Շէքի գացի։ Այդ շրջանին Ազրպէճանի կառավարութիւնը տապալեցաւ և Համայնավար վարչաձև հաստատուեցաւ։ Երբ Բագու գացի, Խալիլ փաշա արդէն Մոսկուա մեկնած էր։ Ես Բագու մնացի։ Բոլշևիկները կացութեան տէրն էին։

«Ճիշդ այդ միջոցին Հիլմի, Մուսթաֆա Սուպհի և գերութենէ վերադարձած կարգ մը անձեր Թուրքերէն, Թուրքմէններէն և Թաթարներէն բաղկացեալ Թուրք Համայնավար կուսակցութիւնը հիմնած էին։ Այդ կուսակցութիւնը Անատոլու պիտի մտնէր և հոն փոքր կարմիր բանակին կորիզը պիտի կազմէր (***)։ Ազրպէճանի համալսարանի համար Պոլսէն եկած Թուրք ուսուցիչները փոքր գրքոյկներ հրատարակելով զբաղած էին։ Ես զանոնք քաջալերեցի»։

Այնուհետև Քիւչիւկ Թալէաթը տեղեկութիւններ է

(*) Միրզա Դավուդ Հուսեյնով, հայտնի բոլշևիկ, որ հետո Ադրբեջանի վարչապետը դարձավ:

(**) Խոսքը Ղարաբաղի կռիվների մասին է:

(***) Այս այն խումբն է, որ Տրապիզոն անցավ և ֆեդայական իշխանության կողմից ծովը թափուեց: Բոլորն էլ ոչնչացան:

տալիս Արևելյան ժողովուրդների Համագումարի մասին, 1920 թ. օգոստոսին։

«Ատեն մը յետոյ Բագուի մէջ Արևելեան Համաժողով մը գումարուեցաւ։ Բոլշեւիկները իսլամ երկիրներէ պատուիրակներ կանչած էին։ Քեազիմ Կարապէքիր փաշայի կողմէ 20 հոգինոց թուրք պատուիրակութիւն մը ղրկուած էր։ Համաժողովին մէջ խնդրոյ առարկայ եղաւ ընկերային պայքարը աշխարհակալ պետութիւններու դէմ։ Մինչդեռ միեւնոյն ատեն Պէհաէտտին Շաքիր, Էնվէր փաշա և Ազմի պէյ ուրիշ ժողովէ մը եկան և մասնակցեցան իսլամական համաժողովին։ Էնվէր փաշա տեսակցած էր Ռադէկի հետ։ Էնվէր և Թալէաթ փաշաները զանազան վայրերու մէջ կազմակերպութիւններ ըրած էին «Իսլամ Յեղափոխական Ընկերութիւններ» անուան տակ։ Այդ ընկերութիւններու կողմէ եկած էր և Էնվէր փաշան։ Տրապիզոնի արհեստակցական միութիւններու կողմէ կնքուած շատ մը պարապ թուղթեր բերած էին. ես ալ այդ միութիւններու կողմէ ներկայացայ։

«Թուրքիոյ պատուիրակները 20-30 հոգի կ'ըլլային։ Անոնց մէջ կային Հաֆըզ Մէհմէտ, Նայիլ և Ազմի։ Բոլշեւիկներու տեսակէտով որոշումներ տրուեցան։

«Իսլամ Յեղափոխական Ընկերութիւններու նպատակն էր ընդհանուր յեղափոխութեամբ շարժման մէջ դնել իսլամ երկիրները, զանոնք ազատել և օգնել Թուրքիոյ պայքարին։ Էնվէր փաշա կ'ուզէր այդ ձեւով ընդհանուր շարժում կազմակերպել»։

Համագումարի ընթացքին, նախկին իթթիհատականները մասնաւոր ժողովներ են գումարում։ Պէհաէտտին Շաքիր առաջարկում է վերականգնել Իթթիհատը։ «Ծրագիր մը ընդունուեցաւ, վկայում է Քիւչիւկ Թալէաթը, որով Իսլամ Յեղափոխական Ընկերութիւններու Թուրքիոյ մասնաճիւղը կը կազմուէր։ Էնվէր փաշա Զինովիեւի և Ռադէկի հետ Մոսկուա գնաց և յետոյ Բերլին երթալով՝ լուր պիտի տար Թալէաթ փաշայի։ Նայիլ պէյ և ես

Թուրքիա վերադարձանք։ Էրզրումէն հեռագրով Կազի փաշային հաղորդեցինք Զինովիեւի տեսակէտը, և Տրապիզոն գացի»։

Մոսկուայից Տրապիզոն է գալիս նաև Խալիլ փաշան ու յետոյ՝ Իպրահիմ Թալի պէյ, որ «Մոսկուայի մէջ տեղի ունեցած ժողովի մը» մասնակցած էր։ Սակայն, Անկիւրիի կառավարութեան հրամանով Խալիլ փաշան հեռանում է Ռուսաստան, իսկ Քիւչիւկ Թալէաթը անցնում է Պոլիս։

Քիչ յետոյ, Պետրի պէյի նախաձեռնութեամբ Մոսկուայից, իթթիհատական պարագլուխների ժողով է գումարւում Բաթումում։ «Պետրի պէյ, Էնվէր փաշա, Խալիլ փաշա և Տոքթ. Նազըմ կուսակցութիւն մը կը կազմեն», որ կը կոչուի «Ժողովրդական Խորհուրդներու Կուսակցութիւն» և որին յարում է Քիւչիւկ Թալէաթը և ուրիշ իթթիհատականներ Էնվէր փաշայի գլխաւորութեամբ։ Այդ կուսակցութեան նպատակն էր ոյժ տալ թուրք ազգայնական պայքարին և եթէ Մուսթաֆա Քեմալի բանակը պարտուէր՝ բոլշեւիկների օգնութեամբ մտնել Թուրքիա և ձեռք առնել իշխանութիւնը։ Արդէն կուսակցութեան անունն էլ յարմարեցուած էր բոլշեւիկեան ձեւերին։

Մի հետաքրքիր մանրամասնութիւն. «Էնվէր փաշա, ասում է Քիւչիւկ Թալէաթը, չեմ գիտեր՝ Պոլսէ՞ն թէ Մոսկուայէն շատ մը կնիքներ բերել տուած էր Իթթիհատի և անոր մասնաճիւղերու անունով։ Կնիք կար նոյն իսկ Տէրսիմի համար, որ մասնաճիւղ չէ ունեցած»։ Այդ կնիքներով պատրաստւում էին կեղծ վկայականներ և կնքւում էին զանազան թուղթեր։

Քիւչիւկ Թալէաթի այս վկայութիւնները հաստատւում են և ուրիշ ամբաստանեալների ցուցմունքներով։ Դրանք յայտնի փաստեր են այսօր և այլ աղբիւրներից։

Նոյն փաստերը, ուրիշ մանրամասնութիւններով, հաստատում է և Իթթիհատի կենտրոնի յայտնի անդամ

Դոկտ. Նազըմ, որ հայկական ջարդերի գլխաւոր պատասխանատուներից մէկն է։

«Պերլինի մէջ գտնուող ռուս պատուական քոմիսէր մը, ասում է նա, խոստացաւ ամէն օգնութիւն ընել մեզի։ Ասոր վրայ պայմանագրութիւն մը կնքեցինք. միայն գրգռութիւն չպիտի կատարէինք Ռուսիոյ իսլամներուն մէջ։ Ռուսներն ալ Ազրպէճանի անկախութիւնը պիտի ճանչնային։

«Մեր նպատակն էր Միջագետքի և Հնդկաստանի մէջ կազմակերպութիւն առաջ բերել։ Ճեմալ փաշա ալ նոյն նպատակով Աֆղանիստան գնաց։

«Որոշեցինք Պերլինէն սաւառնակով Մոսկուա երթալ, սակայն, սաւառնակը ճամբան վեց անգամ վար ինկաւ։ Էնվէր, Ճեմալ, Պեարի և Շաքիր Մոսկուա գացին։ Ես ալ Թալէաթի հետ Պերլին մնացի՝ քարոզութեան գործը կազմակերպելու համար։

«Մոսկուա երթալէ առաջ, Մուսթաֆա Քեմալ փաշայէն թուղթ մը առի, որ կ'ըսէր, թէ Գործավարներու Խորհուրդի որոշումով իրենց հետ կը գործակցիմ, թէ պէտք է արտասահմանի մէջ աշխատիլ և Անատոլուի ի նպաստ քարոզութիւն կատարել։ Ցետոյ, կը յանձնարարէր Եւրոպայի կացութեան մասին տեղեկագրեր ղրկել Էնկիւրի։

«Թալէաթ փաշայի նահատակութենէն վերջ Էնվէր փաշա զիս Մոսկուա կանչեց, սակայն, չգացի։ Ցետոյ, Էնվէր փաշա Պերլին եկաւ։ Այդ շրջանին ըսուեցաւ, թէ Էնվէր փաշա կ'ուզէր Անատոլու մտնել, սակայն, Պէհաէտտին Շաքիր և Ռասուհի պէյերը ըսած են, թէ Էնվէր փաշան առանձին է և յանձնարարած են, որ Անատոլու չերթայ։ Ասոր վրայ Էնվէր փաշայի հետ Մոսկուա գացի։

«Մոսկուայի մէջ զանազան իսլամ երկիրներու պատուիրակութիւններ կային. ասոնց պահանջները նկատի առնելով՝ Մոսկուայի կառավարութեան դիմելով օգնութիւն խնդրեցինք և զէնք ուզեցինք։ Միեւնոյն ատեն Մոսկուայի դեսպան Ալի Ֆուատ փաշայի դիմելով՝ յայտնեցինք, թէ Էնկիւրիի թշնամի չենք և Մուսթաֆա Քեմալ փաշայի հրամանէն դուրս պիտի չելլենք։ Էնվէր փաշա նամակ մը գրեց Մուսթաֆա Քեմալ փաշային, ես ալ առանձին նամակ մը գրելով՝ յանձնարարեցի, որ հրաժարի Էնկիւրիի մէջ իսլամական համաժողով մը գումարելու գաղափարէն»։

Դոկտ. Նազըմի ցուցմունքները և ուրիշ հետաքըրքրական փաստեր են պարունակում Թուրք-բոլշեւիկեան գործակցութեան մասին, բայց մեր չօշափած հարցի տեսակէտից այսքանն էլ բաւական է։

Հետաքրքրական են և մի ուրիշ Իթթիհատական պարագլխի՝ Ազմի բէյի ցուցմունքները։ Նա էլ հաստատում է, որ Բերլին ապաստանած Իթթիհատական պարագլուխները կազմում են համիսլամական մի կուսակցութիւն, բայց «Բերլինի մէջ կարելի չեղաւ գործադրել ծրագիրը և յարմար վայրը Ռուսիան գտանք։ Բայց Ռուսիա անցնիլը գրեթէ անկարելի էր, քանի որ հաղորդակցութիւն չկար Ռուսիոյ և Գերմանիոյ միջեւ։ Ճեմալ փաշա և Պեարի պէյ ռուս գերիներու հետ գացին։ Էնվէր փաշա կ'ուզէր սաւառնակով երթալ. մեկնեցաւ, բայց սաւառնակը վար ինկաւ և չկրցաւ երթալ։ Ես Իտալիա գացի և կոմս Սֆորցայի հաւանութեամբ ռուս գերիներու հետ խառնուելով՝ Խարքով և յետոյ Մոսկուա անցայ։

«Ռուսիոյ մէջ տեսակցեցայ Անատոլուէն եկած պատուիրակութեան հետ։ Խարքովի մէջ վարչապետ Րաքովսկիէն իմացայ, որ Էնվէր փաշա սաւառնակով վար ինկած է և Էսթոնիոյ մէջ բանտարկուած կը մնայ։ Տասը օր վերջը Էնվէր փաշա Մոսկուա եկաւ։ Ճեմալ փաշա և Պեարի պէյ Աֆղանիստան մեկնած էին։ Ես ալ վարանումի մէջ էի։ Էնվէրի հետ տեսակցեցանք։ Ծրագիրը Գերմանիոյ մէջ պատրաստուած ըլլալով՝ Ռուսիոյ չէր յարմարեր։ Փոխեցինք կարգ մը բացատրութիւններ և օրինակի համար, «անգլիացիներու» տեղ «աշխարհակալներ» ըսինք։

«Այս բարեփոխութիւնները կատարեցինք ես, Էնվէր, Սէյֆի, Իպրահիմ Թալի, Իւսուֆ Քեմալ և ուրիշներ...

«Մոսկուա գտնուած միջոցին, Էնվէր փաշա ըսաւ. «Ռուսները կը յայտնեն, թէ իրենք Բագուի մէջ համաժողով մը պիտի գումարեն և կ'ուզեն, որ մենք ալ մասնակցինք։ Ասոր վրայ բոլորս Բագու գացինք։ Մեզի մէկ-մէկ թուղթ տուին, և գացինք»։

Նայիմ Ճէվատ, Նուրի փաշայի «Իսլամական Բանակին» մասնակցող գործօն իթթիհատականներէն մէկը ուշագրաւ տեղեկութիւններ է տալիս անմիջապէս Հայաստանին վերաբերող դէպքերի մասին։

«1920 թ. յունիսին Գարապէքիր փաշայի դիմելով՝ անոր հաւանութիւնը ստացայ։ Երբ Ղարաբաղ հասայ, նամակ մը ստացայ. այդ նամակը ուղղուած էր Ճավիտ պէյին, որ այդ ատեն Պայազիտ կը գտնուէր։ Նամակը կը յանձնարարէր չփման մէջ մտնել նահանջող բոլշեւիկեան ուժերուն հետ։ Այդ շրջանին Նուրի փաշա բոլշեւիկներուն վրայ յարձակում գործած էր, բայց չէր յաջողած։ Կացութիւնը Պայազիտ հաղորդեցի։ Ասոր վրայ Գարապէքիր փաշայէն հեռագիր մը ստացայ, որ կը հրամայէր. «Նայիմ Ճէվատ պէյ ինչ կ'ուզէ թող ընէ, բոլշեւիկեան բանակը Նախիջեւան թող բերէ»։

«Այս հրամանի վրայ Թրքական ուժերը այդ շրջանը համախմբուեցան։ Ես ալ արեւելեան ճակատի հրամանատարութեան հեռագրեցի. «Զէնք և ռազմամթերք առնելով՝ յառաջացէք»։ Յետոյ չփման մէջ մտայ բոլշեւիկեան հրամանատարին հետ։

«Գարապէքիր փաշա Խալիլ փաշայի, Նարիման Նարիմանովի և բոլշեւիկեան բանակի հրամանատարութեան ուղղեալ երեք նամակներ գրած էր։ Այդ նամակներով բոլշեւիկներուն հետ գործակցութեան անհրաժեշտութիւնը կը շատագովէր։ Խալիլ փաշայի կողմէ կատարուած ծառայութիւններուն համար անոր շնորհակալութիւն կը յայտնէր։ Ասկէ զատ, թնդանօթի, զէնքի և ռազմամթեր-

քի փոխադրութեան ատեն օգտագործելու նպատակով Ազրպէճանի մէջէն ճամբայ բանալու անհրաժեշտութիւնը պարզող երեք նամակներ ստացայ Գարապէքիր փաշայէն։ Այս երեք նամակներն ալ իրենց հասցէներուն յանձնեցի։

«Ապահովեցի, որ օգոստոսին Թրքական և Բոլշեւիկեան բանակները իրարու միանան։ Յետոյ, իմ ստացած հրահանգներուս համաձայն, Խալիլ փաշայի հետ աշխատեցայ, որ երկաթուղիով ալ ապահովուի երկու բանակներու միացումը, և Հայաստան չկարենայ ասոր ընդդիմանալ։ Եւ այս նպատակով Մոսկուա գացինք։ Էնվէր փաշան արդէն հոն կը գտնուէր»։

Նայիմ Ճէվատի պատմած դէպքերը տեղի ունեցան 1920 թ. ամառը, երբ Կարմիր Բանակը Բագուից յարձակուեցաւ Ղարաբաղի վրայ և Զանգեզուրի վրայով հասնելով Նախիջեւան՝ անմիջական կապ հաստատեց Քեազիմ Կարաբէքիրի զօրքերի հետ։ Կարմիր Բանակի պաշտպանութեան տակ, Բագուից, Նախիջեւանի ու Մակուի վրայով, Թուրքիա անցաւ և Խալիլ փաշայի կազմած «Իսլամական ջոկատը»՝ հետը տանելով Մոսկուայի կառավարութիւնից ստացած մէկ ինքնաշարժ ոսկի»։

Վերջապէս, առաջ բերենք Իթթիհատի պատասխանատու պատուիրակ Նայիլ բէյի հետեւեալ ցուցմունքները Ազրպէճանի խորհրդայնացման մասին, Թուրքերի աջակցութեամբ։

«Նախ Գանձակ գնացի։ Մէկ քանի ամիս յետոյ, Նուրի փաշա բանտարկուած էր Բաթումի մէջ։ Խորհեցայ, թէ լաւ կ'ըլլայ, երբ յաջողիմ փախցնել զինքը։ Մարդ ղրկեցի իր փախուստին համար։ Փախաւ և Բագու եկաւ։ Ես ալ հոն գացի և տեսակցեցայ։ Յետոյ Գանձակ վերադարձայ։ Քանի մը ամիս յետոյ ալ Խալիլ փաշան եկած էր։ Անոր ալ բարի գալուստի գացի Բագու և տեսակցեցայ։ Ինչպէս յայտնի է, այն ատենները Մուսաւաթ և Իթթիհատ կուսակցութիւնները կային։

«Մուսաւաթ կուսակցութիւնը մեր բանակին Ազըր-

պէճանէն քաշուելուն պէս 25 հազարնոց բանակ մը կազմած էր։ Նոյն միջոցին բոլշեւիկ ազմուկը եկած էր։ Խալիլ փաշա «աշխատրինք» ըսաւ։ Ես Գանձակ կը գտնուէի և «հոն պիտի մնամ» ըսի։

«Երբ բոլշեւիկները մօտեցան, Բագու եկայ։ Խալիլ փաշա իր ընկերներով Ղարաբաղ գացեր էր, յետոյ վերադարձեր էր։ Օր մը «Զանգազուր» զբոսարանը նստեր էի Զորի կառավարիչ Սալիհ Չէքի պէյի հետ։ Խալիլ փաշա եկաւ. «Քու հետդ պիտի տեսակցիմ, ելիր երթանք», ըսաւ։

«Գացինք։ «Քեազիմ Գարաբէքիր փաշայէն նամակ առինք բոլշեւիկեան կացութեան վրայ։ Մուսաւաթ կառավարութեան առաջարկեցինք, որ հրաժարի իշխանութենէն, մերժեց», ըսաւ։ «Եթէ բոլշեւիկները գան, բոլորովին կը ճզմեն», ըսի։

«Խալիլ փաշա «Ռէսուլ Զատէի երթանք» ըսաւ։ Երեկոյ. Ժողովին մէջ կուսակցութեան նախագահն էր։ Յայտնեցի, թէ հիմ մը պէտք է ճշդել տեսակցելու համար։ Յաջորդ օրը եկաւ, Էմին պէյի (Ռէսուլ Զատէ) գացինք։ Էմին պէյ, «մեր վիճակին ձգեցէք մեզ։ Հարիւր այնքան տարի է որ անոնց ձեռքն ենք, մենք գիտենք անոնք, կը ճզմեն մեզ», ըսաւ։

«Բայց Խալիլ փաշայի պնդումներուն վրայ ընդունեցի։ Յաջորդ օրը, հացկերոյթի մը մէջ, վարչութիւնը Հասան Հաճինսկի պէյի պիտի փոխանցուէր։ Այնպէս ալ եղաւ։

«Էնվէր փաշա, Իպրահիմ Թալի և Ազմի պէյերը եկան։ Աւելի առաջ եկած էր Պէհաէդդին Շաքիր պէյ, որ ինծ մօտ մնաց։ Ասոնք Երրորդ Միջազգայինի համար եկած էին»։

Արեւելեան ժողովուրդներու Համագումարէն յետոյ, «Նախիջեւանի ճամբով Անատոլու անցայ։ Հոս կային նաեւ Քիւչիւկ Թալէաթ պէյ և Տրապիզոնի շրջանակէն եկած պատուիրակներ։ 18 հոգի էինք։ Պայազիտ եկանք, ուր հրամանատար էր Ճավիտ։ Տեսակցեցանք իրեն հետ։ Քեազիմ Գարապէքիր փաշայի հեռագրով դիմեցինք, որպէսզի Խորհրդային կազմակերպութիւններ առաջ բերէ։ Սարը Գամիշ եկանք, ուր տեսակցեցանք Քեազիմ Գարապէքիր փաշայի հետ։ Տեղեկութիւններ առինք բոլշեւիկութեան էութեան մասին։ Առարկեց։ Երկու-երեք օր յետոյ, դարձեալ տեսակցեցանք, և ընդունեց մեր գաղափարը։ Յետոյ Էնկիւրի երկար տեղեկագիր մը ղրկեցինք Բագուի մէջ տեսածներուս մասին։ Յետոյ, Էրզրում և Տրապիզոն անցանք։ Հոն իբրեւ բոլշեւիկ ուզեցին մեզ չթողուլ. յետոյ հասկցան և թողուցին»։

Քաղուածքների թիւը կարելի է աւելացնել, բայց կարծում ենք, թէ այսքանն էլ բաւական է։ Ի՞նչ են վկայում նրանք։ Այն, որ 1918-ից սկսած բոլշեւիկների և թուրքերի միջեւ հաստատւում է մօտիկ բարեկամութիւն ու գործակցութիւն, որ բոլշեւիկները հովանաւորել, ամէն կերպ քաջալերել և աջակցել են իթթիհատական ջարդարարներին, որ Թուրք-բոլշեւիկ գործակցութիւնը առանձնապէս շօշափելի կերպով տեղի է ունեցել Կովկասում, որ թուրքերի գործօն օգնութեամբ խորհրդայնացաւ Ազրբէջանը, որ Թուրք-բոլշեւիկեան գործակցութիւնը ուղղուած է եղել և Հայաստանի դէմ և որ բոլշեւիկների և թուրքերի միահամուռ ջանքերով, 1920 թ.ի ամառը, Հայաստանից խլուեցան Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջեւանը։

Այսքանով այս գլուխը կարելի էր փակել, բայց պատկերը աւելի կատարեալ դարձնելու համար առաջ բերենք և հետեւեալ վկայութիւնները.

1920 թ. ապրիլ 15-ին, Էրզրումում, Ազրբէջանի խորհրդայնացումից երկու շաբաթ առաջ, Ազրբէջանի զինուորական նախարարի օգնական զօր. Ալի Աղա Շիխլինսկին և թրքական 15-րդ բանակի հրամանատար Քեազիմ Գարաբէքիր փաշան կնքեցին մի համաձայնութիւն, որ պիտի փոխարինէր 1919 թ. նոյ. 29-ին, Պոլսում կնքուած Թուրք-ազրբէջանեան գաղտնի դաշնագիրը։ Ինչ-

պէս և այս վերջինը, Էրզրումի համաձայնութիւնն էլ ի նկատի ունէր բոլշևիկների բարեկամութիւնը և իր մի մասով ուղղուած էր Հայաստանի դէմ։

Համաձայնագրի 5-րդ յօդուածը ասում էր. «Ադրբէջանի կառավարութիւնը խոստանում է չարունակել նպաստել Խորհրդ. Ռուսաստանին և «Անատոլուի ու Ռումելիայի Իրաւունքների Պաշտպանութեան Կոմիտէի» միջև իրականացնելու մերձեցում։ Անհրաժեշտ եղած պարագային ինքն էլ պիտի յարի այդ միութեան»։ Իսկ 7-րդ յօդուածը ուղղուած է անմիջապէս Հայաստանի դէմ. «Անատոլուի և Ռումելիայի Իրաւունքների Պաշտպանութեան Կոմիտէն վճռական կերպով խոստանում է, որ այն պարագային, երբ Հայաստանը յարձակում գործէ Ադրբէջանի վրայ, և Ադրբէջանի կառավարութիւնը վճռական կերպով խոստանում է, որ այն պարագային, երբ Թուրքիայի արեւելեան շրջանները կը տրուին և կը միացուին Հայաստանին, այս երկու դէպքում էլ համաձայնութեան եկած երկու կողմերը պաշտպանելու են միմեանց շահերը և գործելու են, որպէս միացած բանակ»։

Ահա այս համաձայնութեան առթիւ էր, որ Քեազիմ Գարաբէքիրը գրում էր իր մի նամակում, թէ՝ «Մեր Ադրբէջանի և բոլշևիկների միջև կնքուած պայմանների հիման վրայ, մեր սպաների, բժիշկների և պաշտօնեաների մեծ թիւ գնացել է Ադրբէջան։ Բոլշևիկները մեզ առաջարկեցին անյապաղ պատերազմական գործողութիւններ սկսել հայկական սահմանների վրայ՝ հայերի դէմ, Կիլիկիայի սահմաններում՝ ֆրանսացիների դէմ։ Դաղստանում կազմուած կանաչ բանակը՝ Էնվէրի, Նուրիի և Խալիլի ղեկավարութեամբ՝ պէտք է ապրիլի սկզբներին աշխատէ մտնել Բագու։ Ադրբէջանի զօրքերը պէտք է ցոյց տան կեղծ դիմադրութիւն, որպէսզի կարողանան իրենց արդարացնել Դաշնակիցների հանդէպ։ Միանալով կանաչ բանակին՝ Ադրբէջանեան զօրքերը պէտք է առիթ որոնեն ընդհարուելու Հայաստանի հետ և

Անատոլիայում գտնուող Թուրք զօրքերի հետ միասին անցնեն Հայաստանի սահմանները և սկսեն զինուորական գործողութիւններ Հայոց Հանրապետութեան դէմ»։

Մօտաւորապէս նոյն ժամանակները Մուսթաֆա Քեմալ հետեւեալ յայտարարութիւնը արաւ Ազգ. Մեծ Ժողովի ամբիոնից.—

«Բոլշևիկները՝ իրենց ծրագիրները իրականացնելու համար Թուրք ժողովրդի մեծ օգտակարութիւնը գնահատելով՝ մեր աջակցութեան դիմեցին։ Նրանց առաջին ձեռնարկը եղաւ 10 րդ և 11-րդ զօրաբանակները կովկասեան ճակատ ղրկել։ Այս բանակները դիւրութեամբ յաջողեցին անցնել Հիւս. Կովկաս և մտան Ադրբէջան՝ շնորհիւ մեր ընծայած դիւրութիւնների և առաջնորդութեան։ Ադրբէջանցիները մեծ հաճոյքով դիմաւորեցին այդ զօրամասերին։ Այս բանակները մէկ կողմից Հայաստանի, միւս կողմից էլ Վրաստանի դէմ հարկ եղած զինուորական միջոցների ձեռնարկեցին»։

IV

ՀԱՅ ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԸ

Այսպէս, ուրեմն, 1919-20 թուականներին, բոլշեւիկները և Թուրքահայաստանը բնաջնջող Թուրք ջարդարարները միացած՝ դաւեր էին լարում հայ ժողովրդի և Հայաստանի դէմ։ Ի՞նչ էին անում այդ ժամանակ հայ բոլշեւիկները, ի՞նչ գործի վրայ էին նրանք։

Փաստօրէն մինչեւ 1919 թուականը Հայաստանում բոլշեւիկ կազմակերպութիւն գոյութիւն չունէր։ Կային միայն մատի վրայ համրուող անհատներ։ — Մի քանի ուսուցիչներ էջմիածնի ճեմարանում և Երեւանում, (ինչպէս Պօղոս Մակինցեանը, Աշոտ Յովհաննիսեանը և Արշաւիր Մելիքեանը), մի քանի աշակերտներ, թերեւս, մէկ-երկու հոգի էլ ուրիշ տեղ։ Կազմակերպուած բոլշեւիկութիւն չկար։

Համեմատաբար, աւելի էր հայ բոլշեւիկների թիւը Թիֆլիսում և Բագւում, բայց նրանց տեսակարար կշիռն էլ ազգային կեանքում խիստ աննշան էր։ Շատ չէին հայ բոլշեւիկները և Ռուսաստանում, գլխաւորապէս մտաւորականներ, աշխատում էին ռուսական կազմակերպութիւնների մէջ և հայ կեանքի վրայ ազդեցութիւն չունէին։

Հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ, ազգութիւնների կոմիսարիատին կից, ստեղծուեց հայկական բաժին, որի գլուխը կանգնեց այն ժամանակ բաւականանուն ունեցող, բայց իրապէս անարժէք մի հայ բոլշեւիկ՝ Ավանէսովը։ Այդ բաժնին էր վերապահուած հայ ազգային գործերի վերատեսչութիւնը և գաղթականների հոգատարութիւնը։ Ավանէսովի օգնականն էր բանաստեղծ Վահան Տէրեանը։ Նոյն տեղ աշխատանքի մտան և Աշ. Յովհաննիսեանը, Պ. Մակինցեանը և ուրիշներ։

Բրեստ-Լիտովսկի բանակցութիւնների ժամանակ, հայ բոլշեւիկներից ոմանք, մասնաւորապէս բանաստեղծ Վահան Տէրեանը, որոշ ջանք թափեցին պաշտպանելու համար Թրքահայաստանի դատը, բայց, ինչպէս արդէն տեսանք, յաջողութիւն չունեցան։ Վ. Տէրեանը նոյնիսկ Բրեստ-Լիտովսկի հաշտարար պատուիրակութեան անդամ էր։

Ամէն տեղ էլ հայ բոլշեւիկները գործում էին իբրեւ ռուսական կուսակցութեան անդամներ և ազգային գետնի վրայ կազմակերպուելու կամ ուրոյն ազգային խնդիրներ դնելու փորձեր չէին անում։ Հետաքրքրական է, որ հայկական բոլշեւիկեան կազմակերպութիւն ստեղծելու առաջին փորձի պատիւը պատկանում է Թրքահայերին։ Բոլշեւիկ Բորեանը իր արդէն յիշատակուած գրքի մէջ (Բ. հատոր, էջ 24-26), պատմում է, որ 1917 թ. ամառը «մի խումբ Թրքահայ մտաւորականներ կազմակերպուեցին Թիֆլիսում և մի ներկայացուցիչ ուղարկեցին Պետրոգրադ։ Սա դրամ ստացաւ կազմակերպական գործերի համար և վերադառնալով Թիֆլիս՝ ուրիշ ընկերների հետ միասին կազմակերպեց Հայաստանի կոմունիստական կուսակցութիւն, որ սկսեց հրատարակել թերթ։ Այս կուսակցութիւնը մեծ յաջողութիւն ունեցաւ Թրքահայերի մէջ, որովհետեւ նըպատակ էր դրել Թրքահայաստանի ազատագրումը։ Ազգային հանրապետութիւնների կազմութիւնից յետոյ, վըրայ հասաւ հալածանքի շրջանը կոմունիստների դէմ։ Նրանք վերջ տուին իրենց Թիֆլիսի գործունէութեան և տեղափոխուեցան Հիւս. Կովկաս, ապա՝ Մոսկուա»։

Բորեանի պատմածի մէջ ճիշդ է միայն այն, որ այդ անունով կուսակցութիւն կազմուել է և Պետրոգրադից դրամ ստացուել ու թերթ է հրատարակուել, բայց «մեծ յաջողութիւնը» հէքիաթ է։ Իրապէս, նախկին Հնչակեան քաղաքախնդիրների մի խմբակ էր — Գուրգէն Հայ-

կունի, Գրիգոր Վարդանեան և ուրիշներ, որոնք ճարպիկութիւնն էին ունեցել գոյութիւն չունեցող «Հայաստանի կոմունիստական կուսակցութեան» անունով տեղեկագիր ներկայացնելու Համառուս. կոմունիստական կուսակցութեան կենտրոնին և բաւական խոշոր գումար — ասում էին 30 միլիոն ռուբլի — չորթել: Իրենց տեղեկագրի մէջ այդ պարոնները ցոյց էին տուել «Հայաստ. կոմ. կուսակցութեան» բազմաթիւ մասնաճիւղեր, նոյնիսկ... Բասենում, Ալաշկերտում, Խնուսում, Մուշում եւայլն: Ստացած դրամով «Հայաստանի կոմունիստները» մի քանի թիւ թերթ հրատարակեցին Թիֆլիսում և մնացածը ծախսեցին թղթախաղի և քէֆերի վրայ: Եւ զարմանալի չէ, որ, նոյն Բորեանի վկայութեամբ, երբ տեղի վրայ քննութիւն է կատարուել, պարզուել է, որ «Հայաստանի կոմունիստական կուսակցութիւնը գոյութիւն ունի միայն մեր՝ մտաւորականներիս գլուխներում. այդպիսի կուսակցութիւն չկայ Հայաստանում և չի կարող լինել. գիւղացիները և բանուորները լսել իսկ չեն ուզում այդպիսի կուսակցութեան մասին»:

Եւ ճիշդը այս էր: Հայաստանում բոլշեւիկներ չկային:

Բոլշեւիկները Հայաստանում սկսեցին երեւալ միայն 1918 թ. վերջերը, երբ Վրաստանում և Ազրբէջանում կոմունիստական կուսակցութիւնը ենթարկուեց խիստ հալածանքի: Իրենց կեանքը ազատելու մտահոգութեամբ, հայ բոլշեւիկները ապաստան էին փնտռում Հայաստանում: Հայաստանի կառավարութիւնը ընդունեց նրանց, տուեց ազատ ապրելու և աշխատելու հնարաւորութիւն՝ պայման դնելով միայն, որ Հայաստանում քաղաքական գործունէութիւն չունենան: Հետզհետէ Հայաստան եկան Թիֆլիսից և այլ վայրերից փախած Ս. Կասեանը, Ա. Մռաւեանը, Ս. Խանոյեանը, Դ. Շահվերդեանը, Մ. Սահակեանը, Ա. Երզնկեանը, Աւիս Նուրիջանեանը, կէսբոլշեւիկ Արշ. Ջոհրաբեանը և ուրիշներ, որոնց մեծ մասը պաշտօններ ստացաւ պետական, կամ քաղաքային

հիմնարկութիւնների մէջ: Բոլորն էլ, ի հարկէ, «պատուոյ խօսք» տուին քաղաքականութեամբ չզբաղուելու: Բայց յարգեցի՞ն իրենց խոստումը:

Ա. Մռաւեանը պատմում է, որ արդէն 1919-ին, բոլշեւիկները Հայաստանում գաղտնի կազմակերպութիւն ունէին և ստորերկրեայ աշխատանքներ էին կատարում: «Ղ. Ղուկասեանի և նրա մօտիկ ընկերներ Արմ. Բուդաղեանի և Աղասի Խանջեանի միջոցով, գրում է Մռաւեանը, մենք Երեւանում կատարում էինք գաղտնի մեր բոլոր գործերը: Թռուցիկներ տպել և կպցնել պատերին, գրականութիւն փոխադրել, ժողովատեղի գտնել, նամակ տանել Թիֆլիս՝ Երկրային կոմիտէին եւայլն — այս բոլորը նրանք կատարում էին արագ, գաղտնապահութեան բոլոր օրէնքներով»:

Ղ. Ղուկասեանը «1919 թ. օգոստոսի վերջերին յատուկ յանձնարարութեամբ անցնում է Դիլիջան, Ղարաքիլիսա, Ալեքսանդրապոլ՝ տեղական կազմակերպութիւններին յայտնելու Երեւանում գումարուելիք կուսակցական խորհրդակցութեան, նրա օրակարգի և կազմակերպման հետ կապուած հարցերի մասին (*):

Նոյն 1919 թ. ամառը բոլշեւիկների «Սպարտակ» խումբը թռուցիկներ ցրուեց Երեւանում, որոնց մէջ բուռն յարձակումներ էր գործում կառավարութեան վրայ և կոչ էր ուղղում զօրքերին, որ չկռուեն Բոյիւք-Վէդիում ապստամբուած թուրքերի դէմ:

Առանձնապէս գործօն աշխատանքներ էին կատարում բոլշեւիկները Ալեքսանդրապոլում, Լոռիի չէզոք շրջանում և Հայաստանի օտար ցեղերի մէջ՝ թուրքերի, ռուսների եւայլն:

Ալեքսանդրապոլը երկաթուղային հանգոյց-կենտրոն էր, ուր գտնւում էր նորոգութեան գլխաւոր արհեստանոցը հարիւրաւոր գործաւորներով: Այս վերջիններիս

(*) «Խորհրդ. Հայաստան», 14 մայիս, 1927 թ:

մէջ կային Բագուից եկած բաւական թուով բանուորներ՝ ծայրայեղ ազգայնական տրամադրութիւններով կամ բոլշևիկեան հակումներով և, բնականաբար, պարարտ հող էին ներկայացնում բոլշևիկեան քարոզչութեան և դաւադրական գործողութիւնների համար։ Գործարանների և, ընդհանրապէս, երկաթուղային աշխատանոցների մէջ քիչ չէին նաև ռուսներ, որոնք, առհասարակ, հակառակ վերաբերում ունէին դէպի անջատուած ազգերի անկախութիւնը և անհամբեր սպասում էին, թէ ե՞րբ պիտի վերադառնայ Ռուսաստանը։ Հայ բոլշևիկների համար նպաստաւոր հող կար Ալեքսանդրապոլում, և զարմանալի չէ, որ նրանք հէնց սկզբից մեծ ուշադրութիւն դարձրին այս քաղաքի վրայ։

1919-ին արդէն Ալեքսանդրապոլի երկաթուղային բանուորների մէջ կային գաղտնի բջիջներ, որոնք կոմունիստական քարոզչութիւն էին անում, թռուցիկներ հրատարակում, հակապետական գործունէութիւն ցոյց տալիս, գործադուլներ կազմակերպում, սաբոտաժ անում և աշխատում էին ամէն միջոցով գրգռել գործաւորների դժգոհութիւնը և դժուարութիւններ հանել կառավարութեան դէմ։ Այդ աշխատանքի համար նրանք խոշոր գումարներ էին ստանում Ռուսաստանից։

Լոռիի չէզոք շրջանը աւելի մեծ յարմարութիւններ էր ներկայացնում բոլշևիկեան գործունէութեան համար։ Այս շրջանը վիճելի էր Վրաստանի և Հայաստանի միջև, անգլիացիների ճնշումով յայտարարուած էր չէզոք, մինչև հաշտութեան վերջնական կնքումը, և կառավարւում էր խառն վարչութեան միջոցով։ Ել ու մուտքը ազատ էր, և տեղական հայ բնակչութիւնը՝ դէպի վրացիները տածած թշնամութիւնից դրդուած՝ բարեացակամ վերաբերում էր ցոյց տալիս վրաց մենշևիկների դէմ կռուող բոլշևիկների հանդէպ։ Բոլշևիկների համար Լոռին, մի տեսակ, յենակէտ էր, որտեղից նրանք կապ էին պահում Հայաստանի, Վրաստանի ու միւս երկիրների միջև և

գաղտնի ճանապարհներով մարդ, դրամ և հակապետական գրականութիւն ներմուծում Հայաստան։

Հայաստանի օտար ցեղերն էլ, յատկապէս թուրքերն ու ռուսները, բնական դաշնակիցներ էին հայ բոլշևիկների։ Այս երկու ցեղերն էլ թշնամական դիրքի մէջ էին դէպի Հայաստանի անկախութիւնը և չէին ուզում հաշտուել հայկական ազգային իշխանութեան հետ։ Թուրքերի աչքերը Թուրքիայի և Ադրբէջանի վրայ էին, որոնց հետ կենդանի կապ էին պահում և որոնց ձեռքին կոյր գործիք էին Հայաստանի Հանրապետութեան դէմ լարուող դաւերի մէջ։ Ռուսները անհամբեր սպասում էին Ռուսաստանի վերադարձին և ռուսական իշխանութեան հաստատմանը։ Հայ բոլշևիկները նոյնպէս Ռուսաստանի վերադարձն էին երազում և, հետևաբար, ռուսական գործ էին կատարում։ Միւս կողմից, Ռուսաստանն ու Թուրքիան բարեկամներ և դաշնակիցներ էին։ Այս գետնի վրայ, Հայաստանի թուրքերի, ռուսների և հայ բոլշևիկների համագործակցութիւնը տրամաբանական էր և հասկանալի։ Եւ եթէ աւելացնենք նրանց երեքի էլ կատաղի հակառակութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան և Հայաստանի կառավարութեան, պատկերը կը լինի աւելի կատարեալ։

Հայաստանի կառավարութիւնը, հարկաւ, անտեղեակ չէր բոլշևիկների կատարած աշխատանքներին, բայց, ներքին և արտաքին զանազան պատճառներով, խիստ միջոցների չէր դիմում։ Այդ պատճառներից մէկն էլ այն էր, որ բոլշևիկների մէջ համաձայնութիւն չկար քաղաքական անելիքների մասին։ Մինչ երիտասարդական տարրը ձգտում էր գործօն պայքարի և յեղափոխական անմիջական ձեռնարկների, ղեկավար շրջանակները, մանաւանդ, 1919-ին կազմուած Հայաստանի կոմիտէն՝ Արմէնկոմը, ընդհանուր առմամբ, հակառակ էր ծայրայեղ քայլերի և ուզում էր, մինչև ռուս կարմիր բանակի մօտենալը, սահմանափակուել միայն կազմակերպական

նախապատրաստական աշխատանքներով և քարոզչութեամբ։

«Արմէնկոմը, գրում է յայտնի բոլշեւիկ Շ. Ամիրխանեանը, իր աշխատանքը դիտում էր որպէս խաղաղ ագիտացիա և հանդարտ քարոզչութիւն և երբեք ապստամբութիւն և իշխանութիւնը գրաւելու խնդիր չի դըրել (*)։

Նոյն իմաստով արտայայտւում է և Ս. Կասեանը, որ պնդում է, թէ 1919-ին և 20-ին, մինչեւ Ադրբէջանի խորհրդայնացումը, հայ բոլշեւիկները Հայաստանի իշխանութիւնը գրաւելու գործնական նպատակ չեն ունեցել։

Աւելի ճիշդ, հայ կոմունիստների մտքում, այդ ժամանակները, տիրում էր շփոթ և անորոշութիւն։ Կասեանի պէս մարդիկ հասկանում էին, որ ապստամբական ամէն փորձ ոչ միայն անողոք կերպով պիտի ճնշուի, այլ և աղէտաւոր պիտի լինի երկրի համար։ Բայց տաքարիւն երիտասարդութիւնը և Աւիսի պէս արկածախնդիրներ չէին ուզում հանգիստ նստել և աշխատում էին Հայաստանում էլ «պրոլետարական յեղափոխութիւն» խաղալ։

Կառավարութիւնը տեղեակ էր այս բոլորին և զգուշանում էր բանտարկութիւններով և բռնի միջոցներով ուժեղացնել ծայրայեղների դիրքը։ Միայն 1919-ի ամառը, Բէօյիւք-Վէդիի կռիւների ժամանակ, հակապետական թռուցիկներ ցրելու համար ձերբակալուեցին «Սպարտակ» խմբի պարագլուխները։ Այնուհետեւ, երբ այլեւս ակընյայտնի դարձաւ, որ Արմէնկոմի սկզբնական խոհեմ քաղաքականութիւնը անզօր է զսպելու ծայրայեղների դաւադրութիւնները, կառավարութիւնը դիմեց խիստ միջոցների և 1920 թ. յուն. 31ին ձերբակալութիւններ արաւ Երեւանում և Դիլիջանում։

(*) Շ. Ամիրխանեան, «Մայիսեան Ապստամբութիւնը եւ Հայաստան (1920)»։

Այդ առթիւ, Սոց.-Յեղափոխականները, որոնց անդամների մի մասը համակրում և գաղտնի գործակցում էր բոլշեւիկներին, հարցապնդում մտցրին խորհրդարանում, որ բուռն վիճաբանութիւնների նիւթ ծառայեց։

Ներքին գործոց նախարարը տուեց, ի միջի այլոց, հետեւեալ տեղեկութիւնները.— «Հայաստանում կան բաւական թւով բոլշեւիկներ, որոնք՝ իրենց ասելով՝ եկել են այստեղ միայն ապաստան գտնելու և ոչ մի գործունէութիւն պիտի չունենան։ Սակայն, դեռ յուլիս ամսին, Բէօյիւք-Վէդիի կռիւների ժամանակ, նրանք տպեցին մի թռուցիկ, որով կոչ էին անում զօրքին չգնալ կռուի։ Այնուհետեւ, տեղի ունեցան մի քանի դէպքեր Սարըղամիշ-Ալեքսանդրապոլ երկաթուղագծի վրայ եւն.։ Հայաստանի անկախութեան տօնի օրը պատերին փակցրին թըռուցիկներ, որոնք ուղղուած էին մեր պետական կազմի դէմ։

«Վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ օրէցօր Հայաստան են գալիս նոր մեծամասնականներ, որոնք իրենց հետ բերում են խոշոր գումարներ՝ ագիտացիայի համար։ Միւս կողմից, անհերքելի փաստ է, որ ռուս մեծամասնականները դաշն են կապել երիտասարդ թուրքերի հետ։ Այդ համաձայնութեամբ տաճկական զօրքերը պիտի անցնեն Հայաստանի վրայով Դէնիկինի թիկունքին խփելու համար։ Ի՞նչ դրութեան մէջ կ՚ընկնի Հայաստանը այդ պարագային»։

Հայաստանի զանազան մասերում կատարուած խուզարկութիւններն ու ձերբակալութիւնները երեւան բերին ահագին նիւթ և ամբողջութեամբ հաստատեցին կառավարութեան ունեցած տեղեկութիւնները հայ բոլշեւիկների ունեցած հակապետական գործունէութեան մասին։ Պարզուեց, որ բոլշեւիկները եռուն աշխատանքի մէջ են և գաղտնի կերպով պատրաստում են բռնի յեղաշրջում առաջ բերելու Հայաստանում։

Հետագային բոլշեւիկներն իրենք էլ հաստատեցին

այս փաստը։ Այսպէս, Ս. Կասեանը վկայում է, որ «բոլշեւիկների ակտիւ եւ խտացած գործունէութիւնը Հայաստանի տերիտորիայում իրապէս սկսուել է 1919 թ. ամառուանից։ Ճիշդ է, առաջ էլ եղել են այդտեղ խմբակներ, բայց որովհետեւ մեր կուսակցութեան Երկրային Կոմիտէն կտրուած է եղել Հայաստանից, նա չի կարողացել ոչ կազմակերպչական գործ կատարել այդ խմբակների միջոցով, ոչ էլ ուղղութիւն տալ նրանց գործունէութեանը։ Անգլիացիների գալուց յետոյ, երբ Դաշնակները աւելի երես էին առել եւ իշխանութիւնն ամբողջապէս կենտրոնացրել իրենց ձեռքը, այդ խմբակների գործունէութիւնը լիկուիդացիայի է ենթարկւում համարեա ամբողջապէս։ Նոյն տարուայ սեպտեմբերին, Նախապատրաստական աշխատանքներից յետոյ, Երկրային Կոմիտէի ներկայացուցիչները կազմակերպում են Երեւանում՝ գաւառներից հրաւիրուած պատասխանատու ընկերների գաղտնի խորհրդակցութիւն, ուր մշակւում է այդ երկրում մեր հիմնական տակտիկան եւ ստեղծւում կենտրոնական մարմին՝ Հայաստանի Կոմիտէ» (*)։

Այս խորհրդակցութեան մէջ նշանաբան է ընդունւում նաեւ «Խորհրդային Հանրապետութեան հաստատումը Հայաստանում»։

«1920 թ. յունուարի երկրորդ կէսին Երեւանում տեղի ունեցած կուսակցական անլեգալ կոնֆերենցիան, շարունակում է Կասեանը, հիմնուելով կուսակցութեան քառամսեայ փորձառութեան վրայ, ամբողջութեամբ ընդունեց եւ հաստատեց այդ վարքագիծը. .

«Ալեքսանդրապոլի կազմակերպութիւնը, որ գլխաւորապէս բաղկացած էր համարեա Բագուից ու Թիֆլիսից եկած երկաթուղային բանուորներից, իր ներկայացուցիչների բերանով հարց էր յարուցել իշխանութիւնը վերցնելու մասին, բայց կոնֆերենցիան կտրականապէս մեր-

(*) «Նոր Աշխարհ» ամսագիր, 1922 թ. սեպտ., թիւ 2։

ժեց այդ», որովհետեւ «իշխանութիւնը ձեռքում պահելը անկարելի պիտի լինի՝ այն հասարակ պատճառով, որ 1) կուսակցութիւնը, բաղկացած լինելով ոչ աւելի քան 500 անդամից, չափազանց աղքատ լինելով փորձուած ու պատրաստ ուժերով, պիտի չկարողանայ ո՛չ միայն դիմադրել այն ժամանակուայ քաղաքական եւ հոգեբանական սիտուացիայում անխուսափելիօրէն առաջ գալիք քաղաքացիական կռուին, այլ եւ իշխանութիւն կազմակերպել կենտրոնում եւ տեղերում. 2) որ նա հնարաւորութիւն պիտի չունենայ կազմակերպելու այնպիսի բանակ, որը կարողանայ առանց «դրսի» օգնութեան դիմադրել արտաքին թշնամիների՝ մենշեւիկեան Վրաստանի, մուսաւաթական Ազրբէջանի եւ քեմալական Տաճկաստանի ամենաթեթեւ արշաւանքին անգամ. 3) որ ծայր աստիճան քայքայուած եւ սովի ճիրաններում գալարուող երկրի ցուրտն ու քաղցը մի կողմից, իսկ տնտեսական անխուսափելի բլոկադան միւս կողմից՝ հէնց սաղմի մէջ պիտի խեղդեն Խորհրդային իշխանութիւնը»։

Ուրիշ խօսքով, 1920թ. սկիզբները, «սիտուացիան» այնպէս էր Հայաստանում, որ Խորհրդային իշխանութեան մասին մտածելը անմտութիւն էր. ո՛չ արտաքին պայմաններն էին նպաստաւոր, ոչ էլ ներքին ուժերի դասաւորութիւնը։ Հայաստանի ժողովուրդը, իշխանութիւնը եւ բանակը հակառակ էին բոլշեւիկութեան, իսկ հայ բոլշեւիկներն իրենք արհամարհելի քանակ էին ներկայացնում եւ անարժէք որակ — ընդամէնը 500 անդամ, այն էլ «չափազանց աղքատ փորձուած եւ պատրաստ ուժերով»։ Եւ բնական է, որ կուսակցութեան ըմբռնումը ունեցող իրատես մարդիկ չպիտի կամենային նետուել արկածախնդրութեան գիրկը։

Սակայն, իրատեսութիւնը շատ հեռու էր հայ բոլշեւիկներից, եւ Արմէնկոմը միայն Կասեաններից բաղկացած չէր։ Ընդհակառակը, Կասեանի ասած «կոնֆերենցիայում» տիրող է եղել «Ալեքսանդրապոլի ներկայացուցիչների»

տրամադրութիւնը և անցել է նրանց կողմից Աւիսի առաջարկած մարտական բանաձեւը, որով պահանջւում էր անմիջապէս «վերցնել իշխանութիւնը» Հայաստանում։ Խորհուրդների պաշտօնաթերթ «Իզվեստիա»-յի 1922 թ. յուն. 25-ի համարում այդ բանաձեւը հրատարակուած է որպէս «կոնֆերենցիայի» կողմից ընդունուած և պարտադիր որոշում։ Հետեւաբար, Կասեանի պնդումը, թէ «իշխանութիւնը վերցնելու» առաջարկը «կոնֆերենցիան կտրականապէս մերժեց», ճիշդ չէ։ Ճիշդը՝ հակառակն է. — Խորհրդաժողովը որոշել է ապստամբութեան միջոցով տիրանալ Հայաստանի իշխանութեան։

Այդ երեւում է և Հայ Կոմ. Կուսակցութեան յայտնի քարտուղար Աշ. Յովհաննիսեանի հետեւեալ տողերից։

«Սովետիզացիայի խնդիրը պարտաւորիչ էր ամէնից առաջ Կոմունիստական Կուսակցութեան Հայաստանի Կոմիտէի — Արմէնկոմի համար։ Հայաստանի Կոմունիստական կազմակերպութիւնների գաղտնի կոնֆերանսը, որ տեղի ունեցաւ Երեւանում, 1920 թ. յունուարին, ընդունել էր թեզիսներ այն իմաստով, որ Կարմիր բանակի մերձեցման և հարեւան հանրապետութիւնների յեղաշրջում լինելու դէպքում պէտք է առաջադրել Հայաստանի սովետիզացիայի խնդիրը։ Վերահաս դէպքերը հարկադրում էին նախապատրաստական քայլեր անել այդ ուղղութեամբ։ Հայաստանի Կոմիտէն ենթադրում էր, որ Ղազախն ու Ղարաբաղը, որպէս սահմանակից շրջաններ, յեղաշրջման յենակէտներ պէտք է դառնային Հայաստանի համար։ Մինչ այդ, պէտք էր խուսափել վճռական գործողութիւններից, բաւականանալ միայն կազմակերպչական աշխատանքով (*)։

Պարզ է, ուրեմն, որ յունուարի խորհրդաժողովում, բոլշեւիկները դրական մտքով են լուծել Հայաստանի խորհրդայնացման հարցը։ Վէճը միայն երկու կէտերի

(*) «Խորհրդ. Հայաստան» 19·5 թ., մայիս 1։

շուրջ էր։ Առաջին՝ անմիջապէ՞ս դիմել ապստամբութեան, ինչպէս պահանջում էին ալեքսանդրապոլցիները Աւիսի բերանով, թէ՞ սպասել արտաքին նպաստաւոր պայմանների։ Որոշուել է սպասել, մինչեւ Վրաստանի կամ Ազրբէջանի խորհրդայնացումը և այնուհետեւ ապստամբութեան դրօշ բարձրացնել Հայաստանում։

Երկրորդ՝ ո՞րտեղից սկսել ապստամբութիւնը։ Ալեքսանդրապոլցիները պնդում էին, որ իրենց շրջանից պէտք է սկսել։ Ուրիշներ առաջարկում էին սկսել Ղազախից և Ղարաբաղից, որոնք սահմանակից են Ազրբէջանին և, հետեւաբար, հեշտ կը լինէր ռուսական բանակից օգնութիւն ստանալը։ Այս տարակարծութիւնը, հետագային, բաւական ծանր անդրադարձում ունեցաւ մայիսեան ապստամբութեան դէպքերի վրայ և պատճառ դարձաւ, մասամբ, Ալեքսանդրապոլի բոլշեւիկների թուլութեան։

Այսպէս թէ այնպէս, 1919 թ. վերջերը և 1920 թ. սկզբին հայ բոլշեւիկները որոշ կերպով կանգնել էին Հայաստանը խորհրդայնացնելու տեսակէտի վրայ։ Նրանք կապուած էին ռուսների հետ Երկրային Կոմիտէի միջոցով, որ Թիֆլիսից դրամ, գրականութիւն, հրահանգներ և գործիչներ էր ուղարկում Հայաստան։ Նրանք անհամբեր սպասում էին ռուս բանակի մօտենալուն, որպէսզի բարձրացնեն ապստամբութեան դրօշը ընդդէմ «Դաշնակ» Հայաստանի կառավարութեան։ Կուսակցական կիրքն ու թշնամանքը այնքա՜ն կուրացրել էին նրանց, որ «Դաշնակ»ների ետեւից չէին տեսնում Հայաստանն ու հայ ժողովրդին։ Հայաստանը նրանց համար համաշխարհային յեղափոխութեան և կուսակցական հաշիւների առարկայ էր։

Այժմ արդէն պատմական դէպքերով և վաւերագրերով հաստատուած փաստ է, որ Հայաստանի Հանրապետութեան հէնց առաջին օրերից սկսած հայ բոլշեւիկները թշնամական դիրքի մէջ էին ոչ միայն դէպի Հայաստա-

նի վարիչ տարրերը, այլ և դէպի պետութիւնը։ Երկրի ներսը հակապետական քարոզչութիւն էին անում, միջցեղային կիրքերն էին հրահրում, դժուարացնում էին շինարարական աշխատանքը սաբոտաժի և այլ միջոցներով և, առհասարակ, օգտագործում էին ամէն առիթ՝ թուլացնելու համար պետական մեքենան և վարկաբեկելու իշխանութիւնը յաչս հասարակութեան։ Դուրսը, սուտով ու զրպարտութիւններով, թշնամական տրամադրութիւններ էին առաջ բերում դէպի Հայաստանի Հանրապետութիւնը ու նրա ղեկավարները՝ նոյնիսկ գործակցելով հայութեան բացայայտ թշնամի տարրերի հետ։

Այս տեսակէտից շատ բնորոշ է հետագային յայտնի բոլշեւիկներ (այժմ գնդակահարուած) Ար. Երզնկեանի և Սիմ. Փիրումեանի մէկ վկայութիւնը։

Նրանք, 1920 թ. ամառը, Թիֆլիսից Մոսկուա էին ուղարկուել՝ ապահովելու համար Ղարաբաղի կցումը Հայաստանին։ Վերադարձին, ընդարձակ զեկուցում տուին, որից երեւաց, որ Խորհրդ. Ռուսաստանում թշնամական վերաբերում է տիրում դէպի Հայաստանը։ Կառավարական և կուսակցական պաշտօնաթերթերը՝ «Իզվեստիա» և «Պրաւդա» կատաղի յարձակումներ էին գործում Հայաստանի վրայ։

Մոսկուայի «լրագրական յօդուածներում, ասում է Ա. Երզնկեանը, շարունակ այն միտքն է արծարծուել, թէ իմպերիալիստ Դաշնակիցները համարեա ամէն օր Հայաստան են ներմուծում լեռների չափ ռազմամթերք, զինագործական արհեստանոցներ, որոնք, առանց դադար առնելու, ռազմամթերք են պատրաստում... Ամբողջ աշխարհի բուրժուաները հաւաքուել են Հայաստանում շահագործելու համար պրոլետարիատին և այնպիսի քաղաքականութիւն են մտցրել, որ ուղղուած է սոցիալիստական Ադրբէջանի և սոցիալիստական Թուրքիայի խեղճ ու կրակ աշխատաւորութեան դէմ։ Այդ երկու երկիրների մահմետական ժողովուրդները հանգիստ չունին հակայե-

ղափոխական հայոց կառավարութեան հսկայաթիւ զօրքերի նուաճողական յարձակումներից։ Հայ յեղափոխականների ձեռքով ստեղծուած Ղարաբաղի անցքերի ժամանակ տուժեցին ոչ թէ հայերը, այլ Խորհրդային իշխանութեան մշտական կողմնակից մահմետական աշխատաւորութիւնը»։

Ովքե՞ր էին վարում այս հակահայ ստապատիր ու զզուելի քարոզչութիւնը։ Երզնկեանը պատասխանում է.

Նախ՝ «կոմունիստական դիմակի տակ ծածկուած Խալիլ փաշաները, Կազանի թաթարները, որոնք արտօնեալ դիրք ունէին Մոսկուայի ազգային գործերի ժողովրդական կոմիսարիատում, և իրենց կոմունիստ անուանող Բագուի թաթարները»։

Երկրորդ՝ հայ բոլշեւիկները, որոնց «մի մասը Հայաստանից կտրուած լինելու պատճառով ոչ մի տեղեկութիւն չունէր Հայաստանի և նրա բնակչութեան ծանր կացութեան մասին, իսկ միւսներն էլ դէպի Դաշնակցութիւնը տածած ատելութիւնից կուրացած՝ դիտումնաւոր, չափազանցուած միտումնաւոր լուրեր էին տարածում ի վնաս հարազատ երկրի։ Առանձնապէս այդ ուղղութեամբ ոյժ էին տալիս Բագուի, Վլադիկաւկազի, Ռոստովի և այլ գաւառական քաղաքների հայ կոմունիստները»։

Թէ հայ բոլշեւիկները ինչպիսի հրէշային «դիտումնաւոր լուրեր» էին տարածում ռուսների մէջ Հայաստանի դէմ, ցոյց է տալիս և հետեւեալ հատուածը Բագուից Հայաստանի կառավարութեան ուղղուած մէկ հեռագրից։ — «Յենուելով մաուզերիստ դահճապետ Սեպուհի և դէնիկինեան սպաների վրայ՝ դուք օրէնքից դուրս էք յայտարարել Հայաստանի գիւղացիներին և բանուորներին։ Զանգուածային գնդակահարութիւնները Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարըղամիշում և այլ վայրերում, յեղափոխական բանուորներին, գիւղացիներին և նրանց ղեկավարներին անխնայ ձերբակալելը, ծեծելը, թալանելը — այս ամէնը վրդովում է Ադրբէջանի պրոլետարիատի և Խորհրդ. Ռուսաստանի Կարմիր զօրքերի յեղափոխական խիղճը...

«Մեզ յայտնի է, որ ձեր կառավարութիւնը Կարսի շրջանում գնդակահարել է 300 հոգի։ Կարսում հակայեղափոխականների դատարանը, Խորէնիի և Աղբալեանի գլխաւորութեամբ, ձերբակալել է կոմունիստական կուսակցութեան անդամներին և գնդակահարել։ Դուք գնդակահարել էք Խորհրդ. Հայաստանի Ռազմայեղափոխական կոմիտէի անդամ բժ. Մելքոնեանին, Կարսի յեղափոխական կոմիտէի անդամ ընկ. Ղուկասեանին, Նոր-Բայազետի Յեղափ. կոմիտէի անդամ ընկ. Սարուխանեանին և մի շարք մեր ամենալաւ ընկերներին։ Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան Հայաստանի ներկայացուցիչը՝ վրդովուած այն դաժան անարդարութիւնից, որ դուք ցուցահանում էք Հայաստանում մեր ընկերների նկատմամբ, որոշել է դիմել Մոսկուա, որտեղ անամօթաբար դիմել էք և դուք՝ ուղարկելով ձեր ներկայացուցիչներին (*) և միաժամանակ Հայաստանում անխնայ կոտորելով կոմունիստներին։ Մենք համոզուած ենք, որ Խորհրդ. Ռուսաստանը ամէն միջոց ձեռք կ՚առնէ՝ վերջ տալու համար ձեր արիւնոտ վարմունքին (**)»։

Հեռագրի տակ ստորագրել էին, Ադրբէջանի Կոմ. Կուս. Կենտր. Կոմիտէի կողմից՝ Նանէշվիլի և Միկոյեան. Ռուս. Կոմ. Կուս, ներկայացուցիչ՝ Կասեան, Հայաստանի Ռազմայեղ. Կոմիտէի անունից՝ Աւիս:

Համանման մի ուրիշ հեռագրի մէջ էլ ասուած է «թէ Դաշնակցականները Հայաստանում կոտորել են մինչեւ երկու հազար կոմունիստներ»...

Եւ այս տեսակ ստերով հայ բոլշեւիկները մոլորեցնում էին ոչ միայն Ռուսաստանի հանրային կարծիքը, այլ և կառավարութիւնը։ Բագուից ստացած չարամիտ զրպարտութիւնների հիման վրայ, Չիչերինը յունիս 4ին, «մեծ վրդովմունքով», հեռագիր-բողոք է ուղարկում

(*) Խօսքը Լեւոն Շանթի պատուիրակութեան մասին է:

(**) Բագուի «Կոմունիստ» օրաթերթ, 1920 թ., յունիս 20:

Երեւան, Հայաստանում, իբր թէ, կատարուող գնդակահարութիւնների դէմ։ Եւ, ի միջի այլոց, ասում է, թէ՝ «յատկապէս գնդակահարուած է ընկ. Միկոյեանը»...

Հայ բոլշեւիկները մէկ նպատակ էին հետապնդում — ինչ գնով էլ լինի վարկաբեկել ու տապալել Հայաստանի վարիչներին, ձեռք ձգել Հայաստանի իշխանութիւնը։ Եւ այդ նպատակին հասնելու համար նրանք միջոցների մէջ խտրութիւն չէին դնում, փոյթ չէ թէ դրանից մահացու վէրք կը ստանային Հայաստանն ու հայ ժողովուրդը։

Նրանք սրտատրոփ սպասում էին, թէ ե՞րբ պիտի մօտենայ ռուսական բանակը, որպէսզի ներքին ապստամբութիւն բարձրացնեն և խորտակեն «Դաշնակ»ների իշխանութիւնը։ Եւ այդ օրը շատ չուշացաւ. 1920 թ. ապրիլ 28-ին ընկաւ Ադրբէջանը թուրք-բոլշեւիկեան միացեալ գրոհի տակ։ Ադրբէջանի խորհրդայնացումով, հայ բոլշեւիկների կարծիքով, հնչելու էր և Հայաստանի խորհրդայնացման ժամը։

V

ՄԱՅԻՍԵԱՆ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս տեսանք, 1920 թ. ապրիլ 28-ին, բոլշեւիկները, Թուրքերի օգնութեամբ, գրաւեցին Բագուն՝ խորտակելով Ազրբէջանի անկախութիւնը։

Յաջորդ օրն իսկ, Բագուից Երեւանում ստացուեց հետեւեալ սպառնական հեռագիրը.— «Ազրբէջանի Խորհրդային հանրապետութեան բանուորա-գիւղացիական կառավարութիւնը, յանձին Յեղափոխական Կոմիտէի, պահանջում է նախ՝ մաքրել ձեր զօրքերից Ղարաբաղի և Զանգեզուրի հողամասերը. երկրորդ՝ քաշուել դէպի ձեր սահմանները. երրորդ՝ դադրեցնել ազգամիջեան կոտորածը։ Հակառակ դէպքում, Ազրբէջանի ընկերվարական Խորհրդային հանրապետութեան յեղափոխական կոմիտէն իրեն կը համարէ պատերազմական վիճակի մէջ Հայաստանի Հանրապետութեան հետ։ Վերջնագրի պատասխանի համար տրւում է երեք օր ժամանակամիջոց։ Ազրբէջանի Խորհրդ. հանրապետութեան արտաքին գործերի կոմիսար Հուսէյնով» (*)։

Դեռ պատասխան չստացած, մայիս 1-ին, Բագուից Երեւան հասաւ եւ մի ուրիշ հեռագիր՝ այս անգամ ռուսական 11-րդ բանակի հրամանատարութեան կողմից՝ Օրջոնիկիձէի, Կիրովի, Մեխոնոշինի և Լեւանդովսկիի ստորագրութեամբ։ Հեռագիրը, «յանուն Ռուսաստանի Սոց. Ֆեդ. Խորհրդային Հանրապետութեան», առաջարկում էր

(*) Սա այն Հուսէյնովն է. որի հետ Խալիլ փաշան համաձայնութիւն էր կնքել Ազրբէջանը խորհրդայնացնելու մասին՝ խոստանալով նրան վարչապետութեան պաշտօնը։

Հայաստանի կառավարութեան՝ «անմիջապէս դադրեցնել ռազմական բոլոր գործողութիւնները Խորհրդ. Ազրբէջանում և իր զօրքերը դուրս հանել նրա սահմաններից։ Այդ պէտք է արուի ներկայ հեռագրի ստացումից յետոյ 24 ժամուայ ընթացքում»։

Պէտք է ասել, որ Հայաստանը «ռազմական գործողութիւններ» չունէր Ազրբէջանում։ Այդ ժամանակ տեղի էին ունենում Ղարաբաղի դէպքերը։ Ղարաբաղի բնակչութիւնը մերժում էր ճանաչել Ազրբէջանի իշխանութիւնը և ուզում էր միանալ Հայաստանին։ Մուսաւաթական կառավարութիւնը, Խալիլ փաշայի օգնութեամբ, իր ամբողջ բանակը ուղղել էր Ղարաբաղի դէմ և աշխատում էր բանի ուժով հպատակեցնել ղարաբաղցիներին, որոնց խնդրանքով՝ օգնութեան էր գնացել Դրոյի զօրամասը։ Ազրբէջանի խորհրդայնացման վայրկեանին գրեթէ ամբողջ Ղարաբաղը հայերի ձեռքն էր։

Թէ՛ Հուսէյնովի և թէ՛ միւս հեռագիրը բառ առ բառ կրկնութիւնն էր մուսաւաթական կառավարութեան մինչեւ այդ արած պահանջների։ Հայաստանի կառավարութիւնը մերժեց ենթարկուել Բագուի վերջնագրին և վճռական բողոք ուղարկեց Մոսկուա՝ Լենինին և Չիչերինին, ինչպէս նաեւ Բագու՝ Օրջոնիկիձէին, բայց այդ բողոքները մնացին անպատասխանի։

Հեռագիրների այս փոխանակութիւնը, որ ահագին վրդովում առաջ բերեց Հայաստանում, զուգադիպեց Մայիս Մէկի աշխատաւորական տօնին։ Այդ տարի, կառավարութեան որոշումով, Մայիս Մէկը պիտի տօնուէր առանձին շքով։ Մայրաքաղաքում և գաւառական կենտրոններում կազմակերպուեցին մեծահանդէս թափօրներ ու հրապարակային փառահեղ ժողովներ։ Ճառախօսութիւնների գլխաւոր նիւթն էր Ազրբէջանի վերջնագիր-պահանջը՝ Ղարաբաղի և Զանգեզուրի մասին։ Հայաստանի ողջ ժողովրդի այդ օրերի տրամադրութեան արտայայտութիւն կարելի է համարել Արհեստակցական Միու-

թիւնների Միութեան առաջարկած բանաձեւը, որ Երեւանի բոլոր ժողովներում ընդունուեց միաձայնութեամբ և որով ժողովուրդը «յայտնում էր իր բուռն զայրոյթը Թուրք գիւղացիութեան և բանուորութեան անունը չարաշահող դահիճներին, որոնք Խորհրդային իշխանութեան և կոմունիզմի անունը օգտագործելով՝ շարունակում են նախորդ (մուսաւաթական) կառավարութեան արիւնոտ գործը։ Հայաստանի աշխատաւորութիւնը իր եղբայրական ձեռքն է մեկնում Ազրբէջանի աշխատաւորութեան և պահանջում է վերջ տալ արշաւանքին դէպի Ղարաբաղ և Զանգեզուր՝ թոյլ տալով, որ այդ գաւառների գիւղացիութիւնն ու բանուորութիւնը ինքը ազատօրէն արտայայտէ իր կամքը։ Հայաստանի աշխատաւորութիւնը խորապէս հաւատալով, որ Ռուսաստանի Խորհրդային իշխանութիւնը թոյլ չի տայ Ազրբէջանին յարձակողական քաղաքականութիւն, միեւնոյն ժամանակ պահանջում է իր կառավարութիւնից անյողդողդ պաշտպանել Հայաստանի և հայ աշխատաւորութեան ազատութիւնն ու անկախութիւնը և առաջարկում է Արհեստակցական Միութիւնների Միութեան այս բանաձեւը անմիջապէս յայտնել բոլոր երկիրների սոցիալիստական ֆրակցիաներին»։ Բանաձեւը հեռագրուեցաւ Մոսկուա ու Բագու և «ամէնքին, ամէնքին, ամէնքին» և արժանացաւ նոյն ճակատագրին, ինչ որ և կառավարութեան հեռագիրներն ու դիմումները։

Մինչ Երեւանում տօնական խրախճանքներ էին տեղի ունենում, Ալեքսանդրապոլից ստացուեցին մտահոգիչ լուրեր։ Այնտեղ բոլշեւիկները, օգտուելով կառավարութեան բարեացակամ վերաբերումից, Մայիս Մէկի օրը վեր էին ածել քաղաքական ցոյցի՝ ի նպաստ Խորհրդային իշխանութեան, և օգտուելով տեղական իշխանութիւնների թուլութիւնից՝ խորհրդայնացման դրօշակ էին պարզել։

Հակապետական այս շարժման համար օգտագործուել էին Մայիս Մէկի տօնակատարութեանց ժամանակ բան-

ւորների և զինուորների մի մասի արտայայտած բոլշեւիկեան տրամադրութիւնները։

Մայիս Մէկի առթիւ, Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան Ալեքսանդրապոլի Կոմիտէի անունով մի կոչ էր հրատարակուել, որով յայտարարւում էր, թէ «Հայաստանի սովալլուկ և իրաւազուրկ մասսաները պատրաստ են իրենց եղբայրական ձեռքը մեկնելու, Դաշնակցական կառավարութեան գլխի վրայով, Բագուի դռները հասած յաղթական Կարմիր բանակին և Բագուի պրոլետարիատին, որ այսօրուանից մեր կռիւը Թուրք բանուորի և գիւղացու դէմ չէ, այլ Դաշնակցական կառավարութեան, որ մօտ է այդ կառավարութեան տապալման օրը, որ և կը լինի Հայաստանի բանուորների և գիւղացիների յաղթութեան օրը։ Կոչը վերջանում էր՝ «կեցցէ՛ Խորհրդային Հայաստանը», «կեցցէ՛ Երրորդ Ինտերնացիոնալը», «կեցցէ՛ ազատարար Կարմիր բանակը» խօսքերով։

Նոյն օրը, յանուն միտինգի, Դոգունց և Արմէնկոմի անդամ Աւիս Նուրիջանեանը ողջոյնի հեռագիր են ուղարկում Բագու «ընկեր Նարիմանովին»՝ խոստանալով Հայաստանի կառավարութեան հետ «այնպէս վարուել, ինչպէս դուք վարուեցիք Թուրք դաշնակ-մուսաւաթականների կառավարութեան հետ, որպէսզի մեծ Խորհրդ. Ռուսաստանի հետ միասին, միացած Արեւելքի ճնշուած ժողովուրդների հետ՝ տանենք նրանց (Հայաստանի բանուորներին և գիւղացիներին. Ս. Վ.)՝ միջազգային իմպերիալիզմի դէմ»։

Մի երկու օր անցած, Նուրիջանեան և Մուսայէլեան հեռագրում են «ընկեր Նարիմանովին», թէ «Ալեքսանդրապոլի կարմիր պրոլետարիատը և կարմիր Խորհրդային գրահապատը, գլխաւորութեամբ ՌԿԿ Ալեքպոլի կոմիտէի, մայիս 1-ից սկսած, հայ Դաշնակցական հակայեղափոխական կառավարութեան հետ լարուած պատերազմական դրութեան մէջ են գտնւում, սպասելով

ամբողջ Հայաստանում ապստամբութեան կազմակերպումը»։ Ու խնդրում են օգնել պարէնով. «Թախանձագին խնդրում ենք անմիջապէս ռադիոյով յայտնել մեզ և հնարաւորութիւն ստեղծել շուտափոյթ կերպով Ղազախով, գոնէ սկզբնական շրջանում, մեզ աննշան պարէն օգնութիւն հասցնել։ Դրական պատասխան ստանալուց յետոյ, մենք անյապաղ գրաւում ենք իշխանութիւնը և միասին ամբողջ Հայաստանի ապստամբութեան կոչ կ'անենք»։

Հակապետական շարժման կենտրոն դարձել էր «Վարդան Զօրավար» գրահապատ գնացքը, Ալեքսանդրապոլի կայանում, գլխապետ Սարգիս Մուսայէլեանի հրամանատարութեամբ։ Վերջինս՝ մերժելով ենթարկուել սպարապետ Նազարբէգեանի կարգադրութեան՝ մեկնելու ճակատ, ապստամբութեան դրօշակ էր պարզել։

Արմէնկոմը անակնկալի էր եկել. Նա պատրաստ չէր նման բանի։ Ընդհակառակը, նրա որոշումն էր շարժումը սկսել Ղազախի շրջանում, որպէսզի հնարաւորութիւն լինի անմիջական օգնութիւն ստանալ Ադրբէջանից։ Այդ հողի վրայ տարակարծութիւն է ծագում Արմէնկոմի և Ալեք-պոլի Ցեղկոմի միջև, որ տեղի է տալիս սուր բանավէճի։ Արմէնկոմը Երևանից ուղարկում է իր անդամներից Դր Տէր Սիմոնեանին՝ բժ. Արտ. Մելքոնեանի հետ՝ տալով նրանց լիազօրութիւն խնդիրը տեղի վրայ կարգադրելու։ Սրանք, հասնելով Ալեքսանդրապոլ՝ միանում են խռովարարներին և որոշում են գրաւել իշխանութիւնը։

Մայիս 7-ին կազմւում է Ռազմա-Յեղափոխական Կոմիտէ (Յեղկոմ), որի անդամներն էին՝ նախագահ և զինուորական կոմիսար՝ Ս. Մուսայէլեան, արտաքին գործոց կոմիսար՝ Աւիս Նուրիջանեան, ներքին գործոց՝ Արտ. Մելքոնեան։

Մայիս 10-ին Յեղկոմը հրապարակում է հետևեալ յայտարարութիւնը որով հռչակում է Հայաստանը խորհրդային։

«Պրոլետարիատի, չքաւոր գիւղացիութեան, բանուորների և կարմիր զօրքի կամքով Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան Ռազմա-Յեղափոխական Կոմիտէն Հայաստանի Հանրապետութեան մէջ հռչակում է խորհրդային իշխանութիւն։ Այսօրուանից մաուզէրիզմի, խմբապետների, սպեկուլեանտների վրայ յենուած և բռնութեան, կողոպուտի, ինքնիշխանութեան վրայ հիմնուած Դաշնակների կառավարութիւնը տապալուած է։ Ռազմա-Յեղափոխական Կոմիտէն կոչ է անում երկրի բնակչութեան պահպանել յեղափոխական դիսցիպլինա և կարգ. ստեղծագործական աշխատանքի խանգարման ամէն մի փորձ կը խեղդուի իր բնում Խորհրդային Հայաստանի կարմիր զօրքերի կողմից։

«Ռազմա-Յեղափոխական Կոմիտէն առաջարկում է.

«1) Բոլոր հիմնարկներին և կազմակերպութիւններին շարունակել սովորական զբաղմունքը, ծառայողներին մնալ իրենց տեղերում, որոնց անձի անձեռնմխելիութիւնը կը պաշտպանուի Խորհրդային Հայաստանի Կարմիր զօրքերի միջոցով։

«2) Ոգելից խմիչքների վաճառումը բոլոր ռեստորաններում, հիւրանոցներում դադարեցնել մինչև յատուկ կարգադրութիւն։

«3) Բոլոր գինետները և խմիչք վաճառող խանութները փակել մինչև յատուկ կարգադրութիւն։

«4) Սոյն յայտարարութեան 2-րդ և 3-րդ կէտը չկատարելու համար յանցաւորները պատասխանատու են Ռազմա-Յեղափոխական Տրիբունալի առաջ։

«5) Երեկոյեան ժամը 9-ից յետոյ բոլոր ակումբները, ռեստորանները, Թատրոնները, կինեմատոգրաֆները փակւում են և յիշեալ ժամից յետոյ Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի թոյլտուութիւնը չունեցողները փողոցում երևալիս ձերբակալուելու են։

«6) Հարբած դրութեան մէջ երևցող մարդերները և կողոպտիչները տեղն ու տեղը կը գնդակահարուեն,

քաղաքում խաղաղ կեանքի ընթացքը խանգարելու փորձերը անմիջապէս կը ճնշուեն զինուած ուժով, զէնքերից կրակողները կը գնդակահարուեն տեղն ու տեղը։

«7) *Այն տները, որոնցից պրովոկացիոն հրացանաձգութիւն տեղի կ'ունենայ, կը քանդուեն հրետանու կրակով։*

«8) *Ռազմա-Յեղափոխական Կոմիտէն, հաշուի առնելով երկրի ծանր դրութիւնը, գիտակցելով ներկայ մոմենտի պատասխանատուութիւնը, կոչ է անում բոլորին անխտիր ձեռնամուխ լինել ազնիւ աշխատանքի յանուն աշխատաւոր ժողովրդի։*

«9) *Ռազմա-Յեղափոխական Կոմիտէն հասարակական և պետական հիմնարկների անարգել անցումը խորհրդային իշխանութեան ձեռքը ապահովելու համար* պահանջում է *իր մօտ հետեւեալ քաղաքացիներին՝ որպէս պատանդ. բժիշկ Բաղդասարեանին, Մխիթար Տէր Աբրահամեանին, Արտաշէս Սամբուլեանին, Արամ Ալչուճեանին, գաւառային կոմիսար Լառեցեանին, Ներհատեանին, Արշակ Պոլոյեանին, Վալադեանին, ինքնավարութեան անդամ Մարգարեանին, քաղաքային միլիցիայի պետ Բանուոր Սերգոյին, պարլամենտի անդամ Կարօ Սասունիին։*

«*Իշխանութիւնը յանձնելու ուլտիմատումի պատասխանը այսօր մայիս* 10-*ին, երեկոյեան ժամը* 4 *ին։*

Հայաստանի Հանրապետութեան
Ռազմ․-Յեղափոխական Կոմիտէ․
Կարմիր բանակի հրամանատար՝ Մուսայելեան․
Շտաբի պետ՝ Կորգանով (*)

Թիւ 1
Ալեքսանդրապոլ, կայարան
10 մայիսի, 1920 թ․

(*) Այս եւ հետագայ մի շարք փաստաթղթեր առնուած են բոլշեւիկեան «Առաջին Մասսայական-Յեղափոխական Շարժումները» հատորից, որ լոյս տեսաւ 1932 թ. Երեւանում եւ որ յետոյ խորհրդ. իշխանութիւնը արգելքի տակ դրեց, իբրեւ Հայաստանի բոլշեւիկների համար վարկաբեկիչ մի հրատարակութիւն։

Միաժամանակ, կամ քիչ վերջը, բոլշեւիկները խռովութիւններ և ապստամբութիւններ առաջ բերին նաեւ Հայաստանի ուրիշ մասերում՝ Կարսում, Սարըղամիշում, Բայազէտի, Բասար-Գեչարի և Դիլիջանի շրջաններում, այսինքն՝ գլխաւորապէս այն վայրերում, ուր Հայաստանի իշխանութիւնից դժգոհ տարրեր կային՝ Թուրքեր, մալականներ եւայլն։ Տեղ-տեղ ապստամբներին միացան և զինուորական մասեր։ Ապստամբների ընդհանուր կարգախօսն էր․— «Ռուսաստանի Կարմիր բանակը գալիս է «հաց, մանուֆակտուրա և խաղաղութիւն» բերելու Հայաստանին. կեցցէ՛ Խորհրդ. Հայաստանը»։

Մի պահ վարանելուց յետոյ, կառավարութիւնը ձեռք առաւ վճռական միջոցներ ըմբոստութիւնը տեղն ու տեղը ճնշելու համար։ Եւ իր քայլերի մէջ հանդիպեց ժողովրդական բոլոր խաւերի անվերապահ համակրանքի և աջակցութեան։ Բացի Սոց. Յեղափոխականներից, որոնք երկդիմի դիրք էին բռնել, բոլոր կուսակցութիւնները՝ Ժողովրդական, Ռամկավար, Սոցիալ-Դեմոկրատ, Դաշնակցական, բոլոր հասարակական մարմինները, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, քաղաքային և արհեստակցական կազմակերպութիւնները, մի խօսքով, ողջ հայոց ժողովուրդը համախմբուեց կառավարութեան շուրջը և մամուլով ու կոչերով, խօսքով ու գործով զօրավիգ հանդիսացաւ ազգային իշխանութեան։

Կուսակցութիւնների վերաբերումի բնորոշման համար յիշենք, մայիս 13-*ին, Խորհրդարանի նախագահութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցած՝ Հայաստանի երեք կուսակցութիւնների՝ Ժողովրդականների, Ռամկավարների, Սոցիալ-Դեմոկրատների և անկուսակցականների ներ-*

կայացուցիչների խորհրդակցութիւնը։ Ներկայ էին վարչապետ Հ. Օհանջանեանը, նախկին վարչապետ Ա. Խատիսեանը, Խորհրդարանի նախագահ Ա. Սահակեանը, Ժողովրդական կուսակցութիւնից՝ Գր. Տէր Խաչատրեանը, Հ. Յովհաննիսեանը և Ե. Յարութիւնեանը, Ռամկավարներից՝ Ս. Դարբինեանը, Սոց.-Դեմոկրատներից Բ. Իշխանեանը, Դ. Անանունը, անկուսակցականներից՝ Գր. Ջալխուշեանը։ Ներկայ էին նաև՝ Դաշնակցութիւնից՝ Ս. Թորոսեանը, Ա. Սաֆրաստեանը և այլն։

Լսելով վարչապետի զեկուցումը կացութեան, ինչպէս նաև Ալեքսանդրապոլի վերջին իրադարձութիւնների մասին, որոնք ստեղծել էին Հայաստանի թշնամիները՝ ցանկանալով հաստատել մեր երկրում Խորհրդային կարգեր, կուսակցութիւնների ներկայացուցիչներն արտայայտեցին իրենց տեսակէտները։

Ժողովրդականների կողմից խօսեց Գր. Տէր Խաչատրեանը, որ պատրաստակամութիւն յայտնեց կուսակցութեան կողմից ամէն կերպ աջակցել կառավարութեան երկրի կարգը և Միաց. Հայաստանի անկախութիւնը պաշտպանելու գործում։ Ապա մի շարք ցանկութիւններ յայտնեցին, որոնք վարչապետը խոստացաւ դնել կառավարութեան քննութեանը։ (*)

Այդ խորհրդակցութիւններից յետոյ, երբ բոլշեւիկները Ադրբէջանի կողմից էլ փորձեցին յարձակուել Հայաստանի վրայ, Ռամկավար, Սոց.-Դեմոկրատ ու Ժողովրդական կուսակցութիւնները և Անկուսակցականների Միութիւնը ժողովրդին ուղղեցին հետեւեալ կոչը.—

«Հայաստանի՛ քաղաքացիներ.

«Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի, Նոր-Բայազէտի խռովութիւններին հետեւեց Դիլիջանի գաւառը։

«Ներքին ոճրագործ տարրերի պետական դաւաճա-

(*) «Ժողովուրդ» թերթ, Երեւան, 1920 թ., մայիս 16։ Հայ ժողովրդական կուսակցութեան պաշտօնաթերթ։

նութեան յաջորդեց արտաքին նոյնօրինակ տարրերի անհանդուրժելի արշաւանքը դէպի մեր երկրի խորքերը։

«Մեր հայրենիքի ներքին ու արտաքին թշնամիները միացած՝ դիւային ծրագիրներ են որոճում Հայաստանի ազատութեան և անկախութեան դէմ։ Հայ ժողովուրդը, որի ինքնորոշուած կամքի մարմնացումն է կազմում իր պետական անկախութիւնը, պիտի արթուն պահպանի, փայփայի ու պաշտպանի իր այնքա՜ն թանգ գնով նուաճած ազատութիւնն ու անկախութիւնը։

«Թող հայ քաջարի բանակը սուրբ ուխտի երդումը տայ կազմ ու պատրաստ դիմագրաւելու համար Հայաստանի անկախութեան բոլոր թշնամիներին — ո՛վ, ո՛ր կողմից և ի՛նչ անուան տակ ուզում են թող լինին նրանք։

«Իսկ դու, հա՛յ ժողովուրդ, մի սիրտ, մի հոգի դարձած՝ պէտք է քո ոյժն ու աջակցութիւնը չխնայես մեր քաջարի բանակին և մեր կառավարութեան անշեղօրէն ազատ ու անկախ Հայաստանը մարմնացնելու գործում։

«Կեցցէ՛ ազատ, անկախ և միացեալ Հայաստանը։

«Կեցցէ՛ Հայաստանի դեմոկրատիկ Հանրապետութիւնը»։

Հայ ժողովրդական Կուսակցութեան
Հայաստանի Կենտրոնական Կոմիտէ,
Հայաստանի Սոց.-Դեմ. կուսակցութեան
Երեւանի Կոմիտէ,
Հայ Ռամկավար կուսակցութեան
Հայաստանի Խորհուրդ,
Հայ Անկուսակցականների Միութեան
Վարչութիւն»։

Բնորոշ էր Ռամկավարների դիրքը, որոնք այժմ դատապարտում են Դաշնակցականներին «եղբայրասպան կռիւների» համար։ Հայ Ռամկավար կուսակցութեան Հայաստանի Խորհուրդը առանձին էլ հրապարակ եկաւ հետեւեալ կոչով.—

«Մեր աւերակ ու քանդուած հայրենիքի մէջ, հայ ժողովուրդը բնաջնջող. մեզ կոտորող, մեր հայրենեաց լեռ ու ձոր, գետն ու վտակը հայ արիւնով ներկող Իթթիհատ կուսակցութիւնը, որ Նուրի ու Խալիլ փաշաներու միջոցով փոխադրուած էր Ազրբէջան, գառան մորթը վրան առած՝ մի օր, յանկարծ, Բագուի մէջ յայտարարեց սովետական իշխանութիւն և առաջին օրն իսկ իր նշանաւոր ուլտիմատումով պահանջեց հայկական հանրապետութենէն երեք օրէն յանձնել Ղարաբաղն ու Զանգեզուրը և իր զօրախմբերն արդէն շարժման մէջ դրաւ Հայաստանի վրայէն երթալ միանալու Մուսթաֆա Քեմալ փաշայի հետ, որ մինչեւ այժմ կը շարունակէ ջարդել տասնեակ հազարաւոր հայեր Կիլիկիոյ մէջ, հակառակ մինչեւ իսկ Ֆրանսական բանակի ցոյց տուած պաշտպանութեան։

«Ինչպէս և երկու աչքերով կոյրը միայն կարող էր չտեսնել այս կերպով հայկական հանրապետութեան ընդհանրապէս և Թուրքահայաստանին մասնաւորապէս սպառնացող նոր վտանգը. և, սակայն, գտնուեցան հայ անուն կրող մարդեր և հայ իշխանութեան մէջ գործող, բայց հայ ոգիին ու զգացումներուն խորթ խմբակներ, որոնք փոխանակ Հայաստանի սահմանները պաշտպանելու այդ վտանգին դէմ, կողմնակից յայտարարեցին զիրենք այդ հայադաւ շարժման և Ալեքսանդրապոլի ու Կարսի մէջ գլխեցին եղբայրասպան կռիւի։

«Այդ խելագարները ոչ միայն չմտածեցին, որ այդ կերպով վերջին անբուժելի հարուածը կուտան լուծման օրերու մէջ գտնուող Հայկական Հարցին, այլ մինչեւ անգամ հոգ չըրին, որ երկրի սահմանները կը բանան և կը հրաւիրեն տաճիկ-ազրպէջանեան գազանացեալ գայլերը, որպէսզի մնացեալ հայութեան դիակներու վրայէն երթան ու միանան մեր դարաւոր թշնամիին՝ Էնվէրի և Թալէաթի հարազատ յաջորդ Մուսթաֆա Քեմալին։

«Տարակոյս չկայ, որ ամէն հայ մարդ, որ իր երակներուն մէջ հայի արիւն կը կրէ և իր գլխուն մէջ փոքր ինչ խելք ունի, կը դատապարտէ այդպիսի խելագար շարժումը. ևս առաւել Թուրքահայերս, որ անոր անմիջական հետեւանքները կը կրենք։ Այդ շարժումն ինչ տեսակ շարժառիթներ ալ ունեցած լինի, չի կրնար արդարանալ, և մենք մասնաւորապէս պէտք է ծառանանք անոր դէմ և մեր բոլոր ուժերը ի սպաս դնենք կառավարութեան՝ իր բնին մէջ խեղդելու զայն և չեզոքացնելու իր ոճրապարտ նպատակէն։

«Հայ Ռամկավար կուսակցութիւնը, մանաւանդ որ ազդուած է եղած միշտ հայ ազգի կրած տառապանքներով, որ կեցած է այն ուղիին վրայ, որ նախորդ բազմահազար նահատակներն իրենց արիւնով գծած են նորա առաջ, ամենէն աւելի իրաւունք ունի զայրոյթով մերժելու այդ հայրենադաւ ոճիրը, դատապարտելու անոր հեղինակները՝ միաժամանակ իր ուժերը տրամադրելով հայրենիքին սպառնացող ներկայ վտանգին հանդէպ։

«Բնաւ չենք կասկածիր, որ այդպէս կը մտածեն նաև բոլոր մեր ընկերները և բոլոր անոնք, որ հայ անուն և հայ զգացում կը կրեն։

«Կորչի՛ եղբայրադաւ և հայրենադաւ ոճիրը։ Կեցցէ՛ հայ ոգին։ Կեցցէ՛ Միացեալ և անկախ Հայաստանը»։

Խռովութիւնները, զանազան շրջաններում, տեւեցին մօտ երեք շաբաթ։ Մայիսեան շարժումների ընդհանուր նկարագրութիւնը արուած է մեր «Հայաստանի Հանրապետութիւն» հատորում (էջ 348-371)։ Այստեղ կը սահմանափակուենք միայն Ալեքսանդրապոլի շրջանով և կը տանք գլխաւորապէս բոլշեւիկեան փաստերը՝ անտեսելով իրենց իսկ պաշտօնական հրատարակութիւններից և ականաւոր կոմունիստների վկայութիւններից։

Ինչպէս տեսինք, մայիս 7-ին Ալեքսանդրապոլում կազմուեց Ռազմա-Յեղափոխական Կոմիտէն (Յեղկոմ), որ մայիս 10-ին յայտարարեց Հայաստանը խորհրդայնացած։

Մայիս 11-ին, գրում է Բորեանը, «Թուրք և մալական գիւղացիների ներկայացուցիչները եկան Ցեղկոմի մօտ և յայտնեցին, թէ գիւղացիները պատրաստ են միացեալ ուժերով կռուելու Դաշնակցական կառավարութեան դէմ յօգուտ խորհրդային իշխանութեան» (Բ. հատոր, էջ 101)։

Ցեղկոմին իր գործակցութիւնը խոստացաւ և Հայաստանի ռուս բնակչութեան Ազգային Խորհուրդը։

Իր կազմութիւնից անմիջապէս յետոյ, Ցեղկոմը հեռագրով պահանջեց, որ Հայաստանի կառավարութիւնը իսկոյն իրեն փոխանցէ իշխանութիւնը։

Կառավարութիւնը, խուսափելու համար քաղաքացիական աւերիչ կռուից ու արիւնհեղութիւնից, փորձեց խաղաղ միջոցներով վերջ տալ խռովութեան։ Վարչապետը մի հեռագրով բացատրեց Մուսայէլեանին քաղաքացիական կռուի ունենալիք աղէտաւոր հետեւանքները Հայաստանի համար և ներում խոստացաւ յանցաւորներին, եթէ նրանք վերջ տան ըմբոստութեան։ Նման յորդոր ուղղեց և ամէնքից յարգուած զօր. Դամազեանը՝ կոչում անելով Մուսայէլեանի հայրենասիրութեան և աղերսելով «յետ կանգնել, չխորտակել հայրենիքը»։ Մուսայէլեանի պատասխանը եղաւ մի հոյհոյալից հեռագիր, որի մէջ ասուած էր, թէ՝ «ինքն իրեն Հայաստանի կառավարութիւն յորջորջող մարմինը մարդասպանների և աւազակների խումբ» է և որ Հայաստանի օրինաւոր իշխանութիւնը Ցեղկոմն է։

Ըստ երեւոյթին, կառավարութեան այս փորձը ի նկատի ունի Բորեանը՝ գրելով, թէ «կառավարութիւնը, յանձին արտաքին գործոց նախարար և Դաշնակցութեան Արեւելեան Բիւրոյի ղեկավար պր. Օհանջանեանի, անպաշտօն բանակցութիւններ է վարում կոմունիստների հետ կոալիսիոն կառավարութիւն կազմելու մասին։ Մի ուրիշ ականաւոր Դաշնակցական՝ Ս. Մանասեանը յայտնում է, որ իրենք ոչինչ չունին բոլշեւիկների դէմ և որ կենտրոնական կառավարութիւնը ինքը կը հրաժարուի

իշխանութիւնից, եթէ իմանայ, որ Կարմիր բանակը մըտել է Հայաստան» (Բ. հատոր, էջ 105)։

Բորեանը, ի հարկէ, սխալւում է։ Կառավարութեան դիրքը շատ որոշ էր և նման բանակցութիւններ չէին կարող տեղի ունենալ։

Ճիշդ չէ, անկասկած, և Բորեանի վերագրումը Կարօ Սասունիին, որ, իբր թէ, ասել է սպաների ժողովում, թէ «եթէ մի հատիկ ռուս զինուոր երեւայ Հայաստանում, կառավարութիւնը ինքը կը յանձնուի նրան»։

Կառավարութեան ոչինչ չէր մնում, բայց եթէ կատարել իր պարտականութիւնը հայրենիքի հանդէպ, որքան և ծանր լինէր այդ պարտականութիւնը։

Սեպուհի զօրամասը, որին յանձնուած էր Ալեքսանդրապոլի խռովութիւնների հաշուեյարդարը, հրաման ստացաւ վճռական գործողութիւնների դիմելու։ Բոլշեւիկները անոյժ էին դիմադրելու։ «Ցեղկոմը, գրում է Բորեանը, նստած է զրահապատ գնացքի մէջ, հրամաններ է արձակում, իրեն համարում է իշխանութիւն Ալեքսանդրապոլում և կառավարական գերագոյն մարմին երկրում... Առանց զրահապատից դուրս գալու, ամբողջ ժամանակ ուղիղ հեռագրաթելով բանակցութիւններ է վարում Երեւանի կառավարութեան հետ... Բայց իրեն լսող չկայ և չէր էլ կարող լինել, որովհետեւ ժողովուրդը հակառակ էր և ինքը երկրում հող չունէր։ Փաստօրէն ապստամբները մի փոքրիկ խմբակ էին, որոնք զրահապատ գնացքում նստած՝ սպասում էին ռուս բանակի օգնութեան, բայց ռուս բանակը չեկաւ ու չէր էլ կարող գալ։

Մի անգամ միայն, մայիս 13-ին, Ցեղկոմը փորձեց դիմադրութիւն ցոյց տալ Սեպուհին։ Անի և Աղին կայարանի միջեւ, բայց պարտուած՝ փախաւ յետ։ Եւ համոզուելով, որ իր գործը անյոյս է, բռնեց նահանջի ճամբան։

«Ներքին գործոց կոմիսար» Մելքոնեանը ուղիղ հե-

ուագրաթելով կապուեց Երեւան՝ Խորհրդարանի անդամ Ս. Թորոսեանի հետ և փորձեց խօսել իբրեւ «միջնորդ» կառավարութեան և Ալեքսանդրապոլի միջեւ, բայց նրա խօսքերին կարեւորութիւն տուող չեղաւ։

Այս անյաջողութիւնից անճրկած, նոյն օրը, մայիս 13-ին, Ցեղկոմը Սեպուհի մօտ ուղարկեց մի պատուիրակութիւն՝ բաղկացած Ալեք-պոլի քաղաքագլուխ Լեւոն Սարգսեանից, Սոց. Յեղափոխական Իս. Տէր Ներսէսեանից և դաշնակցական Հիպ. Զոլախեանից։ Պատուիրակութեան պաշտօնն էր՝ բանակցել պատերազմական գործողութիւնները կանգնեցնելու և Ալեքսանդրապոլը կառավարական զօրքերին յանձնելու պայմանների մասին։

Սեպուհը պահանջեց, որ Ցեղկոմը անձնատուր լինի առանց որեւէ պայմանի և ինքը իր կողմից խոստացաւ Ցեղկոմի բոլոր անդամներին ապահով կերպով հասցնել Երեւան և միջնորդել կառավարութեան մօտ, որ նրանք չպատժուին, այլ արտաքսուին Հայաստանից։

Պատուիրակութիւնը արտօնութիւն է խնդրում գնալու Երեւան, անմիջապէս կառավարութեան հետ բանակցելու համար, բայց Սեպուհը մերժում է։

Երեկոյեան ժամը 10-ին, պատուիրակութիւնը Աղինից վերադառնում է Ալեքսանդրապոլ և ուղիղ հեռագրաթելով դիմում է Երեւան՝ զօր. Հախվերդեանին։ Պատմելով վերոյիշեալ դէպքը, պատուիրակութիւնը ասում է. «Մենք վերադարձանք քաղաք և ահա բանակցում ենք ձեզ հետ, իսկ Կոմիտէն շարունակում է իր խորհրդակցութիւնը։ Ռազմա-Յեղափոխական Կոմիտէն զայրացած է զօր. Խաչատուրովի (*) դէմ կատարուած մահափորձի առթիւ, որ այսօր ծանր վիրաւորուած է փողոցում հինգ գնդակով»։

Հախվերդեանը պատասխանում է, թէ՝ «կառավարու-

(*) Զօր. Խաչատրեանը անցել էր բոլշեւիկների կողմը եւ մահափորձի ենթարկուել:

թիւնը նոյնպէս դէմ է քաղաքացիական կռուին, սակայն որպէս պայման դրան առաջադրում է Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի և ապստամբութեան բոլոր պարագլուխների, նրանց թւում և գլխաւոր Մուսայէլեանի, պոռուչիկ Եւանդուլովի, Արտաշէս Մելքոնեանի և Աւիս Նուրիջանեանի անպայման յանձնումը, նոյնպէս և զրահապատ գնացքի յանձնումը անվնաս վիճակի մէջ։ Կոմիտէն պարտաւորւում է ձեռք առնել անհրաժեշտ միջոցները, որպէսզի ոչ մի դիմադրութիւն և ոչ մի հրացանաձգութիւն տեղի չունենայ կառավարական զօրքերի դէմ, որ և կ'ապահովէ ապստամբութեան անարիւն հաշուեյարդարը։ Այդ պայմանները յանձնուելու են Սեպուհին՝ ճշգրիտ իրագործման համար»։

Պատուիրակութիւնը խնդրում է չապահովել Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի անդամների և պարագլուխների կեանքը»։

Հախվերդեանը պնդում է անպայման յանձնումի վրայ, իսկ ինքը իր կողմից խոստանում է պաշտպանել Սեպուհի միջնորդութիւնը նրանց կեանքի ապահովութեան մասին։

Գիշերը, առանց բանակցութեանց արդիւնքին սպասելու, Ցեղկոմի անդամները և միւս պարագլուխ բոլշեւիկները թողին զրահապատ գնացքը և ով ուր կարողացաւ՝ փախաւ կամ պահուեց։

Մայիս 14, առաւօտեան ժամը 10-ին, Աղին կայարանից հեռագրաթելով, գնդ. Վէկիլովը յայտնեց գլխաւոր հրամանատարութեան, թէ՝ «կառավարութեան հրամանով Սեպուհի ջոկատը կատարեց իր վրայ դրուած խնդիրը։ Ալեքսանդրապոլի կայազօրը արտայայտեց կառավարութեան իր հնազանդութիւնը։ Զրահապատ գնացքը գտնւում է մեր զօրքի տրամադրութեան տակ։ Սեպուհի զօրքը առաջ է շարժւում դէպի Ալեքսանդրապոլ՝ քաղաքն ընդունելու և պաշտպանելու համար։ Ալեքսանդրապոլ քաղաքում տիրում է լիակատար կարգապահութիւն։ Սեպու-

հի անունից Հայաստանի կառավարութեան և Մեծ, Ազատ Հայաստանի պատուին արտայայտում ենք մեր ցնծութիւնը։ Հիմա Սեպուհը, զօրավար Ղամազեանը և ես մեկնում ենք Ալեքսանդրապոլ։

Զօր. Նազարբէգեանը շնորհակալութիւն յայտնեց և հրամայեց կապուել նաև Կարսի ու Սարըղամիշի հետ և այնտեղ էլ վերականգնել կարգը միևնոյն պայմաններով։

Նոյն օրն և եթ ձերբակալուեցին Մուսայէլեանը, Մելքոնեանը և ուրիշներ, իսկ Աւիս Նուրիջանեանը կարողացաւ փախչել և անցնել Ադրբէջան։

Հետզհետէ հաշուեյարդարի ենթարկուեցին և միւս շրջանների խռովութիւնները։ Իջևանում բոլշևիկներին յաջողուեց բռնել և Բագու գերի տանել ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասեանին, գաւառական ինքնավարութեան նախագահ Ն. Ջաղէթեանին, զօր. Բաղդասարեանին և մի քանի ուրիշ պաշտօնեաներ ու զինուորականներ, որոնք բոլորն էլ սպանուեցին Բագուում։

Այսպիսով Մայիսեան շարժումը վերջացաւ բոլշևիկների ջախջախիչ պարտութեամբ, բայց Հայաստանի նորաստեղծ պետութեան համար էլ ունեցաւ ծանր հետևանքներ։

Բոլշևիկների պարտութեան գլխաւոր պատճառը այն անվիճելի փաստն էր, որ բոլշևիզմը հայ ժողովրդի մէջ ոչ մի լուրջ հող չունէր։ Հայ ժողովուրդը չէր համակրում բոլշևիկներին, բացի այն սակաւաթիւ հայերից և օտարներից, որոնք բոլշևիկութեան մէջ Ռուսաստանն էին տեսնում։ Հայաստանի առարկայական և ենթակայական պայմանները հակառակ էին խորհրդային իշխանութեան։

Իսկ ինչպէ՞ս են բացատրում բոլշևիկները իրենք իրենց պարտութիւնը։

Յունիս 1-ին, Ալեքսանդրապոլի բանտից Թիֆլիսի Երկրային Կոմիտէին ուղարկած մի զեկուցման մէջ, Մուսայէլեանը, ապստամբութեան դէպքերը մանրամասնօրէն

պատմելուց յետոյ, անյաջողութեան պատասխանատուութիւնը ձգում է Արմէնկոմի և Ալեքսանդրապոլի բոլշևիկների վրայ։ Նա գրում է.— «Արմէնկոմը, որի գործունէութեան մասին ես առանձին զեկուցում եմ տալու, դժբախտաբար, այդպիսի մի սուր մոմենտում բաւականաչափ գործունէութիւն չցուցադրեց։ Վերջապէս, մայիսի 7-ին և 8-ին մեր հարցապնդման հետևանքով, Արմէնկոմից մեզ մօտ եկան թժ. Մելքոնեանը և Դրաստամատ Տէր Սիմոնեանը, որոնք ծանօթանալով դրութեանը՝ վաւերացրին վճռականապէս հանդէս գալու մեր որոշումը։ Զօրքերը մարտական դրութեան մէջ դնելով՝ ամսի 10-ին մենք Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի անունից քաղաքը յանձնելու համար վերջնագիր ներկայացրինք իշխանութիւններին։ Քաղաքը յանձնուեց առանց մի գնդակ արձակելու։

«Սրանից յետոյ է, որ մեզ մօտ սկսւում է ներքին տրագեդիան. տեղական ընկերները ստեղծարար, օրգանական աշխատանքներին բացարձակ անընդունակ գտնուեցին։ Աշխատանքը վաղօրօք բաշխուած էր ընկերների միջև, սակայն իշխանութիւնը գրաւելուց յետոյ, նրանցից ոչ մէկը գրեթէ մատը մատին չխփեց իրեն դիրքերում։ Ամբողջ աշխատանքը գլխաւորապէս ինձ վրայ էր բարդուել։ Ես ֆիզիքապէս ի վիճակի չէի բոլորը ինքս անելու և միաժամանակ, իբրև Կարմիր զօրքերի հրամանատար, տանելու իմ յատուկ աշխատանքը։ Իսկ Երևանի կողմից արդէն թշնամու ուժերը շարժւում էին։ Արմէնկոմի անդամները համարեա ոչինչ չէին անում։ Ամբողջ Հայաստանում զօրքերը գրեթէ մեր կողմն էին, բայց տեղերում ուժեղ ձեռքեր չգտնուեցին։ Ամենուրեք պահանջւում էր իմ ներկայութիւնը, իսկ Ալեքսանդրապոլը թողնել՝ ինձ թոյլ չէին տալիս։

«Կառավարութիւնը մեր դէմ զինել էր գրեթէ բացառապէս տաճկահայերին, գաղթականներին, մաուզերիստներին և կուսակցական Դաշնակներին։ Մեր պարտ-

նաւորման կոմիտէն ոչինչից ոչինչ չէր անում։ Իշխանութեան ներքին ճգնաժամը, պարենաւորման բացակայութիւնը և այլ բազմազան պատճառներ ստիպեցին համաձայն Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի որոշման քաղաքն առանց կռուի յանձնել»։

Որքան և երկար՝ մենք առաջ կը բերենք նախ հետեւեալ երկու վաւերագրերը, որոնք առաջին անգամն են լոյս տեսնում արտասահմանում։

Առաջին վաւերագիրը Ալեքսանդրապոլի Կոմիտէի հետեւեալ նամակն է Հայաստանի Կոմիտէին՝ կազմուած և ստորագրուած Աւիս Նուրիջանեանի ձեռքով.—

«Կոմունիստական Կուսակցութեան Ալեքսանդրապոլի Կոմիտէն մայիսի 1-ից 10-12 օր առաջ; հետեւապէս, Բագուն գրաւելուց առաջ, ընդունեց մայիս մէկեան լոզունգները. այդ թւում էին «Կեցցէ՝ Խորհրդային Հայաստան», «Կորչի՝ կոտորածներ սարքող կառավարութիւնը» եւայլն։ Յենուելով բանուորական մեծամասնութեան, մանաւանդ, երկաթուղու վրայ, Կոմիտէն որոշեց առանձին երթով դուրս գալ՝ ուժերի հաշուառման համար։ Ազրբէջանում տեղի ունեցած յեղաշրջումը վաղօրօք ապահովեց մեր յաջողութիւնը. չնայած ճնշումներին և զուսպ նախազգուշացումներին, տենդային աշխատանքը կատարւում էր։ Ապրիլի 30 ին ձերբակալեցին ընկերներից մէկին, որին մի քանի ժամից ազատ արձակեցին, նախազգուշացնելով «Կորչի՝ Դաշնակների կառավարութիւնը» և միւս լոզունգների անթոյլատրելիութեան մասին։ Միւսներին ձերբակալելու փորձ եւս կատարուեց, սակայն նըրանց չգտան։ Մայիս մէկի ելոյթը մի զօրատես էր Ալեքսանդրապոլի պրոլետարիատի և զօրքի համար, որ դուրս եկաւ բոլշեւիկեան դրօշակի տակ և Հայաստանի պատմութեան մէջ չտեսնուած լոզունգներով։ Մեր դէմ էին մի բուռ սպեկուլեանտներ Դաշնակների դրօշակների տակ՝ 200 մարդուց ոչ աւելի։ Մեր մասն 5,000-ից աւելի էր։ Դաշնակների տապալումը կատարեալ էր։ Սկզբում ամէն

ինչ ընթանում էր առանց միջադէպերի, սակայն Ալեքսանդրեան փողոցի անկիւնում մաուզերիստ Դաշնակցականներից մէկը Խորհրդային Ազրբէջանի հասցէին պրովոկացիա արեց և դրանով վրդովեցրեց զինուորներին և բանուորներին։ Դրա հետեւանքն այն եղաւ, որ հէնց տեղն ու տեղը՝ Դաշնակների Բիւրոյի մուտքի առաջ զինուորները ծեծեցին Դաշնակ վարժապետ-սպեկուլեանտ Մացոյին։ Դրան իբր պատասխան՝ մաուզերիստները երկու գնդակ արձակեցին և թեթեւ վիրաւորեցին հէնց իրենցից՝ Դաշնակներից մէկին (*)։ Մեր կողմից նոյնպէս երկու գնդակ արձակուեց օդի մէջ։

«Շնորհիւ զինուորների և բանուորների գիտակից վերաբերմունքին, որով նրանք ենթարկւում էին բոլշեւիկների կոմիտէի պահանջներին, միջադէպը սպառուեց և մաուզերիստների պրովոկացիան չյաջողուեց։ Զինուորների փորձը դիմել դէպի բանտ՝ ձերբակալուածներին ազատելու համար՝ չիրագործուեց դարձեալ կուսակցութեան կոմիտէի պահանջի հետեւանքով, որ խուսափում էր Դաշնակների նոր պրովոկացիայից։ Ցոյցը, Աւիսի և միւսների ճառերից յետոյ, ժամը 4-ին, կայարանի մօտ ցրուեց, մինչդեռ երթն սկսուել էր առաւօտեան ժամը 10-ին։ Անհրաժեշտ է նկատել, որ այդպիսի յաջողութիւն կուսակցութիւնը չէր սպասում նոյնիսկ այդ օրն առաւօտեան։ Ընդունուած էին մեր առաջարկութիւն-պահանջները՝ ձերբակալուածներին ազատ արձակելու, պատգամաւորների Խորհուրդ կազմակերպելու և Խորհրդային Ազրբէջանը ողջունելու մասին։ Ողջոյնի հեռագիրը կազմուած էր կոմունիստական և շատ սուր ոգով՝ յիշատակելով հայ մուսաւաթիստների խմբապետական կառավարութեան դէմ միասնօրէն կռուելու մասին, Խորհրդ. Ազրբէջանի բանուորների, գիւղացիների և ասկեարների պատգամաւորների Խորհուրդը ողջունելու մասին եւայլն։

(*) Գնդակ արձակողը բոլշեւիկներն էին։ Ս. Վ.։

Բանաձեւն ընդունւում էր միաձայն, բուռն և երկարատեւ ծափահարութիւններով, «ուռա»յի բացագանչութիւններով։ Եթէ այդ օրն իշխանութիւնը գրաւուած չէր, այդ ոչ թէ այն պատճառով էր, որ մենք անզօր էինք, այլ միայն զինուորական մասսայի անբաւարար կազմակերպուած լինելու և թալաններից երկիւղ կրելու պատճառով։

«Նոյն գիշերը ձերբակալուած է ընկերներից մէկը, միւսների մօտ էլ են եղել, բայց նրանց տներում չեն գտել։ Այժմ դրութիւնը այսպէս է։ Այդ օրը բոլոր զինուորական մասերը կազմել են գնդի կոմիտէներ և ներկայացրել ընկ. Մուսայէլեանի զրահապատ գնացքը՝ բանակցութիւնների համար։ Հաստատուած է ամենասերտ կապը։ Ամբողջ զօրքը Մուսայէլեանի զրահապատի հետ մեր տրամադրութեան տակ է։ Աւելին. քաղաքային և երկաթուղային միլիցիայի մեծագոյն մասը եւս մեր ձեռքն է։ Զօրքի մէջ կարգապահութիւնը պաշտպանւում է հէնց իրենց իսկ ղեկավարների միջոցով, ընդ որում աւելի լաւ, քան մինչեւ այժմ։ Հնարաւորութիւն չկայ կանգ առնելու բոլոր այն մանրամասնութիւնների վրայ, որոնք բնորոշում են Դաշնակների կուսակցութեան կատարեալ սնանկութիւնը և մեր կուսակցութեան հսկայական բարոյական ոյժը և ֆիզիքական զօրութիւնը։

«Ցամենայն դէպս իշխանութիւնը գրաւելու խընդիրը — դա մեր ցանկութեան հարցն է — ոչ թէ օրուան, այլ րոպէի խնդիր է։ Դաշնակների այն պրովակացիան, թէ իբր Խորհրդային Ազրբէջանի կողմից Հայաստանի դէմ պատերազմ է սկսուած, որ իբր թէ նպատակ ունի հայ բոլշեւիկների հետ միացած՝ ոչնչացնելու բոլոր հայերին, ոչ մի յաջողութիւն չունեցաւ և այժմ էլ չունի։ Պրովոկատորները քիչ էր մնում ծեծի ենթարկուէին կանանց և զինուորների ձեռքով։ Այժմ Դաշնակները մտածում են զինաթափ անել զրահապատը։ Վերջինս ռազմական դրութեան մէջ է գտնւում, ամբողջ օր ու գիշեր հերթապահութիւն կայ. որոշակի յայտնուած է՝ զրահապատը չենք յանձնելու։ Զրահապատի զինուորներն երդուել են մինչեւ վերջին մարդը մեռնել, բայց անձնատուր չլինել։

«Զօրքը ամէն րոպէ կարելի էր ոտքի կանգնեցնել մէկ մարդու նման։ Զրահապատի զինաթափման փորձը կը լինի մի մարտակոչ, որ մենք ամէն րոպէ պատրաստ ենք ընդունելու։ Հայաստանի կոմիտէի որոշումը սկսել Ղազախի գաւառից, իսկ Ալեքսանդրապոլը դեռ ազատ, մեզ դնում է անել դրութեան մէջ։ Մենք ամէն ջանք գործ ենք դնում խուսափելու համար կոնֆլիկտից — ձերբակալութիւններից, զրահապատը զինաթափ անելուց, տերորներից եւայլն։ Սակայն, հակառակ սպասածին, եթէ այդպիսիք տեղի ունենան, մարտակոչը պէտք է ընդունուի։ Այս է Ալեքսանդրապոլի կոմիտէի անշեղ որոշումը. մենք թոյլ չենք տայ գլխատել այս մասսան, որի ուժի և կարողութեան վրայ յենւում ենք հէնց ինքներս։

«Մենք խնդրել ենք տալ մեզ հրահանգներ — ինչպէ՞ս վարուենք։ Հայաստանի կոմիտէի ամէն մի որոշում մենք պատրաստ ենք կատարելու, սակայն նախազգուշացնում ենք Հայաստանի կոմիտէին. եթէ վերջինս մեզանից պահանջելու լինի՝ ձերբակալութիւններին, գաղտագողի տերորին, զրահապատի զինաթափման եւայլն չպատասխանել իշխանութիւնը գրաւելով, ապա մենք մեզանից վերցնում ենք ամէն մի պատասխանատուութիւն այն անխուսափելի հետեւանքների նկատմամբ, որ պէտք է որ նախատեսնի և Հայաստանի կոմիտէն։ Հայաստանի կոմիտէն Ռուսաստանի Խորհրդային իշխանութեան և պատմութեան առաջ պատասխան պիտի տայ կուսակցութեան կազմակերպութեան ջախջախման և իշխանութեան գրաւումը մէկ ամսով, գուցէ և երկու ամսով յետաձգելու համար։ Մենք խնդրում ենք Հայաստանի կոմիտէին այսօր և եթ պատասխան տալ մեզ՝ համաձա՞յն է արդ-

եօք՝ նա մեր բռնած դիրքին, այն է՝ մենք ամէն ջանք գործ ենք դնում էքսցէսները կանխելու համար, մինչեւ ձեզնից հրահանգներ ստանալը, իսկ մասսայական ձերբակալութիւնների, անկիւնից կատարուող տերորների և, առաւել եւս, զրահապատը զինաթափ անելու փորձերի դէպքում, մենք ընդունում ենք մարտակոչը և գրաւում ենք իշխանութիւնը։ Եթէ Հայաստանի Կոմիտէն սրան համաձայն չէ, խնդրում ենք անյապաղ կերպով հրահանգներ տալ։

«1. Եթէ դուք լիովին համաձայն էք մեր տեսակէտին, ապա յայտնեցէք ուղիղ գծով — «Միշան առողջ է»։

«2. Եթէ դուք կարծում էք, թէ անհրաժեշտութեան դէպքում պէտք է յանձնել զրահապատը, կազմակերպութիւնը ցրել տալ և մինչեւ ձեր հրահանգներն ուղարկելը ելոյթ չունենալ, ապա նոյնպէս ուղիղ գծով ասացէք՝ «Միշան վախճանուեց»։

«3. Աւիսը — Գրիշան է։

«4. Զրահապատը — հիւանդանոց։

«5. Ապստամբութիւնը — դեղօրայք։

«6. Պարենաւորումը քիչ է, չի բաւականացնի իշխանութիւնը գրաւելու դէպքում, մինչեւ Ռուսաստանից ստանալը — անմիջապէս փող փոխադրի՛ր։

«7. Տասը-տասնհինգ օր լիովին կը բաւի հացը և այլ մթերքներ — փողը փոխադրուած է։ Մնացածն ամբողջ այնպէս կազմեցէք, որ մօտաւորապէս կարելի լինի հասկանալ։ Այսօր երեկոյեան ժամը 9-ից մինչեւ 10-ը դուք ուղիղ գծով կանչեցէք Ալեքսանդրապոլից այն ընկերոջը, որին դուք գիտէք, և խօսեցէք յիշեալ ութ կէտերի համաձայն։ Եթէ ուղիղ գծով չյաջողուի, հեռագիր տուէք Ալեքսանդրապոլ՝ ընկ.. — (անունը չկայ. Ս. Վ.) հասցէով նոյն կէտերի համաձայն։

ԱՒԻՍ»

Ալեքսանդր. կոմիտէի կնիքը,
3-ն մայիսի, 20 թ.»

Աւիսի այս թեթեւսոլիկ ու պարծենկոտ գրութեան վրայ էր, որ Արմէնկոմը Դր. Տէր Սիմոնեանին և Արտ. Մելքոնեանին ուղարկեց Ալեքսանդրապոլ։

Պէտք է համաձայնուել Բորեանի հետ, որ Արմէնկոմը իսկապէս որ անջիղ և ղեկավարելու անընդունակ մարդկանցից էր բաղկացած։ Արմէնկոմը, 1919-ի գաղտնի ժողովում կազմուած էր հետեւեալ անձերից — Ս. Կասեան, Ա. Մռաւեան, Աւիս Նուրիջանեան, Ս. Ալլահվերտեան, Դան. Շահվերտեան, Դ. Տէր Սիմոնեան, Հ. Կոստանեան և Ղ. Ղուկասեան։

Ահա և Արմէնկոմի սեփական բացատրութիւնները ապստամբութեան պարտութեան մասին։

«Ընկերնե՛ր, — գրում էր Արմէնկոմը Կովկասեան Երկրային Կոմիտէին (*), — Արմէնկոմը կամենում էր Դո, ա,ի միջոցով ուղարկել գրաւոր զեկուցում Հայաստանի դէպքերի մասին, բայց որովհետեւ բոլոր մեկնողներին հետեւում էին, այդ պատճառով այն ժամանակ չյաջողուեց այդ անել։ Ուղարկում ենք հիմա։

«Ադրբէջանի դէպքերից, այլ և Հիւսիսային Կովկասում մերոնց տարած յաղթանակներից յետոյ, այստեղ տրամադրութիւնը խիստ փոխուել է մեր օգտին։

«Հաշուի առնելով այդ ամէնը և նկատի ունենալով Հայաստանի կազմակերպութիւնների կոնֆերանսի որոշումը՝ Հայաստանում, Խորհրդային զօրքերը մտնելիս, այլ և հարեւան հանրապետութիւններում յեղաշրջումներ լինելուց յետոյ իշխանութիւնը գրաւելու նպատակով ելոյթ ունենալու մասին, Արմէնկոմը սկսեց այդ ուղղութեամբ աշխատանք կատարել։

(*) Այդ Երկրային Կոմիտէն Կովկասի կոմունիստական բոլոր գործերը վարող վերին մարմինն էր, որ ենթարկւում էր Մոսկուային եւ որին ենթարկւում էին Հայաստանի, Վրաստանի, Ազրբէջանի եւ Կովկասի միւս մասերի համայնավար կազմակերպութիւնները։ Ս. Վ.։

«Շարժման սկզբի համար իբրեւ բազա նշանակուած էր Ղազախը և դրա հետ միաժամանակ ելոյթներ պէտք է սկսէին ամենուրեք։ Արմէնկոմը կանգնեց հէնց այդ տեսակէտի վրայ, որովհետեւ նախ՝ Ղազախը կպած էր Խորհրդային Ադրբէջանին, իսկ միւս կողմից՝ նկատի ունենալով ղազախեցիների յեղափոխականութիւնն ու տոկունութիւնը։ Այդ նպատակով համապատասխան հրահանգներ ուղարկուեցին այնտեղ։ Առաջարկուած էր այնտեղից եկած ընկերոջը կազմել Ռազմ. Յեղկոմիտէ, մոբիլիզացիայի ենթարկել բոլոր ուժերը և պատրաստել ելոյթի՝ կապուելով միաժամանակ Ադրբէջանի ընկերների և Ադրբէջանի միջոցով այն կողմի հետ։ Նոյնը կատարուած էր և Ղարաբաղի վերաբերմամբ (մօտաւորապէս ապրիլի վերջին), բայց ընկերների ուղարկելու գործը ձգձգուեց։

«Մայիսի մէկի ելոյթի համար մենք պատրաստում էինք ամենուրեք. մեզ համար այդ օրը խաղաղ ցոյցի միջոցով մեր ուժերի զօրատեսի օր պէտք է հանդիսանար։

«Մայիս մէկեան ցոյցերի յաջողութիւններն ամենուրեք ակնյայտօրէն ցոյց տուին, թէ որպիսի խոր արմատներ է ձգել կուսակցութիւնը լայն մասսաների՝ այդ թւում նաեւ զինուորական մասսաների մէջ։ Եղել էին տեղեր, որտեղ բնակչութիւնը և զօրքը բացառապէս մեր դրօշակի տակ էին հաւաքուել (Ղարաքիլիսա, Սարըղամի։)

«Այդ օրը (մայիս մէկին) իշխանութիւնը գրաւելու խնդիրը չէր դրուած մեր առաջ, սակայն, այդ օրուանից արդէն պարզ էր, որ այդ հարցը ամենամօտ ապագայի հարցն է հանդիսանում։ Այդ ուղղութեամբ տենդային աշխատանք սկսուեց և այդ իսկ նպատակով կազմակերպութիւնները ռազմական դրութեան մէջ էին դրուած։

«Մայիսի երկուսին մենք Թիֆլիս ուղարկեցինք ընկ. Հ. Հայկազին, որպէսզի արտակարգ կերպով այնտեղ ուղարկեն Ս. Կ.(ասեանին) և Ա.(սքանազ Մռաւեանին), որ-

պէս պատրաստելով Հայաստանում հաստատել Խորհրդային իշխանութիւն, որովհետեւ, կրկնում ենք, համոզուած էինք, որ դա ամենամօտ ապագայի խնդիր է։

«Մայիսի երկուսին մենք տեղեկութիւն ենք ստանում Ալեքսանդրապոլում կատարուած մայիսմէկեան տօնի մասին, այլ և ընկ. Աւիսի լրիւ անունով ստորագրած ողջոյնի մի ընդարձակ հեռագիր Բագու ընկ. Նարիմանովի անունով։ Քանի որ մէկ կողմից ինքն Արմէնկոմը ողջոյնի հեռագիր էր ուղարկել Խորհրդ. Ադրբէջանին դեռ եւս մայիս մէկին և միւս կողմից՝ ի նկատի ունենալով Աւիսի հեռագրի իւրայատուկ տօնը, որ անընդունելի էր տակտիկական տեսակէտից, Արմէնկոմը որոշեց այդպիսին չուղարկել և ամէն կողմից ստացուած տեղեկութիւնների հիման վրայ կազմել արդէն ընդհանուր բնոյթ կրող մի ողջոյն։

«Այդ արուած է։

«Մայիս 3-ին մենք ընդարձակ զեկուցում ստացանք Ալեքսանդրապոլի դէպքերի մասին։

«Ալեքսանդրապոլի բոլոր փաստաթղթերի պատճէնները սրա հետ ուղարկում ենք։ Զեկուցման մէջ մանրամասնօրէն հաղորդւում էր այնտեղ՝ Ալեքսանդրապոլում տիրող դրութեան, զրահագնացքի մասին եւայլն։ Այդ զեկուցումն, ինչպէս ինքներդ էլ կը տեսնէք, լի է հակասութիւններով և բաւական տարօրինակ տպաւորութիւն է թողնում։

«Ելոյթի տարերայնութիւնն ու անկազմակերպուածութիւնն արդէն երեւում են հէնց այն բանից, որ նրանք իրենք են գրում, թէ՝ «առաւօտեան այդպիսի աջողութեան չէինք սպասում»։ Պարզ է, որ եթէ նրանք յոյս չէին ունեցել մայիս-մէկեան ցոյցի յաջողութեան վրայ, ապա եւս առաւել խօսք անգամ չէր կարող լինել արդէն իշխանութիւնը գրաւելու նպատակով յաջող և կազմակերպուած ելոյթ ունենալու մասին։

«Այստեղ ամբողջ բանակն ու բնակչութիւնը մէկ ան-

գամից անցան նրանց կողմը և որ Դաշնակների մօտ երկու հարիւր մարդ կար, իսկ նրանց կողմում՝ հինգ հազար։ Եթէ նոյնիսկ «իշխանութիւնը չէր գրաւուած, ապա ոչ այն պատճառով, որ մենք անզօր էինք, այլ զինուորական մասսաների անկազմակերպութեան պատճառով և թալաններից երկիւղ կրելուց»։ Յանկարծ, մէկ անգամից ամբողջ «զօրքն ու զրահապատը մեր տրամադրութեան տակ են անցնում և այդ պատճառով այստեղ իշխանութիւն գրաւելու հարցը մեր ցանկութեան խնդիրն է և ոչ թէ օրուան այլ րոպէի հարցը։ Իսկոյն և եթ, մի օրուան ընթացքում, կազմակերպուած զինուորներն արդէն երդուեցին մինչև վերջին մարդը մեռնել, բայց անձնատուր չլինել։ Թէ ինչպէս նրանք այդ իրագործեցին, ձեզ, ընկերներ, արդէն յայտնի է։ Այնուհետև, այդ բանն ընդգծում ենք, ընկերներ, որ Ալեքպոլում նրանք իշխանութիւնը ձեռք ձգելու խնդիրը կապում էին ձերբակալութիւնների, անկիւնից կատարուող տերորների հետ։ Միաժամանակ հաղորդում են, թէ պարէնը շատ քիչ է, իշխանութիւնը գրաւելու դէպքում մինչև Ռուսաստանից ստանալը չի բաւականացնի ևայլն։

«Առաջինը, ուշադրութեան առնելով նրանց այսօրինակ հաղորդագրութիւնները, ընկեր Աւիսի մշտական յափշտակուիլը, որ մինչև արկածախնդրութեան էր հասնում (մենք նկատի ունինք հինգ ամիս սրանից առաջ Բագւում եղած նրա ելոյթը, որով նա հանուր աշխարհին ազդարարում էր կոմունիզմի լիակատար յաղթանակը Հայաստանում և Դաշնակների սնանկութեան մասին) և որ այդ բոլորը նրանք կատարում էին զրահապատի մէջ նստած, այսինքն՝ լորուած, ներվային դրութեան մէջ, նրանց վախը ձերբակալութիւններից, ճնշումներից և «անկիւնից կատարուող տէրորից», — մենք հաւատացած էինք, որ այդ բոլորը չափազանցուած է, և որ, նոյնիսկ այնտեղ ինչ որ լինի, ելոյթի խնդիրը արդէն կաշուի խնդիր է հանդիսանում նրանց համար, սեփական կեանքը փրկելու մի հարց ևայլն։

«Դեռ աւելին. մենք հաւատացած էինք, որ նրանց յաջողութիւնը չի կարող կայուն լինել, որ անհրաժեշտ է ամենուրեք համաձայնեցնել մեր գործողութիւնները, քանի որ անջատ ելոյթները փոշիացման և պարտութեան կը հասցնեն, որ անհրաժեշտ է բոլոր շրջանների հետ կապ ունենալ ևայլն ևայլն։

«Ազդանշան տուողը Ղազախը պէտք է լինէր, ահա Արմէնկոմի նախագիծը։ Այս որոշումն էլ տեղեկացուած էր ալեքսանդրապոլցիներին եւ առաջարկուած էր նրանց սկսած գործը անհիւանդագին կերպով լիկվիդացիայի ենթարկել ըստ կարելւոյն, կամ գոնէ ձգձգել։

«Ալեքսանդրապոլի բոլշեւիկները չցանկացան հաշուի առնել այդ։ «Ինչո՞ւ Ղազախը և ոչ Ալեքպոլը» — ահա նրանց պատասխանը. «Մենք նոյնիսկ հակառակ ենք ըսկըզբից կապ հաստատելուն»։

«Նրանք առաջնութեան մասին էին դրել խնդիրը, մօտենալով այն հարցին, ըստ երեւոյթին, սպորտիւ տեսակէտից։

«Նրանք սկսում են ռմբակոծել մեզ իրենց պահանջներով ելոյթին սանկցիա տալու մասին, մինչդեռ բանից դուրս եկաւ, որ այդ բանը նրանք արդէն արել են և այժմ այլեւս ոչ մի կասկած չկայ, որ այդ հաղորդագրութիւնները մեզ ուղարկելիս են եղել հէնց այնպէս, նոյնիսկ դիտաւորեալ, որովհետեւ բնաւ հաշուի չառնելով Արմէնկոմին և բացայայտօրէն նախատեսելով իրենց ելոյթի անյաջողութիւնը՝ նրանք դիտմամբ ռմբակոծում էին մեզ իրենց պահանջներով, որպէսզի հետեւանքների մեղքը մեզ վրայ ձգեն։

«Եւ այսպէս ահա՝ խորհրդային իշխանութիւն, թէպէտեւ բաւականին իւրայատուկ (ապստամբութեան պարագլուխները 12 օր նստած են զրահապատի մէջ և յամառօրէն չեն իջնում այնտեղից)։ Պարզ է, որ եթէ նրանք լուրջ տրամադրութիւններ ունենային, ապա դէպքերի բնական ընթացքով պէտք է իրենց յաջողութիւնը զար-

զացնէին և ծաւալէին մօտակայ շրջանների հետ և նոյնիսկ առաջխաղացման դիմէին Երեւանի ուղղութեամբ։

«Մայիսի 5-ին գալիս է այնտեղից նրանց կողմից ուղարկուած մի ընկեր, երկաթուղային մի բանուոր, որ իր բանուոր զեկուցման մէջ արդէն ինֆորմացիա է տալիս իրերի դրութեան մասին, որ հիմնովին հակասում է ընկ. Ալիխի հաղորդագրութիւններին։ Այդ բանի վրայ ուշադրութիւն է դարձրել ամբողջ Արմէնկոմը։ Ի դէպ, նա ասաց, որ «այնտեղ ընկերները չափազանց ոգեւորուած են» ևայլն։ Հէնց նա էլ բերել էր ալեքսանդրապոլցիների նամակը։

«Հէնց նոյն գիշերը, այսինքն՝ մայիսի 5-ին, մենք Ա.-ի և Մ.-ի (*) ստորագրութեամբ կրկին մի հեռագիր ենք ստանում դարձեալ Բաքու ուղարկելու համար, որ մենք պէտք է ռադիոյով հաղորդէինք ընկեր Նարիմանովի անունով։

«Նման բովանդակութեամբ հեռագիր մենք այն պահին իսպառ անընդունելի համարեցինք, մի հեռագիր, որ այն ժամանակ ստեղծուած պայմաններում անպայման պրովոկացիոն դեր էր խաղալու։ Դա վերջնականապէս պիտի խորտակէր մեր կազմակերպութիւնները։ Մի՛ մոռանաք, ընկերներ, որ մեզ յաղթեցին նրանով, որ անտանելի ծանր մթնոլորտ ստեղծեցին Ադրբէջանի շուրջը, ազգայնական թշնամանք առաջ բերին և Հայաստանի սահմաններում ամենուրեք հակամուսուլմանական ելոյթներ էին նախապատրաստում (դրա մասին տես ստորեւ)։ Այդ օրերին դրութեան տէրերն էին հանդիսանում սասունցի, զէյթունցի, վանեցի մաուզերիստներ, գլխաւորապէս տաճկահայերը։ Հարց է առաջանում՝ ինչո՞ւ էր հարկաւոր ալեքսանդրապոլցիներին այս ամէնը։ Հեռագիրը որոշ տեսակի ռեկլամայի բնոյթ էր կրում, իսկ գործին խոշոր վնաս էր հասցնում, քանի որ առանց այն էլ մեր թշնամիները խօսում էին «Զանգի Բասար-Բոյիւք-վէդեան բոլշեւիկեան ելոյթների» մասին։

«Հէնց այդ միջոցին էլ Մ.-ից (*) հրաման ստացուեց իր օգնականի անունով՝ Ղամարլուում կանգնած զրահապատի հետ միասին շարժուել դէպի Ալեքսանդրապոլ։

«Պարզ է, որ մենք գործ ունէինք արդէն կատարուած փաստի հետ և որոշեցինք գործին միջամտել, նրան կազմակերպուած բնոյթ տալ և դիմանալ, մինչեւ այլ վայրերում գործողութիւնների սկսուելը, նոյնիսկ Երեւանում։

«Ուրիշ ելք մենք այլեւս չունէինք։ Այդ նպատակով միւս օրը, այսինքն՝ մայիսի 6-ին, ուղարկեցինք այնտեղ ընկերներ Դ.-ին և Ա.-ին (**), լայն լիազօրութիւն տալով նրանց և պարտաւորեցնելով, որ եթէ չի կարելի կասեցնել ապստամբութիւնը, որ անհրաժեշտօրէն պէտք էր անել, ապա միաժամանակ կապուել Ղարաքիլիսայի շրջանների, Չէզոք գօտու և յարակից շրջանների հետ։

«Այստեղ զինուորական մասերում տենդային աշխատանք էր կատարւում։ Ընկերներից մէկին՝ Արմէնկոմի անդամի միջոցով այն զինուորականների հետ, որոնք այդ ժամանակում կազմակերպուած էին՝ շարունակաբար խորհրդակցութիւններ էին կազմակերպում։

«Կապ է հաստատուած Քանաքեռում կանգնած զօրամասի հետ, և երբ որ մայիս 7-ին Դ.-ից և հանգուցեալ Ա.-ից մենք գրութիւն ստացանք, որ նրանք կանգնած են կատարուած փաստի առաջ և խնդրում են ագիտացիա մղել ուղարկուելիք զինուորական մասերում, այլ և թիկունք տալ իրենց Նոր-Բայազէտի շրջանում, Ելենովկայի ուղղութեամբ, երկուստեք համերաշխ գործողութիւնների համար, ապա մենք այդ ուղղութեամբ ինչ որ կարելի էր, անում էինք։ Համապատասխան հրահանգով մենք

(*) Ալիխ եւ Մուսայելեան։

(*) Մուսայէլեան։

(**) Դրաստամատ Տէր Սիմոնեան եւ Արտաշէս Մելքոնեան։

Նոր-Բայազէտի շրջան ուղարկեցինք այժմ հանգուցեալ ընկեր Սարուխանեանին (նա մեկնեց 9-10-ին), որ ի կատար ածեց Արմէնկոմի առաջարկութիւնը և սկսեց գործողութիւնները։

«Անհրաժեշտ է նշել, որ Նոր-Բայազէտի շրջանի ուժեղ կազմակերպութիւնը, որի մէջ մտնում էին նաև զինուորականները, ապրիլի կէսերին ջախջախուած էր և ընկերները ընկ. Սարուխանեանի գլխաւորութեամբ և մի սպայի հետ արտաքսուել էին Նոր-Բայազէտի շրջանի սահմաններից։ 6-ի գիշերը լոյս 7-ին այստեղ սկսուեցին բռնութիւններ և չտեսնուած հալածանքներ։ Դա կապ ունէր Ալեքսանդրապոլի հետ։ Մենք անցանք անլեգալ դրութեան։ Կազմակերպութեան հետ կապը չէր կորցուած։

«Հետեւեալ օրը, մայիս 8-ին, այն զինուորներին, որոնց հետ կապ էինք հաստատել, մեր կողմից չիշտակի հարց դրուեց կարելի՞ է արդեօք այստեղ հէնց հիմա ելոյթ ունենալ։ Այդ հարցին նրանք պատասխանեցին, որ առ այժմ այդ հնարաւորութիւնը չկայ, որ զօրամասերում տատանումներ կան, որ դեռ պէտք է աշխատել, սակայն Ալեքսանդրապոլի ուղղութեամբ առաջացող զինուորական մասերը խոստացան Ալեքսանդրապոլի մօտենալուց անցնել ապստամբների կողմը։

«Այսպիսի պատասխան ստացանք մենք գիշերուան ժամը մէկին, մթնոլորտը հետզհետէ խտանում էր։ Թերթերում աննախընթաց ցուցադրանք սկսուեց, կազմակերպուեցին արտակարգ դատարաններ, մահուան պատիժը սահմանուած, պարլամենտը արդէն ցրուած էր։

«Իշխանութիւնը իրենց ձեռքին պահելու նպատակով, Դաշնակները պրովոկացիայի ենթարկեցին Թուրքերի շարժումը Զանգիբասարի, Փարաքարի և այլ շրջաններում. կազմակերպւում էին յարձակումներ, ջուր չէին բաց թողնում, անասունները գրաւում էին եւայլն։ Թերթերում գրում էին, թէ այդ ելոյթը բոլշեւիկներն են կազմակերպել։ Մինչեւ ատամները զինեցին բոլորին՝ սպե-

կուլականներից սկսած մինչեւ գիմնազիստները։ Մեր դէմ պայքարը Դաշնակցութիւն կուսակցութիւնը վերցրել էր իր ձեռքը։ Ձերբակալումների համար բացառապէս մաուզերիստներին էին ուղարկում։ Մեզանից ոմանք փաստօրէն օրէնքից դուրս էին յայտարարուած։ Ձերբակալում էին նոյնիսկ նրանց, ովքեր հէնց միայն հանդիպում էին մեզ։

«Այսպիսի պայմաններում աշխատանքն այնուամենայնիւ շարունակւում էր, և Արմէնկոմը ոչ մի րոպէ կազմակերպութիւնների հետ կապը չկորցրեց։ Պէտք է նկատել, որ սկզբի օրերին ակտիւ ընկերներից քչերը ձերբակալուեցին այստեղ։

«Այդպիսի մթնոլորտում, ամսի 8-ին-9-ին, Արմէնկոմին յաջողուեց իր ստորագրութեամբ բաց թողնել երեք օր առաջ պատրաստած թերթիկը (մինչ այդ ժամանակ չյաջողուեց տպագրել)։ Այդ թերթիկով մենք ցանկանում էինք ցրել թունաւորուած այն մթնոլորտը, որ ստեղծուած էր Ազրբէջանի շուրջը։ Տպարանը կնքուած էր, և մեզ չյաջողուեց թերթիկը բաց թողնել։

«Մայիսի 12-ին թերթերից իմանում ենք, որ Ալեքսանդրապոլը բանակցութիւններ է վարում կառավարական ներկայացուցիչների հետ։ Դաշնակները գրում էին. «Ալեքսանդրապոլի դաւաճանները փրկութիւն են խնդրում»։ Դա բոլորի վրայ ճնշող տպաւորութիւն թողեց։ Մայիսի 13-ին Ալեքսանդրապոլի ընկերները, առանց կռուի, յանձնում են քաղաքը և այստեղ, ի հարկէ, ամէն ինչ վճռւում է։ Եւ այսպէս արագ կերպով գրաւելով իշխանութիւնը՝ նրանք նոյնպիսի արագութեամբ անձնատուր եղան։

«Ինչպէս պարզւում է, ալեքսանդրապոլցիներն ամբողջ ժամանակ թերթ չեն եղել բաց թողած. եթէ նրանք մի երեք օր էլ դիմանային, բանն ուրիշ ընթացք կը ստանար, որովհետեւ Ալեքսանդրապոլի ընկնելուց սկսուեց ապստամբութիւնը Նոր-Բայազէտի շրջանում, որտեղ զե-

կավարում էր ամբողջ ժամանակ դիրքերում գտնուող ընկ. Սարուխանեանը։ Այնտեղ նրանք կարծում էին, թէ Ալեքսանդրապոլը դեռ դիմանում է և իրենք էլ սկսում են առաջխաղացումը։ Եղաւ մի մոմենտ, երբ կառավարական զօրքերը տատանուեցին և սկսեցին նահանջել, սակայն, վերջիններիս թուական գերակշռութիւնը (նրանց օգնելու մեկնեցին Ալեքսանդրապոլից արդէն վերադարձած մաուզերիստները), և մի խմբի դաւաճանութիւնն, ինչպէս ասում են, հարցն այլ կերպ վճռեց և 4-5 օրուան յամառ դիմադրութիւնից յետոյ, Նոր-Բայազէտցիները կռուով յանձնեցին քաղաքը։ Այս բոլոր դէպքերին ականատես եղած ընկերն անձամբ այս ամէնը զեկուցեց Արմէնկոմին։

«Եւ այսպէս, յամառ դիմադրութիւնից յետոյ, Նոր-Բայազէտը յանձնուեց։ Ապստամբների մի մասը քաշուեց սարերը, մի մասը ձերբակալուեց և նրանցից մի քանիսը, ընկ. Սարուխանեանի գլխաւորութեամբ, գնդակահարուեցին։ Սարսափելի կերպով վարուեցին ընկ. Սարուխանեանի հետ, ուղղակի ինկվիզիտորների նման։ Այսպէս, օրինակ, երկու ձիաւոր նրա երկու ձեռքից բռնած և ձիերը քշելով քարշ էին տալիս նրան քաղաքի միջով։ Մեր ընկերները տեսել են նրան փուրգոնի մէջ պառկած, ուշաթափ վիճակում։ Ռազմա-դաշտային դատարանի որոշմամբ նա գնդակահարուել է։ Նրա վերջին խօսքերի մասին «Յառաջ»ի գրածը ամբողջովին մտացածին է։

«Ղազախում ելոյթն սկսուեց նոյնպէս Ալեքսանդրապոլի և նոյնիսկ Նոր-Բայազէտի անկումից յետոյ։ Մեր կողմից երեք օր առաջ Դիլիջան էր ուղարկուած մի ընկեր՝ ինֆորմացիայի համար։ Գիտենք, և ձեզ էլ յայտնի է, որ այնտեղ մտել են խորհրդային զօրքերը և իրենց հետ տարել են Դաշնակներին։

«Կարսում և Սարիղամիշում նոյնպէս տեղի են ունեցել ապստամբութեան ելոյթներ, սակայն այդպիսիներն այնտեղ էլ են ճնշուել։ Այնտեղ, ընդհարման ժամանակ ընկաւ ընկ. Ղուկասը (այսպէս են մեզ յայտնում) այլ ընկերների հետ (դեռ եւս ստուգուած չէ)։

«Մենք չէինք կարող աւանտիւրայի դիմել և արդէն հաւանութիւն էինք տուել Իգդիրի ելոյթներին, որտեղ այդ միջոցին շատ ուժեղ զինուորական կազմակերպութիւն կար և անձնուէր զօրամաս։

«Այժմ այնտեղի ամբողջ շտաբը (5-ը զինուորական և 5-ը քաղաքացիական) գտնւում է Երեւանի բանտում։

«Ինչպէս ինքներդ էլ տեսնում էք, հողը գրեթէ ամենուրեք լրջօրէն պատրաստուած էր. դա մի պատահական արմատազուրկ ապստամբութիւն չէր, բնաւ երբեք։

«Եթէ այդ բոլորն անյաջող վերջացաւ, դա միմիայն Ալեքսանդրապոլցիների վաղաժամ ելոյթի պատճառով էր։

«Անհնար լինելով ամենուրեք արագօրէն կազմակերպել գործողութիւնները և անջատ գործողութիւններին ձեւաւորում տալ, այլ և շնորհիւ շրջանների միջեւ երկաթուղային հաղորդակցութեան բացակայութեան, կանոնաւոր ինֆորմացիան և գործողութիւնների համաձայնեցումը հնարաւոր չեղաւ։

«Բնականաբար, այդպէս չէր լինի մի երկու շաբաթ յետոյ։

«Ընկ. Արտաշէսը ձերբակալուելուց յետոյ խիստ ծեծի ենթարկուեց։ Եւ երբ նրան Էջմիածնի վրայով բերում էին Երեւան, քաղաքից 5 վերստի վրայ գնդակահարուեց։ Այդ բանին սանկցիա էր տուած Դաշնակների կուսակցութեան և կառավարութեան կողմից(*)։ Այսպէս վարուեցին ահա մեր ընկերների հետ մեր հակառակորդները, մինչդեռ այն տեղերում, որտեղ իշխանութիւնը մերոնք էին գրաւել, ոչ մի բռնութիւն չէր գործադրուած մեր հակառակորդների վերաբերմամբ։ Այդ բանն իրենք էլ չեն ժխտում։ Այսպէս, օրինակ, Նոր-Բայազէտում գերի առնուած զօրավար Սիլիկովը հէնց ինքը հաստատում է այդ։

«Ներկայումս ամբողջ քաղաքը (Երեւանը) զինուորա-

(*) Բացարձակապէս անճիշտ է: Ս. Վ.

կան ճամբարի է վերածուած։ Աննկարագրելի բաներ են կատարւում. բռնում են փողոցում ում ասես, ինքը՝ ներքին գործերի մինիստրը, «ձախ» Դաշնակցական Ջամալեանը փողոցում ձերբակալում էր մեր ընկերներին։ Կուսակցութեան (Դաշնակցութեան) ամէն մի անդամ օգտւում է ինչպէս փողոցներում, այնպէս էլ տներում ձերբակալութիւններ կատարելու իրաւունքից։

«Կուսակցական աշխատանքն այստեղ չի ընդհատուել. ընկերներին ամէն օր հրահանգներ են տրւում. տասն օր առաջ հրաւիրուած էր արտակարգ քաղաքային խորհուրդ, որտեղ լսուեց Արմէնկոմի զեկուցումը։ Ընտրուեց Քաղաքային Բիւրօն, որի վրայ ժամանակաւորապէս դրուած էին Քաղաքային Կոմիտէի ֆունկցիաները։ Գրեթէ ամէն օր Բիւրօն նիստեր է ունենում. կազմակերպուած էր «Կարմիր Խաչը», որ կապուած է կալանաւորների հետ։ Վերականգնւում են կապերը շրջանների հետ՝ տեղերում կազմակերպութիւնները վերականգնելու նպատակով։ Ներկայումս Արմէնկոմը բաղկացած է երկուսից։ Մենք մեր դիրքերում ենք, բայց այս վիճակում Երեւանում երկար մնալու ոչ մի հնարաւորութիւն չկայ։ Ձերբակալութիւնն այժմ անխուսափելի հատուցմամբ է սպառնում իւրաքանչիւրին, որովհետեւ Դաշնակների կուսակցութիւնը այդ ոգով որոշում է կայացրել։

«Վրաստանում կուսակցութեան լեգալիզացիայի հետեւանքով անհրաժեշտ է այնտեղից սրանց ազմել։

«Ուղարկեցէք ընկերները։ Թող Բագւում Դաշնակցականներին չարձակեն, սրանք այդ բանից արդէն չփոթուած են։

«Երեւանում ձերբակալուած են 50 մարդ, որոնցից 14-ը ուղարկուած են Սեւանի կղզին։ Սարիղամիշից բերուած են 5 (զինուորական) Իգդիրի շրջանից՝ 9 (զինուորական), 64 մնացեալներից։ Աշտարակից՝ 3, Արտաշատից՝ 3 և Ղամարլուից՝ 4։ Մի քանի ընկերներ թաքնուել են։ Հաղորդում են, որ Ալեքսանդրապոլում նստած են 100ից

աւելի ընկերներ։ Կարիքը մեծ է։ Նախահաշիւը կարող ենք ուղարկել միմիայն տեղերում կազմակերպութիւնները վերականգնելուց յետոյ։ Ուղարկուած դրամը մի կաթիլ է ծովի մէջ։

«Կազմակերպութիւնը վերականգնելու նպատակով մենք ընկերներ ենք ուղարկել Դիլիջան։ Ուղարկում ենք Ղարաքիլիսա։ Շրջանների համար ազատ ընկերներ քիչ կան։ Ահա ընդհանուր գծերով երկրի ներկայ դրութիւնը, մեր վերաբերմունքը դէպքերին և նրանց գնահատումը։ Մենք ամէն ժամանակ պատրաստ ենք բանաւոր բացատրութիւններ եւս տալու, եթէ այդպիսին կը պահանջուի։

«Այսօր տեղեկութիւն ստացանք, որ մաուզերիստների խմբերը ուղարկուած են և ուղարկւում են Ղարաբաղ։ Շրջապատում են նաեւ Զանգիբասարի շրջանը»։ (*)

Ռ. Կ. Կ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԷ
(ԱՐՄԷՆԿՈՄ)

1920 թ. մայիսի 31, Երեւան

Ինչ և լինին Արմէնկոմի և միւս պատասխանատու բոլշեւիկների չքմեղանքները, փաստը մնում է փաստ.— Հայաստանի քաղաքական կեանքի ամենածանրակշիռ վայրկեանին, հայ բոլշեւիկները չքաշուեցին խռովութիւններ հանելու երկրի ներսը, եղբայրասպան քաղաքացիական պատերազմ ստեղծելու և զինուած ապստամբութեան միջոցով Հայաստանի անկախութիւնը խորտակելու և պետական իշխանութիւնը յափշտակելու փորձ անելու։ Հայ ժողովրդի կամքով այդ դաւը վիժեց, բայց անհաշիւ վնասներ ունեցաւ թէ՛ ներքին և թէ՛ արտաքին կեանքում։

(*) Ինչպէս այս, այնպէս եւ Աւիսի զեկուցման մէջ կան շատ անճիշդ վերագրումներ ու մեղադրանքներ Հայաստանի կառավարութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան հասցէին: Մենք աւելորդ ենք համարում դրանցով զբաղուել: Վաւերագրերի արժէքը բոլշեւիկների արած խոստովանութիւնների մէջ է: Ս. Վ.

VII

ՀԱՅ ԵՒ ԱԶՐԲԷՋԱՆՑԻ ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԻ ԴԱՒԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԷՄ

Մայիսեան ապստամբութիւնը վերջացաւ բոլշեւիկների ջախջախիչ պարտութեամբ, բայց և շատ ծանր նստեց հայ ժողովրդին։

Հայաստանը, աւելի քան երբեք, կարիք ունէր ներքին և արտաքին խաղաղութեան։ Չպէտք է մոռանալ, որ 1920 թուականն էր։ Հայ պետութիւնը նոր էր ոտքի կանգնել, և երկիրը լծուած էր վերաշինական տենդոտ աշխատանքի։ Թէ՛ կառավարութիւնը և թէ՛ ժողովուրդը, ուժերի արտակարգ լարումով և անձնուիրութեամբ, դարմանում էին հին վէրքերը և տնտեսական ու քաղաքական նոր շէնք կառուցանում — պետական կազմակերպութիւն, հարեւանների հետ վիճելի խնդիրների կարգադրութիւն, խաղաղութեան դաշնագրի նախապատրաստութիւն, ներգաղթ, արտաքին փոխառութիւն, «Ոսկի Ֆոնդի» կազմակերպում, հաղորդակցութեան միջոցների կանոնաւորում, ներքին անդորրութեան հաստատում, տնտեսական ու մշակութային ձեռնարկներ, հողային հարցի կարգադրութիւն, հացի պաշարը ապահովելու համար համատարած սերմնացան՝ կառավարութեան օժանդակութեամբ... 1920-ի սկիզբները Հայաստան եղողը կը յիշէ, թէ ի՛նչ արտասովոր ոգեւորութիւն ու եռուզեռ էր տիրում երկրում։

Բոլշեւիկեան խռովութիւնները անասելի հարուած տուին այդ ոգեւորութեան ու ստեղծագործական թափին, խախտեցին ներքին կեանքի ընթացքը և մեծապէս վարկաբեկեցին հայ պետութիւնը յաչս արտաքին աշխարհի։

Բաւական է ասել միայն, որ տարուայ ամենալաւ եղանակին, ամբողջ մի ամիս, ժողովուրդը ձեռնթափ եղաւ աշխատանքից՝ ստիպուած կռւով հայրենիքի ազատութիւնը և իր իրաւունքները պաշտպանելու։

Լեռնային շրջաններում վար ու ցանքը նոր էր սկըսուած և ընդհատուեցաւ։ Երկաթուղային հաղորդակցութիւնը խանգարուեց և դրսից պարէն այլեւս չէր գալիս, որով երկրի տնտեսական վիճակը է՛լ աւելի ծանրացաւ։ Արդիւնաբերութիւնը և առեւտուրը կանգ առին։ Զօրքը քաշուեցաւ քաղաքացիական կռուի ասպարէզ և բարոյալքման մատնուեցաւ։ Օտար ցեղերը՝ թուրքերն ու մալականները գլուխ բարձրացրին և ըմբոստացան հայկական իշխանութեան դէմ։ Հայաստանի պետական վարկը, ճիշդ խաղաղութեան դաշնագրի ստորագրութեան նախօրեակին, ընկաւ մեծ պետութիւնների աչքին և չափազանց աննպաստ անդրադարձում ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան միջազգային դիրքի վրայ։

Այս ամէնը, անտարակոյս, չէին կարող չտեսնել ու չգիտակցել նաեւ հայ բոլշեւիկները, բայց նրանք չբաւականացան մայիսեան արկածախնդրութեամբ, այլ աւելի մեծ թափով շարունակեցին պայքարը Հայաստանի պետութեան և իշխանութեան դէմ, այս անգամ, Ազրբէջանից ու Ռուսաստանից՝ աշխատելով գրգռել ռուսների և թուրքերի թշնամանքը «Դաշնակ» Հայաստանի դէմ։

Պէտք է որոշ կերպով ասել, թէ ռուս բոլշեւիկների բացասական վերաբերումի մէջ դէպի Հայաստանի Հանրապետութիւնը խոշոր բաժին ունեցան հայ բոլշեւիկները։ Եթէ Հայաստանի վարիչները ազատ լինէին իրենց յարաբերութիւնների մէջ ռուսների հետ և ամէն րոպէ չհանդիպէին հայ բոլշեւիկների չարախօսութեանց ու դաւերին, հայ ժողովրդի գլխին եկած աղէտների մի կարեւոր մասը տեղի չէր ունենայ։

Հայաստանի ներկայացուցիչների և ռուս բոլշեւիկների փոխյարաբերութիւնները խորհրդային յեղաշրջման

սկզբի շրջանում բնաւ թշնամական չէին։ Ընդհակառակը, բազմաթիւ փաստեր կան, որոնք ցոյց են տալիս, որ հայերի և բոլշևիկների միջև հնարաւոր էր որոշ հասկացողութիւն կայացնել, նոյնիսկ հակառակ բոլշևիկների ակնյայտնի թրքասիրութեան և Հայկական Հարցը Թուրքերին զոհելու պատրաստակամութեան։

Այսպէս, 1918 թ. կէսին, Հայաստանի Խորհրդի ներկայացուցչի դիմումի վրայ, Խորհրդային Իշխանութիւնը, յանձին Լ. Տրոցկիի, սիրով յօժարեցաւ որոշ քանակութեամբ ռազմամթերք և պատերազմական զանազան միջոցներ տրամադրել հայերին, ինչպէս նաև թոյլ տալ, որ ռուսական զօրամասերում ծառայող հայ զինուորներն ու սպաները անարգել անցնեն Հայաստան՝ մտնելու համար նորաստեղծ հայկական բանակի մէջ։

Ստ. Շահումեան, Հ. Նազարէթեան և ուրիշներ իրենց կեանքը պարտական էին Դաշնակցականներին, որոնք պատսպարան տուին նրանց իրենց տներում և պահեցին ու պաշտպանեցին մենշևիկների խիստ հետապնդումների դէմ։

Դաշնակցութեան հաւանութեամբ էր, որ 1918 թ. գարնանը, Երևանում ուսուցչութիւն անող յայտնի բոլշևիկ Պ. Մակինցեանը (այժմ գնդակահարուած), Արամի յանձնարարութեամբ ու տուած դրամով գնաց Մոսկուա՝ Խորհրդ. Ռուսաստանի աջակցութիւնը ապահովելու համար Թուրքերի դէմ օրհասական կռիւ մղող հայ ժողովրդին։

Բագւում ամիսներ տևող հայ-բոլշևիկ գործակցութիւնը Թուրք-ազրբէջանեան բանակի դէմ յայտնի է ամէնքին (*)։ Նոյն Բագուից, 1918 թ. մայիսին, Ստ. Շահումեանի և Հայ Ազգ. Խորհրդի համաձայնութեամբ, Արտ. Զիլինգիրեանից (Ռ. Դարբինեան) և Սիմ. Յակոբ-

(*) Մանրամասնութիւնները տե՛ս մեր «Հայաստանի Հանրապետութիւն» գրքում, գլուխ ԺԵ. էջ 135-155:

եանից բաղկացած մի պատուիրակութիւն ուղարկուեց Մոսկուա, ապահովելու համար Խորհրդային Իշխանութեան զինուորական ուժերի գործօն օգնութիւնը Բագուին։

Մոսկուայում այդ ժամանակ գոյութիւն ունէր Հայկական Կոմիտէ, որ զբաղուած էր հայերի գործերով և հայ զինուորների փոխադրութեամբ դէպի Կովկաս։ Կոմիտէի մէջ մտնում էին Մոսկուայի մի շարք ականաւոր հայ դէմքեր՝ պրոֆ. Ճիվէլէկեանի գլխաւորութեամբ։ Խորհրդային Իշխանութիւնը լաւ աչքով էր նայում նըրանց, Հայկ. Կոմիտէի տրամադրութեան տակ էր դրել Լազարեան Ճեմարանի հսկայ շէնքը, որ, մի տեսակ, հայկական ներկայացուցչութեան էր վերածուած։ Այդ շէնքում էին տեղաւորուած, ի միջի այլոց, և դէպի Կովկաս մեկնելու պատրաստուող հայ զինուորների զէնքերը։ Մոսկուայի զինուորական շրջանի պետ Մուրալովը յատուկ հրամանագիր էր տուել, որ ապահովւում էր Հայկական Կոմիտէի շէնքի անձեռնմխելիութիւնը։ Հայկական Կոմիտէն գրկաբաց ընդունեց Բագուի ներկայացուցիչներին։

Ըստ ամենայնի, ջերմ ընդունելութիւն ցոյց տուեց և Խորհրդային Կենտրոնական կառավարութիւնը Բագուի Հայ Ազգ. Խորհրդի ներկայացուցիչներին և պատրաստակամութիւն յայտնեց ամէն աջակցութիւն ցոյց տալու։ Ընդհակառակը, հայ բոլշևիկները — Վահան Տէրեան, Պօղոս Մակինցեան և ուրիշներ — ամէն միջոց գործադրեցին ձախողեցնելու համար պատուիրակութեան առաքելութիւնը։ Եւ նոյնիսկ մատնութիւնների դիմեցին՝ ներկայացնելով Հայկական Կոմիտէն որպէս հակայեղափոխական մարմին։ Հետևանքը եղաւ այն, որ Չեկան խուզարկութիւն կատարեց Լազարեան Ճեմարանում, գրաւեց այնտեղի գոյքերն ու զէնքերը և փակեց Հայկական Կոմիտէն։

Հակառակութիւնը ծայր տուեց և աստիճանաբար սաստկացաւ այն օրից, երբ հայ բոլշևիկները, անընդունակ Ռուսաստանում որևէ գործի տիրանալու, սկսե-

ցին հետաքրքրուել Հայաստանով։ Մեծ մասը միջակութիւններ ու միջակութիւնից էլ ցած որակի մարդիկ՝ նրանք յոյս չունէին համառուսական չափանիշով դեր կատարելու, մինչդեռ Հայաստանում կարող էին հասնել բարձր դիրքերի և իշխանութիւն դառնալ։ Կար և հին ատելութիւնը դէպի Դաշնակցութիւնը, որը խորունկ արմատներ էր ձգել հայ իրականութեան մէջ, գրաւել էր ազգային կեանքի բոլոր ասպարէզները և ազատ տեղ չէր թողել միւս փոքրաթիւ խմբակցութիւնների, ի թիւս որոնց և հայ բոլշեւիկների համար։

Արդէն տեսանք, թէ Հայաստանի ներսը ինչ ձեւերի և աստիճանի հասաւ հայ բոլշեւիկների թշնամանքը Հայաստանի Հանրապետութեան և, ի մասնաւորի, հայ ղեկավարութեան դէմ։ Այդ թշնամանքը, աւելի բուռն կերպով ու կատաղութեամբ, մանաւանդ, մայիսեան խռովութիւնների զսպումից յետոյ, շարունակուեց և դուրսը՝ գործակցաբար ազրբէջանցի և ռուս բոլշեւիկների հետ։ Պայքարը հակադաշնակցական դրօշի տակ էր, բայց իրապէս ուղղուած էր Հայաստանի դէմ և անհաշիւ վնասներ պատճառեց հայ ժողովրդին։

Գլխաւոր զէնքը հայ բոլշեւիկների ձեռքին՝ սուտն ու զրպարտութիւնն էր։ Ի՛նչ թունաւոր ստեր ասես չէին հնարում վարկաբեկելու համար Հայաստանի վարիչներին ռուսների աչքում և գրգռելու նրանց ատելութիւնը դէպի հայերը։

Այդպէս վարուեցին հայ բոլշեւիկները և մայիսեան խռովութիւններից յետոյ փախչելով Հայաստանից։ Ահա մի նմոյշ եւս հայ բոլշեւիկների չարախօսութիւններից։

Բագուի «Կոմունիստ» թերթի մայիս 28-ի համարում «Դիլիջանի Ռազմայեղափ. Կոմիտէի անդամ Կոստիա Այվազեանը և տեղական Կոմունիստ. կուսակցութեան ներկայացուցիչ Յակ. Յակոբեանը», ի միջի այլոց, գրում էին.—

«Մայիս 12-ին Ալեքսանդրապոլի պրոլետարիատը ըն-

քաւոր գիւղացիութեան և զինուորների հետ՝ տապալեց Ալեքսանդրապոլում Դաշնակների տեղի իշխանութիւնը և սկսեց առաջ շարժուել Կարսի, Սարըղամիշի, Ղարաքիլիսայի և Երեւանի ուղղութեամբ։ Ի պատասխան դրան, Դաշնակները արտաքին պատերազմ առաջացրին Բոյիւք-Վէդիցիների և Իգդիրի, Սարըղամիշի ու Կարսի քիւրդերի հետ, որով գրաւեցին Կարմիր զինուորների ուշադրութիւնը, մինչեւ որ իրենք մաուզերիստների 3,000-նոց բանդայի ու կաշառուած դենիկինեան սպաների գլուխ անցած՝ թիկունքից յարձակուեցին Կարմիր Ալեքսանդրապոլի փոքրաթիւ պահակախմբի վրայ։ Կոտորելով երկու հազար անպաշտպան բանուորներ ու գիւղացիներ՝ նրանք վերականգնեցին իրենց հակայեղափոխական իշխանութիւնը։ «Դաշնակների ահաբեկման սիստեմը սոսկալի է. ամէն մի կոմունիստի տեղն ու տեղը խփում են»։

Ինչքան էլ վրան բաց և անհիմն լինէին հայ բոլշեւիկների յօրինած յերիւրանքները, նրանց պատճառած վնասը մեծ եղաւ Հայաստանի համար։ Ստերով ու չարախօսութիւններով զինուած հայ բոլշեւիկները Մոսկուա էին դիմում այն պահուն, երբ Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը Լեւոն Շանթի գլխաւորութեամբ բանակցութիւններ էր վարում խորհրդային կենտրոնական կառավարութեան հետ։

Շանթի պատուիրակութիւնը Մոսկուա էր հասել մայիս 20-ին՝ ունենալով կառավարութեան կողմից հրահանգ՝ Խորհր. Ռուսաստանի հետ դաշնագիր ստորագրելու հետեւեալ պայմաններով։—

1. Խորհրդ. Ռուսաստանը պէտք է ճանաչէ Հայաստանի անկախութիւնը՝ ընդունելով Հայաստանի սահմաններում և Ղարաբաղն ու Գիւլիստանը։

2. Խորհրդ. Ռուսաստանը, գոնէ սկզբունքով, պէտք է ընդունէ Թրքահայ հողերի կցումը Հայաստանին։

3. Խորհրդ. Ռուսաստանը չպէտք է միջամտէ Հայաստանի ներքին գործերին. չպէտք է կոմունիստական գործունէութիւն ցոյց տայ Հայաստանում։

4. Խորհրդ. Ռուսաստանը պէտք է թոյլ տայ, որ Հիւս Կովկասում և Ռուսաստանում գտնուող հայ գաղթականները վերադառնան Հայաստան։

Եւ մի շարք ուրիշ, պակաս արժէք ներկայացնող պայմաններ։

Բանակցութիւնները սկսուել էին բաւական յաջող, և յունիս 10-ին Շանթը հեռագրել էր Երեւան, թէ ռուսահայկական դաշնագիրը արդէն կազմուած-պատրաստ է և մի-երկու օրից պիտի ստորագրուի։ Սակայն, 20 օր անցած, յուլիս 1-ին Շանթը տարբեր բովանդակութեամբ հեռագիր էր ուղարկում կառավարութեան։

«Հէնց առաջին տեսակցութիւնից, հաղորդում էր նա, պարզուեց, որ միակ դժուարութիւնը Ազրբէջանի սահմանն է, որովհետեւ Բաքուից ամէն կերպ աշխատում են խանգարել դաշնագրի կնքումը։ Խորհրդային կառավարութիւնը ընդունում է մեր պահանջների արդար լինելը և չի փափաքում գոհացում տալ Խորհրդ. Ազրբէջանի և հայ բոլշեւիկների բոլոր բաղձանքներին։ Այնուամենայնիւ, վերջիններիս յամառ պնդումի և սուտ տեղեկութեանց ազդեցութեան հետեւանքով դաշնագրի կնքումը դանդաղում է։ Խորհրդ. Ազրբէջանի վարիչները ցանկանում են օգտուել ռուսական հեղինակութիւնից և ռուս զօրքի ներկայութիւնից՝ իրագործելու համար մուսաւաթական ծրագիրը՝ գրաւել Ղարաբաղն ու Զանգեզուրը և անվիճելի հայկական հողերը՝ այդպիսով ամրապնդելու համար իրենց դիրքը Թուրք ազգաբնակութեան մէջ։ Ռուսաստանը ցանկանում է սատնձնել իրաւարարի դեր հայ-թաթարական վէճը լուծելու համար։ Մոսկուայի կառավարութիւնը պատրաստակամութիւն է յայտնում Թրքահայաստանի խնդրում հանդէս գալ միջնորդի դերում Հայաստանի և Մուսթաֆա Քեմալի միջեւ»։

Ո՞վքեր էին այդ «հայ բոլշեւիկները», որ միացած ազրբէջանցի բոլշեւիկների հետ՝ ճնշում էին գործ դնում Մոսկուայի վրայ և պահանջում՝ դաշնագիր չստորագրել Հայաստանի պատուիրակութեան հետ։ Վերեւը տեսանք արդէն դրանցից երկուսին — Անաստաս Միկոյեան և Աւիս Նուրիջանեան։ Այդ ժամանակ Բաքւում էին և ուրիշ յայտնի կոմունիստներ՝ Ս. Կասեան, Ա. Մռաւեան եւայլն։ Սրանք, համախորհուրդ ազրբէջանցիների հետ՝ ամէն ջանք թափեցին, որ Շանթի պատուիրակութիւնը չկարողանայ համաձայնութեան գալ Չիչերինի և Կարախանի հետ։ Եւ յաջողեցան։ Ազրբէջանցի և հայ բոլշեւիկները, Միկոյեանի և Աւիսի միջնորդութեամբ, յատուկ պատուիրակութիւն ուղարկեցին Մոսկուա և կարողացան համոզել, որ դաշնագրի ստորագրութիւնը յետաձգուի և բանակցութիւնները փոխադրուին Երեւան, որի համար Խորհրդային կառավարութիւնը լիազոր պատուիրակ նշանակեց Լեգրանին։ Ազրբէջանցի և հայ բոլշեւիկների հաշիւը պարզ էր։ Նրանց նպատակն էր՝ բանակցութիւնները դանդաղեցնելով՝ ռուս բանակի միջոցով ստեղծել փաստական այնպիսի կացութիւն, որ Հայաստանի խորհրդայնացումը դառնայ անխուսափելի։

Եւ յիրաւի, մինչ Մոսկուայում տեղի էին ունենում այս բանակցութիւնները, յուլիս 5-ին, 11-րդ Կարմիր բանակի զօրամասերը Ղարաբաղի կողմից, յարձակուեցին Զանգեզուրի վրայ։ Ռուս զօրքերը կռուով առաջ շարժուեցին, գրաւեցին Գորիսը և մօտեցան Դարալագեազի սահմաններին։ Հայկական զօրքը, Դրոյի հրամանատարութեամբ, դիմեց հակայարձակման և վերագրաւեց ամբողջ Զանգեզուրը։ Բոլշեւիկները փախան խուճապահար՝ նախօրօք վայրագօրէն սպանելով Խորհրդարանի անդամներ Վահան Խորէնիին, Արշակ Շիրինեանին և մօտ 15 տեղական գործիչների։

Ռուս զօրքը, օգնական նոր ուժեր ստանալով, նորից յարձակուեց Զանգեզուրի վրայ, նորից գրաւեց Գորիսը և անցաւ Ղափանի կողմը, ուր երեք շաբաթ տեղի ունեցան կատաղի կռիւներ, մինչեւ որ հայկական զօրամասերը, թշնամու ուժեղ ճնշման տակ, հեռացան Զան-

գեզուրից, իսկ ռուսները միացան Նախիջեւանի ապըստամբ Թուրքերի հետ։

Մինչ Կարմիր բանակը կռիւների մէջ էր Զանգեզուրում, յուլիս 20-ին, Լեգրանը, ընկերակցութեամբ Խալիլ փաշայի և ազրբէջանցի ու հայ կոմունիստների, հասաւ Բագու։ Խալիլ փաշան, «իսլամական զօրամասի» գլուխն անցած, Ղարաբաղ-Զանգեզուր-Նախիջեւանի վըրայով դիմեց դէպի Թուրքիա, իսկ Լեգրանը, Ազրբէջանի վարիչների և 11-րդ բանակի հրամանատարութեան հետ խորհրդակցելուց յետոյ, մեկնեց Թիֆլիս՝ այնտեղից Երեւան անցնելու նպատակով։

Զանգեզուրի հետ մէկտեղ, ռուսական բանակը յարձակման էր դիմել և Ղազախի ուղղութեամբ, բայց հանդիպելով հայերի ուժեղ դիմադրութեան՝ չէր կարողացել առաջ շարժուել։ Հիւսիսից և արեւելքից Հայաստանը ընկել էր Կարմիր բանակի ճնշման տակ։ Ցանկանալով վերջ տալ անտեղի և անխորհուրդ պատերազմին՝ Երեւանի կառավարութիւնը դիմեց Մոսկուայի միջնորդութեան, և օգոստ. 10-ին, Թիֆլիսում, Լեգրանի և Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչներ Ա. Ջամալեանի և բժ. Ա. Բաբալեանի միջեւ ստորագրուեց հաշտութեան ժամանակաւոր համաձայնութիւն, որով Զանգեզուրը, Ղարաբաղն ու Նախիջեւանը ժամանակաւորապէս պիտի մնային բոլշեւիկների ձեռքը։

Նոյն օգոստ. 10-ին, Փարիզում, ստորագրուեց Սեւրի դաշնագիրը։

VIII

ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԸ

Շանթի պատուիրակութիւնը Մոսկուայից Երեւան վերադարձաւ սեպտ. 14-ին, շարունակելու համար բանակցութիւնները Լեգրանի հետ։ Հոկտ. 11-ին, Լեգրանը հասաւ Երեւան 47 հոգինոց պատուիրակութեան (*) գլուխը անցած։ Հայաստանը արդէն պատերազմի մէջ էր Թուրքիայի հետ։ Լեգրանը անշուշտ, Բագւում և Թիֆլիսում, հող էր պատրաստում Հայաստանի խորհրդայնացման համար։

Ինչպէս արդէն տեսանք, համագործակցութեան որոշ գիծ էր հաստատուած բոլշեւիկների, ազրբէջանցիների, իթթիհատականների և քեմալականների միջեւ։ Այդ գծի հետեւանք էր Ղարաբաղ-Զանգեզուր-Նախիջեւանի գրաւումը Կարմիր բանակի կողմից։ Այդ գծի մէկ մասն էին կազմում և Թուրքերի պատերազմական գործողութիւնները Հայաստանի դէմ։ Անկասկած, ճիշդ է ասում Օլիվըր Բոլդուինը, որ այդ ժամանակ Հայաստանում էր և դէպքերին լաւատեղեակ, թէ՝ Թուրքերի պատերազմը Հայաստանի դէմ «Դաշնակիցներին նեղելու նպատակով

(*) Այդ պատուիրակութեան մէջ էին Սահ. Տէր Գաբրիէլեանը (հետագային Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ), Աւ. Յովհաննիսեանը (յետոյ՝ Հայկոմկուսի քարտուղար) եւ ուրիշ հայ ու ռուս բոլշեւիկներ, որոնք գալիս էին ոչ թէ բանակցելու, այլ Հայաստանը ներսից պայթեցնելու նպատակով:

ռուսների կողմից թելադրուած համաձայնուած մի յարձակում էր»։

Հայաստանի կառավարութիւնը իր ժամանակին, որոշ չափով, իրազեկ էր Թուրքերի ծրագիրներին և Թուրք-բոլշևիկ միացեալ ճակատի գոյութեան։ 1920 թ. ամառը Երևանում ստացուել էին Մուսթաֆա Քեմալի Ազգ. Մեծ Ժողովում արտասանած ճառի մանրամասնութիւնները, ինչպէս նաև սպայակոյտի պետ Ըմէթ փաշայի և Քեազիմ Կարաբէքիր փաշայի միջև տեղի ունեցած գրագրութիւնը Հայաստանին վերաբերող խնդիրների մասին։ Այդ տեղից որոշ կերպով երևում էր, որ Թուրքերը ծրագրում էին յարձակուել Հայաստանի վրայ և այդ մասին բանակցութեան մէջ էին բոլշևիկների հետ։ Մուսթաֆա Քեմալը Ազգ. Մեծ Ժողովում յայտնում էր, թէ շուտով Կարսից, Կարսի և Բաթումի ճամբով, Մոսկուա է մեկնելու Թրքական մի պատուիրակութիւն և թէ յունիս 6-ին բանակին հրաման է տրուել պատրաստուելու Սարըղամիշի և Սողանլուի կիրճի գրաւման համար։

Բայց այդ պահուն, Մուսթաֆա Քեմալի ասելով, «Մոսկուայից վերադարձաւ մեր պատուիրակութիւններից մէկը՝ հետը բերելով Չիչերինի նամակները», և Կարին է հասնում մի ռուս գործակալ։ Մոսկուան առաջարկում էր իր միջնորդութեամբ կարգադրել Պարսկաստանի, Հայաստանի և Թուրքիայի սահմանների խնդիրը։ Բայց, ասում է Մուսթաֆա Քեմալը, բոլշևիկների առաջարկի և «արդէն իսկ մեր տուած որոշումի միջև որևէ հակասութիւն չնկատեցինք և հրամայեցինք մեր արևելեան հրամանատարութեան՝ կարելի եղածին չափ շուտ և արագ կերպով շարունակել յարձակողականը»։

Բայց որովհետև Թուրքերը պէտք ունէին բոլշևիկների օգնութեան, Մուսթաֆա Քեմալը կարգադրում է մի առ ժամանակ յետաձգել պատերազմական գործողութիւնները։

Մուսթաֆա Քեմալի այս կարգադրութեան դէմ, սա-

կայն, ըմբոստանում է Քեազիմ Կարաբէքիր փաշան։ Նա ուզում էր, հակառակ Մուսթաֆա Քեմալի հրամանի, ինքնագլուխ յարձակուել Հայաստանի վրայ, մանաւանդ որ, ինչպէս տեսանք էնկիւրիի դատավարութիւնից, նա ունէր արդէն Ռուսաստանում գործող Իթթիհատական պետերի աջակցութիւնը և Ազրբէջանի բոլշևիկների հաւանութիւնը։ Այս առթիւ գրագրութիւն է տեղի ունենում ըմբոստ փաշայի և Ըմէթ փաշայի միջև։ Վերջինս, 1920 թ. օգոստ 1 յորդորական ու միանգամայն սպառնական մի նամակով, պահանջում է Քեազիմ Կարաբէքիրից՝ յետ կենալ «անջատ գործունէութիւնից» և չխանգարել «այն դէպքերը, որոնք պիտի վճռեն մեր ժողովրդի և նոյնիսկ ամբողջ մահմետական աշխարհի ու իսլամութեան ճակատագիրը»։ Ըմէթը յայտնում է, թէ՝ «քիչ հաւանական է, որ Հայաստանը, զրկուած մեր դաշնակից Ազրբէջանի կողմից, ընդունակ լինի յարձակուելու ձեր շրջանի վրայ։ Խալիլ փաշան, որ գտնւում է Թուրք-ազրբէջանցի-ռուս ուժերի հրամանատարական կազմում, մեզ հանգըստացնում է Մոսկուայից՝ հաւաստիացնելով, որ Հայաստանը մեր սահմանների վրայ յարձակուելու դէպքում՝ սպառնական ուժի կը հանդիպի իր թիկունքում»։ Եւ Ըմէթը պահանջում է, որ Քեազիմ Կարաբէքիր փաշան իր զօրամասերը ուղարկէ յունական ճակատ։

Քեազիմ Կարաբէքիրը տեղի չի տալիս և սեպտեմբերի սկիզբները մեկնում է էնկիւրի՝ անձամբ համոզելու համար Մուսթաֆա Քեմալին և Ըմէթին, որ անհրաժեշտ է անմիջապէս պատերազմ սկսել Հայաստանի դէմ։ Նրա գործը դիւրանում էր այն բանով, որ մի կողմից կնքուել էր Սևրի դաշնագիրը, որ Հայաստանին էր տալիս Թըրքահայաստանի չորս նահանգների մեծ մասը, իսկ միւս կողմից՝ գործակցութեան որոշ համաձայնութիւն էր կընքուել, Բագուի Արևելեան Ազգերի Համագումարում, Թուրքերի և բոլշևիկների միջև։ Խալիլ փաշան, Քիւչուք Թալէաթը և ուրիշներ, իսլամական զօրամասով և

բոլշեւիկեան ոսկիով, արդէն հասել էին Կարին(*) և վըստահացրել Քեազիմ Կարաբէքիրին, թէ բոլշեւիկների համաձայնութիւնն ու օգնութիւնը ապահովուած է Թուրքերին։ Սրա վրայ էնկիւրին տեղի է տալիս և հրամայում Քեազիմ Կարաբէքիրի բանակին յարձակուելու Հայաստանի վրայ։ Եւ սեպտ. 23-ին սկսուեց Թուրք-հայկական պատերազմը։

Դրանից երեք շաբաթ վերջն էր, որ Երեւան հասաւ Լեգրանը իր բազմանդամ պատուիրակութեամբ։ Եւ յաջորդ օրն իսկ Հայաստանի կառավարութեան ներկայացրեց Մոսկուայի պահանջները.— 1) հրաժարուել Սեւրի դաշնագրից, 2) Թոյլ տալ Խորհրդային զօրքերին, որ իրենց ռազմամթերքով միասին անցնեն Հայաստանի վրայով՝ միանալու Մուսթաֆա Քեմալի բանակին՝ կռուելու համար Դաշնակիցների դէմ, 3) սահմանավէճը Հայաստանի և հարեւանների միջեւ լուծել Խորհրդ. Ռուսաստանի միջնորդութեամբ։

Հայաստանի կառավարութիւնը կտրուկ կերպով մերժեց առաջին կէտը և ընդունեց միւս պահանջները։ Մի քանի օրից կողմերը եկան համաձայնութեան, և կազմուեց դաշնագրի նախագիծը, որի գլխաւոր կէտերն էին.

1) Խորհրդ. Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանի անկախութիւնը և անձեռնմխելիութիւնը։ 2) Զանգեզուրը պիտի մնար Հայաստանի սահմանների մէջ, իսկ Ղարաբաղի և Նախիջեւանի հարցը պիտի լուծուէր իրաւարարութեամբ։ 3) Խորհրդ. Ռուսաստանը անմիջապէս պիտի միջամտէր՝ կասեցնելու համար պատերազմը Թուրքիայի և Հայաստանի միջեւ։ 4) 1914 թ. սահմանի վրայ պիտի ստեղծուէր չէզոք գօտի և հայ-թրքական սահմանավէճը

(*) Միւս կողմից, ծովով էլ, Նովորոսիյսկ-Տուապսէ գծով, բոլշեւիկները զէնքով ու ռազմամթերքով էին հասցնում թուրքերին։ Հայաստանի կառավարութիւնը տեղեակ էր եւ մի քանի անգամ բողոքեց։

պիտի լուծուէր Խորհրդ. Ռուսաստանի բարեկամական միջամտութեամբ։ 5) Հայաստանի կառավարութիւնը համաձայնւում էր իր երկաթուղիներով և խճուղիներով ճամբայ տալու ռուսական զօրքին անցնելու համար Թուրքիա։ Հայաստանի վրայով փոխադրուելիք ռազմամթերքի 30$^{0}/_{0}$-ը պիտի յանձնուէր Հայաստանին։ 6) Հայաստանը ընդունում էր Խորհրդ. Ռուսաստանի միջնորդութիւնը իր և հարեւանների միջեւ եղած հողային վէճերը լուծելու համար։ 7) Խորհրդ. Ռուսաստանը համաձայնւում էր վճարել Հայաստանին երկու և կէս միլիոն ոսկի ռուբլի, թոյլ տալ քարիւղի ազատ մուտք, տալ երկրագործական գործիքներ, վերադարձնել էջմիածնի Մոսկուա տարուած գոյքերը, աջակցել հայ գաղթականների վերադարձին եւայլն։

Լեգրանը դաշնագրի նախագիծը պիտի տանէր Բագու, ստանար Մոսկուայի հաւանութիւնը և շուտով վերադառնար Երեւան՝ ստորագրելու համար «բարեկամութեան և խաղաղութեան դաշնագիր Խորհրդ. Ռուսաստանի և Հայաստանի միջեւ»։

Լեգրանը դեռ Երեւան չհասած, հոկտ. 4-ին, Թիֆլիսում, պատերազմի առիթով, 10.000-նոց մի բազմութիւն բողոքի ցոյց կազմակերպեց խորհրդային դեսպանատան առջեւ, ուր յուզումնալից ճառեր արտասանուեցան։ Առանձնապէս ուժեղ ճառ խօսեց «Աշխատաւոր»ի խմբագիր Կորիւն Ղազարեանը։ «Մենք այսօր այստեղ, ասաց նա, բողոքում ենք, իբրեւ յեղափոխականներ նրանց դէմ, որոնք վարկաբեկում են յեղափոխութիւնը, զազիր գործ են կատարում և հարիւր հազարաւոր անմեղ կեանքերի դահիճ էնվէր փաշաներին, Թալէաթներին ձեռք մեկնում ու յեղափոխական կարմիր դրօշակով քօղարկւում։ Դէմ առ դէմ կանգնած՝ մենք ուղղում ենք այս հարցը բոլշեւիկներին և սպասում ենք պատասխանի»։

Բնորոշ էր խորհրդային ներկայացուցիչ Ստարկի պա-

տասխանը։ Նա չհերքեց թուրք-բոլշեւիկեան գործակցութիւնը, այլ բաւականացաւ միայն յարձակումներով՝ Հայաստանի վրայ։

«Դուք ուզում էք, ասաց նա, գիտենալ մեր վերաբերմունքը դէպի Հայաստանի սահմաններում կատարուող դէպքերը։ Ռուսաստանի բանուորագիւղացիական հանրապետութիւնը իր գոյութեան հէնց առաջին օրերից վճռեց ճանաչել ազգերի ինքնորոշումը, նոյնիսկ մինչեւ անջատում և անկախութիւն։ Մենք այդ իրաւունքը ճանաչեցինք ո՛չ միայն խօսքով, այլ և գործով։ Մենք ճանաչեցինք Էստոնիայի, Լիտուայի, Ֆինլանդայի, Լեհաստանի անկախութիւնը։ Ճանաչել ենք, ճանաչում ենք և պիտի ճանաչենք նաեւ Հայաստանի անկախութիւնը, քանի որ այդպէս է ցանկանում հայ աշխատաւոր ժողովուրդը։ Մեր քաղաքականութիւնը եղել է խաղաղութեան քաղաքականութիւն։ Բազմաթիւ ճակատներում մեր թափած արեան մեղքը մերը չէ։ Այդ արիւնը ընկնում է Դաշնակիցների վրայ։ Արեւելքում մենք օգնում ենք և պաշտպանում ենք ճնշուած ազգերին ընդդէմ Դաշնակիցների։ Մեզ համար թանգ են հայ աշխատաւոր զանգուածների շահերը։ Թանգ են և Պարսկաստանի, Հնդկաստանի և Թուրքիայի աշխատաւորութեան շահերը։ Բայց Դաշնակցութիւնը իմպերիալիստների կողմն է անցել և Հայաստանը զէնք է դարձնում իմպերիալիստների ձեռքին։ Հայ ժողովուրդը պէտք է ընտրէ երկուսից մէկը — ցանկանում է լինել մե՞զ հետ թէ շարունակել հին քաղաքականութիւնը (*)։

Պարզ է՝ Թուրքերը մեղք չունէին — դատապարտութեան ո՛չ մի խօսք — որ յարձակուել էին Հայաստանի պատերազմներից ուժասպառ և անպաշտպան աշխատաւորութեան վրայ։ Մեղաւորը Դաշնակցութիւնն էր։

(*) Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն. 1928, Փարիզ. էջ 422-26։

Թուրքերի յարձակումը Հայաստանի վրայ մեծ հըրճուանք պատճառեց բոլշեւիկներին։ Թիֆլիսի «Կոմունիստ» թերթը գրում էր ցնծութեամբ, հոկտ. 24-ին։ «Մնում է միայն ուրախանալ, որ Դաշնակցական Հայաստանը գտնւում է այն պոզահարող կովի վիճակում, որին Աստուած եղջիւրներ չի տուել»։ Իսկ Բագուի «Կոմունիստ»ը փառաբանական խմբագրականներ էր հրատարակում Մուսթաֆա Քեմալի հասցէին։ Բոլշեւիկեան ժողովներում անվերապահ կերպով գովաբանւում էին Թուրքերը, որ գալիս էին ազատելու Հայաստանի աշխատաւորութիւնը։

Ի՞նչ էին անում այդ միջոցին հայ բոլշեւիկները։ Մտածեցի՞ն մի վայրկեան Հայաստանի պաշտպանութեան մասին։

Բագուի «Կոմունիստ» թերթում լոյս տեսաւ «Անդրկովկասի ու ամբողջ աշխարհի բանուորներին և գիւղացիներին» ուղղուած մի կոչ, որի տակ ստորագրել էր և «Հայաստանի Կոմունիստ Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէն»։ Այդ կոչը ստերով, զրպարտութիւններով, հայհոյանքներով ու սպառնալիքներով համեմուած զզուելի մի գրութիւն էր։ Այն պահուն, երբ Հայաստանի ժողովուրդը մահու և կենաց օրհասական կռիւ էր մղում ջարդարար թշնամու դէմ, հայ բոլշեւիկները, միացած ազրբէջանցի իրենց ընկերների հետ, շանթ ու կայծակ էին թափում Հայաստանի գլխին։ «Հայաստանի մառայլ ու խոնաւ բանտերը, գրում էին Աւիսներն ու Միկոյեանները, որոնք շատ կեանքեր խլեցին արիւնոտ ցարի օրով, այժմ վերածուել են կառավարական տաճարների, ուր մաուզերիստները արիւնալի խնջոյքներ են սարքում Հայաստանի կոմունիստների նկատմամբ։ Հայաստանի ներսում կոմունիստական բանուորական շարժումը յաղթահարելով միայն Դաշնակները կարողացան Հայաստանը վերածել իմպերիալիստների համար յուսալի յենարանի՝ Արեւելքի յեղափոխութեան դէմ կռուելու համար։

«Այն ժամանակ, երբ ամբողջ Արեւելքը բռնուած է ապստամբութեան հրդեհով, երբ Արեւելքի ժողովուրդների համագումարը երդուեցնում էր արեւելեան ժողովուրդներին ոտքի կանգնելու Կոմունիստական Միջազգայնականի դրօշակի տակ միջազգային իմպերիալիզմի դէմ վերջին վճռական կռիւը մղելու համար, այդ ժամանակ Հայաստանի սպիտակ աւազակային կառավարութիւնը, հրով ու սրով չափելով ամբողջ յեղափոխական Հայաստանը, քայքայելով բոլոր բանուորական արհեստակցական կազմակերպութիւնները՝ անգլիական և ամերիկեան իմպերիալիստների հետ միացած նոր Գողգոթա է պատրաստում Արեւելքի յեղափոխական զանգուածներին...

«Մենք ուխտ ենք տալիս Հայաստանի արիւնաքամ բանուորա-գիւղացիական զանգուածներին՝ չենթարկուել աւազակային խմբերի ցածոգի պրովոկացիային... Մա՛հ Հայաստանի բանուորների և գիւղացիների վրայ բռնութիւն կատարողներին»։

Եւ ո՛չ մէկ խօսք ոչ պատերազմի, ոչ էլ Հայաստանի «աշխատաւորութիւնը» կտորող Թուրքերի մասին։ Հայ բոլշեւիկները, անշուշտ, գիտէին, որ Թուրքերը խորհրդային իշխանութեան գործօն աջակցութեամբ էին պատերազմի ելել Հայաստանի դէմ։ Թուրքերը նրանց սրտին աւելի մօտ էին, քան Հայաստանի «սպիտակ աւազակային կառավարութիւնը», քան Հայաստանը ինքը։

Բայց միայն նման խօսքերով չէր, որ հայ բոլշեւիկները պայքար էին մղում Հայաստանի կառավարութեան դէմ։ Նրանք գործով էլ աշխատում էին դիւրացնել Քեազիմ Կարաբէքիրի աշխատանքը։ Պատերազմի ընթացքին, թէ ընդհանուր զօրակոչի ենթարկուածների և թէ դրսից եկած կամաւորների մէջ սպրդել էին բազմաթիւ բոլշեւիկներ, որոնք, գաղտնի կերպով, զինուորների մէջ քարոզում էին պարտուողական գաղափարներ և գրգռում Հայաստանի կառավարութեան զինուորական հրամանատարութեան դէմ։ Նրանք հաւատացնում էին հայ զինուորներին, որ Թուրքերը չէ որ յարձակուել էին Հայաստանի վրայ, այլ «Դաշնակները» պատերազմ սկսել, որ Թուրքերը բարեկամ են բոլշեւիկներին ու դաշնակից խորհրդային իշխանութեան, որ Թուրք բանակի մէջ կան և ռուս ու հայ զինուորականներ և որ Հայաստան եկող Թուրք զօրքերը չեն կոտորի հայերին, այլ միայն «Դաշնակների» իշխանութիւնը կը տապալեն և կ'օգնեն խորհրդային կարգերի հաստատման։

«1920-ի արիւնոտ օրերին, գրում է Վ. Նաւասարդեանը, երբ Թրքական բանակը, գրաւելով Սարիղամիշը, յաղթանակօրէն արշաւում էր դէպի Կարս, այդ գերագոյն տագնապի և համազգային մեծ աղէտի օրերին, հարիւրներով Թռուցիկներ էին շրջան անում ժողովրդի ու բանակի մէջ, ուր բոլշեւիկեան կուսակցութիւնը սեւով ըսպիտակի վրայ ժողովրդին յայտարարում էր մօտաւորապէս հետեւեալը.

«Հա՛յ բանուոր, հա՛յ գիւղացի ու հա՛յ զինուոր.

«Քեմալական յեղափոխական բանակը՝ Թուրք բանուորը, աշխատաւոր գիւղացին ու յեղափոխական ասկեարը, պարզած խորհրդային կարմիր դրօշը, գալիս են փրկելու քեզ քո դահիճների ձեռքից և տապալելու քո արիւնը ծծող դաշնակների անարգ լուծը։

«Չկրակես, հայ աշխատաւոր զինուոր, եղբայրական Թուրք բանակի վրայ, նա քեզ բերում է ոչ թէ ստրկութիւն, այլ ազատութիւն, նա գալիս է օգնելու քեզ քո սրբազան պայքարի մէջ։ Երբ տեսնես կարմիր դրօշը, առ զէնքերդ և միացիր եղբայրական Թուրք բանակին ընդդէմ քո ոխերիմ թշնամիների, ընդդէմ անարգ դաշնակների»։

«Մեր տկարացած յիշողութիւնը թերեւս մի քիչ թօշնած գոյներով է տալիս այն՝ ինչ մենք կարդացել ենք որանից մօտ չորս տարի առաջ.

«Այս տողերը չափազանց խոշոր գրերով ու Մեսրոպ-

եան տառերով, ստորագրուած էին յատուկ թռուցիկների վրայ ու տարածւում ժողովրդի ու բանակի մէջ։

«Նրանք տպագրուած էին բոլշեւիկեան կուսակցութեան անունից» (*)։

Յոգնած, տնից և աշխատանքից կտրուած հայ զինուորը ականջ էր դնում այդ գաղտնի փսփսուքներին։ Եւ, յիրաւի, ինչո՞ւ պատերազմել, եթէ թուրքն ու ռուսը միացած են, ինչո՞ւ վախենալ ջարդերից, եթէ թուրք զինուորը գալիս է կարմիր դրօշի տակ, ձեռք-ձեռքի ռուս զինուորի հետ։ Մինչեւ ե՞րբ այս աւերիչ և անտանելի պատերազմը։ Մեծ Ռուսաստանը կը գայ, կարգ ու խաղաղութիւն կը վերահաստատէ, հաց և հագուստ կը բերէ։ Տարիներ անխաղաղ ապրած հայ գիւղացու և քաղքենու ականջին հաճելի էին այս քարոզները։ Վերջ տալ պատերազմին, տուն երթալ ու խաղաղ նստել ռուս բանակի հովանաւորութեան տակ — ի՜նչ աւելի հրապուրիչ հեռանկար։

Բոլշեւիկ Բորեանը (**) հաստատում է, որ «Հայաստանի բանուորա-գիւղացիական զանգուածները», պատերազմի ընթացքին, ասում էին. «Ռուսաստանը մեր բարեկամն է, բոլշեւիկները մեր փրկիչներն ու ազատարարներն են, բոլշեւիկների դէմ մենք չենք պատերազմի» և չէին կռւում թուրքերի դէմ՝ այն համոզումով, որ թուրքերը գալիս են ռուսների դրդումով, և ա՛յն յոյսով, որ իրենք կ'օգնեն բոլշեւիկներին տապալելու դաշնակների կառավարութիւնը և կազմակերպելու բանուորական և գիւղացիական պետութիւն Հայաստանում»։

Բորեանը, սակայն, իրենց յանցանքը ձգում է Հայաստանի կառավարութեան վրայ, որ, իբր թէ, դիտմամբ թուրք-բոլշեւիկեան բարեկամութեան մասին սուտ

(*) Վ. Նաւասարդեան «Հ. Յ. Դաշնակցութեան Անելիքը», Գահիրէ, 1924, էջ 222-224:

(**) Բ. Նոյն, էջ 121:

լուրեր էր տարածում։ Տարօրինակ արդարացում։ Նախ՝ բոլշեւիկների և թուրքերի բարեկամութիւնը ինքնին արդէն անհերքելի փաստ էր, որ Բորեանը ինքն էլ հաստատում է։ Երկրորդ՝ ի՞նչ հաշւով Հայաստանի կառավարութիւնը իրեն համար աննպաստ լուրեր պիտի տարածէր։ Իրողութիւնը այն է, որ հայ բոլշեւիկները դէպի դաշնակցականները ունեցած ատելութիւնից կուրացած և յուսալով թուրքերի օգնութեամբ խորտակել Հայաստանի անկախութիւնը՝ ամէն միջոց գործադրեցին կոտրելու համար հայկական բանակի դիմադրական զօրութիւնը։

Կարսի և Ալեքսանդրապոլի շրջանում հայկական հրամանատարութիւնը պարտւողական քարոզչութեան ու դասալքութեան մէկից աւելի դէպքեր է արձանագրել։ Եղան և ձերբակալութիւններ ու դատավարութիւններ։ Տողերիս գրողը անձամբ ականատես է եղել նման երեւոյթների Կարսում և հարցաքննել է դասալիք սպայ Գարագաշին և ուրիշներին, որոնք բռնուել էին խռովութեան և դասալքութեան յանցանքի մէջ։

Կարսի անկման պատասխանատուութիւնը հանրային կարծիքը վերագրեց թուրք-բոլշեւիկեան գործակցութեան։ Այդ վերագրումը արձանագրուեց և մամուլում։ Այսպէս, Երեւանի «Յառաջ»ը գրում էր նոյեմբ. 9-ին.

«Կարս մտնող տաճիկների հետ կան նաեւ բոլշեւիկ գործակալներ, որոնք աւելի եւս գրգռում են թիւրքերին հայերի դէմ և մատնում նրանց ձեռքը քիչ-շատ աչքի ընկնող հայ հասարակական գործիչներին։

«Պատմում են, որ բոլշեւիկները դեռ Կարսի անկումից առաջ ունեցել են գաղտնի կազմակերպութիւն, որը գաղտնի յարաբերութեան մէջ է եղել տաճիկ հրամանատարութեան հետ, որոշ աշխատանքներ է կատարել տեղում և ջանացել է քայքայել մեր զօրքերը՝ հրաւիրելով նրանց չդիմադրել տաճիկներին։

«Տաճիկների այդ գաղտնի գործակալ բոլշեւիկները

մեր ճակատի ամենաստոյգ տեղեկութիւնները հաղորդել են տաճիկներին, հայ դաւաճանների այդ ջանքերի հետեւանքով տաճիկներին հեշտութեամբ յաջողուեց գրաւել Կարսը։

Նոյն դաւաճան կազմակերպութեան գաղտնի գործակալները երեւան են եկել նաեւ Ալեքսանդրապոլում․ «Վերջին հաստատ տեղեկութիւնների համաձայն բոլշեւիկ կոչուող հայ դաւաճանները, որոնք փախել են Ալեքսանդրապոլի բանտից, անցել են թշնամու կողմը և պրովոկացիոն լուրեր հաղորդելով՝ աշխատում են գրգռել թշնամուն, անվստահութիւն ներշնչել կնքուած զինադադարի նկատմամբ, որպէսզի տաճիկ հրամանատարութիւնը խախտի զինադադարը և ռմբակոծի քաղաքը․ Նրանք լուրեր են տարածում, որ, իբր թէ, դաշնակցականները, չնայած կնքուած զինադադարին, պատրաստւում են դաւադրօրէն յարձակուել տաճիկ զօրքերի վրայ։ Հայ դաւաճանների նպատակն է ստիպել տաճիկներին մտնել Ալեքսանդրապոլ քաղաքը, որը, համաձայն զինադադարի պայմանների, չպիտի ենթարկուի տաճկական գրաւման։ Տաճիկ զօրքերի միջոցով հայ դաւաճանները ձգտում են հասնել իշխանութեան»։

«Յառաջ»ի նոյն համարը հաղորդում էր․ «Ալեքսանդրապոլի բանտից փախած հայ բոլշեւիկները ընդառաջ են գնացել Ալեքսանդրապոլ մտնող տաճիկ զօրքերին և իրենց խնդակցութիւնը յայտնելով՝ ձեռք են մեկնել տաճիկ զինուորներին»։

«Յառաջ»ի այս մերկացումները լրիւ կերպով և աւելիով հաստատուեցին հետագային։

Մասնաւորապէս անպատիւ դեր էին բռնել բոլշեւիկները Ալեքսանդրապոլի շրջանում։ Այն պահուն, երբ Քեազիմ Կարաբէքիրի բանակը, իր շուրջը սփռելով աւեր, թալան ու կոտորած, գրաւել էր ամբողջ Վանանդը և մտել Շիրակի սահմանները, Ալեքսանդրապոլում հայ բոլշեւիկները, դաւադրութիւններով և գրգռիչ թռուցիկ-

ներով անհնազանդութեան էին մղում հայ զինուորներին և կոչ էին ուղղում ըմբոստանալու և սուինները փոխանակ թշնամու, կառավարութեան դէմ ուղղելու։ Գտնուեցին նոյնիսկ հայանուն բոլշեւիկներ, որոնք ուղղակի յարաբերութիւնների մէջ մտան թուրք հրամանատարութեան հետ և վերջինիս քաջալերանքով պայքարեցին Հայաստանի իշխանութեան դէմ։

Պատերազմից յետոյ, այդ բոլոր փաստերը երեւան եկան, և հայ բոլշեւիկները իրենք էլ, իրենց կաշիի փորձով, համոզուեցին, որ չարաչար խաբուած էին։ Ահա, օրինակ, ինչ է պատմում Հայաստանի նախարար բժ․ Ա․ Բաբալեանը, որ Կարսի անկումից յետոյ, գերի էր ընկել թուրքերի ձեռքը։ — «Մեր գերութեան հինգերորդ օրը մեզ այցելեցին հինգ հայեր՝ մի քանի տաճիկ սպաների հետ՝ զարդարուած կարմիր լաթերով։ Կարսի հայ կոմունիստներն էին դրանք․ պատում էին հանրակացարանները և իրենց թշնամիներին մատնում տաճիկներին։ Ցեղկոմի անդամներ էին։ Այնպէս էին հաւատացրել սրանց տաճիկ սպաները, որ, իբր թէ, Կարսը պիտի յանձնեն բոլշեւիկեան իշխանութեան։ Եւ ամէն կերպ փայփայում էին կոմունիստ տականքներին․ փոխարէնը սրանք մատնութիւններ էին անում և ցոյց տալիս պահեստների տեղերը և անհրաժեշտ տեղեկութիւններ էին տալիս հայ զօրքի և երկրի վերաբերեալ»։

Իսկ Բագուի «Կոմունիստ» թերթը աւելի աղաղակող փաստեր էր հաղորդում։ Հոկտ․ 30-ին, գրում է նա (թիւ 42), «Թրքական զօրքերի առաջապահ մասերը գրաւեցին Կարսը։ Մինչեւ թրքական զօրքերի մուտքը հայ զօրքերը խորապէս համոզուած էին, որ Կարսի վրայ յարձակուող զօրքերը բոլշեւիկներ են, որի պատճառով էլ դիմադրութիւն ցոյց չտուին թուրքերին։ Նոյն կարծիքի էր և Կարս քաղաքի աշխատաւոր ժողովուրդը, որ բացարձակապէս համոզուած էր, թէ կարմիր դրօշակներով յարձակուողը Թուրքիայի յեղափոխական բանակն է։ Բայց

քաղաք թափուած այդ զօրքերը չխնայեցին ոչ կանանց, ոչ երեխաներին և ոչ էլ ծերերին։ Հինգ օր անընդհատ արիւնռուշտ զինուորները և քիւրդերը խաղաղ ժողովրդի գլխին գործադրեցին մարդկային երեւակայութիւնից վեր իրենց բոլոր գազանութիւնները։ Սպանում էին բացառապէս հայերին։ Թալանում էին ամէնքին առանց խտրութեան։ Չէին խնայում նոյնիսկ կոմունիստներին, որոնք իրենց կոմունիստ լինելը ապացուցանող վկայականներ էին ներկայացնում։ Թրքական գազանութիւններին միայն Կարսում զոհ գնացին 6.000 հայեր»։

* * *

Պատերազմը վերջացաւ հայերի պարտութեամբ, և ուրիշ կերպ չէր էլ կարող լինել։ Հայաստանը լքուած էր բոլորից։ Դաշնակիցները ո՛չ մի օգնութիւն չհասցրին, Վրաստանը բարեկամ էր քեմալական Թուրքիային և մեզ չէզոք․ Ազրբէջանը թշնամի էր․ թշնամի էր և Խորհրդ․ Ռուսաստանը, որ գործօն կերպով աջակցում էր Թուրքերին հայերի դէմ։

«Ես, գրում է Ս. Խատիսեանը, քայլ առ քայլ և օրը օրին ուսումնասիրած եմ արտաքին քաղաքականութեան ազդեցութիւնները և փաստերը և եկած եմ այն անխախտ համոզման, որ Դաշնակիցները լքեցին Հայաստանը, որ Թուրքերը ատկէ լայնօրէն օգտուեցան, բայց Թուրքերու գլխաւոր զինակիցները բոլշեւիկներն էին, որոնք ոյժ և հնարաւորութիւն տուին Թուրքերուն յարձակուելու Հայաստանի վրայ։ Այդ անվիճելի փաստ է։ Փաստ է նոյնպէս, որ իրար օգնելէ ետքը՝ իրար մէջ բաժնեցին Հայաստանը (*)։

Ի՞նչ կարող էր անել այսպիսի պայմաններում փոքրիկ և ուժասպառ Հայաստանը։ Նա ստիպուած էր ընդունել յաղթողի թելադրած պայմանները։ Կառավարութիւնը, նոյեմբ. 23-ին, Ալեքսանդրապոլ ուղարկեց մի պատուիրակութիւն, Ա. Խատիսեանի գլխաւորութեամբ, կնքելու համար հաշտութեան դաշնագիր Թուրքերի հետ։ Մեկնումից առաջ, պատմում է Խատիսեանը, «մենք խնդրեցինք Խորհրդային Ռուսիոյ ներկայացուցիչներէն (Լեգրան և Բ. Մդիվանի, որոնք մի քանի օր առաջ եկել էին Երեւան։ Ս.Վ.) ազդեցութիւն գործ դնել Թուրքերու վրայ մեզ համար նպաստաւոր մտքով։ Մենք ծանօթացուցինք Լեգրանին և Մդիվանիին մեր ցանկութիւններուն և ի պատասխան լսեցինք խոստում օգնելու» (*)։ Բ. Մդիվանին, Մոսկուայի լիազօրութեամբ, պիտի մեկնէր Ալեքսանդրապոլ և պիտի մասնակցէր բանակցութիւններին, իբրեւ միջնորդ Թուրքերի և հայերի միջեւ։

Մդիվանին Հայաստան էր ուղարկուել Մոսկուայի կառավարութեան կողմից, որի օգնութեան էր դիմել Հայաստանի կառավարութիւնը։

Թէ Խորհրդ. Ռուսաստանի ներկայացուցիչները ինչպէս օգնեցին Հայաստանին, այդ երեւում է նոյն Խատիսեանի պատմածից։ Բանակցութիւնների ընթացքին Թուրքերը մերժեցին որեւէ միջամտութիւն Խորհրդային Ռուսաստանի կողմից, ոչ էլ ընդունեցին Մդիվանիի միջնորդութիւնը։ Խատիսեանի դիմումի վրայ՝ Մդիվանին խոստանում է դրսից աջակցութիւն ցոյց տալ, բայց, ասում է Խատիսեանը, «հարկ կը համարեմ վճռականապէս յայտարարելու, թէ ան աւելի շատ խանգարեց մեզ, քան թէ օգնեց։ Խանգարեց այն բանով, որ, ինչպէս Ալեքսանդրապոլի, այնպէս և Կարսի մէջ, կը կազմէր միտինգներ, ճառեր կ՚արտասանէր մեր դէմ, կը պախարակէր Հայաստանի կառավարութիւնը և պատուիրակութիւնը, կը քարոզէր բոլշեւիկեան ծրագիրներ և այսպիսով ցոյց կուտար Թուրքերուն, թէ ան իրօք մեր դէմ է և

(*) Հայ. Հանրապ. Ծագումն ու Զարգացումը, էջ 255։

(*) Նոյն տեղը, էջ 257։

ոչ թէ մեզ հետ... Ես կարող եմ հաստատել, որ Ալեքսանդրապոլի մէջ Խորհրդ. Ռուսաստանի ներկայացուցիչը բացարձակապէս ոչ մէկ օգնութիւն ցոյց չտուաւ Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան (*)։

Տարբեր չէր և Լեգրանի ընթացքը, նա գնաց Բաքու և վերադարձաւ միայն նոյեմբերի սկիզբը։ Ի՞նչ արաւ նա Բաքւում կամ ի՞նչ տեղի ունեցաւ այնտեղ, մանրամասնութիւնները յայտնի չեն մեզ, բայց ինչ որ յայտնի է՝ կասկած չի թողնում, որ Բաքւում որոշուեց, օգտուելով դէպքերի նպաստաւոր դասաւորութիւնից, Հայաստանը ենթարկել խորհրդայնացման։

Այսպէս՝ նոյեմբ. 4-ին, Բաքւում, տեղի է ունենում Ազրբէջանի Կոմունիստական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի Պոլիտբիւրոյի և Համամիութենական Կոմունիստական Կուսակցութեան Կենտր. Կոմիտէի Կովկասեան Բիւրոյի անդամների լիագումար ժողովը, որին մասնակցում է և ինքը Ստալինը։ Օրակարգի հարցեր են լինում՝ բանակցութիւններ Վրաստանի հետ եւ կացութիւնը Հայաստանում (**)։

Պաշտօնական հաղորդագրութիւն չկայ այդ ժողովի որոշումների մասին, բայց զարտուղի տեղեկութիւններից և դէպքերի հետագայ ընթացքից կարելի է ստոյգ կերպով ասել, թէ այնտեղ ծանրակշիռ որոշում է տրուել Հայաստանի մասին — միջոցներ ձեռք առնել անմիջապէս խորհրդային վարչաձեւ մտցնել Հայաստանում։ Ըստ երեւոյթին, որոշուած է եղել նախ, արտաքին աշխարհի առջեւ «զաւթիչ» չերեւալու համար, խորհրդայնացումը կատարել «խաղաղ» եղանակով, այսինքն՝ Հայաստանի կառավարութեան «յօժարութեամբ»։ Դրանով են բացատրւում Լեգրանի հետագայ քայլերը։

(*) Նոյն տեղը, էջ 262 3։

(**) Ի. Ստալին՝ «Ամբողջական Երկեր», հատոր 4, 1947, Մոսկուա, էջ 476։

Նկատակած, նոյեմբ. 4-ի այդ ժողովը ի նկատի ունի Տիկ. Օրջոնիկիձէն՝ այն օրերին Ստալինի աջ բազուկ և նոյն Ստալինի կողմից հաշուեյարդարի ենթարկուած Սերգօ Օրջոնիկիձէի այրին, երբ իր ամուսնուն նուիրած «Մի բոլշեւիկի ուղին» իր հատորում գրում է.

«Երբ 1920-ին Կովկաս ժամանեց Ի. Վ. Ստալինը, հետեւեալ առաջադրանքը տուաւ.— Օժանդակել Հայաստանի ապստամբած աշխատաւորութեան։

«Դաղստանի և Թերեքի համագումարների աւարտումից յետոյ, Սերգօն Բաքու վերադարձաւ և 19 նոյեմբ. 1920-ին, 11-րդ բանակի զօրամասերը ուղարկեց տապալելու համար դաշնակների ատելի կառավարութիւնը»։

Եւ Օրջոնիկիձէն ինքն էլ հաստատում է այս փաստը։ Նա վկայում է, որ «Պարտիան» որոշել էր Հայաստանում իշխանութիւնը գրաւելուց յետոյ զգոյշ քաղաքականութիւն վարել։ Ուստի Ռեւկոմը ստեղծուեց այնպիսի ընկերներից, որոնց դիրեկտիւ տրուեց չշտապեցնել Հայաստանի կոմունիզացիան, ստեղծել հայկական ժողովրդական կառավարութիւն, չվանել ինտելիգենցիայի լայն շրջանները եւայլն» (*)։ Եւ մեղադրում է հայ բոլշեւիկներին, որ սրանք «պարտիայի» գծից շեղուել են, բայց ինքը, իր ընթացքով, թէ Փետրուարեան ապստամբութեան օրերին, թէ դրանից առաջ համամիտ ու գործակից էր հայ բոլշեւիկներին։ Քիչ վերջը կը տեսնենք, թէ ինչպէս վարուեց նա իր գթութիւնը ողոքող Ց. Թումանեանի հետ։

Բայց այդպէս չէր Օրջոնիկիձէի վերաբերումը դէպի վրացի բոլշեւիկներն ու վրացի ժողովուրդը։ Նա պահանջում էր վրացի կոմունիստներից «ճկուն» քաղաքականութիւն վարել՝ և թոյլ չտալ, որ Վրաստանում դաժանութիւններ կատարուին։ Երբ Հայաստանի Ցեղկոմը խելագար բռնութիւններ էր գործադրում Երեւանում և

(*) Գ. Կ. Օրջոնիկիձէ. «Ընտիր յօդուածներ եւ ճառեր», Երեւան, 1950, էջ 58։

գաւառներում, Օրջոնիկիձէն և նրանից բարձր կանգնած Լենինն ու Ստալինը լուռ հանդիսատես մնացին։ Երբ հերթը հասաւ Վրաստանին, լեզուները բացուեցին, և տեսէք, թէ ի՞նչ էր հեռագրում Լենինը, Օրջոնիկիձէի միջոցով, վրաց համայնավարներին.

«Անհրաժեշտ է զիջումների յատուկ քաղաքականութիւն վարել վրացական մտաւորականութեան և մանր առեւտրականների նկատմամբ...

«Վիթխարիօրէն անհրաժեշտ է ընդունելի կոմպրոմիս փնտռել բլոկ կազմելու Ժորդանիայի կամ նրա նման վրացական մենշեւիկների հետ։

«Խնդրում եմ յիշել, որ Վրաստանի ներքին և միջազգային պայմանները վրացական կոմունիստներից պահանջում են ոչ թէ կիրառել ռուսական շաբլոնը, այլ հմուտ և ճկուն կերպով ստեղծել ինքնայատուկ մի տակտիկա, որը հիմնուած լինի ամէն տեսակ մանր-բուրժուական տարրերին մեծ զիջողութիւններ անելու վրայ» (*)։

Հայաստանի «ներքին և միջազգային պայմանները» չէին թելադրում «մեծ զիջողութիւններ» անել, այնտեղ կարելի էր «կիրառել ռուսական շաբլոնը»։ Եւ կիրառեցին։ Եւ Օրջոնիկիձէն եղաւ գլխաւոր կիրառողներից մէկը...

Նոյեմբեր 20-ին, Մդիվանիի հետ, Բագուից Երեւան վերադառնալով՝ Լեգրանը շարունակեց իր երկդիմի ընթացքը՝ մի կողմից ձեւանալով հայ ժողովրդի անկեղծ բարեկամ, միւս կողմից աշխատելով փութացնել Հայաստանի խորհրդայնացումը՝ թէ՛ անձամբ և թէ դեսպանութեան հայ բոլշեւիկների միջովով։

Կարսի անկումից յետոյ, պատերազմի ընթացքը հայերի համար դարձաւ այլեւս յուսահատական։ Տեղի ունե-

(*) Դ. Կ. Օրջոնիկիձէ. «Ընտիր յօդուածներ եւ ճառեր». Երեւան, 1950. էջ 38:

ցաւ կառավարութեան փոփոխութիւն, և ինձ վիճակուեց ցմրուր ըմպել դառնութեան բաժակը։ Իբրեւ վարչապետ և արտաքին գործերի նախարար, այնուհետեւ ե՛ս գործ ունեցայ Լեգրանի հետ և, ուրեմն, կարող եմ խօսել, որպէս դէպքերի անմիջական մասնակից։ Հայ ժողովրդի և պատմութեան դատաստանի առաջ ես պատասխանատու եմ իմ արձանագրած իւրաքանչիւր բառի համար։

Պաշտօնի անցնելուց անմիջապէս յետոյ ես յարաբերութեան մէջ մտայ Լեգրանի հետ։ Կառավարութեան նպատակն էր սերտ բարեկամութիւն հաստատել Խորհրդ. Ռուսաստանի հետ և ապահովել նրա աջակցութիւնը։ Ամէնքի համար պարզ էր այն օրերին, որ Հայաստանը կամ Ռուսաստանի հետ պէտք է լինի, կամ պէտք է դառնայ Թուրքերի ձեռքին խաղալիք, եթէ չբնաջնջուի իսպառ։ Ես հարցը դրի յստակ ու վճռական կերպով — Ռուսաստանը կարո՞ղ է մեզ օգնել և, եթէ այո՛, ինչո՞վ և ի՞նչպէս։ Նոյնքան պարզ ու վճռական եղաւ և Լեգրանի պատասխանը։ Նա առաջարկեց յետ կանչել Խատիսեանի պատուիրակութիւնը Ալեքսանդրապոլից, մերժել Թուրքերի պահանջները և խորհրդային զօրք մտցնել Հայաստան։

Իմ հարցումին, թէ ի՞նչ երաշխաւորութիւն, որ մինչեւ խորհրդային զօրքերի տեղ հասնելը Թուրքերը չեն շարժուի Երեւանի վրայ ու նոր կոտորածներ առաջ չեն բերի, Լեգրանը պատասխանեց, թէ Թուրքերը այդպիսի քայլ չեն անի։

Ես ցոյց տուի Լեգրանին, որ մինչեւ որ ռուսները կարողանան չօշափելի ոյժ հասցնել Երեւան, առնուազն մէկ շաբաթ պիտի պահանջուի, մինչդեռ Թուրք բանակը կանգնած էր Արաքսի ափին, Մարգարայի կամուրջի մօտ, հազիւ 20-25 մղոնի վրայ Հայաստանի մայրաքաղաքից։ Եթէ կառավարութիւնը խզէ բանակցութիւնները, այդ պիտի նշանակէ պատերազմի վերսկսում. ի՞նչ ոյժ կարող է արգելել Թուրքերին Հայաստանի մնացած մասն էլ գր-

րաւելու: Խորհրդային իշխանութեան խօ՞սքը: Ի՞նչ երաշխիք, որ Թուրքերը կարեւորութիւն կը տան այդ խօսքին:

Մեզ ծանօթ էր բոլշեւիկեան զօրքերի քանակն ու որակը մեր հիւսիսային սահմանների մօտ: Նրանք ի վիճակի չէին պաշտպանելու Հայաստանը Թուրքերի ներխուժման դէպքում:

Փորձից գիտէինք նաեւ, որ Թուրքերը հաշուի չէին առնում բոլշեւիկեան սպառնալիքները:

Ա՛յն ժամանակուայ պայմաններում այս հարցերը խիստ ծանրակշիռ նշանակութիւն ունէին, իսկ այսօր արդէն գիտենք, որ բոլշեւիկները շատ աւելի մեծ կարեւորութիւն էին տալիս Թուրքերին, քան այս վերջինները՝ բոլշեւիկներին: Կասկած չկայ, որ բոլշեւիկները Հայաստանի պատճառով կռիւ չէին անի Թուրքերի հետ, եթէ այս վերջինները չանսային Լեգրանի խօսքին և նորից յարձակուէին Հայաստանի վրայ:

Լեգրանի խօսքերից պարզ էր և մի ուրիշ պարագայ. նրան հայ ժողովրդի ապահովութիւնից աւելի հետաքրքրում էր Հայաստանի խորհրդայնացման հարցը, բայց այդպիսի պահանջ դեռ չէր կարող դնել, որովհետեւ շատ լաւ տեսնում էր, որ հայ ժողովուրդը համակիր չէր Հայաստանի խորհրդայնացման:

Կառավարութիւնը նորից ու նորից պնդեց Խորհրդ. Ռուսաստանի դիւանագիտական արագ աջակցութեան վրայ: Եթէ, համոզում էի ես Լեգրանին, դուք վստահ էք, որ Թուրքերը խորհրդային իշխանութեան հակառակ քայլ չեն առնի, ուրեմն, ձեր խօսքն էլ բաւական պիտի լինի, որպէսզի Թուրքերը ծայրայեղ պահանջներ չդնեն Հայաստանին: Իսկ եթէ կարծում էք, որ ձեր խօսքին ականջ չեն դնի, նշանակում է մի քանի հարիւր ռուս զինուորների մուտքն էլ Հայաստանի սահմաններից ներս արգելք չի լինի Թուրքերին վերջնականապէս մաքրելու իրենց հաշիւը հայերի հետ, մանաւանդ որ Թուրքերի գլխաւոր

մեղադրանքը հայերի դէմ այն է, թէ նրանք գործիք են ռուսների ձեռքին: Ուրիշ խնդիր, եթէ ռուսները խոշոր բանակ ունենային Հայաստանի մօտ և պահանջուած վայրկեանին կարողանային բաւարար ուժ հասցնել, այն ժամանակ, հաւանական է, Թուրքերը չհամարձակուէին առաջ շարժուելու, բայց բոլշեւիկները այդպիսի բանակ չունէին մերձակայ վայրերում:

Խորհրդային զօրքեր մտցնելու, որ ասել է Հայաստանը խորհրդայնացնելու դէմ առաջ բերի և այլ կարգի առարկութիւններ: Խորհրդայնացման դէպքում Հայաստանը բոլորովին պիտի կտրուէր Եւրոպայից ու Ամերիկայից և պիտի զրկուէր այն պարէնից, որ ստանում էր այնտեղից: Դա պիտի նշանակէր սովամահութիւն հայ ժողովրդի համար, որովհետեւ Ռուսաստանը ինքն էլ սովահար՝ ի վիճակի չէր Հայաստանին ուտելիք հասցնելու:

Երկրորդ՝ Հայաստանի խորհրդայնացումը մահացու հարուած պիտի հասցնէր՝ Հայկական Խնդրին և Հայաստանին տրուած բոլոր միջազգային յանձնառութիւններին ու դաշնագրերին: Մինչդեռ, եթէ Հայաստանը պահուէր անկախ, թէ՛ դրսի աշխարհից չէր կտրուի, թէ՛ կը մնար Հայկական Հարցի իրաւատէր: Խորհրդ. Ռուսաստանին հարկաւոր է Հայաստանի բարեկամութի՞ւնը — մենք այդ կ'ապահովենք: Բոլշեւիկների համար անհրաժեշտ են Հայաստանի ճանապարհնե՞րը — մենք կը տանք:

Լեգրանը պատասխանեց. Հայերը ընդմիշտ պէտք է հրաժարուեն Եւրոպայից ու Ամերիկայից և խաչ քաշեն Սեւրի դաշնագրի վրայ: Հայերը իրենց յոյսը պէտք է կապեն միայն համաշխարհային յեղափոխութեան և բանուորա-գիւղացիական Ռուսաստանի հետ: Ծիծաղելի է խօսել ինչ որ ալիւրի մասին, որ ամերիկեան բանկիրները ու պատուելիները, իբրեւ ողորմութիւն, շպրտում են հայերի առջեւ. ի՞նչ բան է Ռուսաստանի համար Կուբանից մի քանի միլիոն փութ ալիւր հասցնելը Հայաստան:

Լեգրանը առարկեց և Հայաստանի սահմանների վրայ ռուս զօրքեր կենտրոնացնելու դէմ. այդ կարող էր դըժգոհութիւններ առաջացնել Թուրքերի կողմից և առիթ դառնալ անբաղձալի հետևանքների։ Թուրքերին պէտք է դնել կատարուած փաստի առջև և մինչև Ալեքսանդրապօլ գրաւել ռուսական զօրքերով։

Բանակցութիւնները դրական արդիւնք չտուին. կառավարութիւնը վախենում էր, որ եթէ կարմիր բանակը Հայաստան մտնէր հիւսիսից, Թուրքերը առաջ կը շարժուէին հարաւից և ռուսների հասնելուց շատ առաջ կը գրաւէին Երևանը։ Այդ պատճառով, կառավարութիւնը աշխատում էր Ալեքսանդրապօլի բանակցութիւնները չըխզել և հաշտութեան հարցը հասցնել իր տրամաբանական վախճանին։ Բայց այդ էլ հեշտութեամբ լուծուելիք խընդիրներից չէր. Թուրքերը անզիջող էին և խօսում էին վերջնագրերով։

Մինչ բանակցութիւնները Լեգրանի հետ շարունակւում էին, վերջինս, նոյեմբ. 29-ին, վերջնագրի ձևով, կառավարութեան արաւ հետևեալ յայտարարութիւնը.— «Ռուսաստանի Կոմունիստ. Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէն որոշել է Հայաստանում մտցնել խորհրդային կարգեր։ Հայաստանի Յեղկոմը արդէն ոտք է դրել Հայաստանի հողի վրայ. Դանդաղելը յղի է ծանր հետևանքներով։ Ես ուզում եմ իմանալ՝ ի՞նչ է լինելու ձեր դիրքը»։ Եւ յաջորդ առաւօտ ներկայացրեց Հայաստանի խորհրդայնացման գրաւոր պահանջ։

Եւ յիրաւի, ինչպէս յետոյ իմացանք, նոյեմբ. 29 ին Բագուից մի քանի հայ բոլշեւիկներ մտել էին Իջեւան գիւղը, Ազրբէջանի սահմանի վրայ, և Հայաստանի խորհրդայնացման յայտարարութիւն արել։

Այսպէս, ուրեմն, մի կողմից Թուրքերն էին սպառնալիքով և վերջնագրերով խօսում, միւս կողմից՝ հայ և ռուս բոլշեւիկները։ Հայաստանը ընկել էր երկու կրակի միջեւ։ Կառավարութեան ուրիշ ելք չէր մնում, բայց ե-

թէ տեղի տալ և հասկացողութեան գալ Խորհրդ. Ռուսաստանի ներկայացուցչի հետ։ Հայաստանի խորհրդայնացումը այլևս դառնում էր անխուսափելի։

Նոյեմբ. 30-ին սկսուեցին բանակցութիւնները կառավարութեան ներկայացուցիչ Դրոյի ու Հ. Տէրտէրեանի և Լեգրանի միջև, որոնք տևեցին երկու օր։

Եւ մինչ Երևանում տեղի էին ունենում ողբերգական բանակցութիւնները, անդին Բագուն ցնծութեամբ տօնում էր իր դաւադրութեան յաղթանակը։

Դեկտեմբեր 1-ին, երբ Հայաստանը դեռ խորհրդայնացած չէր, տեղի ունեցաւ Սովետների հանդիսաւոր նիստը «Հայաստանի սովետացման առթիւ»։ 11.րդ բանակի ռազմակոմիսար Օրջոնիկիձէն վերամբարձ հռետորութեամբ սկսեց իր ճառը. «Ընկերներ, դժուար թէ որ և է մի տեղ կարելի՛ է գտնել երջանիկ մի սրահ, որքան այս սրահը... Այսօր, հէնց այս սրահում, Բագուի պրոլետարիատը ողջունում է հայկական սովետական ռեսպուբլիկայի ծնունդը...»։

Նոյն նիստում Ազրբէջանի Յեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովը կարդաց Յեղկոմի դէկլարացիան. որով հանդիսաւոր կերպով յայտարարւում էր, որ Սովետ. Ազրբէջանը զիջում է եղբայրական Հայաստանին Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը։

Օրջոնիկիձէն այդ մասին էլ բարձր հռետորութիւն արաւ.

«Ընկերներ, ասաց նա, շատ բնորոշ է ընկ. Նարիմանովի ելոյթը. նա մեզ կարդաց իր դէկլարացիան։ Զանգեզուր, Նախիջևան և Ղարաբաղ անունները այդ խօսքերի բովանդակութեանն անծանօթ ռուս մարդու ականջին բոլորովին ոչինչ չեն ասում։ Ինչ որ Զանգեզո՛ւր — անբերրի լեռներ. ո՛չ հաց կայ, ոչ ջուր։ Այնտեղ ոչինչ չկայ։ Ինչ որ Նախիջևան — ճահիճ, մալարիա և ուրիշ ոչինչ։ Ինչ որ Լեռնային Ղարաբաղ։ Ի՞նչ կայ այդ Ղարաբաղում։ Ոչի՛նչ չկայ։ Եւ ահա ընկ. Նարիմանովն ասում

է. «Դրանք ձե՛զ վերցրէք։ Այդ անբերրի հողերը վերցրէք Հայաստանի համար»։ Կարծես թէ սովետական Ազրբէջանը ազատւում է մի աւելորդ բեռից։ Բայց ո՛չ։ Այդ գաւառներում, այդ անբերրի հողերի մէջն է կայանում այստեղ, Անդրկովկասում, այսպէս կոչուած, հայ-մուսուլմանական հարցի հանգոյցը»։

Եւ յիշելով ցարական շրջանի հայ-մուսուլմանական արիւնոտ բախումները՝ Օրջոնիկիձէն ոգեւորութեամբ ասում է.

«Եւ ահա այսօր՝ Ազրբէջանական ռեսպուբլիկայի ղեկավարը հանդէս է գալիս ու ասում. «Այդ սարսափելի հարցն այլեւս գոյութիւն չունի...» Այստեղ կարդացուած այս ակտը մեծագոյն կարեւորութիւն ունեցող ակտ է. սա պատմական մի ակտ է, որը մարդկութեան պատմութեան մէջ իր օրինակը չունի» (*)։

Վերջը յայտնի եղաւ, որ թէ Նարիմանովի, թէ Օրջոնիկիձէի ճառաբանութիւնները անկեղծ չէին, այլ նպատակ ունէին խաբել հայ բոլշեւիկներին և հանրային կարծիքը. Ղարաբաղն ու Նախիջեւանը մնացին և մինչեւ այսօր էլ մնում են Ազրբէջանի տիրապետութեան տակ։ Մի խաբէութիւն, որ «մարդկային պատմութեան մէջ իր օրինակը չունի...»։

Այդ նոյն պատմական անօրինակ դէպքի մասին իր հիացումը յայտնեց և Ստալինը. «Դեկտեմբեր մէկին, գրում էր նա «Պրաւդա»յի դեկտ. 4 համարում. Խորհրդ. Ազրբէջանը յօժար կամքով հրաժարւում է վիճելի գաւառներից և յայտարարում է Զանգեզուրի, Նախիջեւանի և Լեռնային Ղարաբաղի յանձնումը Խորհրդ. Հայաստանին.. Դարաւոր թշնամութիւնը Հայաստանի և նրան շրջապատող մուսուլմանների միջեւ վճռուեց մէկ հարուածով՝ եղբայրական համերաշխութեան հաստատումով

(*) Գ. Կ. Օրջոնիկիձէ. «Ընտիր յօդուածներ եւ ճառեր», Երեւան, 1950, էջ 32-33։

աշխատաւոր Հայաստանի, Ազրբէջանի և Թուրքիոյ միջեւ» (*)։

Դեկտ. 2-ին ստորագրուեց հետեւեալ համաձայնագիրը Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչների և Լեգրանի միջեւ։

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. ԼԻԱԶՕՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

«2 դեկտ. 1920 թ., մի կողմից Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. լիազօր ներկայացուցիչ ընկ. Լեգրանը Ռ. կ. կ. կ. կ.-ի լիազօրութեամբ, ի դիմաց Ռուսաստանի Խորհրդային կառավարութեան, և միւս կողմից ընկերներ Դրօն և Տէրտէրեանը ի դիմաց Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան՝ կնքեցին համաձայնութիւն հետեւեալի մասին.—

«1.— Հայաստանը յայտարարւում է անկախ սոցիալիստական Խորհրդային հանրապետութիւն։

«2.— Մինչեւ Հայաստանի խորհուրդների համագումարի հրաւիրումը, կազմւում է ժամանակաւոր Ռազմա-Յեղափոխական Կոմիտէ, որին կ'անցնի բովանդակ իշխանութիւնը Հայաստանում։

«3.— Ռուսաստանի Խորհրդային կառավարութիւնը ընդունում է, որ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան հողերի մէջ անվիճելի կերպով մտնում են՝ Երեւանի նահանգը իր բոլոր գաւառներով, Կարսի նահանգի մի մասը, որ զինուորական տեսակէտից կ'ապահովէ երկաթուղու տիրապետութիւնը՝ Ջաջուռ կայարանից Արաքս կայարանը, Գանձակ նահանգի Զանգեզուր գաւառը և Ղազախ գաւառի մի մասը օգոստոս 10 ի

(*) Ի. Ստալին. «Երկեր» Մոսկուա, հատոր 4, էջ 414։

համաձայնութեան սահմաններում, և Թիֆլիս նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետութեան տակ էին գտնւում մինչև 1920 թ. սեպտ. 28։

«4.— Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկւում պատասխանատուութեան այն գործերի համար, որ կատարել է բանակի շարքերում մինչև Հայաստանում խորհրդային իշխանութեան յայտարարումը։

«5.— Դաշնակցութեան և ուրիշ սոցիալիստական կուսակցութիւնների (Ս. Ց., Ս. Դ.,) անդամները ոչ մի հալածանքի չպիտի ենթարկուեն կուսակցութեան պատկանելու և կոմունիստական կուսակցութեան դէմ մղուած կռիւներին մասնակցելու ու Խորհրդային Հայաստանի յայտարարութիւնից առաջ կատարած գործերի համար։

«6.— Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի մէջ մտնում են հինգ անդամներ կոմունիստական կուսակցութեան կողմից նշանակուած և երկու անգամ ձախ դաշնակցականների խմբակից՝ համաձայնելով կոմունիստական կուսակցութեան հետ։

«7.— Ռուսաստանի Խորհրդային կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում անմիջապէս կենտրոնացնելու Հայաստանի Սոցիալիստական Խորհրդ. Հանրապետութեան պաշտպանութեան համար անհրաժեշտ զինուորական ուժեր։

«8.— Սոյն համաձայնագիրը ստորագրուելուց յետոյ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը քաշւում է իշխանութիւնից։ Իշխանութիւնը ժամանակաւոր կերպով, մինչև Յեղափոխական Կոմիտէի գալը, անցնում է զօրահրամանատարութեան, որի գլուխն է կանգնում Դրօն։ Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. կողմից Հայաստանի զօրահրամանատարութեան կից կոմիսար է նշանակւում ընկ. Սիլինը։

«Պատրաստուած է երկու օրինակ։

«Ռ. Ս. Ֆ. Ս. Հ., լիազօր ներկայացուցիչ՝ ԼԵԳՐԱՆ։

«Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան լիազօրութեամբ՝ ԴՐՕ և ՏԷՐՏԷՐԵԱՆ» (*)։

Լեգրանի և կառավարութեան միջև համաձայնութիւն կայացաւ, որ դեկտ. 2-ի գիշերուայ ժամը 12-ին իշխանութիւնը յանձնուի զին. նախարար Դրոյին և սա, խորհրդական ունենալով Լեգրանի ներկայացուցիչ Սիլինին, կառավարէ երկիրը, մինչև Յեղկոմի ժամանումը Ադրբէջանից։ Նոյն իմաստով խմբագրուեց ու հրատարակութեան տրուեց նաև հետևեալ «ակտը», որ հեռագրուեց գաւառական իշխանութիւններին ու զօրամասերի պետերին և փակցուեց Երևանի պատերին։

Ա Կ Տ

«Ի նկատի ունենալով արտաքին հանգամանքների շընորհիւ երկրում ստեղծուած կացութիւնը՝ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը իր 1920 թուի դեկտեմբեր 2-ի նիստում որոշեց՝ հրաժարուել իշխանութիւնից և յանձնել զինուորական և քաղաքացիական բովանդակ իշխանութիւնը զօրաբանակի ընդհանուր հրամանատարին, որպիսի պաշտօնում նշանակել Ռազմական նախարար Դրոյին։

«Նախարարների խորհրդի Նախագահ Ս. ՎՐԱՑԵԱՆ.

«Նախարարներ՝ Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Ա. ԽՈՆԴԿԱՐԵԱՆ, Հ. ՏԷՐՏԷՐԵԱՆ, Դ. ԿԱՆԱՅԵԱՆ:

«Իսկականի հետ ճիշդ է՝

Դիւանապետ՝ Հ. ԹՈՒՄԱՆԵԱՆ»

Բայց այս հարցի մէկ մասն էր միայն. կար և պա-

(*) «Ժողովածու Գործող Դաշնագրերի». ռուսերէն, 3-րդ պրակ, Մոսկուա՝ 1922 թիւ 79, էջ 14-15. հրատ. Ռուսաստանի Արտաքին Գործավարութեան:

տերազմի խնդիրը։ Թուրքերը ծանօթ էին Երեւանի դէպքերին և չտապում էին կանխել։

Նոյեմբ. 30-ի երեկոյեան Քեազիմ Կարաբէքիր փաշան Հայաստանի պատուիրակութեան ներկայացրեց Թըրքական պայմանները և յաջորդ առաւօտեան վերջնագրի ձեւով պահանջեց այդ պայմանների ընդունումը, հակառակ պարագային սպառնալով վերսկսել պատերազմական գործողութիւնները։

Թրքական պահանջները քննութեան առնուեցին Նոյեմբեր 30-ի գիշերը, յատուկ մի ժողովում, որին մասնակցում էին Խորհրդարանի Դիւանը, երեսփոխաններ, կառավարութեան անդամներ, Հ. Յ. Դ. Բիւրօն իր ամբողջ կազմով և մի շարք անհատ գործիչներ ու զինուորականներ։

Հաշտութեան խնդրից առաջ արդէն որոշուած էր ընդունել Լեգրանի վերջնագիրը, այժմ պէտք էր գտնել Թրքական դաժան պայմաններից խուսափելու միջոցը։ Ձեւականօրէն այդ միջոցը արդէն գտնուած էր. որոշուած էր իշխանութիւնը զիջել բոլշեւիկներին, հետ էր դաշնագրի ստորագրութիւնն էլ թողնել նրանց։ Բայց արդեօք ա՞յդ կը լինէր լաւագոյն ելքը։ Անձնապէս մեզ համար, ի հարկէ, այդ կը լինէր բարիք. պատմութեան առաջ մենք ազատ կը լինէինք Ալեքսանդրապոլի «խայտառակ» դաշնագիրը ստորագրելու պատասխանատւութիւնից, բայց դրանից հայ ժողովուրդը կը շահէ՞ր։

Այս անողոք հարցը ցցուած էր Նոյեմբ. 30-ի գիշերուայ ժողովին մասնակցողների առջեւ։ Եթէ մերժէինք դաշնագրի ստորագրութիւնը, Թուրքերը Հայաստանի մնացած մասն էլ չէի՞ն կործանի։ Բոլշեւիկները կը կարողանայի՞ն ազդել Թուրքերի վրայ, ընդունակ կը լինէի՞ն փրկելու երկիրը վերահաս վտանգից։

Լսուեցաւ զինուորական մասնագէտների կարծիքը։ Պատասխանը եղաւ բացասական. եթէ մերժէինք Քեազիմ Կարաբէքիրի պահանջը, Թուրք բանակը, ամենայն հաւա-

նականութեամբ, առաջ պիտի շարժուէր և մինչեւ ռուս զօրքերի հասնելը Էջմիածինն ու Երեւանն էլ պիտի գրաւէին, յարակից շրջաններով միասին։ Հետագային ռուսները կարող էին հեռացնել Թուրքերին, բայց սրանք արդէն աւերն ու կոտորածը գործած կը լինէին։

Նոյն էր և գրեթէ բոլոր ժողովականների կարծիքը։ Յանուն հայ ժողովրդի փրկութեան, պէտք էր ստանձնել պատասխանատուութիւնը պատմութեան առջեւ և ստորագրել դաշնագիրը։ Եթէ բոլշեւիկները, իրօք, այնքան ազդեցիկ էին Թուրքերի առջեւ, նրանց համար դժուար չէր լինի մերժել «Դաշնակցների ստորագրութիւնը և Հայաստանի համար աւելի նպաստաւոր դաշնագիր կընքել։ Եթէ բոլշեւիկները այդ կարողութիւնը պիտի չունենան վաղը, նշանակում է այսօր էլ նրանց խոստումները անարժէք էին։

Այս նկատումներով և այս գիտակցութեամբ ժողովը որոշեց լիազօրել Ալեքսանդրապոլի պատուիրակութեան ընդունելու Թրքական պայմանները և ստորագրելու հաշտութեան դաշնագիրը։

Կրկնում եմ՝ ձեւականօրէն մենք ամէն իրաւունք և հնարաւորութիւն ունէինք խուսափելու և այդ անախորժ պարտականութիւնը ձգելու բոլշեւիկներին։ Մեր կողմից այդ կը լինէր ճարպիկ մի խաղ, որ ծանր դրութեան մէջ պիտի դնէր հայ բոլշեւիկներին, որոնք, ինչպէս քիչ վերջը կը տեսնենք, Թուրքերի աչքին աւելի արժէք չունէին, քան դաշնակցականները։ Կասկած չկայ, որ հայ բոլշեւիկներն էլ, այս անգամ Մոսկուայի ճնշումով, ստիպուած պիտի լինէին ստորագրել Ալեքսանդրապոլի դաշնագիրը, ինչպէս մօտ մի տարի վերջը ստորագրեցին Կարսի աւելի խայտառակ դաշնագիրը։ Դրանով մենք անհատապէս կամ կուսակցականօրէն, թերեւս, ազատ կը լինէինք հակառակորդների ամբաստանութիւններից, եթէ, ի հարկէ, այս անգամ էլ մեզ չամբաստանէին, թէ քաղաքացիական քաջութիւն չունեցանք պատասխանատու-

ութիւն ստանձնելու և դաշնագիրը չստորագրելով՝ նոր աղէտների պատճառ եղանք,— բայց ազգային տեսակէտով Ալեքսանդրապոլի դաշնագիրը պատմական անհրաժեշտութիւն էր, դժբախտ, բայց անխուսափելի։

Դեկտ. 2-ի գիշերը ստորագրուեց հայ-թրքական հաշտութեան դաշնագիրը, որի ամփոփումը հետեւեալն է։ Այս ամփոփումը արել է Պատուիրակութեան նախագահ Ա. Խատիսեանը։ Դաշնագրի բնագիրը, որ ժամանակին յանձնուել է Ցեղկոմի նախագահ Ս. Կասեանին, չէ հրատարակուած։

«1.— Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովը պարտաւորւում է ճանաչել Հայաստանի անկախութիւնը հետեւեալ սահմաններում.— Ախալքալաքի գաւառի հարաւային մասից Ուչ-Թափալար սարը դէպի հարաւ մինչեւ Բաշ Շորագեալ, մինչեւ Արփաչայ — Արփաչայի հոսանքը մինչեւ նրա խառնուելը Արաքսի հետ, Արաքս գետի հոսանքը մինչեւ Արաքս կայարանը, այստեղից դէպի Մարտիրոս մինչեւ Զայքէնտ գիւղը։

«2.— Կարսի նահանգը և Սուրմալուն համարւում են վիճելի, մինչեւ երեք տարի, որի ընթացքում հայոց կառավարութիւնը կարող է յայտարարել հանրաքուէ՝ որոշելու համար վերջնական բախտը այդ նահանգների։ Հանրաքուէի ժամանակ պէտք է մտնէ այնտեղ խառն հայ-թրքական ժանդարմէրիա։

«3.— Հայերը հրաժարւում են Սեւրի դաշնագրից. յետ են կանչում բոլոր այն կոմիտէները և ներկայացուցիչները, որոնք գոյութիւն ունին Եւրոպայում, չեն պահում Հայաստանում Դաշնակիցների ո՛չ մի ներկայացուցիչ, մինչեւ որ Թուրքիան հաշտութեան դաշն կնքէ նրանց հետ։

«4.— Հայաստանը իրաւունք ունի պահելու զօրաբանակ ոչ աւելի քան 1.500 սուին և դրան համապատասխան քանակով սպաներ, նաեւ անհրաժեշտ քանակութեամբ ժանդարմէրիա։ Երկիրը պաշտպանելու համար

կարող են լինել ամրոցներ, որոնք կարող են զինուել միայն պաշտպանողական ծանր թնդանօթներով։ Վերացւում է պարտադիր զինուորութիւնը։

«5.— Հայաստանի վրայ յարձակման դէպքում Թուրքիան պաշտպանում է հայոց կառավարութեան պահանջմամբ և աջակցում է Հայաստանին գործով։

«6.— Թուրքիան և Հայաստանը փոխադարձաբար օգտւում են ազատ դրանզիտից, ինչպէս երկաթուղիներով, այնպէս և բոլոր ճանապարհներով։

«7.— Երկու կողմերն էլ չեն վճարում պատերազմական ծախսեր։

«8.— Պայմանները կնքուելուց յետոյ, սկսում են աշխատել երկաթուղիները, վերադարձնում են քաղաքացիական մասի գերիները, իսկ երբ սկսւում են աշխատանքները Հայաստանի և Թուրքիայի միջեւ սահմանները որոշելու համար, վերադարձնում են բոլոր ռազմագերիները։

«9.— Հայաստանի կապած բոլոր պայմանները Թուրքիայի դէմ համարւում են անվաւեր։

«10.— Բոլոր գաղթականները կարող են վերադառնալ իրենց տեղերը մի տարուայ ընթացքում՝ օգտուելով բոլոր քաղաքացիական իրաւունքներից, բացի այն գաղթականներից, որոնք զինուած դիմադրութիւն են ցոյց տուել իրենց կառավարութեան դէմ։

«11.— Հայերը Թուրքիայում և թուրքերը Հայաստանում վայելում են հաւասար քաղաքացիական իրաւունքներ։

«12.— Դիւանագիտական, ինչպէս և հիւպատոսական յարաբերութիւնները, ինչպէս և քաղաքացիական ազատ երթեւեկութիւնը երկու երկիրների միջեւ, սկսւում է դաշնագիրը ստորագրուելուց յետոյ, որից յետոյ վերըսկըսւում են և փոստային և հեռագրական հաղորդակցութիւնները Թուրքիայի և Հայաստանի միջեւ։

«13.— Շարուրը և Նախիջեւանը ժամանակաւորապէս

օժտուած են ինքնավարութեամբ՝ գտնուելով Թուրքիայի հովանաւորութեան տակ, մինչեւ որ որոշուի նրանց բախտը։

«14.— Այս դաշնագիրը պէտք է ենթարկուի վաւերացման Հայաստանի Խորհրդարանի և Ազգ. Մեծ Ժողովի կողմից մի ամսուան ընթացքում։

«15.— Թուրքիան պարտաւորւում է Հայաստանի գրաւուած հողամասերը դատարկել, երբ Հայաստանը կը սկսէ զօրացրում, և վերջնականապէս կը դատարկէ, երբ հայկական զօրքի թիւը կը հասնի պայմաններում որոշուած չափին»։

Տարիներ յետոյ, Ազգ. Ժողովի մէջ արտասանած իր նշանաւոր ճառում, Մուստաֆա Քեմալը այսպէս արտայայտուեց այդ դաշնագրի մասին. — «Հաշտութեան բանակցութիւնները, որոնք սկսուել էին նոյեմբ. 26-ին, վերջացան դեկտ. 2-ին, և դեկտ. 2-ի լոյս 3-ի գիշերը ստորագրուեց Գիւմրիի դաշնագիրը։ Պարոններ, Գիւմրիի դաշնագիրը առաջին դաշնագիրն է, որ ստորագրել է ազգային կառավարութիւնը... Արեւելքում առաջ եկած կարեւոր փոփոխութիւնների հետեւանքով, այս դաշնագիրը փոխարինուեց հետագային կնքուած դաշնագրով, այսինքն՝ 1921 թ. մարտ 16 Մոսկուայի և 1921 թ. հոկտ. 13 Կարսի դաշնագրերով» (*)։

Ճակատագրի ի՜նչ հեգնանք. 1918 թ. յունիս 4-ին, Բաթումի դաշնագրով Թուրքիան եղաւ առաջին պետութիւնը, որ ճանաչեց Հայաստանի անկախութիւնը։ Այժմ Հայաստանը առաջին պետութիւնն էր, որ ճանաչում էր քեմալական Թուրքիայի անկախութիւնը..

Ալեքսանդրապոլի դաշնագրի մասին խօսելիս անհրաժեշտ ենք համարում վեր առնել և հետեւեալ կէտը.— Ի՞նչ իրաւական հիմք ունի այդ դաշնագիրը։ Բոլշեւիկ-

(*) «Discours du Chazi Moustafa Kemal», 1929, Leipsig, p. p. 390 92:

ները և ուրիշներ ասում են, որ Հայաստանի կառավարութիւնը, դեկտ. 2-ին, Լեգրանի հետ Հայաստանի խորհրդայնացման պայմանը ստորագրելուց յետոյ, այլեւս իրաւունք չունէր օտար պետութիւնների հետ դաշնագիրներ ստորագրելու։ Սրան կարելի է առարկել այն փաստով, որ, ըստ Լեգրանի հետ կնքուած պայմանի, իշխանութեան փոխանցումը տեղի պիտի ունենար դեկտ. 2-ի գիշերը և, ուրեմն, մինչեւ այդ՝ Հայաստանի կառավարութիւնը սահմանափակուած չէր իր իրաւունքների մէջ։ Դաշնագիր ստորագրելու լիազօրութիւնը Խատիսեանի պատուիրակութեան՝ կառավարութիւնը տուել էր դեկտ. 1-ին, հետեւաբար, միջազգային օրէնքի և փաստական կացութեան տեսակէտով՝ Հայաստանի կառավարութեան ընթացքը հակաօրինական հանգամանք չունէր։

Միւս կողմից, ինչպէս ասում է Մուստաֆա Քեմալը — «դեկտ. 2-ի լոյս 3-ի գիշերը» — և ինչպէս վկայում է Ա. Խատիսեանը, դաշնագիրը ստորագրուել է դեկտ. 2-ի գիշերուայ ժամը 12-ից յետոյ։ Արդեօ՞ք այս պարագան բաւարար հիմք է մերժելու համար դաշնագրի օրինականութիւնը։ Այս առթիւ էլ կարելի է դիտել տալ, որ Հայաստանի կառավարութեան հրաժարումից յետոյ, եկող նոր իշխանութիւնը — Դրօ և Սիլին — տեղեակ էր, որ դաշնագիրը պիտի ստորագրուի և կարող էր արգելել, բայց չի արգելել։ Դեկտ. 2-ի երեկոյեան հետեւեալ խօսակցութիւնն է տեղի ունենում Ալեքսանդրապոլի պատուիրակութեան նախագահ Ա. Խատիսեանի և Հայաստանի նոր իշխանութեան ներկայացուցիչ Դրոյի միջեւ.—«Երեկոյեան ժամը 6-ին, պատմում է Խատիսեանը, ինձ հրաւիրեց ուղիղ հեռագրաթելի մօտ Դրօն, որ ըսաւ հետեւեալը.—

«Յեղափոխական կառավարութեան անունից յայտնում եմ ձեզ, որ դուք ազատ էք ստորագրել կամ ոչ»։

«Լաւ գիտակցելով դաշնագիրը ստորագրելու կամ մերժելու ամբողջ պատասխանատուութիւնը, ես երկրորդ

անգամ հարցուցի. «Արդեօք կառավարութիւնը ստորագրելո՞ւ կողմն է, թէ մերժելու։ Մենք սպասում ենք որոշ և պարզ հրահանգների»։

«Դրօն պատասխանեց. «Ես ձեզ ասացի արդէն։ Գործեցէ՛ք համաձայն ձեր հասկացողութեան։ Ես խօսում եմ ընկեր Սիլինի և իմ անունից»։

«Սիլինը բոլշեւիկներու ներկայացուցիչն էր» (*)։

Այստեղից պարզ երեւում է, որ ոչ միայն Դրօն, խորհրդային իշխանութեան ներկայացուցիչն էլ առարկութիւն չունէր Ալեքսանդրապոլի դաշնագիրը ստորագրելու դէմ և, բնականաբար, Հայաստանի այն ժամանակուայ պայմաններում չէր էլ կարող ունենալ։

Մինչեւ այստեղ, թէ՛ կառավարութեան և թէ՛ Պատուիրակութեան արածը, իրաւական տեսակէտից, օրինական էր։ Բայց դաշնագրի մէջ կար իրաւական մի կարեւոր պայման։ Ստորագրութիւնից յետոյ, մէկ ամսուայ ընթացքում, դաշնագիրը պէտք է վաւերացուէր Հայաստանի Խորհրդարանի և Թուրքիոյ Ազգ. Մեծ Ժողովի կողմից։ Այդ վաւերացումը տեղի չունեցաւ, հետեւաբար, և դաշնագիրը իր օրինական հանգամանքը կորցրեց։ Միակ այս փաստը բաւական էր, որպէսզի Հայաստանի Ցեղկոմը չճանաչէր Ալեքսանդրապոլի դաշնագիրը, եթէ իսկապէս բոլշեւիկները ուզում էին Հայաստանի համար աւելի նպաստաւոր պայմաններ ապահովել։ Բայց, ինչպէս վերը տեսանք, բոլշեւիկները չուզեցին կամ չկարողացան օգտուել այդ փաստից։

(*) Ա. Խատիսեան՝ «Հայ. Հանր. Ծագումն ու Զարգացումը», էջ 270:

IX

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՑԵՂԿՈՄԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ

Այսպէս, ուրեմն, ո՛չ հայ ժողովրդի յօժար կամքով, այլ արտաքին ուժերի ճնշման տակ, 1920 թ. դեկտ. 2-ին, Հայաստանում տեղի ունեցաւ վարչաձեւի փոփոխութիւն. ժողովրդավար իրաւակարգի տեղը բռնեց բռնատիրական կարգը. խորհրդարանական կառավարութեան յաջորդեց Հայաստանի Ցեղկոմի միահեծան տիրակալութիւնը։

Ի՞նչ էր Հայաստանի ժողովրդի վերաբերումը դէպի նոր վարչաձեւն ու իշխանութիւնը։

Մայիսեան շարժումներին և հայ-թրքական պատերազմի առաջին օրերին հայ ժողովուրդը, իր բոլոր խաւերով, երեւան բերեց միահամուռ և վճռական կամք պաշտպանելու հայրենիքի անկախութիւնը՝ հիւսիսից և հարաւից սպառնացող վտանգի դէմ։ Անհաշիւ զոհերի և արեան գնով ձեռք բերուած անկախութեան գաղափարը այլեւս խորունկ արմատներ էր ձգել, սակաւ բացառութեամբ, բոլոր հայերի գիտակցութեան մէջ։

Ռազմաճակատի անյաջողութիւնները, ինչպէս և Եւրոպայի ու Ամերիկայի Պիղատոսի դիրքը արիւնաքամ եղող Հայաստանի հանդէպ՝ աստիճանաբար բեկում առաջ բերին հայ ժողովրդի միաձոյլ կամքի մէջ. ո՞ւր ենք գնում այսպէս, ի՞նչ պիտի լինի գահավէժ դէպքերի վախճանը, ո՞վ կարող է մեզ օգնել։

«Խորհրդային Ռուսաստանը, պատասխանում էին հայ բոլշեւիկները։ Կարմիր բանակը, որ մօտեցել էր Հայաստանի սահմաններին, նա՛ է հայ ժողովրդի փրկիչը։ Թօթափեցէ՛ք ձեր ուսերից դաշնակների լուծը, բացէ՛ք երկ-

րի դռները ռուս զօրքի առջեւ, և ձեր դժբախտութիւնը վերջ կը գտնէ»։

Բոլշեւիկների խայծերը անծանօթ չէին. հայ ժողովուրդը պատրանքներ չունէր նրանց արժէքի մասին, բայց ուրիշ ի՞նչ ելք էր մնացել։ Թուրքը յառաջանում էր՝ իր հետ բերելով անխնայ աւեր ու կոտորած։ «Մեր մեծ դաշնակիցները», պղատոնական խօսքերից զատ, մատը մատին չէին խփում օգնելու համար իրենց ուժասպառ «փոքր դաշնակցին»։ Ո՞ւր էր փրկութեան լաստը։

Եւ հետզհետէ հայութեան սրտերում — վա՜յ պարտըւածներին — սկսեց նորից տեղ գրաւել «խաչապաշտ ռուսը»։ Նոյեմբերի կէսերին այլեւս նշմարելի էր շերտաւորումը պետական գործիչների և հասարակութեան զանազան խաւերի մտքերում։ Կառավարութիւնը իր մեծամասնութեամբ դեռ շարունակում էր կանգնած մնալ հակառուս գետնի վրայ։ Անհաշտ հակառակորդ էր խորհրդային Ռուսաստանին և հայ սոցիալ-դեմոկրատների փոքրաթիւ խմբակը՝ Բաշխի Իշխանեանի և Դաւիթ Անանունի գլխաւորութեամբ։ Հայ սոցիալիստ-յեղափոխականների զգացումները, դէպ բոլշեւիկները մնալով հանդերձ բացասական՝ ռուսն ու Ռուսաստանը քաղաքական դրական գործօն էին նրանց աչքում։ Հայ ժողովրդական կուսակցութիւնը, քաղքենիների այդ անջիղ կազմակերպութիւնը, բերանի մէկ կողմով անկախութիւն էր հոլովում, միւս կողմով ռուսասիրութիւն քարոզում։ Մեզ այսօր հակաբոլշեւիկութեան համար դատապարտող ռամկավարները, խորհրդային Ռուսաստանը նկատում էին Հայաստանի և հայ դատի մահացու թշնամի։

Անկեղծ պէտք է լինել ասելու համար նաեւ, որ կառավարական կուսակցութեան շարքերում էլ վարանում ու շփոթ էր տիրում։ Անկախութեան շուրջ տատանում չկար, բայց ստեղծուած կացութիւնից ելք գտնելու համար կարծիքները տարբերւում էին։ Ոմանք պնդում էին, թէ պէտք է շարունակել անհաշտ թշնամական դիրքը դէ-

պի Ռուսաստանը, առանց սակայն կարողանալու ցոյց տալ, թէ ի՞նչ պէտք է անել վերջնական կործանումից խուսափելու համար։ Ուրիշներ անհրաժեշտ էին համարում անմիջապէս «լեզու գտնել» խորհրդ. Ռուսաստանի հետ։ Իսկ շարքայինները տատանւում էին յոյսի և վհատութեան միջեւ։

Անկուսակցական զանգուածը, մանաւանդ, քաղքենի տարրը սկսում էր օրօրուել հին յուշերով Ռուսաստանի մասին. կը գայ ռուսը, կը բերէ հետը խաղաղութիւն, «հաց ու մանուֆակտուրա», կ՚առնէ երկիրը իր հովանու ներքեւ, և ռուս զինուորի սուինի պաշտպանութեան տակ գիւղացին, արհեստաւորն ու խանութպանը, հին տարիների օրինակով, հանգիստ կ՚ապրեն և դրամ կը վաստակեն։

Աւելի հեռուն չէին մտածում։ Ոչ էլ ծանօթ էին բոլշեւիզմի բնոյթին և Ռուսաստանի ներսերը կատարուող քաոսին։

«Խաչապաշտ ռուսն» էր եկողը, վերջապէս. հո նա էլ Թուրքի պէս մեզ չի կոտորի։ Բարի՛. Թող գայ։

Այսպէս էին, ընդհանուր առմամբ, Հայաստանում տիրող տրամադրութիւնները 1920 թ. Նոյեմբեր ամսին, Կարսի անկումից յետոյ։ Յոռետես թէ լաւատես՝ չէին կարող պատկերացնել իրական գալիքը։ Յոռետես թէ լաւատես՝ սպասում էին որ

1. Վերջ կը գտնէ երկրում պատերազմի առաջ բերած քայքայումը։

2. Վերջ կը գտնէ պատերազմը, և Թուրքը կը հեռանայ Հայաստանի սահմաններից։

3. Խորհրդ. Ռուսաստանի միջամտութեամբ բարեկամական յարաբերութիւններ կը հաստատուին Հայաստանի և Թուրքիայի միջեւ. Խորհրդ. Ռուսաստանի աջակցութեամբ, այս կամ այն ձեւով կը լուծուի Թրքահայկական հարցը։

4. Կը վերականգնուի երկրի ներքին անդորրութիւնը, և ժողովուրդը նորից հնարաւորութիւն կը ստանայ լծուելու խաղաղ ու շինարար աշխատանքի։

Այսպիսի պայմաններում և այս տրամադրութեամբ ու յոյսերով Հայաստանի Հանրապետութիւնը դարձաւ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւն 1920 թ. դեկտ. 2-ին։

Բոլշեւիկները առանց ծիծաղելի լինելու վախից, շարունակում են պնդել, թէ Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցաւ նոյեմբ. 29-ին՝ Հայաստանի գիւղացիութեան և բանւորութեան ապստամբութեան հետեւանքով։ Նոյմբ. 29-ին, հայ բոլշեւիկների մի փոքրաթիւ խմբակ, մտաւ Ադըրբէջանին սահմանակից Իջեւան գիւղը և ցրուեց Բագուից բերուած թռուցիկներ, որ յայտարարում էին, թէ «դաշնակների» կառավարութիւնը տապալուած է և տեղը բռնած է խորհրդային իշխանութիւնը, մինչ նոյն այդ միջոցին Խորհրդ. Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչը Երեւանում խաղաղ բանակցութիւններ էր վարում «դաշնակների» կառավարութեան հետ։ Երեք օր վերջը, դեկտ. 2-ին միայն, Հայաստանի կառավարութեան և խորհրդ. Ռուսաստանի միջեւ կնքուած համաձայնութեան հիման վրայ, Հայաստանը յայտարարուեց խորհրդային։ Ո՛չ մի գնդակ չարձակուեց այդ առթիւ, ո՛չ մի ապստամբութիւն տեղի չունեցաւ. ո՛չ մէկի քիթը չարիւնեց, իսկ Հայաստանի գիւղացիութիւնն ու բանւորութիւնը լուռ էր։ Լուռ էր ու կսկիծը սրտում՝ ողբում էր հայրենիքի կործանումը։ Եւ սպասում էր «խաչապաշտ ռուսին»։

Սպասում էին որ գայ ռուսը. բայց ռուսի փոխարէն Հայաստան մուտք գործեց Ցեղկոմը և հետը մի քանի հարիւր քոստ կարմիր բանակայիններ ու հայ բոլշեւիկներ՝ շատերը ծանօթ մայիսեան խռովութիւններից իրենց զանազան արարքներով — Ս. Կասեան, Ասք. Մռաւեան, Աւիս Նուրիջանեան, Աշ. Յովհաննիսեան, արիւնկզակ Աթարբէգեան և ուրիշներ։ Ես ասում եմ «մուտք գործեց», որովհետեւ Ցեղկոմը իսկապէս իրեն պահում էր իբրեւ յաղթական կերպով մուտք գործող մի ոյժ, որ իր ոտքերի տակ պատրաստ էր տրորելու պարտուած թշնամուն։

Հակառակ որ ժողովուրդը և նախկին իշխանութեան մարդիկ խիստ բարեացակամ վերաբերում ցոյց տուին և պատրաստակամութիւն յայտնեցին ամէն բանով աջակցելու նոր կառավարութեան, Ցեղկոմը առաջին օրից իսկ թշնամական դիրք բռնեց դէպի երկրի բոլոր ոչ-բոլշեւիկ տարրերը և իրեն պահում էր ճիշդ այնպէս, ինչպէս պահում է թշնամի երկիրը մտնող նուաճող մի բարբարոս ոյժ։

Լեգրանի հետ ստորագրուած դաշնագիրը յայտարարուեց չեղեալ։ Դեկտ. 6-ին կազմուեց և անմիջապէս գործի անցաւ Չեկան, ու սկսուեցին ձերբակալութիւններ։ Իրար ետեւից բանտարկուեցին նախկին վարչապետ Հ. Օհանջանեանը, նախկին նախարար Ռ. Զիլինգարեանը (Ռ. Դարբինեան), Խորհրդարանի անդամներ բժ. Յ. Տէր Դաւթեանը, Վահ. Նաւասարդեանը, Վ. Բաբայեանը, Գ. Վարշամեանը, Երեւանի Քաղաք. Խորհրդի անդամ Ա. Աստուածատրեանը, Սոցիալ-Դեմոկրատ պարագլուխ Բ. Իշխանեանը, խմբապետ Համազասպը և ուրիշներ։ Քիչ վերջը, բանտ նետուեցին Խորհրդարանի նախագահ Աւ. Սահակեանը, Առողջապահութեան և Գիւղատնտեսութեան նախարարների օգնականներ բժ. Յ. Տէր Միքայէլեանը և Թ. Տոչեանը, Խորհրդարանի անդամ բժ. Ա. Ղազարեանը և շատ ուրիշներ։

Դեկտեմբերի վերջերը արձանագրութեան ենթարկուեցին հայկական բանակի բոլոր սպաները և 70 ընտիր զինուորականներ անմիջապէս աքսորուեցին Բագու։

Յունուար 10-ին Ռուսաստան աքսորուեց Դրօն իր զինակից սպաների հետ։

Յունուար 24-ին Ռուսաստան աքսորուեցին և Հայաստանի բանակի մնացած սպաները, 1,200 հոգի, որոնց մէջ էին և սպարապետ Նազարբէգեանը, զօրավարներ Սիլիկեանը, Հախվէրտեանը, Ղամազեանը։ Զմրան անտանելի ցրտին ու ձիւնին, շրջապատուած ռուսական հրացանաւոր ու գնդացիրաւոր պահակներով, հետիոտն, ժա-

ղովրդի ընդհանուր սուգի մէջ, հայկական բանակի զինուորականները քշուեցին անծանօթ ուղղութեամբ։

Երկրի բոլոր կողմերում խուզարկութիւններ և անվերջ ձերբակալութիւններ էին տեղի ունենում։ Հայաստանի բանտերը բերնէ բերան լեցուեցին կալանաւորներով։ Բացի վերոյիշեալներից՝ բանտարկուեցին և Լեւոն Շանթը, Յովհ. Քաջազնունին, Նիկոլ Աղբալեանը, Երեւանի քաղաքագլուխ Մ. Մուսինեանը, Ս. Մելիք-Եոլչեանը և ուրիշ հարիւրաւորներ։ Բանտարկեալները պահւում էին անտանելի պայմաններում, գնդակահարութեան մշտական սպառնալիքի տակ։

Միևնոյն ժամանակ. Երևանում և ամբողջ երկրում կատարւում էին անկանոն և անհաշիւ բռնագրաւումներ։ Գրաւում էին ամէն ինչ — բնակարան, կարասիներ, հագուստ, ուտելիք, ձի, տաւար, հաւ ու հաւկիթ, մինչև իսկ թել ու ասեղ։ Ժողովուրդը Ռուսաստանից էր սպասում օգնութիւն, այժմ իրենից էր խլւում հացի վերջին պատառը և ուղարկւում Ռուսաստան։ Հայաստանից բռնանակիր ինքնաշարժերով «ընկեր Լենինին» կամ «կարմիր բանակին» նուէր էր ուղարկւում պետական պահեստների և ժողովրդից բռնագրաւուած պաշարը — սպիտակ ալիւր, խտացուած կաթ, կակաօ, շաքար, կօշիկի կաշի, հագուստեղէն ևայլն։

Թէ ինչ էր կատարւում այդ օրերին Հայաստանում, շատ ցայտուն կերպով նկարագրել է բոլշևիկ պատմաբան Բորեանը։ Աւելի լաւ է խօսքը տանք նրան։

«Յեղկոմը, ասում է նա, ձեռնարկեց անխնայ և վըճռական բռնագրաւումների, առանց խտրութեան և առանց դասակարգային սկզբունքի, առանց հաշուի առնելու գիւղացիութեան ընդհանուր տնտեսական դրութիւնը և նրա հոգեբանական վիճակը։ Բռնագրաւումը տեղի էր ունենում անկազմակերպ ձևով, ծրագրուած ու յեղափոխական-դասակարգային բնոյթ չունէր և կատարւում էր անհարկի բռնութիւններով։ Առանց կազմակերպուած ու կարգապահ մեքենայի, առանց նախնական քարոզչական պատրաստութեան և առանց հաշուի առնելու երկրի իւրայատուկ պայմանները, Յեղկոմը կարգախօս է ուղղում՝ բռնագրաւել և սեփականացնել պարէնը քաղաքներում մասնաւոր մարդկանցից և հացի պաշարը գիւղացիներից։ Անկարգ կերպով գրաււում ու պետականացւում էր ամէն ինչ — զինուորական հագուստներ, արհեստաւորների գործիքներ, մասնաւոր և ամէն տեսակ բրինձի ազօրիներ, անխտիր բոլոր ջրաղացները, սափրիչի գործիքներ, մեղուի փեթակներ, սպիտակեղէն, հագուստ, քաղաքացիների տան կահ-կարասիները, առանց ի նկատի ունենալու նրանց դասակարգային վիճակը, ևայլն... Բնական է, որ այս բանի միջոցները եղան երկրի ապստամբութեան հիմնական պատճառները»(*)։ Խօսքը փետրուարեան ապըստամբութեան մասին է։

Ու Բորեանը մէկիկ-մէկիկ թւում է Յեղկոմի հանած հակաօրինական հրամանագրերը և կատարած ապօրինի գործերը։

Ցոյց է տալիս, որ Հայաստանի բոլշևիկները ոտքի տակ էին տւել խորհրդային օրէնքներն ու հրամանագրերը և կատարել էին բազմաթիւ հակաօրինական և վընասակար գործեր, որոնց պատճառով ժողովուրդը, որ սկզբից համակրական վերաբերում ունէր դէպի խորհըրդային իշխանութիւնը, ի վերջոյ, ստիպուած եղաւ ապստամբութեան դրօշ բարձրացնել նոյն այդ իշխանութեան դէմ։

Մի ուրիշ վկայութիւն, որ, կարծում ենք, նոյնպէս կարող է համարուել անկողմնակալ և, յամենայն դէպս, վստահութեան արժանի։ Խօսքը տանք Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ վարչապետ Յ. Քաջազնունիին, որ յետոյ, ինչպէս յայտնի է, անցաւ բոլշևիկների կողմը։

(*) Բ. Բորեան՝ «Հայաստան, Դիւանագիտութիւն եւ Խորհրդ. Միութիւն», Բ. հատոր, էջ 126:

«Անցել էր մօտ երկու ամիս այն օրից, գրում է նա իր յուշերում, երբ բոլշեւիկները մտել էին Հայաստան, կազմակերպուել և հաստատուել էին։

«Հայկական Եռագոյն դրօշակը և «Մեր Հայրենիք»ը — իբրեւ հակայեղափոխական սիմբոլներ — վերացուել էին ասպարէզից. Նրանց փոխարինել էին պրոլետարական կարմիրն ու պրոլետարական «Ինտերնացիոնալ»ը։

«Կարմիր բանակի զինուորները տեղաւորուել էին քաղաքացիների բնակարաններում, ուտում էին նրանց հացը և վառում էին նրանց վառելիքը։

«Պաշտօնեաներն ու կուսակցական գործիչները գրաւել էին քաղաքի լաւագոյն տները, կահ-կարասին, անկողինները։

«Յեղկոմը հրատարակում էր ամէն օր դէկրէտներ ու հրամաններ, որոնք նպատակ ունէին ամրացնելու Հայաստանում պրոլետարական դիկտատուրան և միաժամանակ լայնացնելու ու խորացնելու համաշխարհային մեծ յեղափոխութիւնը։

«Չեկաները անսպառ եռանդով կատարում էին իրենց փրկարար գործը այնպիսի մեծ եռանդով, որ Հայաստանի բանտերում այլեւս ասեղ ձգելու տեղ չէր մնացել։

«Ժողովրդական (կամ յեղափոխական) տրիբունալներում (դատարաններում) ընկեր դատաւորները դատում էին ու լուծում քաղաքացիների մէջ ծագած վէճերը, դրական օրէնքի բացակայութեան պատճառով, համաձայն իրենց «յեղափոխական գիտակցութեան»։

«Գիւղերում «կոմբջիջները» հին ու նոր հաշիւներ էին մաքրում անհաճոյ դրացիների հետ։

«Քաղաքներում հաստատուել էին քաղաքային ու տընային կոմիտէներ։ Ամէն մի տասնեակ տան վրայ կարգուած էին տասնապետներ։ Տասնապետներն ու տանտէրերը հսկողութիւն պիտի ունենային իրենց տների վրայ և եթէ նկատէին որեւէ «հակայեղափոխական» երեւոյթ, անմիջապէս պէտք է տեղեկացնէին Չեկային։

«Վարչական սիստեմը հիմնուած էր ամբողջովին փոխադարձ հսկողութեան ու փոխադարձ լրտեսութեան վրայ։ Հսկելու, լրտեսելու և տեղեկութիւններ հաղորդելու պարտականութիւնը դրուած էր ոչ միայն պաշտօնեաների, այլ և ամէն մի քաղաքացու վրայ։ Քաղաքացին պարտաւորուած էր ոչ միայն ինքը բարեմիտ լինելու խորհրդային իշխանութեան հանդէպ, այլ և արթուն աչքով հսկելու հարեւանների բարեմտութեան վրայ. եթէ չանէր, անձնապէս կը նկատուէր «հակայեղափոխական», այսինքն՝ ենթակայ Չեկայի խնամատարութեան։

«Կոմունիստ»ը (կառավարական պաշտօնական օրաթերթը) չարունակ գրում էր ջարդարար յօդուածներ։ Յեղափոխութեան յաղթանակը — ասում էր — ապահովուած չէ Հայաստանում, որովհետեւ այստեղ չէ եղել քաղաքացիական պատերազմ։ Կռի՛ւ է հարկաւոր, որպէսզի իսկապէս բնաջինջ լինին հակայեղափոխական տարրերը. կռիւ է հարկաւոր, որպէսզի խորանայ բանուորա-գիւղացիական դասակարգային գիտակցութիւնը։ Յեղափոխական պրոլետարիատը պիտի թափէ իր ձեռքով բուրժուազիի արիւնը, որպէսզի անանցանելի վիհ բաց անի իր և նրա միջեւ։

«Նոյն բովանդակութիւնով ճառեր էին արտասանւում և կոչեր արւում հրապարակային միտինգներում։

«Պատերի վրայ փակցւում էին ֆուտուրիստական ոճով նկարուած ահագին պատկերներ, ուր գետերով հոսում էր «Դաշնակների» և ուրիշ հակայեղափոխականների պիղծ արիւնը... Անենք՝ արիւնը հոսում էր ոչ միայն պատկերների վրայ, այլ և «չեկայական» բանտերում։

«Բնակչութիւնը բաժանուած էր երկու անհաւասար մասի. բոլշեւիկներ (կամ բոլշեւիկ ձեւացողներ), որոնց տրուած էին բոլոր իրաւունքները, և ոչ-բոլշեւիկներ (այսինքն՝ ահագին մեծամասնութիւնը), որոնց վրայ դրուած էին բոլոր պարտականութիւնները։

«Եւ առաջին հերթին՝ բոլշեւիկներին կերակրելու, նրանց բոլոր կարիքները հոգալու պարտականութիւնը։

«Բոլշեւիկեան եռանդի մի կէսը ծախսւում էր Չեկայի և յարակից գործողութիւնների վրայ, միւս կէսը՝ խուզարկութիւնների ու բռնագրաւումների վրայ։

«Բռնագրաււում էր ամէն բան՝ սկսած տնից, կառքից, գրաստից, վառելիքից և վերջացրած երաժշտական գործիքով, լուացքի սապոնով, թել-ասեղով... Բաւակա՛ն է, որքան բուրժուաները վայելեցին կեանքի բարիքները, այժմ հերթը կարմիր բանակինն է և յեղափոխական պրոլետարիատի։

«Սա մի սկզբունք էր, որ գործադրւում էր ամէն ուղղութեամբ, ամենայն հետեւողականութեամբ ու արտակարգ եռանդով։

«Ժողովուրդը յանկարծակիի էր բերուել, շշմել, ահաբեկուել էր։ Չէր հասկանում, թէ ինչ էր կատարւում շուրջը։ Չէր հասկանում, թէ ինչ են ուզում իրանից այս կարմիր աստղանի, պապազաւոր գլխարկներ կրող անծանօթները, այս մաուզէրներով ու նագաններով զինուած, երեսները փիս ներկած գերահաս օրիորդները, այս բազմաթիւ կոմիսարներն ու կոմընկերները, որ ատամոբիլները նստած՝ օր ու գիշեր վեր ու վար էին անում Երեւանի փողոցներում...

«Մենակ «բուրժուան» չէր, որ շշմել էր. շշմել էին նաև աշխատաւոր զանգուածները, որոնք «բուրժուազիի» հետ հաւասար տուժում էին բոլշեւիկեան իրաւակարգից։ Մենակ «բուրժուան» չէր, որ թալանուած էր, անարգուած, իրաւազրկուած. նոյնն էր և ամբողջ ժողովուրդը (բացի բոլշեւիկներից, ի հարկէ), օրուան աշխատանքով ապրող բազմութիւնները։

«Այլեւս ոչ ոք տէր չէր ո՛չ իր ունեցածի, ոչ իր աշխատանքի։ Կոմունիզմը հասկացուել էր ու իրականացւում էր այն մտքով, թէ ոչ-բոլշեւիկի ունեցածը հալա՛լ է բոլշեւիկին»։

Բորեանի և Քաջազնունու առաջ բերած փաստերը բաւական են հասկանալու համար այն ներքին պայման-

ները, որոնք առաջ բերին հակախորհրդային համաժողովրդական յեղափոխութիւնը փետրուարին։ «Փաստերի այս բաւական մակերեսային թւումը, եզրակացնում է Բորեանը, բացատրում է Հայաստանի ժողովրդական ապստամբութեան պատճառները»։

Բայց միայն ներքին պատճառները չէին, որոնք հայ ժողովրդին ոտքի հանեցին խորհրդային իշխանութեան դէմ։ Հակառակ իրենց տուած հանդիսաւոր խոստումների և յանձնառութիւնների՝ բոլշեւիկները ապիկար գտնուեցին և արտաքին քաղաքականութեան մէջ։

Նրանք խոստանում էին Հայաստանը խորհրդայնացնելուց անմիջապէս յետոյ, վերականգնել յարաբերութիւնները արտաքին աշխարհի հետ, Ռուսաստանից բերել «հաց և մանուֆակտուրա», կարգադրել հարեւանների հետ հողային վէճերը և Ռուսաստանի օգնութեամբ բարի-հարեւանական կապեր հաստատել Թուրքիայի հետ։ Արդ՝ Հայաստանի Յեղկոմը ինչպէ՞ս արդարացրեց ժողովրդի յոյսերը։

Նախ՝ ճանապարհների խնդիրը։ Խորհրդայնացումից յետոյ էլ Հայաստանը կտրուած մնաց արտաքին աշխարհից։ Բաթումի պահեստներում դիզուած հայկական պաշարներն ու ապրանքները տեղից չշարժուեցին, և Վրաստանը աւելի եւս ամուր գոցեց իր դռները հայերի առջեւ։ Յեղկոմի դիմումները, թախանձանքներն ու սպառնալիքները ո՛չ մի ազդեցութիւն չգործեցին Վրաստանի կառավարութեան վրայ։ Անօգուտ անցաւ և Մոսկուայի միջամտութիւնը։

Այսպէս, Խորհրդ. Ռուսաստանի լիազօր դեսպանը, 1920 թ. դեկտ. 25 դիմումնագրով, մատնանշելով, որ «սովահար Հայաստանի շրջափակումը շարունակւում է ամբողջ ծաւալով»՝ պահանջեց բանալ երկաթուղային հաղորդակցութիւնը Հայաստանի հետ։ Պատասխանը եղաւ մերժում։ 1921 թ. յունուար 21-ին Մոսկուան նորից պահանջեց՝ «անմիջապէս իրականացնել տրանզիտի իրաւուն-

քը Վրաստանի վրայով դէպի Հայաստան»: Արդիւնքը եղաւ նոյնը. վրաց կառավարութիւնը մերժեց:

Վրաստանը տեղի չտուեց և սահմանավէճի հարցում: Իշխանութեան գլուխ անցնելուց անմիջապէս յետոյ, Հայաստանի Յեղկոմը, իրար յետեւից, մի շարք հեռագիրներով պահանջեց, որ վրացիները հեռանան հայկական հողերից և վրացական զօրքերը յետ քաշուեն Լոռիի չէզոք գօտուց: Վրացիները բնաւ կարեւորութիւն չտուին այդ պահանջներին:

Ահա մէկ նմոյշ Հայաստանի Յեղկոմի կատարած դիմումներից:

Դեկտ. 30-ին, Խորհրդ. Հայաստանի արտաքին գործավար Ա. Բէգզադեանը հետեւեալ ծանուցագիրը ուղղեց վրաց կառավարութեան:

«Երեւան, 30 դեկտ. (ռադիօ).— Վրաստանի դեմոկրատիկ հանրապետութեան արտաքին գործոց նախարարին:

«Չէզոք գօտուց ձեր զօրքերը յետ քաշելու մասին սոյն դեկտ. 7-ին և 10-ին ձեզ ուղղած դիմումների մէջ Հայաստանի Խորհրդային կառավարութիւնը արտայայտել էր ազատագրուած ժողովրդի կամքը՝ վերադառնալու խաղաղ աշխատանքի իր երկրի այն մասում, որ թէեւ պատերազմող կողմերի թշնամական գործողութիւնների անմիջական վայր չէր, սակայն Թուրքիայի հետ վարած պատերազմի ընթացքում ձեր կառավարութեան կողմից աստիճանաբար վերածուած էր զինուորական գրաւման վայրի՝ իր բոլոր քաղաքացիների համար անտանելի ծանր հետեւանքներով:

«Նկատի ունենալով, որ ձեր կառավարութիւնը իր սոյն դեկտ. 10-ի և 21-ի պատասխաններով մերժում է գոհացում տալ չէզոք գօտու հայ աշխատաւոր բնակչութեան այնքան հասկանալի ցանկութեան և ձեր կրկնակի մատնանշումները, թէ ձեր կառավարութիւնը Դաշնակցականների հետ սոյն տարուան նոյեմբ. 13-ին համաձայնութիւն է կնքել այդ մասին, Հայաստանի Ս. Խ. Հանր.

կառավարութիւնը ստիպուած է նորից մատնանշել այն հանգամանքը, թէ նա ինքը առհասարակ մերժում է ամէն մի հնարաւորութիւն ձեր կառավարութեան կողմից մատնանշելու նոյեմբ. 13-ի համաձայնագիրը, որ ձեր իսկ կառավարութեան գործողութիւններով չեղեալ է նկատուած: Ձեր կառավարութեան ձեւական պնդումը, թէ իր կողմից ճշդիւ կատարւում են նոյ. 13-ի համաձայնագրի պայմանները, չի կարող ընդունուել Հայաստանի Ս. Խ. Հ. կառավարութեան կողմից՝ նկատի ունենալով այն հանրածանօթ իրողութիւնները, որ ձեր զօրքերը համաձայնութեան առաջին իսկ օրերն անցել են չէզոք գօտու սահմանները, գրաւել են Քոլագերանը, Շահալին, Ջալալ-Օղլին, Նիկոլայեւկան և Հայաստանի տէրիտորիայի ուրիշ անվիճելի կէտեր, որ այդ տեղերում նշանակուած են վրացի հրամանատարներ, արձակուած են հայ ծառայողները և փոխարինուած են վրացիներով. որ նոյեմբ. 19-ին բանագրաւուած է Քոլագերան կայարանի գործիքների սնտուկը, ձերբակալուած են առանց պատճառների որեւէ բացատրութեան և հրամանի կայարանի հեռագրական պաշտօնեաներ Գարեգին Տէր Յարութիւնեանը, Համբարձում Պետրոսեանը և Արտաշէս Շահվերդեանը, որոնք յետոյ տարուած են Աշաղա-Սարայլ, որ, վերջապէս, պատժիչ զօրամաս է ուղարկուած Շնող գիւղի հայ գիւղացիների դէմ և ռմբակոծուած է յիշեալ գիւղը:

«Սրանից անկախ, Հայաստանի Ս. Խ. Հ. կառավարութիւնը չի կարող նոյնպէս համաձայնուել ձեր կառավարութեան նոյեմբ. 13-ի համաձայնագրի վրայ ունեցած հայեցակէտին, որովհետեւ այդ համաձայնագիրը չի պայմանաւորուած ոչ մի փաստացի հանգամանքով: Բացի այն, որ խնդրի այդպիսի մեկնաբանութիւնը, առհասարակ, անընդունելի է պայմանագրի փոխյարաբերութիւնների ասպարէզում, որքան վերջիններս միշտ յենւում և պահպանում են իրենց օրինական ոյժն ու նշանակութիւնը միայն իրենց առաջ քաշող պայմանների սահմանն-

րում,— նոյեմբ. 13-ի համաձայնութեան բնագիրն ինքն իսկ լիովին բացառում է մի այդպիսի մեկնաբանութիւն։ Այդ բնագիրը, իբրեւ կնքուած համաձայնութեան հիմունք, ճշգրիտ առաջ է քաշում երկու հանգամանք — Անատոլուի կառավարութեան զօրքերի յարձակումը Հայաստանի Հանրապետութեան վրայ եւ այդ բանի հետեւանքով չէզոք գօտիի եւ բուն Վրաստանի համար ստեղծուող սպառնալիքը։ Այդ երկու հանգամանքների վերացուելուց յետոյ, վրաց զօրքերի մուտքը չէզոք գօտում այլեւս կորցնում է ամէն արդարացում եւ չի կարող ընդունուել Հայաստանի Ս. Խ. Հ. կառավարութեան կողմից։ Հայաստանում քաղաքական նոր իրաւակարգ եւ ընկերային նոր փոխյարաբերութիւններ հաստատուելուց յետոյ, հնացած են դառնում այն արհեստական կապերը, որոնք փաթաթւում են Անդրկովկասի հանրապետութիւնների վզին նրանց հովանաւորների կողմից։ Շահագրգռուած լինելով վերջ տալու յիշեալ կացութեան չէզոք գօտու եւ Հայաստանի անվիճելի երկրամասի սահմաններում, որ գրաւել են վրաց զօրքերը, Հայաստանի Խորհրդային կառավարութիւնը՝ ելնելով ինչպէս Խորհրդային կառավարութեան ընդհանուր քաղաքականութիւնից, այնպէս եւ նրա հռչակած սկզբունքներից՝ պատրաստ է օգտագործել ամենից առաջ վիճելի խնդիրների խաղաղ լուծման եղանակը։ Իսկ յիշեալ վէճը արագօրէն լուծելու եւ այդպիսի դէպքերում սովորական ձգձգումների առաջն առնելու համար, իմ կառավարութիւնը ամենից աւելի նպատակայարմար է համարում չէզոք գօտու վիճելի խնդիրը լուծել Ռուսաստանի Ս. Ֆ. Խ. Հանրապետութեան ներկայացուցչի մասնակցութեամբ։

«Այս խնդրի վերաբերմամբ Հայաստանի Ս. Խ. Հ. կառավարութիւնը սպասում է ձեր կառավարութեան շուտափոյթ պատասխանին»։

Խորհրդ. Ռուսաստանի դիմումն ու վերջինիս միջնորդութիւնն էլ չօգնեցին. վրացիները մնացին անդրդուելի եւ շարունակեցին գրաւած պահել Լոռին եւ երկաթուղային հաղորդակցութիւնը չվերականգնեցին։

Աւելի փայլուն չէր վիճակը եւ «Եղբայրական» Ադրբէջանի ուղղութեամբ, հակառակ որ այնտեղ իշխանութիւնը բոլշեւիկների ձեռքին էր։

Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրերին Ադրբէջանի կառավարութեան պետ «ընկեր Նարիման Նարիմանովը» Հայաստանի Ցեղկոմին ուղղած հեռագրով ծանուցեց, որ այլեւս Հայաստանի եւ Ադրբէջանի միջեւ ամէն վէճ վերջացած է, եւ Խորհրդ. Ադրբէջանը եղբայրաբար զիջում է Ղարաբաղը Հայաստանին։ Այնուհետեւ Ղարաբաղը պէտք է մտնէր Խորհրդային Հայաստանի սահմանների մէջ, եւ այդ հանգամանքը գոհունակութեամբ ընդունուեց հայերի կողմից։ Բայց յետոյ ի՞նչ անցաւ-դարձաւ, յայտնի չէ, հաւանաբար, Թուրքերը ճնշում գործ դրին Մոսկուայի վրայ, եւ Ղարաբաղը Հայաստանին չմիացուեց։ Այդ առթիւ, հայ կոմունիստական շրջաններում տրւում էր այն բացատրութիւնը, թէ Նարիմանովը Ղարաբաղը զիջելու մտքով չէր արել յայտարարութիւնը, այլ, իբրեւ պրոպագանդ, հայ բոլշեւիկների գործը դիւրացնելու նպատակով։

Ղարաբաղը մնաց Ադրբէջանի ձեռքը, Նախիջեւանն էլ՝ Թուրք-բոլշեւիկեան գրաւման տակ։

Ռուսաստանից պարէն ստանալու յոյսն էլ ի դերեւ ելաւ։ Նախ՝ Ռուսաստանը ինքը անօթի էր։ Երկրորդ, ձմրան սառնամանիքների եւ բուք ու բորանի պատճառով հաղորդակցութիւնը շատ էր դժուարացել, թէեւ, ինչպէս տեսանք վերը, հաղորդակցութեան դժուարութիւնները արգելք չէին, որ Հայաստանի պարէնն ու ապրանքները փոխադրէին Բագու եւ Մոսկուա։

Աւելի վատ եղաւ հայ բոլշեւիկների գործը Թուրքերի հետ։ Նրանք հաւատացնում էին ամենքին, թէ Թուրքերի թշնամութիւնը դէպի հայերը հետեւանք էր դաշնակցականների վերաբերմամբ տածած ատելութեան. բաւական է Հայաստանը յայտարարել խորհրդային եւ եղբայրական ձեռք մեկնել Թուրքերին, Թուրք-հայկական յարաբերու-

թիւնները կը բարելաւուէին և Թուրք բանակը անմիջապէս կը հեռանար Ալեքսանդրապոլից և Կարսից։

Այս ոգիով էր ներշնչուած և Ցեղկոմի առաջին «դէկլարացիան», ուր հետեւեալ տողերն են նուիրուած Թուրքիային.— «Հայաստանի Յեղափոխական Կոմիտէն լի է հաւատով, որ ինքը վայելում է Թուրքիայի աշխատաւոր զանգուածների վստահութիւնն ու համակրանքը — այն ժողովուրդի, որ արդէն հասկացել է Անտանտի դարաւոր լծից ազատուելու անհրաժեշտութիւնը և որ կոչուած է խոշոր դեր կատարելու Արեւելքի յեղափոխականացման գործում։ Հաւատում ենք, որ իմպերիալիստական լծից ազատագրուող հասարակական Թուրքիան, հաշուելով մեզ Թուրքիայի հետ միասին Սեւրի դաշնագրի թշնամի, անմիջապէս եղբայրական ձեռք կը մեկնէ մեզ, երբ մենք կը տապալենք մեր թշնամուն (Դաշնակցականներին) և նրա հետ միասին պայքար կը մղենք Անտանտի գիշատիչների դէմ։ Մենք համոզուած ենք նոյնպէս, որ յաղթողի սուրը չէ որ պիտի թելադրէ յառաջիկայ հաշտութեան դաշնագիրը Խորհրդ. Հայաստանի և աշխատաւոր Թուրքիայի միջեւ, այլ Խորհրդ. Հայաստանի և աշխատաւոր Թուրքիայի ազատ ժողովուրդների եղբայրական համերաշխութիւնն ու համաձայնութիւնը»(*)։

Ինչպէ՞ս պատասխանեց «աշխատաւոր Թուրքիան» Ցեղկոմի պարզած «եղբայրական ձեռքին»։

«Դուրս եկաւ, ասում է Բորեանը, որ Ցեղկոմը չափ մեծ յոյսեր էր կապում «աշխատաւոր Թուրքիայի» հետ։ «Հասարակական Թուրքիան» մէկից աւելի անգամներ ցոյց է տուել իր «համակրանքը» հայերին ու Հայաստանին։ Նա դաշնագրով պարտաւորուեց խորհրդ. Ռուսաստանին ճնշում գործ դնել խորհրդ Հայաստանի վրայ»։ (Բ. հատոր, էջ 151)։

Եւ, յիրաւի, խորհրդայնացումը ո՛չ մի նշանակութիւն չունեցաւ Թուրքերի համար. Նրանք մազաչափ

(*) Բորեանի գիրքը, Բ. հատոր, էջ 151։

անգամ չփոխեցին իրենց վերաբերումը դէպի հայերը, չպարպեցին Ալեքսանդրապոլը, վերջ չտուին հալածանքներին, բռնութիւններին, թալանին ու սպանութիւններին հայկական շրջաններում։

Հայաստանը գրաւուած էր ռուսական զօրքերով, Հայաստանում տիրում էր խորհրդային իշխանութիւն, Ալեքսանդրապոլում էլ Ցեղկոմ էր հաստատուած, Հայաստանի Ցեղկոմը «եղբայրական ձեռք» էր մեկնում Թուրքերին և կաշուից դուրս գալիս ցոյց տալու համար, որ ինքը «Դաշնակներից» տարբեր բան է, Թուրքիային բարեկամ իշխանութիւն է, Երեւանից բարեկամական հաւաստիացումներ էին ուղարկւում Էնկիւրի.— այդ ամէնը չփոխեց Թուրքերի հակահայ ընթացքը։ Ընդհակառակը, կարծես է՛լ աւելի գրգռեց նրանց հայերի դէմ, որ նորից բռնել էին ռուսների փէշը՝ շարունակելու համար իրենց ռուսասիրական աւանդական քաղաքականութիւնը։ Երեւանից «եղբայրական» ոգիով հեռագիրներ էին քաշւում Էնկիւրի, իսկ Թուրք կառավարութիւնը պատասխանում էր, թէ ի՛նքը ո՛չ մի տարբերութիւն չի տեսնում «Դաշնակ»ների և հայ բոլշեւիկների միջեւ։ Եւ ռուսների աչքի առջեւ, Թուրք զօրքերը շարունակում էին դաժանօրէն ամայացնել Շիրակի հայկական գիւղերը, աւերել ու կողոպտել և հազարներով հայեր կոտորել։

Հայաստանի Ցեղկոմը բազմաթիւ առիթներով դիմեց Էնկիւրի՝ աղաչանքով ու բողոքով՝ վերջ տալու համար Թուրք բանակի կողմից հայ խաղաղ բնակչութեան դէմ գործուող դաժանութիւններին, բայց ո՛չ մի յաջողութիւն չունեցաւ. Թուրքերը պարզապէս արհամարհում էին հայ բոլշեւիկներին, երեւի, վստահ, որ ռուսները չեն պաշտպանի նրանց։

Սոսկ նմուշի համար առաջ բերենք Հայաստանի արտաքին գործավար Ա. Բէգզադեանի 21 յունուար հեռագիրը Թուրք կառավարութեան։ Նա աւելի պերճախօս է, քան որեւէ խօսք։

«Անգարա, Տաճկաստանի Մեծ Ազգային Ժողովի կառավարութեան արտաքին գործերի կոմիսարին: Պատճէնը՝ Մոսկուա, արտ. գործ. ժող. կոմիսար Չիչերինին, Տէր Գաբրիէլեանին: Պատճէնը՝ Բագու, արտ. գործ. ժող. կոմ. Հուսէյնովին, Աբաբէգովին.—

«Խորին վրդովմունքով հաղորդում է ձեզ Հայաստանի կառավարութիւնն այն անբնական երեւոյթների մասին, որոնք ստացել են մասսայական և քրոնիկական բնոյթ և որոնք նկատւում են մեր սահմանակից շրջաններում։ Խորհրդ. Հայաստանի կառավարութեան ստացած ստոյգ տեղեկութիւնների համաձայն, Կարսի, Ալեքսանդրապոլի գաւառներում և չէզոք գօտում ձեր գրաւման զօրքերի կողմից տեղի են ունենում խաղաղ աշխատաւոր բնակչութեան վրայ՝ անընդհատ բռնութիւններ, թալան եւ սպանութիւններ։ Տաճիկ զօրքերի կողմից գրաւուած բոլոր վայրերից ժողվւում են Խորհրդ. Հայաստանին պատկանող պետական գոյքերը, աւարի են ենթարկւում մասնաւոր անձերի գոյքն ու տնտեսութիւնը, քշւում են գիւղացիների անասունները և գրաււում է բնակչութեան վերջին պարենաւորումը։ Այդպէս, Ալեքսանդրապոլ քաղաքից վերջին ամսուայ ընթացքում տարուած են գիւղատնտեսական մեքենաները, շոգեկառքերը, հեռագրի ու հեռախօսի կազմածները, օթոմոբիլները, մասնաւոր գոյքը եւայլն։ Գաւառն ամայացած է, բոլոր անասունները քշուած։ Նալբանդ կայարանում կենտրոնացած է հացահատիկների մեծ պաշար Տաճկաստան ուղարկելու համար, որպիսին խլուած է շրջակայ գիւղերում և այդպիսով գիւղացիները դատապարտւում են սովամահութեան։

«Աշխատանքի ընդունակ բոլոր 18-50 տարեկան հասակի տղամարդիկ բռնի քշւում են իրենց հայրենի տեղերից և խլելով նրանցից ալիւրի պարկերից կարուած ամբողջ վերնազգեստը՝ քշւում, տարւում են ձմեռուան ցրտին դէպի Սարըղամիշի և Էրզրումի շրջանները՝ ծանր ու բռնի աշխատանքների։ Այնուհետեւ, Ղարաքիլիսայից ե-

կող փախստականների խմբերին ձեր գրաւման զօրամասերի ներկայացուցիչները փորձում են ուղարկել Կարսի վրայով դէպի Էրզրում՝ նոյնպէս բռնի աշխատցնելու համար վերոյիշեալ պայմաններում։

«Կարսում, ձեր զօրքերի կողմից գրաւուելուց յետոյ, առաջին երեք օրերը տեղի են ունեցել և մասսայական բնոյթ են ստացել թալանը, բռնութիւններն ու սպանութիւնները, որոնք աւելի կրճատուած չափերով շարունակւում են մինչեւ օրս։ Յիշեալ գիւղերի ամբողջ վառելիքը գրաւուած է, մինչեւ իսկ վառելիք չէ թողնուած նաեւ որբանոցներում։ Տղամարդիկ քշուած են Սարըղամիշ և Էրզրում, պարենաւորումը խլուած է և աւարը քշուած։ Աղբուլաղի և Համամլուի շրջաններում, ասկեարների առանձին զինուած խմբեր ներս են խուժում հայ գիւղերը, թալանում և սպանում են, իսկ կանանց բռնաբարում։ Դեկտ. 13-ին Կուլլինջի գիւղում տեղի ունեցաւ այդպիսի դէպք։ Դեկտ. 26-ին տաճկական 36-րդ գնդի զօրամասի կողմից Քաֆթառլի գիւղը գրաւուելուց յետոյ, բանուորների թւում, նոյն գիւղացիներից ինը հոգի երիտասարդ կոմունիստներ՝ Վարդ Տէր Պետրոսեան, Պետրոս Մինասեան, Իգնատիոս Վարդանեան, Մարտին Մուրատեան, Ստեփաննոս Մուրատեան, Մանուէլ Ամանեան, Թումաս Աստոմեան, Խաչատուր Կուսիկեան և Մանուէլ Ասլանեան, աշխատանքների վերջացնելուց յետոյ, գաղտնաբար սպանուեցին նոյն գիւղի մի դարմանոցում։ Նրանց դիակները դուրս բերուեցին Քաֆթառլիի բնակիչ Ստեփաննոս Բոյաճեանի սայլով, և ոճրագործութեան հետքերը ծածկելու համար՝ սպանուեց սայլի տէրը։ Յունուար 13-ին, ասկեարների մի խումբ, առանց պատճառի, յարձակուեց Եզանեատ գիւղի վրայ և կատաղի կրակ բացեց վրան։

«Չէզոք գօտու կից գիւղերում գիւղացի խաղաղ հայ բնակչութեան վրայ կատարուած թալանը, բռնութիւններն և սպանութիւնները սովորական երեւոյթ են դարձել։

Միայն չորրորդ կոմիսարիատի գաւառամասում ցուցակագրուած են աւելի քան երկու հարիւր այդպիսի սպանութիւններ։

«Շրջանի բնակչութիւնը տեռորի է ենթարկուած, բնակիչների գիւղական ու տնային տնտեսութիւնն աւերուած է, անասունները՝ քշուած և հարկերի անուան տակ խլուած են բնակչութեան բոլոր կենսամթերքները։ Զինուած զօրամասերի յարձակումները չէզոք գօտու վրայ վերջերս քրոնիկական բնոյթ են ստացել և եթէ այդպէս շարունակուի, նոյն աւերումը տեղի կ՚ունենայ ինչ որ կատարուեց Ալեքսանդրապոլի շրջանում, ուր աւերուած են աւելի քան 50 գիւղեր։

«Ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլի բնակչութեան, չնայած այն հանգամանքին, որ հաղորդակցութիւնը դըժուար է և կաշկանդուած մեր հեռագրի վրայ դրուած ձեր կոնտրոլով (մինչեւ իսկ Ցեղկոմի վերաբերմամբ), այլ և այն հանգամանքին, որ ձեր կողմից չի թոյլատրւում մեր ընկերներին դուրս գալ Ալեքսանդրապոլից, բայց այնուամենայնիւ մեզ յաջողուեց անկասկածելիօրէն հաստատել, որ Ցեղկոմի իշխանութիւնը ձեր զօրքերով գրաւուած քաղաքում ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ֆիկցիա և կարող է իրական լինել այն չափով, ինչ չափով կարեւոր է զինուորական հրամանատարութեան։

«Զինուորական հրամանատարութեան կողմից յեղափոխական կոմիտէին ներկայացուած մշտական պահանջները և վերջնագրերը, որոնք ոչ մի առնչութիւն չունին Ցեղկոմի խնդիրների հետ, որպէս խորհրդային իշխանութեան օրգանի (ինչպէս բռնի աշխատանքների համար մարդիկ տալը, 10 հազար հրացանների պահանջը, ասկեարներ սպանողին յանձնելը, որ յայտնի չէ թէ ո՞վ է սպանել, ե՞րբ և կամ ո՞րտեղ եւայլն), որ ստորացրել է Ալեքսանդրապոլի յեղափոխական կոմիտէին և փաստօրէն դարձրել է նրան զէնք Ալեքսանդրապոլը գրաւող զօրամասերի ձեռքին,— Հայաստանի Ցեղափ. կոմիտէն ստիպուած է, այսուհետեւ, նման օրգանի գոյութիւնը բոլորովին աւելորդ համարել, քանի որ դա խորհրդային իշխանութեան վարկը ձգում է թէ՛ աշխատաւոր մասսաների և թէ՛ քաղաքացիների աչքում։

«Այնտեղ, ուր գոյութիւն ունի վերոյիշեալ տեսակի զինուորական գրաւում և ուր սարկացում և աւերում են տիրում, այնտեղ չի կարող տեղի ունենալ բանուորագիւղացիական իշխանութիւն։

«Յիշատակուած բոլոր փաստերի անկողմնակալ վերլուծութիւնը ակներեւ է դարձնում, որ Հայաստանի Խորհրդային կառավարութիւնը չի կարող թոյլ տալ նման արարքներ այն հողամասերի վրայ, որոնք իրաւամբ նա ճանաչում է իր սեփականութիւնը, որովհետեւ դրանց նպատակն է յայտնապէս երկիրը տնտեսապէս աւերել և նրա բնակչութիւնը դատապարտել քաղցի և արհեստական ոչնչացման։

«Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը, այդպիսով, ստիպուած է նայել ձեր հրամանատարութեան գործողութիւնների վրայ այն հայեցակէտով, որ դրանք բերում են անխուսափելի արիւնաքամում և լիակատար տնտեսական քայքայում այն շրջաններում, որպիսիները պատերազմի ժամանակ, տաճկական զէնքի յաջողութեամբ, ընկել են և գտնւում են նրա ժամանակաւոր տիրապետութեան տակ և որոնք պէտք է անցնեն մի այլ պետութեան։ Ձեր զօրքերի մէջ գտնուած կարգապահութեան հանրածանօթ փաստը և ասկեարների ունեցած անկասկած համակրանքը դէպի խորհրդային իշխանութիւնը ենթադրել չեն տալիս, որ վերը յիշատակուած բռնութեան դէպքերը ինքնակամ գործողութիւններ են, որով ուժեղանում է կատարուող անկարգութիւնների նշանակութիւնը։

«Խորհրդային Հայաստանի աշխատաւոր բնակչութեան անունից, որ խորհրդային իշխանութիւնն ընդունելուց յետոյ ցոյց է տուել իր ջերմ ցանկութիւնը ապրելու յեղափոխական Տաճկաստանի հետ խաղաղութեամբ և եղբայ-

րաբար և որ միանգամ ընդմիշտ ազատուել է իր հայրենիքի նացիոնալիզմի լծից, ես ստիպուած եմ մատնանշել, որ վերոյիշեալ փաստերը, որպէս սպառնալից նշան, կարող են արգելք լինել Խորհրդային Հայաստանի և ազատուող Տաճկաստանի յեղափոխական խնդիրների իրականացման։

«Լիապէս համոզուած, որ ցոյց տրուած փաստերի վերաբերութեամբ մեր մէջ տարակարծութիւններ չեն լինի, իմ կառավարութիւնը չի կասկածում, որ Տաճկաստանի կառավարութիւնը չի յապաղի արմատական միջոցներ ձեռք առնել դադարեցնելու նման փաստերը, որին ամենաշուտ կերպով կարելի է հասնել միայն հեռացնելով զօրքերը Ալեքսանդրապոլի գաւառից և Կարսի հիւսիսային և արեւելեան շրջաններից։ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը լիովին համոզուած է, որ նրա արդարացի պահանջները չեն կարող չճանաչուել Տաճկաստանի Ազգային Մեծ Ժողովի բարեկամ կառավարութեան կողմից, և շուտափոյթ պատասխանի է սպասում ձեր կառավարութիւնից՝ այդ աննորմալ կացութեան վերջ տալու համար ձեռնարկուած քայլերի մասին, որոնք պէտք է հաստատեն նրա անկեղծ մտադրութիւնների զգացմունքները դէպի իր հարեւան խորհրդային իշխանութիւնը։
21 յունուար, 1921։

«Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողովրդ. կոմիսար՝ Ա. ԲԷԴԶԱՏԵԱՆ»։

Այս հեռագիրն էլ արժանացաւ նոյն բախտին, ինչպէս սրանից առաջ և յետոյ տրուած միւս հեռագիրները։ Թուրքերը ո՛չ մի կարեւորութիւն չտուին նրան։ Փաստօրէն մատը մատին չզարկեց և Մոսկուան՝ սանձահարելու համար Թուրքերին։ Եւ հասկանալի է, թէ ինչ հիասթափութիւն և յուսահատութիւն առաջ եկաւ հայ ժողովրդի մէջ։

«Խորհրդային իշխանութիւնը, գրում է Բորեանը, ոչ մի գործնական քայլ չառաւ հեռացնելու համար Թուրքերին Հայաստանից, այն ինչ ժողովուրդը համոզուած էր, որ խորհրդայնացումից և Խորհրդ. Ռուսաստանի հետ բարի դրացիական յարաբերութիւնների հաստատումից յետոյ, Թուրքերը այլեւս անելիք չունէին Հայաստանում, և Ռուսաստանը թոյլ չի տայ Թուրքերին գրաւելու Հայաստանի հողերը, որոնց վրայ Թուրքերը ոչ մի իրաւունք չունէին։ Ժողովուրդը «համոզուած» էր, որ Թուրքերը եկել են Խորհրդ. Ռուսաստանի գիտութեամբ և օգնութեամբ, որպէսզի տապալեն դաշնակցականների կառավարութիւնը և Խորհրդ. Հայաստանի վրայով կապ հաստատեն Ռուսաստանի հետ։ Մինչդեռ պարզուեց, որ Թուրքերը եկել են իբրեւ նուաճողներ, և երկրի վիճակը վատթարացաւ, — մի բան, որ ժողովուրդը չէր կարող սպասել խորհրդային իշխանութեան «գալուց» Հայաստան... Թուրքերի աւանդական քաղաքականութիւնը հայերի նկատմամբ և հայերի պատմականօրէն հաստատուած ոչ-բարեկամական յարաբերութիւնները Թուրքերի հանդէպ, ստեղծեցին անտանելի ծանր մթնոլորտ հայկական զանգուածների համար, և նրանք ազատութիւն էին սպասում։ Բայց միայն սպասում էին, որովհետեւ Ցեղկոմի և Ռուսաստանի քաղաքականութիւնը, որ հիմնուած էր արեւելեան օրիենտացիայի վրայ, ցոյց տուեց ժողովրդին, որ Թուրքերը չպիտի հեռանան։ Ժողովուրդը ջղայնանում էր, և հակայեղափոխական քարոզչութիւնը նպաստաւոր հող էր գտնում նրա մէջ» (*)։

Հայ բոլշեւիկները, ի հարկէ, այնքան անխելք ու անմիտ չէին, որ չըմբռնէին իրենց վիճակի անյոյս լինելը։ Նրանք գիտէին, որ այն ժամանակ, երբ Քեազիմ Կարաբէքիրի զօրքերը անպատիժ քարուքանդ էին անում հայկական գիւղերը և բնաջնջում հայութիւնը, Մուսթաֆա Քեմալի ներկայացուցիչները Չիչերինի հետ բանակցութիւններ էին վարում Մոսկուայում, որոնք յանգեցին 1921 թ. մարտ 16-ի «բարեկամութեան և եղբայրական

(*) Հատոր Բ., էջ 135-36:

դաշնագրութեան», որ Հայաստանի համար անհամեմատ աւելի ծանր պայմաններ էր պարունակում, քան նոյնիսկ Ալեքսանդրապոլի դաշնագիրը։

Այսպէս, Ալեքսանդրապոլի դաշնագրով «Կարսի նահանգը և Սուրմալուն համարւում էին վիճելի մինչեւ երեք տարի, որի ընթացքում հայոց կառավարութիւնը կարող է յայտարարել հանրաքուէ՝ որոշելու համար վերջնական բախտը այդ նահանգների»։ Մոսկուայի դաշնագրով այդ նահանգները վերջնականապէս յանձնւում էին Թուրքիային։

Ալեքսանդրապոլի դաշնագրով «Շարուրն և Նախիջեւանը ժամանակաւորապէս օժտւում էին ինքնավարութեամբ՝ գտնուելով Թուրքիայի հովանաւորութեան տակ, մինչեւ որ որոշուի նրանց բախտը»։ Մոսկուայի դաշնագրով Շարուրն ու Նախիջեւանը յանձնւում էին Ադրբէջանին, և այս վերջինը իրաւունք չունէր փոխանցելու մի երկրորդ կողմի, այսինքն՝ Հայաստանին։

Մոսկուայի դաշնագիրը վերջը վաւերացուեց և Կարսի դաշնագրով Անդրկովկասեան հանրապետութիւնների և Թուրքիայի միջեւ, Խորհրդ. Ռուսաստանի խնամակալութեան ներքոյ։

Եթէ աւելացնենք, որ հետագային, Ստալինեան սահմանադրութեամբ, Ախալքալաքն ու հայկական Լոռիի մի մասն էլ վերջնականապէս յանձնուեցին Վրաստանին և հայկական Ղարաբաղը՝ Ադրբէջանին, պատկերը կը լինի կատարեալ։

Ահա այս ներքին և արտաքին, առարկայական ու ենթակայական պատճառները, հաստատուած հէնց բոլշեւիկեան վկայութիւններով, փաստերով ու վաւերագրերով, կարճ ժամանակամիջոցում, ընդհանուր հիասթափութիւն և զայրոյթ առաջ բերին հայ ժողովուրդի մէջ և, ի վերջոյ, յանգեցին համաժողովրդական տարերային ապստամբութեան — Փետրուար 18 ին:

Բորեանը շատ ճիշդ է դատում, երբ գրում է, թէ արտաքին քաղաքականութեան և, մասնաւորապէս, Թուրքիայի խնդրում կրած պարտութեան և ներքին սխալների և անուժութեան հետեւանքով էր, որ Ցեղկոմը մատնուեցաւ ձախողանքի։ «Այդ բոլորը անմիջապէս մի շարք բախումներ առաջ բերեց բնակչութեան հետ և յանգեց այն բանին, որ Հայաստանի խորհրդայնացումից երկու և կէս ամիս յետոյ, հակայեղափոխութիւնը, օգտագործելով իրեն համար ստեղծուած չափազանց նպաստաւոր պայմանները՝ ապստամբութիւն առաջ բերեց երկրում։ Ցեղկոմը հասկանալով իր անզօրութիւնը՝ օգնութիւն խնդրեց Խորհրդային Ռուսաստանից և փախուստի մէջ փընտռելով իր փրկութիւնը, փոքրաթիւ զօրամասի պահպանութեան տակ, Հայաստանի փրկութեան գործը փոխանձեց կարմիր բանակի ձեռքը» (*)։

«Քաղաքացիական կռիւը, ասում է Բորեանը, շատ յամառ բնոյթ էր կրում։ Ապստամբութեան գլխին գտնուեցին դաշնակցականները, որոնք երեւան բերին բաւարար չափով կազմակերպութիւն Ցեղկոմի դէմ մղած կռւում, և նրանց ուժերի գերազանցութիւնը ապահովում էր խորհրդային իշխանութեան Հայաստանում։ Ապստամբութիւնը և «Դաշնակցական» իշխանութեան մնացորդները հաշուեյարդարի ենթարկուեցին կարմիր բանակի ուժերով, 1921 թ. ապրիլի սկզբին (**)։

Փետրուարեան ապստամբութեան պատմութիւնը այս գրքոյկի սահմաններից դուրս է։ Բայց ինչքան որ հարցը վերաբերում է մեր ընդգրկած նիւթին, պէտք է ասենք, որ փետրուարեան ապստամբութիւնը, ինչպէս հաստատում են և բոլշեւիկներն իրենք, նախամտածուած ու ծրագրուած քաղաքականութեան արդիւնք չէր։ Ընդհակառակը, այն ժամանակուայ պայմաններում, ոչ մի լուրջ մարդ չէր կարող մտածել ապստամբութեան մասին։ Եթէ մի օր այդ շարժման իսկական պատմութիւնը գրուի, պիտի երեւայ, որ շատեր այն գործիչներից, ո-

(*) Հատոր Բ., էջ 159:
(**) Նոյն տեղը, էջ 140:

րանք այսօր խաչւում են, իբրև եղբայրական կռուի հեղինակ, բնա՛և մասնակցութիւն չեն ունեցել իրենց վերագրւող գործերի մէջ և կամ, եթէ անգամ ունեցել են, բնա՛և, ոչ այն ձևով, ինչպէս որ այսօր ներկայացնում են կրքից և ատելութիւնից կուրացած մարդիկ։

Փետրուարեան ապստամբութիւնը համազգային ցասումի տարերային պոռթկում էր։ Դաշնակցութիւնը միայն վերջին վայրկեանին ստանձնեց այդ անկազմակերպ շարժման ղեկավարութիւնը և իր դերը կատարեց փայլուն կերպով։ Ապացոյց, որ փետրուարեան ապստամբութիւնից յետոյ եկող իշխանութիւնը հիմնովին փոխեց առաջին Ցեղկոմի խուժդուժ քաղաքականութիւնը, և Հայաստանի ու հայ ժողովրդի համար ստեղծուեցին աւելի տանելի պայմաններ, գոնէ որոշ ժամանակի համար։

Աւելորդ չենք համարում այստեղ առաջ բերել նաև հետեւեալ երկու վաւերագրերը։

Փետրուար 18ի յեղաշրջումից յետոյ, բոլշեւիկեան ռադիօն հաղորդել էր «ամենքին, ամենքին, ամենքին», թէ Երեւանի պետական հարուածը «մի խումբ մաուզերիստների գործն է՝ աւազակապետ Վրացեանի գլխաւորութեամբ»։ Այս և այնուհետև քաղաքացիական կռիւների լուրը ճնշիչ տպաւորութիւն էր գործել Թիֆլիսի հայութեան վրայ։ Այդ առթիւ, Կովկասի փոխարքայ Օրջոնիկիձէի արտօնութեամբ — գուցէ և հրահանգով — Երեւան էր եկել բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը։

Թումանեանը Երեւան հասաւ մարտ 20-ին, և նոյն օրն իսկ ես, իբրև Փրկութեան Կոմիտէի նախագահ, Օրջոնիկիձէին ուղարկեցի հետեւեալ հեռագիրը.

«Այսօր Երեւան եկաւ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը, որի հաղորդածներից երեւում է, որ դուք բոլորովին անճիշտ տեղեկութիւններ ունիք Հայաստանի դէպքերի մասին։ Յեղաշրջումը Հայաստանում անպատասխանատու խմբակների գործ չէ, այլ տառացի կերպով ամբողջ ժողովրդի, որ կռւում է իր գոյութեան համար։

Իմացէք, որ միայն հայ գիւղացիների ու բանուորների դիակներ վրայով կարելի է հասնել Երեւան։ Թումանեանին տրւում է կատարեալ հնարաւորութիւն ծանօթանալու իրերի իսկական կացութեան և հաղորդելու ձեզ»։

Հինգ օր վերջը, մարտ 24-ին, Թումանեանը ինքը տուեց հետեւեալ հեռագիրը Օրջոնիկիձէին.

«Թիֆլիս. ընկեր Օրջոնիկիձէին,

«Արդէն հինգերորդ օրն է ես Երեւանում եմ։ Ծանօթանալով գործերի վիճակին՝ լիովին համոզուեցի, որ մեզ մօտ, Թիֆլիսում, կազմուած կարծիքը Հայաստանի դէպքերի բնոյթի մասին, իրականութեան համապատասխան չէ։ Շարժումը սկսուել է գիւղացիութեան մէջ, գաւառական շրջաններում. տարածուել-հասել է Երեւան և գրաւել է մտաւորականութիւնը։ Ստեղծուել է հետեւեալ դրութիւնը. զէնքը ի ձեռին միմեանց դէմ են ելել մի կողմից Հայաստանի բանուորներն ու աշխատաւոր գիւղացիութիւնը, միւս կողմից զինուած ուժերը համայնավարների, և հոսում է արիւնը առանց որեւէ հիմքի թշնամութեան և փոխադարձ բնաջնջման։ Ռազմաճակատում ընկեր համայնավարները որոշ կերպով տանում էին, թէ ամբողջ յեղափոխութեան ընթացքին կարմիր բանակը աւելի անմիտ կռիւ չի մղել։ Ուստի՝ ջերմօրէն խնդրում եմ ձեր հեղինակաւոր միջամտութիւնը արագ կերպով վերջ տալու այս ոչ մէկի համար անհրաժեշտ արիւնհեղութեան։ Պէտք կը գտնեմ աւելացնելու, որ յեղաշրջումից յետոյ ձերբակալուած ոչ մէկ համայնավար և ոչ մէկ ռազմագերի այստեղ գնդակահարուած չեն։ Նման հաղորդագրութիւն անում եմ և ռազմաճակատի համայնավարներին։ Եթէ կը պահանջուին լրացուցիչ տեղեկութիւններ, խնդրեմ կանչեցէք ինձ ռադիոյի մօտ։ Յովհաննէս Թումանեան»։

Բանաստեղծն ի զուր սպասեց ռադիոյի հրաւէրի կամ որեւէ պատասխանի Օրջոնիկիձէն տարբեր նպատակով էր ուղարկել նրան Երեւան...

X

ՀԱՅ ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԱՐԴԻՒՆՔԸ

Փետրուարեան ապստամբութիւնը և յաջորդող յամառ կռիւները հաստատեցին մի բան — որ խորհրդային իշխանութիւնը Հայաստանում գոյութեան ոչ մի իրաւունք չունէր։ Եթէ խնդրի լուծումը թողնուէր հայ ժողովրդին, Յեղկոմը այլեւս երբեք Հայաստանի երես չէր տեսնի։

Այս փաստը ճնշող տպաւորութիւն թողեց բոլշեւիկների վրայ. կարմիր բանակը, յանուն բանւորա-գիւղացիական իշխանութեան, կռւում էր Հայաստանի բանւորների և գիւղացիների դէմ։ Եւ զարմանալի չէր ռազմաճակատի համայնավարների խոստովանութիւնը Թումանեանին, թէ՝ «ամբողջ յեղափոխութեան ընթացքին կարմիր բանակը աւելի անմիտ կռիւ չի վարել», որովհետեւ բոլշեւիկեան ամբողջ տիրապետութեան ընթացքին ո՛չ մի ժողովուրդ այնպէս բուռն ու յամառ չի կռուել իր կեանքի և արժանապատւութեան, իր հայրենիքի ազատութեան համար, որքան հայերը, 1921 թ. փետրուար-մարտ ամիսներին։

Հայաստանի անօրինակ դէպքերը արձագանգ գտան և Մոսկուայում, ուր Լենինը ինքը անձամբ ձեռք առաւ կովկասեան խորհրդային գործերի կարգադրութիւնը։ Մոսկւան փոխեց Հայաստանի նախկին Յեղկոմը և արգելեց Աւիս Նուրիջանեանի պէս բախտախնդիրների մուտքը Հայաստան։ Լենինը զգաստութեան և խոհեմութեան հրաւիրեց Կովկասի կոմունիստներին և Հայաստան ուղարկեց

Ալ. Մեասնիկեանին՝ յատուկ յանձնարարութեամբ։ Հայաստանը պէտք է անցնէր առաջին Յեղկոմի խելացնոր «զինուորական կոմունիզմի» բովից և փետրուարեան ապստամբութեան փոթորիկներից, որպէսզի իրաւունք ըստանար գէթ աննշան ազատութեան և մարդկային տարրական կեանքի։

Լենինը Մեասնիկեանին տուեց մի նամակ, որի հրահանգներով պէտք է ղեկավարուէին այնուհետեւ Կովկասի բոլշեւիկ իշխանաւորները։ Առաջ բերենք այդ հետաքրքրական մարդկային վաւերագիրը, որ այնքա՜ն աններդաշնակ էր Կասեան-Աւիս-Աթարբէգեանի մինչեւ այդ հետապնդած քաղաքականութեան։

ԼԵՆԻՆԻ ՆԱՄԱԿԸ

«Ազրբէյջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի եւ Լեռնական Հանրապետութեանց ընկեր կոմունիստներին.—

«Ջերմագին ողջունելով Կովկասի Խորհրդային Հանրապետութիւնները՝ թոյլ եմ տալիս ինձ յայտնելու այն յոյսը, որ նրանց սերտ միութիւնը կը ստեղծէ հաշտութեան այնպիսի մի օրինակ, որ չի տեսնուած բուրժուազիայի օրով և հնարաւոր չէ բուրժուական կարգերում։

«Բայց որքան էլ ազգային հաշտութիւնը կարեւոր լինի Կովկասի ազգութեանց, բանւորների և գիւղացիների միջեւ, աւելի կարեւոր է պահպանել ու զարգացնել խորհրդային իշխանութիւնը, որպէս ընկերվարական փոխանցման շրջան։ Դժուար է այդ խնդիրը, բայց կատարելապէս իրագործելի։ Նրա յաջող լուծման համար ամենից կարեւորը այն է, որ Անդրկովկասեան կոմունիստները հասկանան իրենց կացութեան իւրատեսակութիւնը, իրենց հանրապետութիւնների կարգ ու սարքը, որ տարբեր է Ռ. Ս. Ֆ. Խ. հանրապետութեան կացութիւնից և պայմաններից, հասկանան, որ անհրաժեշտ է ոչ թէ ընդօրինակել մեր գործելակերպը, այլ մտածուած կերպով

ձեւափոխել այն՝ կոնկրետ պայմանների տարբերութեան կիրառելի եղանակով։

«Ռուսաստանում խորհրդային իշխանութիւնը ունեցել է Ռ. Ս. Ֆ. Խ. հանրապետութեան քաղաքական և փոքր չափով էլ զինուորական աջակցութիւնը։ Այդ արմատական տարբերութիւն է։

«Երկրորդ. Այժմ Դաշնակիցներից վախենալու հարց չկայ արշաւանքների տեսակէտից, ոչ էլ վրացական, ադրբէյջանեան, հայկական, Դաղստանի, Լեռնական ըսպիտակ գվարդիականների աջակցութիւնից։

«Երրորդ.— Ռուսաստանը անտեսապէս կտրուած է եղել և մեծ չափով մնում է կտրուած առաջաւոր դրամատիրական երկիրներից։ Կովկասը կարող է աւելի շուտ և աւելի հեշտ «համակեցութիւն» և ապրանքային փոխանակութիւն հաստատել դրամատիրական Արեւմուտքի հետ։

«Ամբողջ տարբերութիւնը այդ չէ՛։ Բայց մատնանշուած տարբերութիւններն էլ բաւական են՝ հասկանալու համար, որ անհրաժեշտ է այլ գործելակերպ։

«Աւելի մեղմութիւն, զգուշութիւն, զիջողութիւն դէպի մանր բուրժուազիան, մտաւորականութիւնն ու, յատկապէս, գիւղացիութիւնը։ Տնտեսական մեծ թափով և շուտափոյթ օգտագործել դրամատիրական Արեւմուտքը՝ մենաշնորհների և ապրանքային փոխանակութեան քաղաքականութեամբ։ Նաւթը, մանգանէզը, ածուխը, տըկվարչելեան հանքերը, պղինձը — ա՛յս է հանքային ահագին հարստութիւնների ոչ լրիւ ցուցակը։ Լիակատար հնարաւորութիւն կայ լայն չափով զարգացնելու մենաշնորհների և ապրանքային փոխանակութեան քաղաքականութիւնը արտասահմանի հետ։

«Այդ պէտք է անել լայն չափով, հաստատակամօրէն, հնարամտութեամբ՝ ամէն կերպ օգտագործելով այդ՝ բարելաւելու բանուորների և գիւղացիների վիճակը և հրաւիրելու մտաւորականութիւնը տնտեսական շինարարութեան գործին։ Օգտագործելով ապրանքային փոխանա-

կութիւնը Իտալիայի, Ամերիկայի և այլ երկիրների հետ՝ բոլոր ուժով զարգացնել հարուստ երկրի արտադրական ուժերը, սպիտակ ածուխը, ոռոգումը։ Ոռոգումը առանձնապէս կարեւոր է, որպէսզի ամէն գնով բարձրացուի հողագործութիւնն ու անասնապահութիւնը։

«Աւելի դանդաղ, աւելի զգուշաւոր, աւելի սիստեմատիկ փոխանցում դէպի ընկերվարութիւնը, ահա՛ թէ ինչ է հնարաւոր և անհրաժեշտ Կովկասի հանրապետութիւնների համար, ի զանազանութիւն Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետութիւնից, ահա՛ թէ ինչ պէտք է հասկանալ և կարողանալ իրագործել՝ տարբերելով մեր գործելակերպից։

«Մենք բացինք առաջին ճեղքը համաշխարհային դրամատիրութեան մէջ։ Ճեղքը բացուած է։ Մենք պաշտպանեցինք մեզ բոլոր Դաշնակիցներից։ Նրանց պաշտման աջակցութիւնը, նրանց զինուորական օգնութիւնը վայելող սպիտակների՝ էս-էրների, մենշեւիկների դէմ կատաղի, գերբնական, ծանր ու դժուարին, դաժանօրէն գահավէժ պատերազմում։

«Ձեզ, Կովկասի կոմունիստ ընկերներ, հարկաւոր չէ ճեղքեր բանալ. պէտք է գիտենալ մեծ զգուշաւորութեամբ ու սիստեմատիկօրէն ստեղծել նորը՝ օգտագործելով 1921 թուականի ձեզ համար նպաստաւոր միջազգային կացութիւնը։ 1921-ին և՛ Եւրոպան, և՛ ամբողջ աշխարհը այն չեն՝ ինչ որ էին 1917 և 1918 թուականներին։

«Ո՛չ թէ պէտք է ընդօրինակել մեր գործելակերպը, այլ անկախօրէն խորհրդածել նոր իւրատեսակութեան, պայմանների և արդիւնքների պատճառների մասին. ձեզ մօտ պէտք է իրագործել 1917-1921 թուականների փորձի ոչ թէ տառը, այլ ոգին. միտքը, դասերը։

«Տնտեսապէս՝ միանգամից պէտք է յենուել դրամատիրական արտասահմանի հետ ապրանքային փոխանակութեան վրայ, ժլատ չլինել. թո՛ղ նա ստանայ տասնեակ միլիոնաւոր հանքային ամենաթանկագին արտադրութիւններ։

«Աշխատել միանգամայն բարելաւել գիւղացիների վիճակը և ձեռնարկել ելեկտրականացման, ոռոգման խոշոր աշխատանքների։ Ոռոգումը ամենից շատ է հարկաւոր և ամենից աւելի կը կերպարանափոխէ երկիրը, կը վերածնէ այն, կը թաղէ անցեալը, կ'ամրապնդէ ընկերվարութեան փոխանցումը։

«Ներողութիւն նամակիս անխնամութեան համար, որ պէտք է գրէի հապճեպօրէն՝ ընկեր Մեասնիկեանի հետ ուղարկելու համար։ Կրկին անգամ ուղարկում եմ ամենաջերմ ողջոյններս և բարեմաղթութիւններս Կովկասի խորհրդային հանրապետութեանց բանուորներին և գիւղացիներին։

Վ. ԼԵՆԻՆ

Մոսկուա, 14 ապրիլ, 1921

Այս նամակը որքան և արդիւնք էր այն ժամանակուայ Ռուսաստանի ընդհանուր պայմանների, Անդրկովկասին վերաբերուող մասում մեծապէս թելադրուած էր Հայաստանի փետրուարեան ապստամբութեան թողած տպաւորութիւնից։ Այս տեսակէտից կարելի չէ չընդունել, որ Հայաստանի փետրուարեան շարժման ազդեցութիւնը շատ աւելի լայն էր, քան Հայաստանի սահմանները։

Յամենայն դէպս, ինչ վերաբերւում է Հայաստանին, փետրուարեան ապստամբութիւնը ցնցող ու զգաստացնող տպաւորութիւն թողեց խորհրդային իշխանութեան վրայ։

Թիֆլիսում և ապա, ապրիլ 19-ին Երեւանում արտասանած իր ճառերի մէջ, Կոմկուսի Անդրկովկասեան Կոմիտէի քարտուղար Ս. Օրջոնիկիձէն ամենախիստ խօսքերով դատապարտեց հայ կոմունիստներին, որոնք պատճառ էին դարձել փետրուարեան ապստամբութեան և քաղաքացիական աւերիչ կռիւների՝ միաժամանակ զգաստութեան, աչալրջութեան և խոհեմութեան հրաւէր կարդալով Հայաստանի բոլշեւիկ իշխանաւորներին։ Մի ամիս առաջ, սակայն, նոյն Օրջոնիկիձէն արհամարհանքով յետ

էր մղում Հայաստանի կառավարութեան հաշտարար ոգիով տոգորուած հեռագիրները և անպատասխան էր թողնում Յովհաննէս Թումանեանի աղերսագին դիմումը։

Այսպէս թէ այնպէս, կասեանի Ցեղկոմին յաջորդող կառավարութիւնը, Ա. Մեասնիկեանի գլխաւորութեամբ, ջանաց մեղմ, խոհեմ ու հաշտարար քաղաքականութեան հետեւիլ։ Այն եւս պէտք է ասել, որ ամբողջ Ռուսաստանում նոր շրջան էր բացւում — որդեգրուել էր Նէպը՝ տնտեսական նոր քաղաքականութիւնը, որ վերջ տուեց «զինուորական կոմունիզմ»ի վայրենութիւններին։ Հայաստանն էլ մի պահ հանգիստ շունչ քաշեց և մի քանի տարիներ անխռով զբաղուեցաւ ներքին ցաւերի դարմանումով՝ իր ճակատագիրը կապելով Խորհրդ. Ռուսաստանի հետ։

Եւ ահա տասնեակ տարիներ բոլշեւիկները ընկերային փորձեր են կատարում Հայաստանի գլխին։ Խաղաղութեան կարճատեւ շրջաններում հայ ժողովուրդը կրկին ու կրկին փայլեցնում է իր ստեղծագործական հրաշագործ հանճարը, բայց վրայ են հասնում բռնութեան բիրտ օրերը, և ինչ որ շինուած էր երէկ գերմարդկային ճիգերով՝ ոչնչանում է վայրագօրէն։ Վերելքի և անկման շրջանները յաջորդում են իրար, բայց հայ ժողովուրդը, անընկճելի հաւատով ու տոկունութեամբ, ապրելու անսահման տենչով՝ շարունակում է պահել ու շէնցնել իր տունն ու հայրենիքը։

Յաջողեցա՞ն բոլշեւիկները արդարացնել հայ ժողովրդի յոյսերն ու ակնկալութիւնները։

Առնենք, օրինակի համար, հայ ժողովրդի համար ամենէն կենսական խնդիրը — Հայկական Հարցը, որ ասել է՝ Հայաստանի սահմանների հարցը։ Հայ բոլշեւիկները խոստանում էին այդ հարցը հիմնովին լուծել Խորհրդ. Ռուսաստանի օգնութեամբ և աւելի նպաստաւոր ձեւով, քան Դաշնակցականները։ Ի՞նչ արդիւնք ստացուեց, ի վերջոյ, նրանց քաղաքականութիւնից։

Հայաստանի Հանրապետութիւնը ունէր սահմանավէճ Վրաստանի և Ադրբէջանի հետ և հողային պահանջներ Թուրքիայից։ Ինչպէ՞ս լուծեցին այդ կենսական հարցերը հայ բոլշեւիկները։

Վրաստանի հետ բարեկամութիւն հաստատելու համար նրանք հրաժարուեցին զուտ հայկական և Հայաստանի անբաժան մասը կազմող Ախալքալաքի շրջանից և հայկական Լոռիի մի մասից, և այդպիսով խնդիրը փակուած յայտարարեցին։ Ուրիշ խօսքով, ամբողջապէս բաւարարեցին վրացի ազգայնականներին՝ ի վնաս Հայաստանի և հայ ժողովրդի։

Ադրբէջանին աւելի ծայրայեղ զիջումներ արին։ Հակառակ Նարիմանովի ծանօթ յայտարարութեան, որով Խորհրդ. Ադրբէջանը հրաժարւում էր Ղարաբաղից յօգուտ Խորհրդային Հայաստանի, հայ բոլշեւիկները, վերջ ի վերջոյ, համաձայնուեցին, որ Ղարաբաղը իր աւելի քան 150,000-նոց զուտ հայ բնակչութեամբ մնայ Ադրբէջանի սահմաններում և, իբրեւ վերադիր, թոյլ տուին նաեւ, որ Ադրբէջանի քոչուորները ամառները օգտուեն Զանգեզուրի, Դարալագեազի, Բասար-Կէչարի ու Ղազախի հայկական արօտավայրերից, առանց որեւէ փոխարինութեան Հայաստանին։

Այսքանն էլ բաւական չեղաւ. հայ բոլշեւիկները համաձայնուեցին, որ Ադրբէջանին տրուեն Նախիջեւանն ու Շարուրը, որոնք նոյնիսկ ընդհանուր սահման չունեին Ադրբէջանի հետ և գտնւում են Հայաստանի սրտում։

Փոխարէնը հայ բոլշեւիկները ոչինչ չստացան Վրաստանից և Ադրբէջանից յօգուտ Հայաստանի։ Այս պայմաններով, ի հարկէ, առաջ էլ դժուար չէր խաղաղութիւն հաստատել։ Եթէ Երեւանն ու Էջմիածինն էլ յանձնէին, խաղաղութիւնը աւելի կատարեալ ու տեւական կը լինէր։

Շուրջ 10,000 քառ. քիլոմետր հող, այսինքն՝ Ներկայ Հայաստանի մէկ երրորդին հաւասար տարածութիւն, և աւելի քան 300,000 զուտ հայկական բնակչութիւն — ահա

գինը այն երեւութական խաղաղութեան, որ բոլշեւիկները զոհեցին Հայաստանից։ Եւ այս վիճակը, հետագային, նըւիրագործուեց նաեւ Խորհրդ. Միութեան, այսպէս կոչուած, Ստալինեան Սահմանադրութեամբ։

Բայց սա չէ ամենագլխաւորը։ Աւելի ծանր և անփառունակ եղաւ բոլշեւիկների դերը հայ-թրքական յարաբերութիւնների խնդրում։

Ինչպէս յիշեցինք, 1921 թ. մարտ 16-ին, Մոսկուայում, ստորագրուեց «բարեկամութեան և եղբայրութեան դաշնագիր» Խորհրդ. Ռուսաստանի և Թուրքիայի միջեւ։ Այդ դաշնագրով վերջնականապէս հաստատւում էին սահմանները Թուրքիայի և Խորհրդ. Ռուսաստանի, հետեւաբար և կովկասեան հանրապետութիւնների միջեւ։ Ահա այդ դաշնագրի Հայաստանին վերաբերուող մասերը.—

Սահմանը Ռուսաստանի և Թուրքիայի միջեւ հաստատւում էր հետեւեալ ձեւով.— Սահմանագիծը սկսւում էր Սարփ գիւղի մօտից Սեւ ծովի եզերքին, կտրում էր Խեդիս-Մտա սարը և հետեւում էր Շավշէթ և Քանի Դաղ լեռների ջրաբաշխական գծով։ Ապա անցնում էր Արդահան և Կարս գաւառների հիւսիսային սահմանագծով և Ախուրեան և Արաքս գետերի ուղղանով մինչեւ Վարի Կարա-Սու գետի բերանը։

Ուրիշ խօսքով, ոչ միայն ամբողջ Կարսի և Արդահանի գաւառները, այլ և ամբողջ Սուրմալուն անպայման կերպով յանձնւում էին Թուրքիային։

Նախիջեւանի շրջանը առնւում էր Հայաստանից և իբր «ինքնավար հողամաս» յանձնւում Ադրբէջանին՝ պայմանով, որ վերջինս իրաւունք չունենայ ուրիշի փոխանցելու։

Թուրքիայի և Ռուսաստանի մասին ստորագրուած և երկու կողմերի շահերին անհամապատասխան համարուած բոլոր դաշնագիրները համարւում էին ջնջուած։ Այս կէտը ի նկատի ունէր, յատկապէս, Սեւրի դաշնագիրը, որ որոշում էր Հայաստանի միջազգային իրաւական վիճակը և սահմանները։

Երկու կողմերը պայմանաւորւում էին, որ իրենց երկրներում պիտի չկազմուէին և պիտի գոյութիւն չունենան խմբակցութիւններ, որոնք իրենց վերագրեն միւս կողմի որևէ երկրամասի կառավարութեան դերը, կամ խմբեր, որոնք նպատակ ունենան կռուելու միւս կողմի դէմ։ Այս յօդուածի մէջ դժուար չէ տեսնել Թուրքերի ճիգը՝ անհնար դարձնելու հայ յեղափոխականների գործունէութիւնը Թուրքիայի դէմ։

Մոսկուայի այս դաշնագիրը, հետագային, հիմք դարձաւ Կարսի դաշնագրին՝ Թուրքիայի և Հայաստանի, Ադրբէջանի ու Վրաստանի միջև, որ կրկնութիւնն է Մոսկուայի դաշնագրի պայմանների։

Ինչպէս յայտնի է, մարտ 16-ի դաշնագրի կնքման օրերին Հայաստանը ապստամբ վիճակի մէջ էր և երկրի մէկ մասի իշխանութիւնը անցել էր Փրկութեան Կոմիտէի ձեռքը, բայց Ս. Կասեանի Ցեղկոմը գտնւում էր Դաւալուի շրջանում, գրահապատ գնացքի մէջ, հետևաբար Հայաստանից դուրս չէր և Մոսկուայի աչքին համարւում էր Հայաստանի օրինական իշխանութիւն։

Հայաստանի Փրկութեան Կոմիտէն, ինչպէս ուրիշ պետութիւններին, Մոսկուայի կառավարութեան եւս յայտարարել էր, թէ Ցեղկոմը այլևս Հայաստանի իրաւական իշխանութիւնը չէ և նրա ներկայացուցիչները չեն կարող Հայաստանի անունից խօսել և պայմաններ ստորագրել։

Այժմ արդարացնելու համար իրենց անյաջողութիւնը հայ ժողովրդի և պատմութեան առջև, հայ բոլշևիկները փետրուարեան ապստամբութեան են վերագրում Մոսկուայի դաշնագրի անհանդուրժելի պայմանները Հայաստանի համար։ Դէպքերին ծանօթ որևէ խելահաս մարդ չի կարող համաձայնուել նրանց հետ։

Փետրուարեան ապստամբութիւնը քաղաքացիական կռիւների անընդհատական մի վիճակ էր. երկու հակառակորդ ուժեր բախման մէջ էին, և Ցեղկոմը դեռ հեռացուած չէր Հայաստանի հողից, որ ասել է, թէ օրինական իշխանութիւն էր Մոսկուայի աչքին։ Ինչ և լինէր Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի Մոսկուա քաշած հեռագրի բովանդակութիւնը, Չիչերինի համար չէր կարող արժէք ներկայացնել։ Նրա համար Հայաստանի օրինաւոր կառավարութիւնը Կասեանի Ցեղկոմն էր, որի պաշտօնական ներկայացուցիչները՝ Ալ. Բէգզադեան և Ս. Տէր Գաբրիէլեան, Մոսկուայում էին, երբ ստորագրուեցաւ մարտ 16-ի դաշնագիրը Թուրքերի հետ։ Եթէ, այնուամենայնիւ, այդ դաշնագրի մէջ գրուեցին հայերի համար ընպանիչ պայմաններ, նշանակում է, որ Հայաստանը ի յառաջագունէ դատապարտուած էր զոհուելու. Մոսկուայի համար Թուրքերը շատ աւելի մեծ արժէք ու կարևորութիւն ունէին, քան Հայաստանը։

Միւս կողմից՝ այդ փաստը ցոյց է տալիս նաև, թէ հայ բոլշևիկները ինչպիսի՜ արհամարհելի քանակ էին Մոսկուայի համար։ Եւ այդ տեսանք արդէն, երբ Թուրքերը, բոլշևիկների աչքի առջև, վայրագօրէն շարունակում էին աւերել ու բնաջնջել Շիրակի հայ գիւղերը, և Հայաստանի Ցեղկոմի բոլոր դիմումները ոչ մի գործնական արդիւնքի չէին հասնում Մոսկուայում։ Մարտ 16-ի դաշնագրի ստորագրութիւնից յետոյ էլ, բաւական ժամանակ, Թուրքերը չպարպեցին գրաւած շրջանները և վերջ չտուին գազանութիւններին։ Միայն ապրիլ 22-ին ռուսական զօրամասերը, Վէլիկանովի հրամանատարութեան տակ, մտան Ալեքսանդրապոլ՝ համատարած քայքայումի, հազարաւոր դիակների և ընդհանուր թշուառութեան մէջ։ Թուրքերը իրենց բարեկամ դաշնակիցներին փոխանցեցին աւերուած և քաոսի վերածուած մի երկիր։

Եւ այնուհետև էլ ոչնչով չբարելաւուեց Հայաստանի և Թուրքիայի փոխյարաբերութիւնը. մերձեցման և իրական բարեկամութեան ո՛չ մի նշան։ Երևանն ու Էնկիւրին, ըստ էութեան, մնացին նոյնքան հեռու իրարից ու

խորթ, որքան և առաջ։ Թերևս, և աւելի վատ, այն պարզ պատճառով, որ Թուրքերը հայերի վրայ նայում էին իբրև քաղաքական կոյր գործիքի ռուսների ձեռքին։

Թէ «բարեկամական» և «եղբայրական» Թուրքիան իրական ինչ զգացմունքներ էր տածում դէպի Հայաստանն ու հայերը, առանձին մերկութեամբ, երևան եկաւ Կարսի խորհրդաժողովի բանակցութիւնների ժամանակ, 1921 թ. սեպտ.-հոկտեմբերին։

Այդ խորհրդաժողովը կոչուած էր խաղաղութեան դաշնագիր ստորագրելու Թուրքիայի և Անդրկովկասեան երեք հանրապետութիւնների միջև՝ հիմք ունենալով Մոսկուայի մարտ 16-ի դաշնագիրը։

Կարսի խորհրդաժողովի և դաշնագրի մասին գրեթէ ոչինչ յայտնի չէ արտասահմանում, այդ պատճառով աւելորդ չենք համարում տալ այստեղ մի քանի ծանօթութիւններ՝ քաղելով «Խորհրդ. Հայաստանի» 1921 թ. հոկտ. 21 և 23 համարներում տպուած արձանագրութիւնների ամփոփումներից։

Խորհրդաժողովը հրաւիրուած էր Թուրքերի պահանջով՝ նաև Անդրկովկասեան երեք հանրապետութիւնների կողմից վաւերացնելու համար Մոսկուայի մարտ 16-ի դաշնագիրը։ Թուրքիայի պատուիրակութեան պետն էր Քեազիմ Կարաբէքիր փաշան, Հայաստանի՝ Ասք. Մռաւեանը, Ազրբէջանի՝ Բ. Շախթախտինսկին, Վրաստանի՝ Շ. Էլիավան։ Սակայն, այս երեք հանրապետութիւններին փաստօրէն ներկայացնում էր և նրանց անունից խօսում էր Խորհրդ. Ռուսաստանի արտաքին գործավարութեան ներկայացուցիչ Գանեցկին։

Խորհրդաժողովը տևեց սեպտ. 26-ից մինչև հոկտ. 13 և ունեցաւ 6 պաշտօնական և 9 անպաշտօն նիստեր։

Առաջին նիստում Թուրքիայի պատուիրակը պահանջում է, որ դաշնագիրը ստորագրուի կովկասեան երեք հանրապետութիւնների հետ առանձին-առանձին։ Անդր-

կովկասեան պատուիրակների անունից Գանեցկին կտրուկ կերպով մերժում է և յայտնում, որ Անդրկովկասի պետութիւնները հաւաքաբար պիտի կնքեն մէկ դաշնագիր։ Քեազիմ Կարաբէքիրը առարկում է, թէ ինքը նման լիազօրութիւն չունի և ստիպուած է հեռագրով հրահանգ ըստանալ կառավարութիւնից։

Երրորդ նիստում Քեազիմ Կարաբէքիրը յայտնում է, թէ ինքը ստացել է կառավարութեան պատասխանը, որ պնդում է, թէ դաշնագիրները պէտք է ստորագրուեն երեք հանրապետութիւնների հետ առանձին առանձին։ Եւ Գանեցկին նորից առարկում է այդ ձևին։

Չորրորդ նիստը ամբողջապէս նուիրւում է նոյն հարցին։ Տեղի են ունենում երկար վիճաբանութիւններ։ Ի վերջոյ, Քեազիմ Կարաբէքիրը համաձայնում է ստորագրել մէկ դաշնագիր՝ պայմանով, որ Հայաստանին, Ազրբէջանին և Վրաստանին վերաբերւող խնդիրները առանձին-առանձին բաժանուած լինեն դաշնագրի մէջ։ Սակայն, Գանեցկին այս ձևն էլ է մերժում։ Նորից տեղի են ունենում վիճաբանութիւններ և որոշւում է մի անգամ էլ դիմել Անգորա, որ կրկին պնդում է իր տեսակէտի վրայ։ Ի վերջոյ, Գանեցկին համաձայնում է Քեազիմ Կարաբէքիրի առաջարկած վերջին ձևին։

Այս վիճաբանութիւնն, անշուշտ, որոշ իմաստ ունէր. Թուրքերը ուզում էին, որ Հայաստան, Վրաստան և Ազրբէջան դիտուեն որպէս անկախ պետութիւններ և Թուրքիան գործ ունենար ամէն մէկի հետ առանձին-առանձին, իսկ Ռուսաստանը նախորոշել էր արդէն այդ հանրապետութիւնների անկախութեան ջնջումն ու կցումը Ռուսաստանին, ինչ որ և շատ չուշացաւ։

Երկրորդ նիստի սկզբին, Քեազիմ Կարաբէքիրը առաջարկում է առանց փոփոխութեան ընդունել Մոսկուայի մարտ 16-ի դաշնագիրը, հակառակ պարագային ըսպառնում է ընդհատել խորհրդաժողովի աշխատանքները, մինչև որ նոր հրահանգներ ստացուեն Անգորայից։ Գա-

նեցկին, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կողմից ընդունում է առաջարկը. միայն խնդրում է սահմանային երկու փոքրիկ սրբագրութիւններ մտցնել դաշնագրի մէջ. առաջին՝ Հայաստանի թողնել Անիի աւերակները, որոնք «հայերի համար ունին պատմական և գիտական մեծ արժէք»։ Երկրորդ՝ նոյնպէս Հայաստանին թողնել Կողբը, որ «իր աղահանքերով ներկայացնում է համակովկասեան նշանակութիւն»։

Թուրք պատուիրակութեան նախագահը պատասխանում է, թէ իրենք ո՛չ մի իրաւասութիւն չունին Մոսկուայի դաշնագրով գծուած սահմանների մէջ փոփոխութիւններ մտցնելու և թէ այդ մասին հրահանգ պէտք է ուզեն Անգորայից։

Հինգերորդ նիստում կարդացւում է դաշնագրի նախօրօք պատրաստուած բնագիրը և կէտ առ կէտ վաւերացւում։

Այս առթիւ Գանեցկին անում է հետեւեալ յայտարարութիւնը Անիի և Կողբի մասին։

«Մենք այն յոյսը ունէինք, որ Թուրք պատուիրակութիւնը դրական պատասխան պիտի տար Անիի մասին Հայաստանի արած պահանջին, որ զուրկ էր ամէն տեսակ զինուորական, տնտեսական և աշխարհագրական նշանակութիւններից և մեզ համար ունի զուտ գիտական, մշակութային արժէք։ Վերջին պահուն, ինչպէս Կողբի, նոյնպէս և Անիի մասին Թուրք պատուիրակութիւնը մերժողական պատասխան տուեց՝ առարկելով, թէ Անին Ախուրեանի արեւմտեան եզերքին է գտնւում, ուստի հայերին տրուելով՝ կը խախտուի Մոսկուայի դաշնագրի սկզբունքը։

«Անդրկովկասեան հանրապետութիւնների պատուիրակութիւնները ամենախորունկ ցաւով արձանագրում են Անիի մասին իրենց արած առաջարկի մերժումը, Անիի, որ ներկայացնում է հայերի համար ազգային-պատմական և գեղարուեստական արժէք։ Աւելացնում ենք նաեւ, թէ

Անդրկովկասի ժողովուրդները այդ մերժումը պիտի ընդունեն ճշմարիտ ցաւով։

«Կողբի աղահանքերի մասին, որ համակովկասեան նշանակութիւն ունի, որովհետեւ տարիներ շարունակ հայթայթել է Անդրկովկասի աղի պահանջը, մենք նախապէս ներկայացրել էինք աղահանքերը Հայաստանին թողնելու մի առաջարկ։ Բայց նկատելով Թուրք պատուիրակութեան առարկութիւնները դրա դէմ՝ մեր այս պահանջը փոխեցինք Կողբի աղահանքերը Հայաստանի կառավարութեան մենաշնորհ տալու առաջարկով։

«Թուրք պատուիրակութիւնը ներկայումս մերժում է նաեւ այդ առաջարկը. մենք արձանագրում ենք նաեւ այս մերժումը Թուրքիայի կողմից՝ համակովկասեան նշանակութիւն ունեցող այս խնդրի մասին և անցնում ենք միւս յօդուածների քննութեան»։

Թուրք պատուիրակութեան նախագահ Քեազիմ Կարաբէքիր փաշան, յայտնապէս նեղուած տոնով, ի պատասխան Գանեցկիի, անում է հետեւեալ յայտարարութիւնը.—

«Անիի մասին մեր մերժումը կայանում է Մոսկուայի դաշնագիրը չխախտելու սկզբունքի մէջ։ Այսուհանդերձ, ամէն ապահովութիւն կը տրուի այնտեղ այցողների և գիտական աշխատանքներ կատարողների համար»։

Մերժելով Կողբի մասին տրուած առաջարկը՝ Քեազիմ Կարաբէքիր փաշան յայտարարում է, թէ Կողբը առաջուան պէս պիտի գոհացնէ Անդրկովկասի պահանջները։

Ապա, Նախիջեւանի անկախութեան վերաբերեալ յօդուածների ընթերցումից յետոյ, Քեազիմ Կարաբէքիր փաշան մի քանի հարցեր է անում Նախիջեւանի ինքնավարութեան վերաբերող մի շարք խնդիրների՝ պաշտօնական լեզուի, կրթական, ամուսնական իրաւունքների, կրօնական ազատութեան, գերիների և այլնի մասին։

Ադրբեջանի ներկայացուցիչ Բ. Շախթախտինսկին պատասխանում է, թէ Մոսկուայի դաշնագրի տրամադրութեան համաձայն, Նախիջեւանը ինքնավարութիւն է ստանալու Ադրբեջանի սահմաններում։

Վերջապէս, վեցերորդ նիստում, հոկտ. 13-ի կէսօրին, տեղի է ունենում դաշնագրի ստորագրութեան արարողութիւնը։ «Ստորագրութեան պահուն, հաղորդում է «Խորհրդ. Հայաստանի» թղթակիցը, Կարսի բերդից արձակուեցին թնդանօթի չորս հարուածներ, և թրքական նուագախումբը նուագեց «Ինտերնացիոնալ»ը և թուրք ազգային քայլերգը»։

Ահա Կարսի դաշնագրի Հայաստանին վերաբերող մասը.–

Առաջին յօդուածով չեղեալ են յայտարարւում Թուրքիային վերաբերող բոլոր դաշնագրերը, որոնք ստորագրուած են Թուրքիայի և Ռուսաստանի ու Անդրկովկասեան երեք հանրապետութիւնների միջև, բացի 1921 թ. մարտ 16-ի Մոսկուայի դաշնագրից։ Աւելի է, թէ չեղեալ են յայտարարուած և Ալեքսանդրապոլի ու Սևրի դաշնագրերը։

Երկրորդ յօդուածով Ռուսաստան և Անդրկ. հանրապետութիւնները պարտաւորութիւն են ստանձնում չճանաչելու Թուրքիային վերաբերող որևէ միջազգային համաձայնութիւն, որ ճանաչուած չէ Ազգ. Մեծ Ժողովի Թուրքիայի կառավարութեան կողմից։ Այս վերջինս էլ, իր հերթին, պարտաւորւում է չճանաչել որևէ դաշինք, որ չի ճանաչւում Հայաստանի, Ադրբէջանի և Վրաստանի կառավարութիւնների կողմից։

Չորրորդ յօդուածով գծւում է Թուրքիայի և Անդրկովկ. հանրապետութիւնների սահմանը — բառացի կրկնութիւնը Մոսկուայի մարտ 16 դաշնագրի համապատասխան յօդուածի։

Հինգերորդ յօդուածով Նախիջևանը վեր է ածւում ինքնավար շրջանի Ադրբէջանի հովանաւորութեան տակ։

Ուրիշ խօսքով, Կարսի դաշնագիրը, որ կոչուած էր վերջնականապէս կարգաւորելու Թուրքիայի և Հայաստանի փոխյարաբերութիւնները, ոչ միայն ոչ մի խօսք չի անում Թրքահայոց հողերի և իրաւունքների մասին, այլ

և, առանց առարկութեան, Թուրքերին է թողնում Արդահանի, Օլթիի, Կարսի, Կաղզուանի և Սուրմալուի շրջանները, այսինքն՝ ամբողջ Հայաստանը՝ Ախուրեանից և Արաքսից դէպի հարաւ։ Բացի այդ, Հայաստանի սրտում գտնուող Շարուր-Նախիջևանը խլւում է Հայաստանից և տրւում Ադրբէջանին, փոխանակ Ղարաբաղը յանձնելու Հայաստանին։

Ինչպէս տեսնում է ընթերցողը, Կարսի խորհրդաժողովում Թուրքերը թելադրեցին իրենց կամքը, և յաղթական բոլշևիկները հլու կամակատարութեամբ ենթարկուեցին։ Ինչո՞ւ, ուրեմն, զարմանալ, որ Հայաստանի պարտուած կառավարութիւնը ստորագրեց Ալեքսանդրապոլի դաշնագիրը։

Եւ ինչպէս վերը նկատեցինք, եթէ Ալեքսանդրապոլի դաշնագիրը համեմատելու լինենք Կարսի դաշնագրի հետ, կը տեսնենք, որ բոլշևիկների ընդունած պայմանները շատ աւելի ծանր էին Հայաստանի համար, քան Ալեքսանդրապոլի դաշնագրի պայմանները։

Կարսի դաշնագիրը կատարեալ անձնատուութիւն էր բոլշևիկների համար, և հասկանալի է բոլշևիկ Բորեանի վրդովումը. «Ուրիշ աւելի անտանելի և աւելի աննպաստ դաշնագիր, քան Կարսի դաշնագիրն է, հազիւ թէ կարելի լինի գտնել պատմութեան էջերում», գրում է նա (*)։

«Այս ծանր դաշնագիրը, Խորհրդ. Հայաստանի համար, շարունակում է նա, որի նմանը պատմութիւնը չգիտէ, թելադրուեցաւ «յեղափոխական» Թուրքիայի կողմից յեղափոխական պատերազմից յաղթական դուրս եկած հայ աշխատաւոր ժողովրդին, որ յեղափոխական խանդավառութեամբ աջակցեց Դաշնակցական կառավարութեան պարտութեան և «բոլշևիկեան» Թուրքիայի յաղթանակին։ Հայ աշխատաւոր զանգուածները յոյս ունէին, որ

(*) Հատոր Բ., էջ 163:

«Թուրքիայի եղբայրական աշխատաւոր ժողովուրդը» և նրա կառավարութիւնը Խորհրդ. Հայաստանի հետ կը կնքեն եղբայրական ու պատուաւոր հաշտութիւն»։

Ասենք՝ «հայ աշխատաւոր զանգուածները» այդպիսի յոյս չունէին ու չէին կարող ունենալ. հայ բոլշեւիկներն էին միայն, որ միամտօրէն հաւատում էին, թէ Մոսկուան կ՚օգնէ իրենց «պատուաւոր» հաշտութիւն կնքելու Թուրքերի հետ։

Մոսկուան չօգնեց ու չէր կարող օգնել, որովհետեւ, ինչպէս ճիշդ բացատրում է Բօրեանը, «Թուրքիայի հետ կնքուելիք հաշտութեան հարցում հայ աշխատաւոր զանգուածները և խորհրդային իշխանութիւնը կանգնած էին անյաղթելի մի փաստի առջեւ, ա՛յն, որ արեւելեան հարցը անկիւնաքար էր համաշխարհային յեղափոխութեան եւ խորհրդային երկիրների միջազգային քաղաքականութեան համար, որոնց կարծիքով Թուրքիան Արեւելքի ազգային-ազատագրական շարժումների կազմակերպիչ կենտրոնն էր և գաղափարական առաջնորդը, ուստի և Թուրքիայի Արեւելքում ունեցած քաղաքական գործունէութիւնից էր «կախուած ամբողջապէս» Արեւելքի իմպերիալիզմի ճակատագիրը։ Այսպիսի պայմաններում էր, որ Խորհրդ. Հայաստանը հաշտութեան դաշնագիր պէտք է կնքէր Թուրքիայի հետ։ Պատմական հանգամանքներով Թուրքիային տրուած էր կատարեալ ազատութիւն խորհրդային Հայաստանի սահմանների որոշման խնդրում։ Թուրք դիւանագիտութիւնը պատրաստել էր հաշտութեան դաշնագրի նախագիծը, որի համաձայն Խորհրդ. Հայաստանը կամ պէտք է ստորագրէր դաշնագիրը, կամ պէտք է մերժէր խորհրդային եղբայրական հանրապետութիւնների արեւելեան քաղաքականութիւնը...

«Խորհրդ. Հայաստանի համար եղբայրական խորհրդային հանրապետութիւնների առաջարկի մերժումը պիտի նշանակէր քաղաքական և տնտեսական խզում վերջիններիս հետ և անխուսափելի կերպով պատերազմ

Թուրքիայի հետ, որ նա չէր կարող վարել։ Միեւնոյն ժամանակ, առանց հարեւան խորհրդային հանրապետութիւնների տնտեսական օգնութեան և քաղաքական աջակցութեան Հայաստանը ի վիճակի չէր Խորհրդային պետութիւն կառուցանելու։

«Ընտրութիւնը Խորհր. Հայաստանի համար նախորոշուած էր քաղաքական հանգամանքներով։ Հայաստանը Խորհրդ. Վրաստանի և Ազրբէջանի հետ միասին, Ռուսաստանի մասնակցութեամբ, ստորագրեց հաշտութեան դաշնագիր Թուրքիայի հետ, որով Հայաստանը դարձաւ «փրկագին» խորհուրդների արեւելեան քաղաքականութեան մէջ համաշխարհային յեղափոխութեան շահի համար։

«Սա մի ծանր դաշնագիր էր, որ կնքուեց համաշխարհային բանուորութեան ու խորհրդային երկիրների և համաշխարհային յեղափոխութեան շահի համար։ Նրա քաղաքական և տնտեսական աննպաստ հետեւանքները Խորհրդ. Հայաստանի համար հատուցին Խորհուրդների երկիրները՝ նիւթական նպաստ տալով աւերուած Խորհրդ. Հայաստանին» (*)։

Կարսի դաշնագրի և, առհասարակ, հայ բոլշեւիկների քաղաքականութեան համար աւելի զարհուրելի և սպանիչ դատավճիռ կարելի չէ երեւակայել։

Եւ այդ, հայերի համար ամէն տեսակէտից ճակատագրական դաշնագիրը, Հայաստանի Կենտր. Գործ. Կոմիտէի նախագահ Արտ Կարինեանի համար կարեւոր մի նուաճում էր։ «Կարսի դաշնագրութիւնը, յայտարարեց նա, մեր արեւելեան քաղաքականութեան հիմնաքարն է։ Նրան իր տեղից խախտել՝ նշանակում է մեր արեւելեան քաղաքականութիւնը փլուզման ենթարկել»։

Մի քար, որ անտանելի ծանրութեամբ մինչեւ այսօր էլ ճնշում է Հայաստանի մարմինը և մէկ միլիոն հայութիւն ցրիւ է տուել չորս հովերին։

(*) Նոյն տեղ, էջ 165։

Կարսի դաշնագիրը, սակայն, վերջինը չէր։ Լոզանում էլ բոլշեւիկները ծախեցին հայերին՝ թեւ ու թիկունք հանդիսանալով Թուրքերին։ Չիչերինի գործօն օգնութեամբ էր, որ Իսմէթ փաշան Լորտ Քըրզըններին թաղել տուեց հայկական հարցը։ Եւ խորհրդաժողովից յետոյ, Չիչերինը, ՏԱՍՍ պաշտօնական գործակալութեան միջոցով, պարծանքով յայտարարեց, թէ՝ «Խորհրդ. Ռուսաստանի ուրուականը սաւառնում էր Լոզանի խորհրդաժողովի կանաչ սեղանի վրայ, և հէնց նա էր, որ խանգարեց մեծ պետութիւններին յարձակուելու և ճզմելու փոքրիկ Թուրքիան»։

Յարձակուելով և ճզմելով փոքրիկ Հայաստանը, կարող է աւելացնել ընթերցողը։

* * *

Աւելի քան քառորդ դար Թուրքերի հետ «եղբայրօրէն» գործակցելուց, նրանց անհաշիւ նիւթական ռազմական ու դիւանագիտական օգնութիւն հասցնելուց յետոյ, Մոսկուան, վերջապէս, խելքի եկաւ։ Նա համոզուեց, որ ընկերներին միայն ժամանակաւոր շահով էր իրեն բարեկամ եղել. ըստ էութեան, իրենց հինաւուրց քաղաքականութեամբ, Թուրքերը Արեւմուտքի հետ էին։ Եւ 1945 մարտ 19-ին, հասաւ Թուրք և ռուս ամոլի ապօրինի կենակցութեան վերջը։ Այս թուականից սկսած մինչեւ այսօր բոլշեւիկները և Թուրքերը գտնւում են հակառակ ճակատների վրայ։

Թուրք-սովետական բարեկամական յարաբերութիւնների խզումը նորից վառ յոյսերով լեցրեց հայութեան սրտերը։ Հայկական Հարցը պիտի լուծուէր խորհրդային իշխանութեան միջոցով, մանաւանդ որ Խորհրդ. Միութիւնը զինակից ու բարեկամ էր Անգլիոյ և Ամերիկայի։ Երեք մեծերը միասին պաշտպանել էին յաղթանակը, միասին էլ համերաշխ պիտի հաստատէին արդար և տեւական

խաղաղութիւն՝ ազատագրելով նաեւ ճնշուած ժողովուրդներին։

Տրամաբանօրէն անհիմն չէին այդ յոյսերը. եթէ Մոսկուան անկեղծօրէն ուզէր լուծել իր իսկ պատճառով անլուծելի մնացած Հայկական Հարցը, 1945-46-ի պայմաններում, ո՛չ մէկ ոյժ չէր կարող արգելք լինել նրան։ Բայց Կարմիր բանակը փոխանակ շարժուելու Կարինի և Տարօն-Վանի ուղղութեամբ, մտաւ Ատրպատական, իսկ Հայկական Հարցը դարձաւ սոսկ քարոզչութեան և դիւանագիտական խաղերի առարկայ։

Դէպքերը դեռ թարմ են ամէնքի յիշողութեան մէջ. Ամենայն Հայոց կաթողիկոսութեան կողմից Չէօրէքչեանի տեսակցութիւնը գեներալիսիմուս Ստալինի հետ և տեսակցութեան հետեւող խորհրդաւոր շշուկները։ Կաթողիկոսի դիմումը երեք մեծերին։ Դիմումները Միացեալ Ազգերին, հիմնադիր ժողովին Սան Ֆրանսիսկոյում։ Հայաստանի ժողովրդի յուզումնալից ժողովներն ու դիմումները ի նպաստ Թրքահայ հողերի կցման ներկայ Հայաստանին։ Հայաստանի համայնավար կուսակցութեան առաջին քարտուղար Յարութիւնեանի մեծագումար ճառը, որով Խորհրդ. Հայաստանը պահանջատէր էր կանգնում Թրքահայոց ժառանգութեանը։ Այդ ներգաղթի շարժումը։ Եւ այս ամէնը՝ Մոսկուայի քաջալերանքով։ Ինչպէ՞ս չյուսալ և չուրախանալ. չէ՞ որ Հայաստանի հողերի և հայութեան ամբողջացումը տեղի պիտի ունենար. ․

Եւ Հայաստանի ժողովուրդը — Ամենայն Հայոց Կաթողիկոսից և Կոմկուսի քարտուղարից ու հանրապետութեան Նախագահ Մացակից սկսած մինչեւ կոլխոզների յետին հովիւն ու կով կթողը — ցնծութեան մէջ էր։ Թերթերը լեցուն էին յօդուածներով։ Բեմերից ճառեր էին խօսւում։ Ամէն բերան արձակ ու ոտանաւորով փառաբանում էր ամենայն իմաստութեանց աղբիւր Արեւ-Առաջնորդը, որ իր հայրական գթառատութեամբ Հայաստանին պիտի պարգեւէր Թրքահայոց հողերը։

Ոգեւորութիւնը մեծ էր, մանաւանդ, Հայաստանի բանտատեղծների շրջանում (որդէն հայերս նախ բանտատեղծ ենք, վերջը քաղաքացի)։ Ոմանք սաւառնում էին Արարատի գագաթին, ուրիշների երեւակայութիւնը հասնում էր մինչեւ Վանի ծովի ափերը, մինչեւ Նեմրութ ու Ծովասար. նոյնիսկ՝ մինչեւ Միջերկրական. «Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա», լսւում էր Երեւանի ռադիօկայանից...

Արքունական բանտատեղծը երգում էր՝ նստած Արագի ձախ ափին.

Երկու աղբիւր են Արագը թափում,
Մէկն աղի արցունք, միւսը՝ ծիծաղ,
Երկու ծառեր կան աջ ու ձախ ափում,
Մէկը չոր, միւսը՝ ծաղիկ ու ծառ:

Նոյն զովն է գարնան, նոյն գարնան արփին,
Եւ հողը նո՛յնն է երկու ափերին.
... Ծառը պարզած իր ճիւղերն անբերրի՝
Մեզ օգնութեան է կանչում այն ափից: (Գ. Էմին)

Այսպէս էին տրամադրութիւնները Հայաստանում — և ողջ հայութեան մէջ — երբ մի օր էլ՝ շշմեցնող լուր. երկու վրացի պատմաբաններ, ակնյայտնի կերպով, Մոսկուայի ներշնչումով, հրապարակ ելան խորհրդային պաշտօնաթերթում պահանջելով կցել Վրաստանին Թրքահայաստանի մէկ մասը՝ գրեթէ մինչեւ Կարին։ Ապա՝ Վըշինսկիի շնական յայտարարութիւնը ՄԱԿ-ում, թէ այդ հողերը պատկանում են վրացիներին։ Ապա՝ վերջ ներգաղթի։ Ապա՝ երկաթէ վարագոյր Հայկական Հարցի շուրջ։ Մոսկուան սկսեց հետաքրքրուիլ քրտական հարցով. հայերը այլեւս հետաքրքրութիւն չէին ներկայացնում նրա աչքում. մաւրը կատարել էր իր դերը, մաւրը կարող էր հեռանալ։

Ո՛չ մի անգամ և ո՛չ մի տեղ Խորհրդ. Միութիւնը պաշտօնապէս հրապարակ չեկաւ ի նպաստ Հայ Դատի։

Իսկ հրահրեց ու գրգռեց հայերին, ինչպէս վարւում էին, իրենից առաջ, կայսերապաշտ պետութիւնները։ Ո՛չ մի փաստով ցոյց չտուեց, թէ իրեն համար գոյութիւն ունի Հայ Դատ անունով մի հարց, կամ որեւէ յանձնառութիւն իր կողմից ի նպաստ Թրքահայաստանի։

Հետագայ դէպքերը հաստատեցին, որ խորհրդային իշխանութեան հետաքրքրողը ո՛չ թէ Թրքահայ դատն էր, այլ արտասահմանի հայ տարագրութիւնը, իբրեւ թնդանօթի միս «անգլօ-ամերիկեան զաւթիչների» դէմ, իբրեւ գործիք խորհրդային արտաքին քաղաքականութեան ձեռքին։ Թէ Հայկական Հարցը և թէ ներգաղթը Մոսկուան օգտագործեց արտասահմանի հայութիւնը պառակտելու և իր նպատակներին ծառայեցնելու համար։

Հայկական Հարցը այլեւս գոյութիւն չունէր բոլշեւիկների համար։ Չէ՞ որ Ստալինը հանդիսաւորապէս յայտարարել էր, թէ Հայկական Հարցը լուծուած-վերջացած է։

Գաղթական երգիչները կարող էին զրնգացնել իրենց ստալինապարգեւ քնարի լարերի վրայ, թէ

... Ծառը պարզած իր ճիւղերը անբերրի՝
Մեզ օգնութեան է կանչում այն ափից -

Բայց օգնութեան կանչը լսող չկար .Հայկական Հարցը լուծուած-վերջացած էր...

* * *

Անհունօրէն աղէտաւոր եղաւ Սովետների և, մասնաւորապէս, հայ բոլշեւիկների քաղաքականութիւնը նաեւ Արտահայաստանի մէկ միլիոննոց հայ տարագրութեան համար։

Անկախութեան տարիներին Հայաստանը դարձել էր մագնիսական մի հզօր ոյժ, որ իրեն էր քաշում աշխարհացրիւ հայութիւնը։ Հանրապետական կառավարութիւնը

հրատարակել էր քաղաքացիութեան օրէնք, որով բոլոր հայերը, ուր և լինէին, կարող էին արձանագրուել Հայաստանի քաղաքացի։ Հայաստանի դեսպանատներն ու հիւպատոսարանները միջոց չէին գտնում բոլոր դիմողներին անմիջապէս բաւարարութիւն տալու։ Տարերային մի շարժում էր սկսուել հայոց ժողովրդի մէջ ամէն կողմից դիմելու «դէպի իրենց սիրուն հայրենիքը»։ Հայաստանի Հանրապետութիւնը դարձել էր Աւետաց երկիր հայրենակարօտ բազմութիւնների համար։ Ծայր էր տուել համազգային ներգաղթը, Հայկի զաւակների հաւաքը Մասիսի հովանու ներքեւ։

Հայաստանի խորհրդայնացումը խորտակեց բոլորի վառ յոյսերը և վերջ տուեց հայահաւաքման շարժումին։ Աւելին. Հայաստանից ևս շատերը, չկարողանալով դիմանալ բարբարոս վարչաձեւին, այլեւայլ հնարքներով, փախան արտասահման։ Եւ հայրենիք վերադառնալու յոյսը կտրած՝ հայ տարագրութիւնը հաստատուեց զանազան երկիրներում և իր միտքն ու բազուկը նուիրեց այդ երկիրների շինարարութեան։

Հայաստանի և Արտահայաստանի միջեւ քաշուեց երկաթէ անթափանց վարագոյրը։ Տարագրութիւնը բոլորովին կտրուեց մայր-հայրենիքից, որի կառավարութիւնը այլեւս «Ամենայն Հայոց կառավարութիւն» չէր։ Տարագրութեան ամենամռայլ օրերին, Կիլիկիայի, Պոլսի և Իզմիրի աղէտից յետոյ, երբ քարացած սրտերն անգամ ցնցուեցին, հասան օգնութեան Թրքական եաթաղանից ճողոպրած, մերկ և անօթի, մազապուրծ, փախստականներին, Հայաստանի բոլշեւիկները մէկ կոպէկ անգամ չուղարկեցին, կարեկցանքի մէկ խօսք չարտասանեցին ամոքելու համար իրենց ազգակից թշուառների վիշտը։

Ընդհակառակը, Երեւանի ոչ-ամենայն հայոց կառավարութիւնը իրար յետեւից պատուիրակներ ու պատուիրակութիւններ էր ուղարկում իրեն համար դրամ հաւաքելու տարագիր հայերից — դրամ, որ գլխաւորապէս

ծախսւում էր բոլշեւիկեան քարոզչութեան վրայ՝ նոյն այդ տարագիրների մէջ։

Դեռ մոռացուած չեն Ալ. Մեասնիկեանի և իր ընկերների կոչերը, որով նրանք հրաւիրում էին Թրքական կրակից ճողոպրած հայերին ըմբոստանալու հիւրընկալ երկիրների կառավարութեանց դէմ։

Բոլշեւիկներին չէր հետաքրքրում հայ աշխատաւորութեան բարեկեցութիւնը. հայը դրամատիրական երկիրներում, նրանց համար, պէտք է լինէր «կապիտալիզմի դեմ պայքարող պրոլետարիատի մարտական ավանգարդը համաշխարհային հեղափոխության ռազմաճակատում» (Լենին)։

Հայ աշխատաւոր ժողովրդի արիւն-քրտինքով վաստակած անհաշիւ գումարներ — հաւաքուած զանազան ՀՕԿ-երի և այլ միջոցով Հայաստանի բարեկեցութեան նպատակով, վատնուեցին պառակտելու և այլասերելու համար գաղութահայութիւնը։ Կաշառեցին թուլամորթ մտաւորականներին, պղծեցին Էջմիածինը և արծաթասէր կրօնաւորներին՝ լծելու համար նրանց իրենց կուսակցական նպատակներին։ Շահագործեցին հայ ունեւոր դասի միամիտ հայրենասիրութիւնը։ Պառակտեցին և իրար դէմ կռուի մղեցին աշխատաւորութիւնը։ Ջանացին իրենց հակակշռի տակ առնել եկեղեցական հաստատութիւններն ու դպրոցները։ Նոյնիսկ ներգաղթի նման բոլոր հայերի համար նուիրական մի գործ, համայնավար քարոզչութեան ու պայքարի զէնք դարձրին՝ չարաշահելով հայրենաբաղձ հայ մարդու սրբազան զգացմունքները։

Եւ ահա արդիւնքը։

Այսօր այլեւս, Խորհրդ. Միութեան սահմաններից դուրս, միացեալ, մէկ հայութիւն գոյութիւն չունի. կայ հայապաշտ հայութիւն. կայ սովետապաշտ հայութիւն — ատելավառ կրքերով միմեանց ատող, իրարու դէմ պայքարող հայութիւն։

Եկեղեցի, մշակոյթ, դպրոց, ազգային հաստատութիւններ, հանրային և նոյն իսկ տանին կեանք խառ-

ուած են, պառակտուած, քայքայման ու բարոյալքման ճանապարհի վրայ։

Հայրենիքը դարձած է կռուախնձոր — «հայաստանասէրներ» և «հայրենիքի թշնամիներ»։ Հայրենասիրութիւնը շուկայի ապրանք է համայնավարների և նրանց անգիտակից ուղեկիցների համար։

Երկաթէ վարագոյրով շրջապատուած Հայաստանը կորցրել է իր բարոյական հմայքն ու ազդեցութիւնը, իր ձգողական զօրութիւնը արտասահմանի հայութեան աչքին։ Երեւանից ու Էջմիածնից այլեւս չեն լսւում կենսանորոգ խօսքեր հայ տարագրի ականջներին։ Հայաստանը դարձել է խորթ մայր արտասահմանի նոր սերունդների համար, որոնք դատապարտուած են աստիճանական ուծացման ու փոշիացման։

Հայոց պատմութեան ամենասեւ օրերին անգամ այսպիսի մռայլ վիճակ գոյութիւն չի ունեցել, որ հայրենիքը լքէր իր զաւակներին, գիտակցօրէն մղէր նրանց դէպի կորուստ։ Հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան հզօր ոգին միայն, նրա հրաշագործ հայրենասիրութիւնը հայութիւնը պահում են կենդանի օտարութեան մէջ։

Բոլշեւիկները կարող են պարծենալ իրենց յաղթանակով, բայց հայոց պատմութիւնը ամօթանքի սեւ կնիքով պիտի դրոշմէ նրանց ճակատը բարոյական թէ նիւթական այն աւերի համար, որ նրանք գործեցին հայրենազուրկ և բախտահալած հայ տարագրութեան անարեւ կեանքում։ Գալիք սերունդները Վասակների և Նիկոլ Թորոսովիչների շարքին պիտի դասեն հայ բոլշեւիկներին։

XI

ՎԵՐՋԱԲԱՆ

Մենք ջանացինք, որքան հնար է, տալ առարկայական ու մերկ փաստեր։ Ա՛յս են եղել բոլշեւիկների և թուրքերի համագործակցութեան ընթացքը և հետեւանքները Հայաստանի վերաբերմամբ։

Եզրակացութի՞ւն։ Ճշմարտութեան հետամուտ աննախապաշար մարդու համար դժուար չէ եզրակացութիւն հանելը։

Սակայն, կարող են առարկել — և առարկում էլ են — թէ պատմութիւնը վերջացած չէ և դեռ շա՜տ բաներ կարող են տեղի ունենալ։ Անշուշտ, կարող են։ Բայց ինչ որ արուած է մինչեւ այսօր՝ պերճախօս է և իրաւունք է տալիս, եղածի վերաբերմամբ, որոշ եզրակացութիւններ հանելու։

Յաջողեցի՞ն հայ բոլշեւիկները իրենց նպատակների և խոստումների մէջ, կարողացա՞ն իրականացնել հայ ժողովրդի տենչերը և իրենց տուած խոստումները։

Խնդիրը այն չէ, թէ Հայաստանում այսօր այսքան շէնքեր են շինուած, այսքան ճանապարհներ ու դպրոցներ են բացուած, այսքան գրքեր են հրատարակւում, այսքան արտավար հող է ցանուած, կամ այսքան գործարաններ ու ելեկտրակայաններ են հաստատուած — հայ ժողովուրդը, եթէ ազատ ձգուէր իր բախտին, բազմապատիկ աւելի կը շինէր ու կը ճոխացնէր իր հայրենիքը։ Ոչ էլ համոզեցուցիչ փաստ է, որ այսքան տարիներ համեմատական խաղաղութիւն է տիրում սահմանների վրայ. տեսանք արդէն, թէ ինչ գնով է ձեռք բերուած այդ խա-

ղաղութիւնը. տեսանք նոյնպէս, որ Հայաստանի խաղաղութիւնը վրդովող գլխաւոր ոյժը հէնց իրենք՝ բոլշեւիկներն էին։

Կարեւորը այն է, թէ հայ բոլշեւիկները կարողացա՞ն լուծել հայ ժողովրդի ազգային հիմնական հարցերը։ Մինչեւ այժմ յայտնի փաստերից կարելի է վճռական կերպով եզրակացնել, թէ՝ ո՛չ, չկարողացան։

Ի՞նչ կը պատահի վաղը, մարդ չգիտէ։ Ի՞նչ է պատահել մինչեւ այժմ — հրապարակի վրայ է ամենքի աչքի առջեւ։ Եւ այդ պատահածը անողոք տրամաբանութեամբ ասում է, որ՝

1) Բոլշեւիկեան քաղաքականութիւնը Հայաստանի վերաբերմամբ, սկզբից մինչեւ վերջ, ոչնչով չի տարբերուել «գիշատիչ իմպերիալիստների» քաղաքականութիւնից։ Նա հետապնդել է եսական ու շահախնդիր նպատակներ և Հայկական Հարցը ծառայեցրել է իր շահերին։ Հայաստանը և հայ ժողովուրդը, որպէս այդպիսին, նրանց չեն հետաքրքրել, ինչպէս նրանից առաջ, չեն հետաքրքրել դրամատիրական պետութիւններին։

2) Խորհրդայնացման հէնց առաջին օրերից սկսած՝ բարեկամական կապ է հաստատուել բոլշեւիկների և Թուրքերի միջեւ։ Բոլշեւիկները օգնել ու գործակցել են ոչ միայն «յեղափոխական» քեմալականներին, այլ և «ջարդարար» իթթիհատականների պարագլուխներին՝ նիւթապէս քաջալերելով նրանց դաւերը Հայաստանի դէմ։

3) Իրենց իշխանութեան առաջին օրերին ներկայանալով իբրեւ Հայկական Դատի ջատագով և նոյնիսկ Հայաստանի անկախութեան խոստում տալով հրապարակով՝ իրենց գործնական քաղաքականութեամբ բոլշեւիկները արգելք հանդիսացան Հայկական Հարցի նպաստաւոր լուծման և, ի վերջոյ, Թուրքիայի հետ կնքած դաշնագրերով ո՛չ միայն ամբողջ Թրքահայաստանը ձգեցին Թուրքերին, այլ և Ռուսահայաստանի մէկ երրորդը զիջեցին՝ միացած մասից էլ զուտ հայկական մի քանի կարեւոր գաւառներ յանձնելով Ազրբէջանին և Վրաստանին։

4) Ամէն անգամ, երբ առիթ է եղել միջազգային դիւանագիտութեան մէջ Հայկական Հարցը արծարծելու, բոլշեւիկները միշտ պաշտպանել են Թուրքիայի շահերը ի վնաս հայերի և Հայաստանը զոհել են իրենց համաշխարհային յեղափոխութեան նպատակներին։

5) Թուրքերը ամենաճարպիկ կերպով օգտագործել են բոլշեւիկների այս վերաբերումը և խորհրդային իշխանութեան օգնութեամբ հարուածել են հայերին ու վնասել Հայաստանին։

6) Հայ բոլշեւիկները, սկզբից մինչեւ վերջ, կուրօրէն համակերպուել ու հետեւել են Մոսկուայի քաղաքականութեան ու Մոսկուայի հրահանգներին և, կամայ թէ ակամայ, գործիք են ծառայել ռուս բոլշեւիկների ձեռքին ի վնաս Հայաստանի։ Չհամակերպուողները բնաջնջուել են։

7) Լեցուած ատելութեամբ դէպի Դաշնակցութիւնը և ամէն գնով ջանալով տիրանալ Հայաստանի իշխանութեան՝ հայ բոլշեւիկները երկիրը մղեցին դէպի քաղաքացիական կռիւներ և այդպիսով պատճառ դարձան Հայաստանի ակարացման թէ՛ ներքին և թէ՛ արտաքին ճակատներում։

8) Ի գին ամէն ներելի և աններելի միջոցների տէր դառնալով երկրի իշխանութեան՝ հայ բոլշեւիկները չկարողացան և մինչեւ այժմ էլ չեն կարողանում լուծել և ո՛չ մէկ հիմնական հարց, որ դրուած է հայ ժողովրդի առաջ և որ յանձն էին առել լուծելու, նախ քան իշխանութեան հասնելը։

9) Հայաստանի խորհրդայնացումով՝ մահացու հարուած ստացաւ Հայկական Հարցը, իբրեւ միջազգային քաղաքականութեան խնդիր, և ոտքի տակ դրուեցան միջազգային յանձնառութիւններն ու դաշնագրերը Հայաստանի մասին։

10) Եւ այս բոլորի հետեւանքով, Հայաստանը զրկուեցաւ իր հողերի մեծ մասից, երկու միլիոն հայութիւն, անհայրենիք և աստանդական, դատապարտուեցաւ թարա-

յական ուծացման և նիւթական փոշիացման մատնուած կորստեան՝ իրեն և Հայաստանի համար։

* * *

Այո՛, մինչև այժմ յայտնի փաստերից կարելի է վճռական կերպով եզրակացնել, թէ հայ բոլշևիկները չըկարողացան լուծել Հայաստանին ու հայ ժողովրդին վերաբերւող կենսական հարցերը։ Պատմութեան առջև նրանք յանցաւոր են։ Ապագայ սերունդները չեն ների նրանց, որ Հայաստանի պատմութեան բախտորոշ օրերին, երբ իրագործւում էին հայութեան դարաւոր իղձերը, նրանք դաւաճանեցին ազգային իդէալներին և միացան օտար ուժերին՝ դաւադրաբար խորտակելու համար երկարատեւ պայքարի և անհաշիւ զոհերի գնով ձեռք բերուած ազատութիւնը։

Գո՞հ են հայ բոլշևիկները իրենց գործից։ Հանգի՞ստ է նրանց խիղճը։ Չեմ կարծում։

Եթէ լինէին գոհ և խղճով հանգիստ, ապա, ուրեմն, ինչո՞վ բացատրել այն փաստը, որ նրանք այնքա՜ն զոհեր տուին Ստալինեան արիւնարբու Մողոքին, որին ուխտել էին հաւատարմօրէն ծառայել։

Հայաստանն ու հայ ժողովրդին այրելուց յետոյ համաշխարհային յեղափոխութեան հրդեհում, հայ բոլշևիկները իրենք էլ այրուեցին նոյն այդ հրդեհից։

Ո՞ւր են այժմ Հայաստանի դէմ դաւող, ռուսական կարմիր բանակին ապաւինած, օտար սուինների օգնութեամբ Հայաստանի իշխանութեան տիրացած հայ բոլշևիկները։ Ի՞նչ եղաւ նրանց ճակատագիրը։ Յիշենք միայն մի քանի անուններ մեծերից.

Հայաստանի մի տասնեակ տարիների բռնատէր Աղասի Խանջեան — գնդակահարուած։

Գաղափարական հին բոլշևիկ, Հայաստանի վարչապետ Սահակ Տէր Գաբրիէլեան — սպանուած բանտում։

Սարգիս Սրապիոնեան-Լուկաշին, ամենից տաղանդաւորը և գաղափարականը հայ բոլշևիկների մէջ, Հայաստանի վարչապետ — սպանուած բանտում։

Աղեքսանդր Բեգզադեան՝ Հայաստանի Ցեղկոմի արտաքին գործավարը և Խորհրդ. Միութեան դեսպան — անհետացած։

Արամայիս Երզնկեան՝ Երեւանի քաղաքագլուխ և նախարար — գնդակահարուած։

Աբրահամ Գուլոյեան՝ Հայաստանի վարչապետ — գնդակահարուած։

Հայաստանի կարմիր բանակի պետ՝ Ց. Աղոյեան — գնդակահարուած։

Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ՝ Դանուշ Շահվերդեան — գնդակահարուած։

Հայաստանի ներկայացուցիչ Պոլսում՝ գրագէտ Պօղոս Մակինցեան — գնդակահարուած։

«Խորհրդային Հայաստան» պաշտօնաթերթի խմբագիր՝ Եղիա Չուբար — գնդակահարուած։

Նշանաւոր «Մենք ամենայն հայոց կառավարութիւն չենք» խօսքի հեղինակ, նախարար Եսայեան — գնդակահարուած։

ՀՕԿ-ի նախագահ՝ Գրիգոր Վարդանեան — գնդակահարուած։

Հայաստանի ներկայացուցիչ Փարիզում՝ Սիմ. Փիրումեան — գնդակահարուած։

Աւիս Նուրիջանեան՝ Հայաստանի Ցեղկոմի չար ոգին — գնդակահարուած։

Հայաստանի կենտգործկոմի նախագահ Ա. Անանեան — անհետ կորած։

Յայտնի բոլշևիկ Հայկ Ազատեան — անհետ կորած։

Լուսաւորութեան գործավար Ա. Եղիազարեան — ըսպանուած։

Հայկոմկուսի քարտուղար Հ. Կոստանեան — հաշուեյարդարի ենթարկուած։

Հին բոլշեւիկ Ստ Բաղդասարեան — գնդակահարուած։

Լենինի զինակից, գաղափարական հին բոլշեւիկ Ար-շաւիր Մելիքեան — աքսորուած Հայաստանից, անյայտ։

Անհետացած Ս. Մարտիկեան, Բ. Ներսիսեան, Գ. Հա-նեսօղլեան: Չեկայի պետեր Մելիք Յովսէփեան, Ամատունի, Մուղդուսի եւ բազում ուրիշներ։

Սրանք միայն քաղաքական գործիչներ են՝ մէկ փոք-րիկ մասը հարիւրաւոր պատժուածներից։ Իսկ ինչքա՞ն է թիւը մտաւորական, գրական դէմքերի, որոնք սպանուել են կամ անհետ կորել — Եղիշէ Չարենց, Ակսել Բակունց, Գուրգէն Մահարի, Վահան Թոթովենց, Ալազան, Վաղարշակ Նորենց, Մ. Դարբինեան, Զապէլ Եսայեան, Սուրխաթեան, Ջանան, Սիմոն Յակոբեան, պատմաբան Բորեան. ճարտա-րապետներ Մ. Մազմանեան, Գ. Քոչար, քննադատներ Գ. Վանանդեցի, Թերզիպաշեան, Ն Դաբաղեան, Ը. Վա-հանեան եւ շատ ուրիշներ։

Հապա՞ բազմահազար այն համայնավարները, որոնց անունները գիտէ միայն Աստուած — եւ մէկ էլ Բերիան — անյայտութեան մէջ կորած Սիբիրի սառնամանիքներում, աքսորուած զանազան «թեքումների» յանցանքով։

Չափազանց ծանր եղաւ հայ բոլշեւիկների հատուցու-մը իրենց մոսկովեան տէրերին մատուցած ծառայու-թեանց փոխարէն...

Ի՞նչ է պատճառը այս ամենի։

Պատճառը այն է. որ հայ բոլշեւիկներն էլ, ի վեր-ջոյ, հայ են։ Ապրելով Հայաստանում, տեսնելով եւ իրենց կաշիի վրայ զգալով բոլոր այն անիրաւութիւնները եւ վատութիւնները, որ Մոսկուան գործում էր Հայաստանի նկատմամբ՝ հայ բոլշեւիկի մէջ էլ զարթնում է ազգային խիղճը եւ մղում նրան ընդդիմութեան կենտրոնի անիրաւ-իշխանութեան դէմ։ Հետեւանքը — անխնայ պատիժ «ազ-գայնական» կամ «դաշնակ» ամբաստանութեամբ։ Մոսկ-ուան շատ լաւ գիտի, որ Հայաստանի հողից միայն «դաշ-նակ» կարող է բուսնել եւ, ինչպէս դիցաբանական Կրո-

նոսը լափում էր իր զաւակներին, անխնայ ու հետեւողա-կան կերպով բնաջնջւում է դաշնակամէտ համայնավարնե-րին։

Բայց միայն Մոսկուայի հատուցումով հարցը չէր փակւում։ Կայ եւ պատմութեան հատուցումը։ Ու նաեւ հայ ժողովրդի հատուցումը։ Եւ յուսանք՝ տասնեակ տարինե-րով, բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ ճզ-մըւած, անհուն անիրաւութեանց ու տառապանքների մատնուած բազմաչարչար Հայաստանի ու հայ ժողովրդի հատուցումը կը լինի արդար եւ անողոք։

Այո՛, արդա՛ր եւ անողոք։

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ

Այս գիրքը մամուլի տակ էր, երբ, 1953 թ. յունիս 10-ին, Ֆրանսական տեղեկատու գործակալութիւնը՝ ԱՖՓ հրապարակեց հետեւեալ հեռագիրը Էնկիւրիից.

«Տեղեկացւում է, որ Խորհրդ. Միութիւնը, փափաքելով մեղմացում առաջ բերել ներկայ լարուած վիճակի մէջ, մի շարք առաջարկներ է արել Թուրքիային և պատրաստակամութիւն յայտնել հրաժարուելու համաշխարհային երկրորդ պատերազմի վախճանից առաջին իր ներկայացրած բոլոր պահանջներից։

«Մի ոչ-պաշտօնական աղբիւրի համաձայն՝ Խորհրդ. Միութեան Էնկիւրիի դեսպանը, Ալեքսանդր Լաւրիշչեւ, Թուրքիայի արտաքին գործոց նախարարին յանձնել է մի յուշագիր, որով Խորհրդ. Միութիւնը հրաժարւում է Կարսի, Արտահանի և Արդուինի առնչութեամբ 1945-ին ներկայացրած իր բոլոր պահանջներից։

«Խորհրդ. Միութիւնը հրաժարւում է նաեւ նեղուցների վերաբերմամբ դրած պահանջներից և փափաք է յայտնում «ապագային լաւագոյն յարաբերութիւններ մշակել Թուրքիայի հետ»։

Այս հաղորդագրութիւնը պաշտօնապէս ոչ հերքուեց Մոսկուայից, ոչ էլ հաստատուեց պաշտօնապէս, բայց հետագայ լուրերը և դէպքերը հաստատեցին, որ ֆրանսական գործակալութեան տեղեկատուութիւնը անհիմն չէր։ Ցիրուի, մայիս 30-ին, Մոլոտովը ներկայացրել էր Թուրք կառավարութեան՝ նման բովանդակութեամբ մի յուշագիր։

Ի՞նչ է նշանակում Մոսկուայի քաղաքական այս նոր շրջադարձը։ Եւ ի՞նչ առնչութիւն ունի Հայաստանի ու հայ ժողովրդի ճակատագրի հետ։

Նախ՝ վերյիշենք յաջորդական դէպքերին մի անգամ էլ։

Համայնավար կուսակցութիւնը Ռուսաստանի իշխանութիւնը գրաւելով՝ ի լուր աշխարհի հանդիսաւոր խոստումներ տուեց հայ ժողովրդին, նոյն իսկ Հայաստանի անկախութեան մասին հաւաստիքներ և պաշտօնական որոշումներ հրատարակեց։ Վերջը, սակայն, Բրեստ-Լիտովսկի դաշնագրով, ո՛չ միայն ամբողջ Թրքահայաստանը, այլ Ռուսահայաստանի մէկ մասն էլ զիջեց Թուրքերին։

1920-ին, խորհրդային իշխանութիւնը ճանաչեց Հայաստանի անկախութիւնը, խոստացաւ աջակցել Թրքահայաստանից էլ հողեր միացնել Հայաստանին և յաջորդ տարի, 1921 թ. մարտ 16-ին, Մոսկուայի դաշնագրով, Սուրմալուն և Շարուրն ու Նախիջևանն էլ, ուրեմն, Բրեստ-Լիտովսկում տուածից աւելին յանձնեց Թուրքերին։

1920-ի վերջերը, Հայաստանի խորհրդայնացումով, Մոսկուան յոյսեր ներշնչեց հայերին, թէ Հայաստանի սահմանները պիտի ընդարձակուին, իսկ Մոսկուայի արբանեակ Խորհրդ. Ազրբէջանը հանդիսաւորապէս յայտարարեց, թէ Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը այսուհետև մաս պիտի կազմեն «եղբայրական» Հայաստանի։ Բայց դեռ մէկ տարի չանցած, 1921 թ. հոկտ. 13-ին, Կարսի դաշնագրով, առանց մէկ թիզ հող աւելացնելու վերահաստատուեցին Մոսկուայի դաշնագրի սահմանները։ Ղարաբաղն էլ, Շարուր-Նախիջևանի հետ միասին, մնաց Ազրբէջանի տիրապետութեան տակ։

Եւ, ի վերջոյ, Ստալինեան Սահմանադրութեամբ, առանց վերաքննութեան յոյսի, հաստատուեց սահմանը Հայաստանի և Ազրբէջանի ու Վրաստանի միջև, որով Ղարաբաղ, Գիւլիստան, Շարուր, Նախիջևան, Գողթն, Լոռիի մէկ մասը, Ախալքալաք ընդմիշտ խլուեցին Հայաստանից, ի հաշիւ հարևաններին։ Շուրջ 10,000 քառ. քիլոմետր Հայաստանի անբաժան մասը կազմող հայկական հող աւելի քան 300 000 հայերով, բոլշևիկների կամքով, կտրուեցին Հայաստանի մարմնից և անցան ազերիներին և վրացիներին։

Լոզանն էլ վերջը եղաւ տապանաքար բոլշևիկների ձեռքով թաղուած Հայկական Հարցի վրայ։

Հայերը կարող էին հրճուել. Հայկական Հարցը, վերջապէս, լուծուած էր Ստալինի վկայութեամբ։

Քառորդ դար տևեց Թուրքերի և բոլշևիկների մեղրալուսինը։ Եւ քառորդ դար այլևս խօսք չեղաւ Թրքահայոց հողերի մասին։ Մոսկուայի համար հայերը այլևս հետաքրքրութիւն չէին ներկայացնում։ Իսկ Երևանում նստած չէր «Ամենայն Հայոց Կառավարութիւն»։

Միայն արտասահմանում, «հայաստանասէրների» շրջաններում, դեռ պլպլում էր երևակայական «տեսիլքի» աղօտ ճրագը, և բերնէ-բերան, փսփսուքով խորհրդաւոր լուրեր էին տարածւում, իբր թէ Մոսկուայից կամ Էջմիածնից ելած, որոնց համաձայն, իբր թէ, յարմար վայրկեանին, նորից պիտի արծարծուի Հայկական Հարցը։

Եւ «յարմար» վայրկեանը հասաւ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի վախճանին, աշխարհագրական բոլոր դիրքերում յաղթական խորհրդային իշխանութիւնը, յանկարծ, նորից յիշեց հայերի մասին։ 1945 թ. մարտ 19-ին, Մոլոտովը չեղեալ յայտարարեց 1925 թ. դեկտ. 17 Ռուս-Թրքական բարեկամութեան դաշինքը, որ շարունակութիւնն էր 1921 թ. մարտ 16 Մոսկուայի դաշնագրի։

Ամենքի յիշողութեան մէջ դեռ թարմ են 1945-1946 թուականների դէպքերը։ Մոսկուայի ակնյայտնի ներշնչումով ու քաջալերութեամբ ամբողջ հայութիւնը ոտքի ելաւ. է՛լ Հայ Դատի յանձնախումբեր զանազան երկրներում ու դիմումներ Միացեալ Ազգերի Ժողովին, է՛լ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեսակցութիւն Գեներալիսիմուսի հետ ու հանդիսաւոր դիմում Երեք Մեծերին. է՛լ յուզումնալից ժողովներ Հայաստանում և արտասահմանում, է՛լ ներգաղթ։ Մոսկուան հրահրում ու յուսադրում էր, բայց գործնական ո՛չ մի քայլ չէր դիմում։ Ի վերջոյ Կարմիր բանակը, փոխանակ դէպի Կարին շարժուե-

լու, մտաւ Թաւրիզ։ Ինչո՞ւ Թաւրիզ և ոչ Կարին։ Որովհետև հայկական հողերի պահանջը ինքնանպատակ չէր բոլշևիկների համար, այլ միայն միջոց ուրիշ նպատակների հասնելու։ Ինչպէս և յաջորդող ներգաղթի շարժումը — այսօր այլևս անվիճելիօրէն պարզ է — հայերի բարիքին ծառայելու կոչուած չէր, այլ լոկ զէնք էր Մոսկուայի ձեռքին հայութեան հետ կապ չունեցող քաղաքական ծրագիրների հետապնդման համար։

Խորհրդային իշխանութեան յարձակողական քաղաքականութիւնը երկրագնդի բոլոր մասերում անխուսափելի կերպով առաջ բերեց ճեղքուածք պատերազմի տարիներին կազմուած «Մէկ Աշխարհի» մէջ։ Մարդկութիւնը բաժանուեց երկու հակամարտ մասերի, և ազատ աշխարհը անցաւ ինքնապաշտպանութեան բռնատիրական համայնավարութեան դէմ։ Պատերազմի մղձաւանջը նորից թառեց մարդկութեան կրծքին։

Մոսկուայի միջազգային քաղաքականութիւնը Ստալինի առաջնորդութեամբ — ձեւով խաղաղասէր, բովանդակութեամբ ռազմատենչ — խորհրդ. Միութիւնը հասցրեց փակուղիի՝ հանդիպելով Ամերիկայի հիւլէական ահարկու ուժին։ Գեներալիսիմուսի դիւանագիտական ռազմախաղերը այլևս անզօր էին խաբելու պատրանքներից զգաստացած և հետ ի հետ իր ռազմական զօրութիւնը կազմակերպող ազատ աշխարհին։

Պատերազմ կամ խաղաղութիւն — Այզենհաուերին նախագահական աթոռի վրայ նստեցնելով՝ Ամերիկան հարցը դրեց գործնական գետնի վրայ, երբ Ստալինը իմաստութիւնը ունեցաւ անհետանալու ասպարէզից՝ նոր ռազմախաղերի հնարաւորութիւն բանալով ժառանգների առջեւ։ Մալենկովի «խաղաղութեան յարձակողականը» այլ բան չէ, բայց եթէ առժամեայ նահանջ, մի նոր Լոքարնօ, պատերազմից խուսափելու և ժամանակ շահելու նպատակով։

Պիտի յաջողի՞ այս նոր ռազմավարութիւնը մեր հարցի կապակցութեամբ այս պահուս էական չէ։ Էականը

նահանջն է։ Մոսկուան ճարպիկ ռազմախաղով մի կողմից ձգտում է պառակտել արեւմտեան ժողովրդապետութիւնների միացեալ ճակատը, միւս կողմից ուզում է ապահովել իր հարաւային սահմանները՝ վերականգնելով նախկին բարեկամական յարաբերութիւնները Թուրքիայի հետ։ Մայիս 30-ի յուշագիրը արդիւնք է այդ քաղաքականութեան, որով նորից զոհւում է Հայկական Հարցը։

Հայկական Հարցը ինքնանպատակ չէր 1945-ին, երբ Մոսկուան ջնջում էր «բարեկամութեան դաշինքը» Թուրքիայի հետ՝ հայկական հողերի պահանջ դնելով, ինքնանպատակ չէ և այժմ, երբ ուզում է վերականգնել նախկին բարեկամութիւնը Թուրքերի հետ՝ հրաժարուելով 1945-ի պահանջներից։

Հայկական Հարցը ինքնանպատակ չէր ցարերի ժամանակ, ինքնանպատակ չէ և այսօր՝ խորհրդային իշխանութեան օրով։

Եթէ հայութեան մէջ դեռ կան բարեմիտ մոլորուածներ, որոնք անկեղծօրէն հաւատում են, թէ խորհրդային իշխանութիւնը իրօք մտահոգուած է Հայաստանի և հայ ժողովրդի ճակատագրով, մայիս 30-ի յուշագրից յետոյ պէտք է հասկանան, որ բոլշևիկների համար հայն ու Հայաստանը, որպէս ինքնուրոյն արժէքներ, գոյութիւն չունին։

Հայ ժողովուրդ, Հայաստան, Հայկական Հարց համայնավարների համար էլ, ինչպէս բոլոր աշխարհակալների, սոսկ միջոց են իրենց քաղաքական ձգտումների և հաշիւների մէջ։ Այս տեսակէտից — վկայ 35 տարիների պատմութիւնը — ըստ էութեան տարբերութիւն չկայ դրամատիրական աշխարհակալութեան և համայնավարական աշխարհակալութեան միջեւ։ Տարբերութիւնը ձեւի մէջ է՝ ոչ ի նպաստ համայնավարութեան։

Եւ, հետեւաբար, անկարելի չէ, որ վաղը, երբ պայմանները փոխուին, դիւանագիտական խաղով Մոսկուան նորից հրապարակ գայ «Կարսի, Արտահանի և Արդուինի» պահանջով՝ յանուն հայերի կամ վրացիների, բայց յու-

տալ. Թէ հայերն են կամ վրացիները նրա անկեղծ մտահոգութեան առարկան, առնուազն միամտութիւն կը լինի։ Մոսկուայի բուն նպատակը համաշխարհային համայնավարութիւնն է ոչ թէ ճնշուած ժողովուրդների ազատութիւնը։

Աշխարհակալութիւնը — միեւնոյն է՝ սպիտակ թէ կարմիր — ունի իր ուրոյն փիլիսոփայութիւնը, իր տրամաբանութիւնը, իր հեռական նպատակներն ու գործելակերպը, որոնց մէջ ամենավերջին տեղն են գրաւում ազատազուրկ ժողովուրդների շահերը։ Այդ շահերը հաշուի կ'առնուին միայն այն դէպքում, երբ ժողովուրդներն իրենք որոշ կշիռ կը ներկայացնեն զօրաւորների քաղաքական նժարի վրայ։

Դեռ անցեալ դարու եօթանասնական թուականների վերջերը, Բեռլինի վեհաժողովից յետոյ, մի մեծ հայ, Խրիմեան Հայրիկը. յուսախաբ դրամատիրական պետութիւնների խաղերից, կոչ ուղղեց հայութեան.

— Հայ ժողովուրդ, եթէ կ'ուզես հերիսա ուտել (այսինքն՝ ազատութիւն ձեռք բերել) զինուէ երկաթէ շերեփով:

Կէս դար վերջը, բանաստեղծի տաղանդով օժտուած մի ուրիշ մեծ հայ՝ Եղիշէ Չարենց, յուսախաբ համայնավար պետութեան խաղերից, մի այլ կոչ ուղղեց հայութեան.

— Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է:

Մի մեծ հայ եւս — մեծ տաղանդով և մոլորութիւններով — Ա. Իսահակեան, երբ դեռ ծունկի չէր իջել ժողովուրդների հօրն առջեւ, յորդորեց հայ ժողովրդին.

Մուրճ կամ զնդան պիտի լինես,
Ճշմարտութիւն չկայ ուրիշ:

Նման եզրակացութեան պէտք է գայ և այս գրքի ընթերցողը.

— Հայ ժողովուրդ, սուտ են եւ անարժէք քեզ տրուած բոլոր խոստումները, եթէ ինքդ անզօր ես, չունիս ազգային իդէալ եւ իդէալիդ հասնելու վճռական կամք:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
Երկու խօսք	5
Հայաստանի ինքնորոշումից մինչեւ Բրեստ-Լիտովսկ	9
Թուրք-բոլշեւիկեան բարեկամութիւնը	20
Մերկացումներ Լենինի անկախութեան դատարանում	29
Հայ Բոլշեւիկները	44
Մայիսեան խռովութիւնները	60
Հայ եւ Ազրբէջանցի բոլշեւիկների դերը Հայաստանի դէմ	96
Հայ-Թրքական պատերազմը եւ բոլշեւիկները	105
Հայաստանը Յեղկոմի իշխանութեան ներքոյ	139
Հայ բոլշեւիկների յաղթանակի արդիւնքը	166
Վերջաբան	191
Յետ գրութեան	199

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Անկախ եւ Միացեալ Հայաստան. Երեւան, 1920
2. Նոյնը. Պոսթըն, 1920
3. Բանակցութիւններ Ազգ. Պատուիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ, Պոսթըն, 1920
4. Խարխափումներ, Պոսթըն, 1923
5. Հայաստանի Հանրապետութիւն. Փարիզ, 1928
6. Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, Ա. հատոր, Պոսթըն, 1934
7. » » Բ. հատոր, Պոսթըն, 1938
8. Հայաստանը բոլշեւիկեան Մուրճի եւ թրքական Սալի միջեւ, Պոսթըն, 1941
9. *Armenia and the Armenian Question, Boston, 1943*
10. *Armenia y La Cuestion Armenio. Buenes Aires, 1944*
11. Վէմ, եռամսեայ հանդէս, Ա.-ԻԴ, 24 թիւ, Փարիզ, 1933-38
12. Հայրենիք Տարեգիրք, վեց հատոր, Պոսթըն, 1943-48

Պատուէր 209
Օրինակ 1500
Գրակ 13
Աւարտում 27 Օգոստոս, 1953

Տպարան «Համազգայինի» Ընկերութեան
Նշան Փալանճեան